Ծանոթություն:

Ծածկագիրը կիրառվում է գերսնուցման դեպքում, բացառությամբ՝ քրոնիկ գերսնուցման դեպքի:

**ՆՅՈՒԹԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
(E70-E90)**

Բացառությամբ՝

- անդրոգենային ռեգիստենտակսության համախտանիշի (E34.5)
- մակերիկամների բնածին հիպերպլազիայի (E25.0)
- Էլերս-Դանլոյի համախտանիշի (Q79.6)
- հեմոլիտիկ անեմիաների՝ պայմանավորված ֆերմենտային խանգարումներով (D55.-)
- Մարֆանի համախտանիշի (Q87.4)
- 5-ալֆա-ոեդուկտազայի անբավարարության (E29.1)

E70 Արոմատիկ ամինաթթուների փոխանակման խանգարումներ

- E70.0 Դասական ֆենիլկետոնուրիա
- E70.1 Հիպերֆենիլալանինեմիայի այլ տեսակներ
- E70.2 Թիրոզինի փոխանակման խանգարումներ
 - Ալկապտոնուրիա
 - Հիպերթիրոզինեմիա
 - Օխրոնոզ
 - Թիրոզինեմիա
 - Թիրոզինոզ
- E70.3 Ալբինիզմ
 - Ալբինիզմ՝
 - ակնային
 - մաշկաակնային
 - Համախտանիշ՝
 - Չեդիակի (-Սեյնբրինկի)-Հիգասի (Chediak(-Steinbrinck)-Higashi)
 - Կրոսսի (Cross)
 - Հերմանսկի-Պուդլակի (Hermansky-Pudlak)
- E70.8 Արոմատիկ ամինաթթուների փոխանակման այլ խանգարումներ
 - խանգարումներ՝
 - հիստիդինի փոխանակության
 - տրիպտոֆանի փոխանակման
- E70.9 Արոմատիկ ամինաթթուների փոխանակման խանգարումներ՝ չճշտված

E71 Ճյուղավորված շղթայով ամինաթթուների փոխանակության խանգարումներ՝ ճարպաթթուների փոխանակության խանգարումների հետ միասին

E71.0 Թղկենահյուսի հիվանդություն

E71.1 Ճյուղավորված շղթայով ամինաթթուների խանգարման այլ ձևեր

Հիպերգլյցին-իզոլյցինեմիա

Հիպերվալինեմիա

Իզովալերիանային ացիդեմիա

Մեթիլմալոնային ացիդեմիա

Պրոպիոնային ացիդեմիա

E71.2 Ամինաթթվի ճյուղավորված շղթայով փոխանակման խանգարում՝ չճշտված

E71.3 Ճարպաթթուների փոխանակման խանգարումներ

Ադրենոլյեյկոդիստրոֆիա (Ադդիսոն-Շիլդեր)

Մկանային կարնիտին-պալմիտիլ-տրանսֆերազայի անբավարարություն

Բացառությամբ՝

Շիլդերի հիվանդության (G37.0)

E72 Ամինաթթուների փոխանակման այլ խանգարումներ

Բացառությամբ՝

շեղում նորմայից՝ առանց հիվանդության դրսևորման (R70-R89)

խանգարումների

- արոմատիկ ամինաթթուների փոխանակման (E70.-)
- ճյուղավորված շղթայով ամինաթթուների փոխանակման (E71.0-E71.2)
- ճարպաթթուների փոխանակման (E71.3)
- պուրինների և պիրիմիդինների փոխանակման (E79.-)

պոդագրա (M10.-)

E72.0 Ամինաթթուների տրանսպորտի խանգարումներ

Երիկամների և միզաձորանի այլ ախտահարումներ՝ (N29.8*)

Ցիստինոզ

Ցիստինուրիա

Ֆանկոնի (-դե Տոնի) (-Դեբրե) (Fanconi(-de Toni)(-Debre))

Հարտնապի հիվանդություն (Hartnup)

Լոուեի համախտանիշ (Lowe)

Բացառությամբ՝

տրիպտոֆանի փոխանակության խանգարման (E70.8)

E72.1 Ծծումբ պարունակող ամինաթթուների փոխանակության խանգարումներ

Ցիստաթիոնինուրիա

Հոմոցիստինուրիա

Մեթիոնինեմիա

Սուլֆիտօքսիդազայի անբավարարություն

Բացառությամբ՝

տրանսկոբալամին II -ի անբավարարության (D51.2)

E72.2 Միզանյութի ցիկլի փոխանակության խանգարումներ

Արգինինեմիա

Արգինինսուկցինացիդուրիա

Ցիտրուլինեմիա

Հիպերամոնեմիա

Բացառությամբ՝

օրնիտինի փոխանակության խանգարումների (E72.4)

E72.3 Լիզինի և հիդրոլիզինի փոխանակության խանգարումներ
Գլյուտարիկացիդուրիա
Հիդրոքսիլիզինեմիա
Հիպերլիզինեմիա

Բացառությամբ՝

Ռեֆսումի հիվանդության (Refsum) (G60.1)
Ջելվեգերի համախտանիշի (Q87.8)

E72.4 Օրնիտինի փոխանակման խանգարումներ
Օրինտինեմիա (I, II տիպեր)

E72.5 Գլիցինի փոխանակման խանգարումներ
հիպերհիդրոքսիպրոլինեմիա
հիպերպրոլինեմիա (I, II տիպեր)
ոչ կետոնային հիպերգլիցինեմիա
սարկոզինեմիա

E72.8 Ամինաթթուների փոխանակման այլ ճշտված խանգարումներ
Խանգարումներ

- բետա-ամինաթթուների փոխանակության
- գամմա-գլուտամիլային ցիկլի

E72.9 Ամինաթթուների փոխանակման խանգարում՝ չճշտված

E73 Լակտոզի ոչ տանելիություն (տոլերանտության բացակայություն)

E73.0 Լակտոզի բնածին անբավարարություն

E73.1 Լակտոզի երկրորդային անբավարարություն

E73.8 Լակտոզի ոչ տանելիության այլ տեսակներ

E73.9 Լակտոզի ոչ տանելիություն՝ չճշտված

E74 Ածխաջրերի փոխանակման այլ խանգարումներ

Բացառությամբ՝

գլյուկոզենի հյութազատության ավելացման (E16.3)
շաքարային դիաբետի (E10-E14)
հիպոգլիկեմիայի՝ ԱՀՃ (E16.2)
մուկոպոլիսախարիդոզի (E76.0-E76.3)

E74.0 Գլիկոզենի կուտակման հիվանդություններ
Սրտային գլիկոզենոզ
Հիվանդություն՝

- Անդերսենի (Andersen)
- Կորի (Cori)
- Ֆորբեսի (Forbes)
- Հերսի (Hers)
- Մակ Արդլի (MC Ardle)
- Պոմպեի (Pompe)
- Տարուիի (Tarui)
- Տաուրիի (Tauri)
- Գիրկի (von Gierke)

Լյարդի ֆոսֆորիլազայի անբավարարություն

E74.1 Ֆրուկտոզի փոխանակման խանգարումներ
Էսենցիալ ֆրուկտոզուրիա

Ֆրուկտոզո -1-6 դիֆոսֆատազայի անբավարարություն

- Ֆրուկտոզայի ժառանգական անտանելիություն
- E74.2 Գալակտոզի փոխանակման խանգարումներ
Գալակտոզինազայի անբավարարություն
Գալակտոզեմիա
- E74.3 Աղիներում ածխաջրերի ներծծման այլ խանգարումներ
Գլյուկոզա-գալակտոզայի ներծծման խանգարում
Սախարոզայի անբավարարություն

Բացառությամբ՝

- լակտոզի անտանելիության (E73.-)
- E74.4 Պիրովատի և գլիկոնեոգենեզի փոխանակության խանգարումներ
Անբավարարություն՝
- Ֆոսֆոենոլպիրովատ կարբոքսիկինազայի
 - պիրովատի՝
 - կարբոքսիլազի
 - դեհիդրոգենազի

Բացառությամբ՝

- սակավարյունության հետ (D55.-)
- E74.8 Ածխաջրերի փոխանակման այլ ճշտված խանգարումներ
Էսենցիալ պենտոզուրիա
Օկսալոզ
Օկսալուրիա
Երիկամային գլյուկոզուրիա
- E74.9 Ածխաջրերի փոխանակման խանգարում՝ չճշտված

E75 Սֆինգոլիպիդների փոխանակման խանգարումներ և լիպիդների կուտակման այլ խանգարումներ

Բացառությամբ՝

- Մուկոլիպիդոզ I-III տիպեր (E77.0-E77.1)
Ռեֆսումի հիվանդության (G60.1)
- E75.0 Գանգլիոզիդոզ - GM₂
Հիվանդություն՝
- Սենդհոֆֆի (Sandhoff)
 - Տեյ -Սաքսի (Tay-Sachs)
- GM₂-գանգլիոզիդոզ՝
- ԱՀՃ
 - մեծահասակների
 - պատանեկան
- E75.1 Այլ գանգլիոզիդոզներ
Գանգլիոզիդոզ՝
- ԱՀՃ
 - GM₁
- Մուկոլիպիդոզ IV
- E75.2 Այլ սֆինգոլիպիդոզներ
Հիվանդություն
- Ֆարբի (-Անդերսոնի) (Fabri(-Anderson)
 - Գոխե (Gaucher)
 - Կրաբբե (Krabbe)
 - Նիման-Պիկ (Niemann-Pick)
- Ֆարբերի համախտանիշ (Farber)

Մետաքրոմատիկ լեյկոդիստրոֆիա
Սուլֆատազայի անբավարարություն

Բացառությամբ՝

ադրենոլեյկոդիստրոֆիայի (Ադրիսոն-Շիլդերի) (E71.3)

E75.3 Սֆինգոլիպիդոզ՝ չճշտված

E75.4 Նյարդաբջիջների լիպոֆուսցինոզ

Հիվանդություն՝

- Բատտենի (Batten)
- Բիլլսոն-Յանսկու (Bielschowsky-Jansky)
- Կուֆսի (Kufs)
- Շպիլմեյր-Ֆոգտի (Spielmeyer-Vogt)

E75.5 Լիպիդների կուտակման այլ խանգարումներ

Յերերրոտենդինոզ խոլեստերոզ (Վան-Բոգարտ-Շերեր-Էպշտեյնի) (Van Bogaert-Scherer-Epstein)

Ոլմանի (Wolman)

E75.6 Լիպիդների կուտակման հիվանդություն՝ չճշտված

E76 Գլիկոզամինոգլիկանների փոխանակման խանգարումներ

E76.0 Մուկոպոլիսախարիդոզ՝ I տիպ

Համախտանիշ՝

- Հուրլերի (Hurler)
- Հուրլեր-Շեյի (Hurler-Scheie)
- Շեյի (Scheie)

E76.1 Մուկոպոլիսախարիդոզ՝ II տիպ

Հանտերի համախտանիշ (Hunter)

E76.2 Այլ մուկոպոլիսախարիդոզներ

Բետա-գլյուկուրոնիդազայի անբավարարություն

Մուկոպոլիսախարիդոզներ, III, IV, VI, VII տիպերի

Համախտանիշ՝

- Մարոտո Լամի (Maroteaux-Lamy) (թեթև) (ծանր)
- Մորկիո (Morquio) (-նման) (Դասական)
- Սանֆիլիպո (Sanfilippo) (տիպ B) (տիպ C) (տիպ D)

E76.3 Մուկոպոլիսախարիդոզ՝ չճշտված

E76.8 Գլյուկոզամինոգլիկանների փոխանակման այլ խանգարումներ

E76.9 Գլյուկոզամինոգլիկանների փոխանակման խանգարում՝ չճշտված

E77 Գլիկոպրոտեինների փոխանակման խանգարում

E77.0 Լիզոսոմային ֆերմենտների հետտրանսլացիոն ձևափոխության դեֆեկտներ

Մուկոլիպիդոզ II (I-բջջային հիվանդություն)

Մուկոլիպիդոզ III (Հուրլերի պսևդո-պոլիդիստրոֆիա (Hurler))

E77.1 Գլիկոպրոտեինների դեգրադացիայի դեֆեկտներ

Ասպարտիլգլյուկոզամինուրիա

Ֆուկոզիդոզ

Մաննոզիդոզ

Սիալիդոզ (մուկոլիպիդոզ I)

E77.8 Գլիկոպրոտեինների փոխանակման այլ խանգարումներ

E77.9 Գլիկոպրոտեինների փոխանակման խանգարումներ՝ չճշտված

**E78 Լիպոպրոտեինների փոխանակման խանգարումներ և այլ լիպիդեմիաներ
Բացառությամբ՝**

- սֆինգոլիպիդոզի (E75.0-E75.3)
- E78.0 Մաքուր հիպերխոլեստերինեմիա
 - Ընտանեկան հիպերխոլեստերինեմիա
 - Ֆրեդրիքսոնի հիպերլիպիդեմիա (Fridrickson), տիպ IIa
 - Հիպեր-բետալիպոպրոտեինեմիա
 - Հիպերլիպիդեմիա, A խումբ
 - Հիպերլիպոպրոտեինեմիա ցածր խտության լիպոպրոտեիններով
- E78.1 Մաքուր հիպերգլիցերիդեմիա
 - Էնդոգեն հիպերգլիցերիդեմիա
 - Ֆրեդրիքսոնի հիպերլիպոպրոտեինեմիա (Fredrickson), տիպ IV
 - Հիպերլիպիդեմիա, B խումբ
 - Հիպերպրե-բետա-լիպոպրոտեինեմիա
 - Հիպերլիպոպրոտեինեմիա վատ՝ ցածր խտության, լիպոպրոտեիններով
- E78.2 Խառը հիպերլիպիդեմիա
 - Ընդհանուր կամ լողացող բետալիպոպրոտեինեմիա
 - Ֆրեդրիքսոնի հիպերլիպոպրոտեինեմիա (Fridrickson), II b կամ III տիպեր
 - Հիպերբետալիպոպրոտեինեմիա պրե-բետա լիպոպրոտեինեմիայով
 - Հիպերխոլեստերինեմիա էնդոգեն հիպերգլիցերիդեմիայով
 - Հիպերլիպիդեմիա, C խումբ
 - Տուբերոէրուպտիվ քսանտոմա
 - Տուբերոզ քսանտոմա

Բացառությամբ՝

- ցերեբրոտենդինոզային խոլեստերոզի (Վան-Բոգարտ-Շերեր-Էպշտեյնի) (E75.5)
- E78.3 Հիպերխիլոմիկրոնեմիա
 - Ֆրեդրիքսոնի հիպերլիպոպրոտեինեմիա (Fridrickson), I և V տիպեր
 - Հիպերլիպիդեմիա, D խումբ
 - Խառը հիպերգլիցերիդեմիա
- E78.4 Այլ հիպերլիպիդեմիաներ
 - Ընտանեկան համակցված հիպերգլիցերիդեմիա
- E78.5 Հիպերլիպիդեմիա՝ չճշտված
- E78.6 Լիպոպրոտեինների անբավարարություն
 - A-բետա-լիպոպրոտեինեմիա
 - Բարձր խտության լիպոպրոտեինների անբավարարություն
 - Հիպո-ալֆա-լիպոպրոտեինեմիա
 - Հիպո-բետա-լիպոպրոտեինեմիա (ընտանեկան)
 - Լեցիտինխոլեստերինացիլտրանսֆերազայի անբավարարություն
 - Տանժերի հիվանդություն (Tangier)
- E78.8 Լիպոպրոտեինների փոխանակման այլ խանգարումներ
- E78.9 Լիպոպրոտեինների փոխանակման խանգարում չճշտված

**E79 Պորինների և պիրիմիդինների փոխանակման խանգարումներ
Բացառությամբ՝**

- երիկամի քարի (N20.0)
- համակցված իմունոդեֆիցիտի (D81.-)
- պոդագրայի (M10.-)
- օրոտացիդուրային սակավարյունության (D53.0)

- պիզմենտային քսերոդերմիայի (Q82.1)
- E79.0 Հիպերուրիկեմիա առանց բորբոքային հողաբորբի և հողատապային հանգույցների
անախտանիշ հիպերուրիկեմիա
- E79.1 Լեշա-Նիխենի համախտանիշ
- E79.8 Պուրինների և պիրիմիդինների փոխանակության այլ խանգարումներ
ժառանգական քսանտինուրիա
- E79.9 Պուրինային և պիրիմիդինային փոխանակության խանգարումներ՝ չճշտված

**E80 Բիլիռուբինի և պորֆիրինի փոխանակության խանգարումներ
Ներառյալ՝**

- կատալազայի և պերոքսիդազայի դեֆեկտներ
- E80.0 Ժառանգական էրիթրոպետիկ պորֆիրիա
Բնածին էրիթրոպետիկ պորֆիրիա
էրիթրոպետիկ պորֆիրիա
- E80.1 Մաշկային դանդաղ պորֆիրիա
- E80.2 Այլ պորֆիրիաներ
ժառանգական կոպրոպորֆիրիա
Պորֆիրիա՝
- ԱՀՃ
 - սուր ընդմիջվող (յարդային)
- Պատճառը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- E80.3 Կատալազի և պերոքսիդազի դեֆեկտներ
Ակատալազիա (Տակախարա) (Takahara)
- E80.4 Գիլբերտի համախտանիշ
- E80.5 Կրիգլեր-Նայարի համախտանիշ
- E80.6 Բիլիռուբինի փոխանակության այլ խանգարումներ
Դուբին-Ջոնսոնի համախտանիշ (Dubin-Johnson)
Ռոտորի համախտանիշ (Rotor)
- E80.7 Բիլիռուբինի փոխանակության խանգարումներ՝ չճշտված

**E83 Հանքանյութերի փոխանակության խանգարում
Բացառությամբ՝**

- հանքանյութերի սննդային անբավարարության (E58-E61)
հարվահանագեղձի խանգարումների (E20-E21)
վիտամին D-ի անբավարարության (E55.-)
- E83.0 Պղնձի փոխանակության խանգարումներ
Մենկեսի հիվանդություն (Menkes) (գանգուր մազերի հիվանդություն)
(պողպատյա մազեր)
Վիլսոնի հիվանդություն (Wilson)
- E83.1 Երկաթի փոխանակության խանգարումներ
Հեմոքրոմատոզ
- Բացառությամբ՝**
Սակավարյունության՝
- երկաթդեֆիցիտային (D50.-)
 - սիդերոբլաստային (D64.0-D64.3)
- E83.2 Ցինկի փոխանակության խանգարումներ
Էնտերոպաթիկ ակրոդերմատիտ

- E83.3 Ֆոսֆորի փոխանակության խանգարումներ
Թթվային ֆոսֆատազայի անբավարարություն
Ընտանեկան հիպոֆոսֆատեմիա
Հիպոֆոսֆատազիա
Վիտամին D-ռեգիստենտ
- օստեոմալյացիա
 - ռախիտ

Բացառությամբ՝

- մեծահասակների օստեոմալյացիայի (M83.)
օստեոպորոզի (ոսկրանոսրացման) (M80-M81)
- E83.4 Մազնեզիումի փոխանակման խանգարումներ
Հիպերմագնեմիա
Հիպոմագնեմիա
- E83.5 Կալցիումի փոխանակման խանգարումներ
Ընտանեկան հիպոկալցիուրիկ հիպերկալցիեմիա
Իդիոպաթիկ հիպերկալցիուրիա

Բացառությամբ՝

- խոնդրոկալցինոզի (M11.1-M11.2)
հիպերպարաթիրեոիդիզմի (E21.0-E21.3)
- E83.8 Հանքային փոխանակության այլ խանգարումներ
E83.9 Հանքային փոխանակության չճշտված խանգարում

E84 Կիստոզ (բշտիկային) ֆիբրոզ

Ներառյալ՝

- մուկովիսցիդոզը
- E84.0 Կիստոֆիբրոզ թոքային դրսևորումներով
E84.1 Կիստոֆիբրոզ աղիքային դրսևորումներով
Մեկոնեան իլեուսի (P75*)

Բացառությամբ՝

- Մեկոնիումային օբարբովացիաների, երբ հայտնի է, որ չկա կիստոֆիբրոզ
(P76.0)
- E84.8 Կիստոֆիբրոզ այլ դրսևորումներով
E84.9 Կիստոզային ֆիբրոզ՝ չճշտված

E85 Ամիլոիդոզ

Բացառությամբ՝

- Ալցիեյմերի հիվանդության (G30.-)
- E85.0 Ժառանգական ընտանեկան ամիլոիդոզ առանց նեֆրոպաթիայի
ընտանեկան միջերկրածովյան տենդ
Ժառանգական ամիլոիդային նեֆրոպաթիա
- E85.1 Ընտանեկան ժառանգական նևրոտիկ ամիլոիդոզ
Ամիլոիդային պոլինեյրոպաթիա (պորտուգալական)
- E85.2 Ժառանգական ընտանեկան ամիլոիդոզ՝ չճշտված
- E85.3 Երկրորդային համակարգային ամիլոիդոզ
ամիլոիդոզ, կապված հեմոդիալիզի հետ
- E85.4 Սահմանափակ ամիլոիդոզ
Լոկալիզացված ամիլոիդոզ
- E85.8 Ամիլոիդոզի այլ ձևեր
E85.9 Ամիլոիդոզ՝ չճշտված

E86 Հեղուկի ծավալի փոքրացում (հիպովոլեմիա)

Ներայալ՝

- Ջրազրկում
- Պլազմայի ծավալի կամ արտաբջջային հեղուկի քչացում
- Հիպովոլեմիա

Բացառությամբ՝

- նորածնի ջրազրկման (P74.1)
- հիպովոլեմիկ շոկի՝
 - ԱՀՃ (R57.1)
 - հետվիրահատական (T81.1)
 - վնասվածքային (T79.4)

E87 Ջրաաղային և թթվահիմնային հավասարակշռության այլ խանգարումներ

E87.0 Հիպերօսմոլյարություն և գերնատրիումարյունություն

- Նատրիումի ավելցուկ (Na)
- Նատրիումով ծանրաբեռնվածություն (Na)

E87.1 Հիպօսմոլյարություն և թերնատրիումարյունություն

- Նատրիումի անբավարարություն (Na)

Բացառությամբ՝

- հակամիզամուղային հորմոնի արտազատության խանգարման համախտանիշի (E22.2)

E87.2 Ացիդոզ

- Ացիդոզ՝
 - ԱՀՃ
 - կաթնաթթվային
 - մետաբոլիկ
 - ռեսպիրատոր

Բացառությամբ՝

- դիաբետիկ ացիդոզի (E10-E14 ընդհանուր 4-րդ նշանով .1)

E87.3 Ալկալոզ

- Ալկալոզ՝
 - ԱՀՃ
 - մետաբոլիկ
 - ռեսպիրատոր

E87.4 Թթվահիմնային հավասարակշռության խառը խանգարում

E87.5 Հիպերկալեմիա

- Կալիումի ավելցուկ (K)
- Կալիումով ծանրաբեռնվածություն (K)

E87.6 Հիպոկալեմիա

- Կալիումի անբավարարություն (K)

E87.7 Հիպերվոլեմիա

Բացառությամբ՝

- այտուցի (R60.-)

E87.8 Ջրաաղային հավասարակշռության այլ խանգարումներ՝ այլ դասերում

- չդասակարգված
- Էլեկտրոլիտային բալանսի խանգարում՝ ԱՀՃ
- Հիպերքլորեմիա

Հիպոքլորեմիա

E88 Նյութափոխանակության այլ խանգարումներ

Էլեկտրոլիտային հաշվեկշռի խանգարման պատճառ հանդիսացող դեղորայքը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

Բացառությամբ՝

X (քրոնիկ) հիստիոցիդոզը (C 96.6)

E88.0 Պլազմայի սպիտակուցների փոխանակության խանգարումներ՝ այլ դասերում
չդասակարգված
Ալֆա-1-հակատրիպսինի դեֆիցիտ
Դիսալբումինեմիա

Բացառությամբ՝

լիպոպրոտեինների փոխանակության խանգարման (E78.-)
մոնոկլոնային գամապաթիայի (D47.2)
պոլիկլոնալ հիպերգամազլոբուլինարյունության (D 89.0)
Վալդենստրեմի մակրոզլոբուլինարյունության (C88.0)

E88.1 Լիպոդիստրոֆիա՝ այլ դասերում չդասակարգված
Լիպոդիստրոֆիա՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

Ուիպլի հիվանդության (K90.8)

E88.2 Լիպոմատոզ՝ այլ դասերում չդասակարգված
Լիպոմատոզ՝
• ԱՀՃ
• հիվանդագին (Դերկոմի հիվանդություն)

E88.3 Ուռուցքալուծ համախտանիշ

E88.8 Նյութափոխանակության այլ ճշտված խազարումներ
Լուին-Բենսոդի ադենոլիպոմատոզ (Launois-Bensaude)
Տրիմեթիլամինուրիա

E88.9 Նյութափոխանակության խազարումներ՝ չճշտված

E89 Ներզարական և նյութափոխանակության խանգարումներ՝ առաջացած բժշկական միջամտությունից՝ այլ դասերում չդասակարգված

E89.0 Հիպոթիրեոիդիզմ՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո
Հիպոթիրեոզ, առաջացած ճառագայթումից
Հետվիրահատական հիպոթիրեոզ

E89.1 Հիպոինսուլինեմիա՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո
Ենթաստամոքսային գեղձի հեռացումից հետո հիպերգլիկեմիա
Հետվիրահատական հիպոինսուլինեմիա

E89.2 Հիպոպարաթիրեոիդիզմ՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո
Պարաթիրեոպրիվ տետանուս

E89.3 Հիպոպիտուիտարիզմ՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո
Հիպոպիտուիտարիզմ առաջացած ճառագայթումից

E89.4 Ձվարանի ֆունկցիայի խանգարում՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո

E89.5 Ամորձիների հիպոֆունկցիա՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո

E89.6 Մակերիկամի կեղևի հիպոֆունկցիա՝ բժշկական միջամտություններից հետո

E89.8 Այլ ներգատական և փոխանակման խանգարումներ՝ առաջացած բժշկական միջամտություններից հետո

E89.9 Ներգատական և փոխանակման խանգարում՝ առաջացած բժշկական գործողություններից հետո՝ չճշտված

E90* Սննդային և նյութափոխանակության խանգարումներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ՝

ԳԼՈՒԽ V ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

(ԷՖ00 - ԷՖ99) (F00 - F99)

Ներառյալ՝

հոգեբանական զարգացման խանգարումները

Քացառությամբ՝

ախտանիշերի, նշանների և կլինիկական ու լաբորատոր հետազոտությունների ընթացքում բացահայտված նորմալից շեղումների՝ այլ դասերում չդասակարգված (R00-R99)

Սույն գլուխը ներառում է հետևյալ բաժինները՝

- F00-F09 Օրգանական, ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ
- F10-F19 Հոգեկան և վարքային խանգարումներ՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով
- F20-F29 Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ
- F30-F39 Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ
- F40-F48 Ներտոիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ
- F50-F59 Վարքային համախտանիշեր՝ պայմանավորված ֆիզիոլոգիական խանգարումներով և ֆիզիկական գործոններով
- F60-F69 Չափահասի անձի և վարքի խանգարումներ
- F70-F79 Մտավոր հետամնացություն
- F80-F89 Հոգեբանական զարգացման խանգարումներ
- F90-F98 Վարքային և հուզական խանգարումներ՝ սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող
- F99-F99 Հոգեկան խանգարում՝ չճշտված

Աստիճանաված են հետևյալ դասերը՝

- F00* Դեմենցիան (թուլամտություն)՝ առաջացած Ալցհեյմերի հիվանդության ժամանակ
- F02* Դեմենցիան (թուլամտություն)՝ առաջացած այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ

ՕՐԳԱՆԱԿԱՆ (ՆԵՐԱՌՅԱԼ ՍԻՄՊՏՈՄԱՏԻԿ) ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ (F00-F09)

Այս բաժինը ներառում է մի շարք հոգեկան խանգարումներ, որոնց պատճառական հիմքում սովորաբար ընկած են ակնհայտ ուղեղային հիվանդությունը, գլխուղեղի վնասվածքը կամ ուղեղային դիսֆունկցիայի հանգեցնող այլ ախտաբանական վիճակները: Դիսֆունկցիան կարող է լինել առաջնային, երբ հիվանդությունները, վնասվածքներն ու ինսուլտները գլխուղեղն ախտահարում են ուղղակիորեն և ընտրողաբար, և երկրորդային, ինչպես համակարգային հիվանդությունների կամ խանգարումների ժամանակ, երբ գլխուղեղը վնասվում է բազմաթիվ օրգանների և համակարգերի հետ մեկտեղ: Դեմենցիան (թուլամտություն) (F00-F03) համախտանիշ է, որն առաջանում է գլխուղեղի հիվանդության (սովորաբար քրոնիկ կամ հարաճուն (պրոգրեսիվ) բնույթի) հետևանքով, որի ժամանակ խանգարվում են բազմաթիվ բարձրագույն կեղևային գործառույթներ՝ ներառյալ հիշողությունը, մտածողությունը,

կողմնորոշումը, հասկանալը, հաշվելը, սովորելու կարողությունը, խոսքը և դատողությունը: Գիտակցությունը մթազնած չէ: Ճանաչողական գործառույթի անբավարարությանը սովորաբար ուղեկցում են, իսկ երբեմն էլ նախորդում են, հուզական վերահսկման, հասարակական վարքի և մոտիվացիայի խանգարումները: Այս համախտանիշը դիտվում է Ալցհեյմերի հիվանդության, գլխուղեղի անոթային հիվանդությունների և գլխուղեղի առաջնային կամ երկրորդային այլ ախտաբանական վիճակների ժամանակ:

Համախտանիշի հիմքում ընկած հիվանդությունը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառում են լրացուցիչ ծածկագիր:

F00* Դեմենցիա (թուլամրություն)՝ առաջացած Ալցհեյմերի (Alzheimer) հիվանդության ժամանակ (G30.-†)

Ալցհեյմերի հիվանդությունը գլխուղեղի անհայտ ծագման (էթիոլոգիայի) առաջնային դեգեներատիվ հիվանդություն է՝ իրեն հատուկ նյարդաախտաբանական և նյարդաքիմիական բնութագրիչներով: Հիվանդությունը սովորաբար սկսվում է աննկատ և զարգանում է դանդաղ, բայց տարիների ընթացքում կայուն ձևով առաջադիմում է:

F00.0* Դեմենցիա՝ առաջացած Ալցհեյմերի հիվանդության ժամանակ՝ վաղ սկիզբ ունեցող՝ (G30.0†)

Դեմենցիա՝ առաջացած մինչև 65 տարեկանը սկսված Ալցհեյմերի հիվանդության ժամանակ՝ համեմատաբար արագ վատթարացող ընթացքով և բազմաթիվ բարձրագույն կեղևային գործառույթների արտահայտված խանգարումներով Ալցհեյմերի հիվանդություն, տիպ 2

Նախածերունական դեմենցիա՝ Ալցհեյմերի տեսակ

Առաջնային դեգեներատիվ դեմենցիա՝ Ալցհեյմերի տիպի՝ նախածերունական սկզբով

F00.1 Դեմենցիա՝ առաջացած Ալցհեյմերի հիվանդության ժամանակ՝ ուշ սկիզբ ունեցող՝ (G30.1†)

Դեմենցիա՝ 65 տարեկանից հետո (սովորաբար 70 տարեկանում և ավելի ուշ) սկսված Ալցհեյմերի հիվանդության ժամանակ ունի դանդաղ առաջընթաց, և հիշողության խանգարումը հանդես է գալիս որպես հիմնական ախտանիշ Ալցհեյմերի հիվանդություն, տիպ 1

Առաջնային դեգեներատիվ դեմենցիա Ալցհեյմերի տեսակի, ծերունական սկզբով Ծերունական դեմենցիա, Ալցհեյմերի տեսակ

F00.2 Դեմենցիա Ալցհեյմերի հիվանդության ժամանակ՝ ոչ բնորոշ, ատիպիկ կամ խառը տիպ (G30.8†)

Ոչ բնորոշ դեմենցիա, Ալցհեյմերի տեսակ

F 00.9 Դեմենցիա Ալցհեյմերի հիվանդության ժամանակ՝ չճշտված (G30.9†)

F01 Անոթային դեմենցիա (թուլամտություն)

Անոթային դեմենցիան անոթային հիվանդությանը, այդ թվում զարկերակային գերճնշմանն ուղեկցող ուղեղի անոթային հիվանդության արդյունքում առաջացած գլխուղեղի ինֆարկտի հետևանք է: Ինֆարկտները, որպես կանոն, փոքր են, սակայն թողնում են կուտակային (կումուլյատիվ) ազդեցություն: Սովորաբար հիվանդությունը սկսվում է ուշ տարիքում:

Ներառյալ՝

աթերոսկլերոզային թուլամտությունը

F01.0 Անոթային դեմենցիա՝ սուր սկիզբ ունեցող՝

Սովորաբար արագ զարգանում է ուղեղի անոթների թրոմբոզի, էմբոլիայի կամ արյունազեղման հետևանքով առաջացած մի շարք ինսուլտներից հետո: Հազվադեպ պատճառ կարող է լինել ուղեղի մեկ տարածուն ինֆարկտը:

F01.1 Բազմաինֆարկտային թուլամտություն՝

Սկիզբն աստիճանաբար է, կապված կրկնվող անցողիկ իշեմիկ վիճակների հետ, որոնք բերում են ինֆարկտի օջախների կուտակմանը գլխուղեղի պարենխիմայում:

Առավելապես կեղևային դեմենցիա

F01.2 Ենթակեղևային անոթային դեմենցիա՝

Ներառում է անամնեզում հիպերտենզիայի և ուղեղային կիսագնդերի սպիտակ նյութի խորը շերտերում իշեմիկ դեստրուկցիայի օջախների առկայությամբ բնութագրվող դեպքերը: Գլխուղեղի կեղևը սովորաբար պահպանված է, և դա հակադրվում է առկա կլինիկական պատկերին, որը կարող է շատ նման լինել Ալցհեյմերի հիվանդությանը բնորոշ դեմենցիային:

F01.3 Խառը կեղևային և ենթակեղևային անոթային դեմենցիա

F01.8 Այլ անոթային դեմենցիա

F01.9 Անոթային դեմենցիա՝ չճշտված

F02* Դեմենցիա (թուլամտություն) այլ հիվանդությունների ժամանակ՝ այլ դասերում դասակարգված

Դեմենցիայի դեպքեր, որոնք կապված չեն (կամ ենթադրաբար կապված չեն) Ալցհեյմերի հիվանդության կամ ուղեղի անոթային ախտաբանության հետ, այլ պայմանավորված են ուրիշ պատճառներով: Հիվանդությունը կարող է սկսվել ցանկացած տարիքում, սակայն հազվադեպ՝ ծեր հասակում:

F02.0* Դեմենցիա՝ առաջացած Պիկի (Pick) հիվանդության ժամանակ (G31.0†)

Միջին տարիքում սկսվող առաջընթաց դեմենցիա, որին բնորոշ են անձի բնույթի (բնավորության) դանդաղ առաջ ընթացող փոփոխությունները և սոցիալական դեգրադացիան, որից հետո տուժում են բանականության (ինտելեկտ), հիշողության և խոսքի/լեզվի գործառույթները՝ զուգակցվելով անտարբերության (ապաթիա), էյֆորիայի և երբեմն էլ արտաբրգային (էքստրապիրամիդային) խանգարումների հետ:

F02.1* Դեմենցիա՝ առաջացած Կրեյտցֆելդ-Յակոբի (Creutzfeldt-Jakob) հիվանդության ժամանակ (A81.0†)

Առաջընթաց և նյարդաբանական արտահայտված ախտանշաններով ուղեկցվող դեմենցիա, որի հիմքում ենթադրաբար ընկած են փոխանցվող վարակիչ գործոնով պայմանավորված յուրահատուկ նյարդաախտաբանական փոփոխությունները: Սովորաբար սկսվում է միջին կամ ծերունական տարիքում, չնայած կարող է զարգանալ նաև ցանկացած այլ հասուն տարիքում: Ընթացքը ենթասուր է և 1-2 տարի հետո հանգեցնում է մահվան:

F02.2* Դեմենցիա՝ առաջացած Հենտինգտոնի (Huntington) հիվանդության ժամանակ (G10†)

Դեմենցիա, որը հանդես է գալիս որպես գլխուղեղի լայնատարած դեգեներացիա (կազմափոխման) արտահայտություններից մեկը: Այս խանգարումը ժառանգվում է եզակի աուտոսոմ-դոմինանտ գենի միջոցով: Ախտանիշերը սովորաբար ի հայտ են գալիս 30-40 տարեկանում: Դանդաղ առաջ ընթացող հիվանդություն է, որը սովորաբար հանգեցնում է մահվան 10-15 տարի հետո:

Դեմենցիա՝ առաջացած Հենտինգտոնի խորեայի ժամանակ

F02.3* Դեմենցիա՝ առաջացած Պարկինսոնի (Parkinson) հիվանդության ժամանակ (G20†)

Հաստատված Պարկինսոնի հիվանդության ընթացքում զարգացող դեմենցիա: Դեռևս չեն նկարագրվել այս հիվանդությանը բնորոշ տարբերակիչ կլինիկական նշանները:

Դեմենցիա՝ հետևյալ դեպքերում՝

- դողացող պարալիզ (paralysis agitans)
- պարկինսոնիզմ

F02.4* Դեմենցիա՝ առաջացած մարդու իմունային անբավարության վիրուսով (ՄԻԱՎ) հարուցած հիվանդության ժամանակ (B22.0†)

ՄԻԱՎ հիվանդության ընթացքում զարգացող դեմենցիա, որի ժամանակ բացակայում է ՄԻԱՎ վարակից տարբեր որևէ այլ ուղեկցող հիվանդություն կամ վիճակ, որի առկայությամբ հնարավոր լիներ բացատրել կլինիկական նշանները:

F02.8* Դեմենցիա այլ ճշտված հիվանդությունների ժամանակ՝ այլ դասերում դասակարգված

Դեմենցիա հետևյալ դեպքերում՝

- ուղեղային լիպիդոզ (E75.-†)
- էպիլեպսիա (G40.-†)
- հեպատոլենտիկուլյար դեգեներացիա (E83.0†)
- հիպերկալցիեմիա (E83.5†)
- հիպոթիրեոզ ձեռքբերովի (E01.-†, E03.-†)
- թունավորումներ (T36-T65†)
- ցրված սկլերոզ (C35†)
- նեյրոսիֆիլիս (A52.1†)
- նիկոտինաթթվի անբավարարություն (պելագրա) (E52†)
- հանգուցային պերիարտերիիտ (M30.0†)
- համակարգային կարմիր գայլախտ (M32†)
- տրիպանոսոմոզ (B56-†, B57-†)
- ուրեմիա (N18.5†)
- վիտամին B₁₂-ի անբավարարություն (E53.8)

F03 Դեմենցիա՝ չճշտված

Նախաձերտունական

- դեմենցիա՝ ԱՀՃ
- հոգեգարություն (փսիխոզ)՝ ԱՀՃ

Առաջնային դեգեներատիվ դեմենցիա՝ ԱՀՃ

Ծերունական՝

թուլամտություն՝

- ԱՀՃ
- դեպրեսիվ կամ պարանոիդ տիպ

փսիխոզ՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

ծերունական դեմենցիայի՝ զառանցանքով (դելիրիում) կամ գիտակցության սուր խառնաշփոթով ուղեկցվող (F05.1)

ծերության՝ ԱՀՃ (R54)

F04 Օրգանական ամնեստիկ համախտանիշ՝ չպայմանավորված ակոհոլով կամ հոգեակտիվ նյութերով

Մոտակա և հեռավոր անցյալում տեղի ունեցած դեպքերի նկատմամբ հիշողության արտահայտված խանգարման համախտանիշ, որին բնորոշ են վերջին դեպքերի հետ

կապված հիշողության վերարտադրման պահպանված ունակությունը, նոր նյութի յուրացման կարողության նվազումը և ժամանակի մեջ ապակողմնորոշվածությունը: Բնորոշ առանձնահատկություն կարող է լինել կոնֆաբուլացիան, սակայն ընկալումը և մյուս ճանաչողական գործառույթները, ներառյալ ինտելեկտը, սովորաբար պահպանված են: Կանխատեսումը կախված է հիմնական հիվանդության ընթացքից:

Ներառյալ՝

Կորսակոմայան համախտանիշը կամ փսիխոզը (ոչ ալկոհոլային)

Բացառությամբ՝

հիշողության կորստի՝

- ԱՀՃ (R41.3)
- անտերոգրադ (առաջընթացային) (R41.1)
- տարանջատումային (F44.0)
- ռետրոգրադ (հետընթացային) (R41.2)

Կորսակոմայան համախտանիշի՝

- ալկոհոլային ծագման կամ չճշտված (F10.6)
- հոգեակտիվ այլ նյութերի օգտագործումից առաջացած (F11-F19 ընդհանուր 4-րդ նիշով .6)

F05 Չառանցանք՝ չպայմանավորված ալկոհոլի և այլ հոգեակտիվ նյութերի գործածմամբ

Պատճառագիտական տեսանկյունից ոչ յուրահատուկ օրգանական ուղեղային համախտանիշ, որը բնորոշվում է գիտակցության, ուշադրության, ընկալման, մտածողության, հիշողության, հոգեշարժական վարքի, հույզերի, քուն-արթուն ռիթմի միաժամանակյա խանգարմամբ: Վիճակի տևողությունը փոփոխական է, իսկ ծանրության աստիճանը տատանվում է թեթևից մինչև շատ ծանրի սահմաններում:

Ներառյալ՝

սուր կամ ենթասուր՝

- ուղեղային համախտանիշ
- շփոթ վիճակ (ոչ ալկոհոլային)
- վարակային փսիխոզ (հոգեգարություն)
- օրգանական ռեակցիա
- հոգեօրգանական համախտանիշ

Բացառությամբ՝

սպիտակ տենդի (delirium tremens)՝ ալկոհոլային կամ չճշտված (F10.4)

F05.0 Չառանցանք՝ առանց դեմենցիայի ֆոնի

F05.1 Չառանցանք՝ դեմենցիայի ֆոնի վրա

Վերը նշված չափանիշներին համապատասխանող վիճակներ, որոնք սակայն զարգացել են դեմենցիայի ֆոնի վրա (F00-F03)

F05.8 Այլ զառանցանք

Խառը ծագումով զառանցանք

Հետվիրահատական զառանցանք

F05.9 Չառանցանք՝ չճշտված

F06 Հոգեկան այլ խանգարումներ՝ պայմանավորված գլխուղեղի վնասվածքով և դիսֆունկցիայով կամ սոմատիկ հիվանդությամբ

Այս դասում ներառված են տարբեր վիճակներ, որոնք գտնվում են պատճառական կապի մեջ գլխուղեղի առաջնային հիվանդությամբ պայմանավորված ուղեղային խանգարումների, գլխուղեղը երկրորդայնորեն արտահարող համակարգային

հիվանդությունների, էկզոգեն թունավոր նյութերի կամ հորմոնների ազդեցության, ներզատական խանգարումների կամ այլ սոմատիկ հիվանդությունների հետ:

Բացառությամբ՝

դեպքերի, երբ զուգակցվում է՝

- գառանցանքի հետ (F05.-)
- F00-F03 դասերում դասակարգված դեմենցիայի հետ ակոհոլի և այլ հոգեակտիվ նյութերի օգտագործման հետևանքով (F10-19)

F06.0 Օրգանական հալյուցիոզ

Կայուն կամ կրկնվող, սովորաբար տեսողական կամ լսողական ցնորքներով արտահայտվող խանգարում, որն առաջանում են պարզ գիտակցության դեպքում և հիվանդի կողմից կարող են (ոչ միշտ) ընկալվել որպես իրականություն: Կարող է նկատվել ցնորքների գառանցական մեկնաբանություն, սակայն կլինիկական պատկերում գառանցանքները չեն գերակշռում, շրջապատի ընկալումը կարող է լինել պահպանված:

Օրգանական ցնորքային վիճակ (ոչ ակոհոլային)

Բացառությամբ՝

- ակոհոլային հալյուցիոզի (ցնորքային խանգարում) (F10.5)
- շիզոֆրենիայի (F20.-)

F06.1 Օրգանական կատատոնիկ խանգարում

Հոգեշարժական ակտիվության աճի (գրգռվածություն) կամ նվազման (ստուպոր) խանգարում, որն ուղեկցվում է կատատոնիայի ախտանիշերով: Հոգեշարժական խանգարման ծայրահեղ արտահայտությունները կարող են հաջորդել միմյանց:

Բացառությամբ՝

կատատոնիկ շիզոֆրենիայի (F20.2) ընդարմացման (ստուպոր)՝

- ԱՀՃ (R40.1)
- տարանջատումային կամ դիսոցիատիվ (F44.2)

F06.2 Օրգանական գառանցական (շիզոֆրենանման) խանգարում

Ախտահարում, որի կլինիկական պատկերում գերակշռում են մշտական կամ կրկնվող գառանցական մտքերը: Զառանցական մտքերը կարող են ուղեկցվել ցնորքներով: Հնարավոր է շիզոֆրենիային բնորոշ ախտանիշերի առկայությունը, ինչպես օրինակ՝ տարօրինակ (արտառոց) ցնորքները կամ մտածողության խանգարումը:

Պարանոիդ կամ ցնորագառանցական (հալյուցիոսատոր-պարանոիդ)

օրգանական խանգարում

Շիզոֆրենանման փսիխոզ՝ էպիլեպսիայի ժամանակ

Բացառությամբ՝

խանգարման՝

- սուր և անցողիկ փսիխոտիկ (F23.-)
- քրոնիկ գառանցական (F22.-)
- հոգեակտիվ նյութերի օգտագործմամբ պայմանավորված փսիխոտիկ (F11-19 ընդհանուր չորրորդ .5 նիշով)

շիզոֆրենիա (F20.-)

F06.3 Տրամադրության (աֆեկտիվ) օրգանական խանգարումներ

Խանգարումներ, որոնց բնորոշ է տրամադրության կամ աֆեկտի փոփոխությունը: Սովորաբար ուղեկցվում են ակտիվության ընդհանուր մակարդակի փոփոխությամբ, դեպրեսիայով հիպոմանիա (հիպոմոլություն), մանիա (մոլություն) կամ երկբևեռ վիճակներով (տե՛ս F30-F38), սակայն առաջ են գալիս որպես որևէ օրգանական հիվանդության հետևանք:

Բացառությամբ՝

տրամադրության խանգարումների՝ ոչ օրգանական բնույթի կամ չճշտված (F30-F39)

F06.4 Օրգանական տագնապային խանգարում

Գեներալիզացված (համատարածուն) տագնապի (F41.1), կամ խուճապային խանգարման (F41.0), կամ դրանց զուգակցման հիմնական գծերով բնորոշվող խանգարում, որը սակայն առաջ է գալիս որպես օրգանական խանգարման հետևանք:

Բացառությամբ՝

ոչ օրգանական կամ չճշտված տագնապային խանգարումների (F41.-)

F06.5 Օրգանական դիսոցիատիվ խանգարում

Անցյալի հիշողության, սեփական անձի գիտակցման, անմիջական զգացողությունների և մարմնի շարժումների վերահսկման միջև գոյություն ունեցող նորմալ ինտեգրացիայի մասնակի կամ լրիվ կորստով բնութագրվող խանգարում (տե՛ս F44.-), որը սակայն առաջ է գալիս որպես օրգանական խանգարման հետևանք:

Բացառությամբ՝

դիսոցիացված (կոնվերսիոն) խանգարումների՝ ոչ օրգանական կամ չճշտված (F44.-)

F06.6 Օրգանական ծագման հուզական անկայուն (ասթենիկ) խանգարում

Արտահայտված մշտական հուզական անզսպությամբ կամ անկայունությամբ, հոգնածության և բազմաթիվ տհաճ ֆիզիկական զգացողություններով (օրինակ՝ գլխապտույտ) և ցավերով բնորոշվող խանգարում, որը սակայն առաջ է գալիս որպես օրգանական խանգարման հետևանք:

Բացառությամբ՝

սոմատոֆորմ խանգարումների՝ ոչ օրգանական կամ չճշտված (F45)

F06.7 Թեթև կոգնիտիվ (իմացական) խանգարում

Հիշողության իջեցումով, սովորելու դժվարություններով, մի խնդրի վրա երկարատև կենտրոնանալու հնարավորության իջեցումով բնորոշվող խանգարում: Հաճախ առկա է արտահայտված հոգեկան հոգնածության զգացում մտավոր խնդիրների լուծման փորձի ժամանակ, և նոր բան սովորելը սուբյեկտիվորեն բարդ է թվում, նույնիսկ, երբ այն օբյեկտիվորեն հաջող է ընթանում: Այս ախտանիշերից ոչ մեկն այնքան արտահայտված (ծանր) չէ, որ ախտորոշվի որպես թուլամտություն (F00-F03) կամ դելիրիում (F05.-): Այս ախտորոշումը կարող է դրվել միայն այն դեպքում, երբ առկա է կապը ճշտված ֆիզիկական (սոմատիկ) խանգարման հետ և չպետք է դրվի F10-F99 դասերում դասակարգված հոգեկան կամ վարքային խանգարումներից որևէ մեկի առկայության ժամանակ: Այս խանգարումը կարող է նախորդել շատ վարակային և ֆիզիկական (ինչպես գլխուղեղային, այնպես էլ համակարգային) խանգարումներին, ուղեկցել դրանց կամ հաջորդել, սակայն պարտադիր չեն ախտաբանական գործընթացի մեջ գլխուղեղի ընդգրկվածության նշանները: Այն կարող է տարբերվել հետէնցեֆալիտային համախտանիշից (F07.1) և հետկոնտուզիոն համախտանիշից (F07.2) մյուսներից տարբերվող իր էթիոլոգիայով, ընդհանուր առմամբ թույլ արտահայտված ախտանիշերի ավելի սահմանափակ շրջանակով և սովորաբար ավելի կարճ տևողությամբ:

F06.8 Այլ ճշտված հոգեկան խանգարումներ՝ պայմանավորված գլխուղեղի վնասվածքով և դիսֆունկցիայով կամ ֆիզիկական (սոմատիկ) հիվանդությամբ
Էպիլեպտիկ փսիխոզ՝ ԱՀՃ

F06.9 Չճշտված հոգեկան խանգարումներ՝ պայմանավորված գլխուղեղի վնասվածքով և դիսֆունկցիայով կամ սոմատիկ հիվանդությամբ
Օրգանական՝

- ուղեղային համախտանիշ՝ ԱՀՃ
- հոգեկան խանգարում՝ ԱՀՃ

F07 Անձի և վարքի խանգարումներ՝ պայմանավորված գլխուղեղի հիվանդությամբ, վնասվածքով կամ դիսֆունկցիայով

Անձի և վարքի փոփոխությունը կարող է հանդես գալ որպես մնացորդային կամ ուղեկցող խանգարում գլխուղեղի հիվանդության, վնասվածքի կամ դիսֆունկցիայի ժամանակ:

F07.0 Անձի օրգանական խանգարում

Մինչ հիվանդանալը մարդուն հատուկ, սովորական վարքագծի փոփոխմամբ բնորոշվող խանգարում՝ ներառյալ հույզերի, պահանջմունքների և հակումների արտահայտման ձևը: Կլինիկական պատկերը կարող են լրացնել ճանաչողական և մտածողական գործունեության նվազումը, ինչպես նաև սեքսուալ փոփոխությունները:

Օրգանական ծագման՝

- կեղծ փսիխոպաթացված անձ
- կեղծ սակավամիտ անձ

Համախտանիշ՝

- ճակատային բլթի
- լիմբային էպիլեպսիայով անձի
- լոբոտոմիայի
- հետլեյկոտոմիկ

Բացառությամբ՝

անձի կայուն փոփոխության՝

- աղետի ապրումից հետո (F62.0)
- հոգեկան հիվանդությունից հետո (F62.1)

ուղեղի հետցնցումային համախտանիշի (F07.2)

հետէնցեֆալիտային համախտանիշի (F07.1)

անձի յուրահատուկ խանգարման (F60.-)

F07.1 Հետէնցեֆալիտային համախտանիշ

Վարքի մնացորդային ոչ սպեցիֆիկ և անկայուն փոփոխություններ, որոնք ուղեկցում են կրած վիրուսային կամ մանրէային էնցեֆալիտի առողջացման շրջանը: Սկզբունքորեն տարբերվում է անձի օրգանական խանգարումներից պրոցեսի դարձելիությամբ:

Բացառությամբ՝

Անձի օրգանական խանգարման (F07.0)

F07.2 Հետցնցումային համախտանիշ

Գլխի վնասվածքից հետո զարգացող (սովորաբար բավականին ծանր, գիտակցության կորստով) համախտանիշ է և ընդգրկում է մի շարք ախտանիշեր՝ գլխացավ, գլխապտույտ, հոգնածության զգացում, դյուրագրգռություն, կենտրոնացման և խնդիրների լուծման դժվարություն, հիշողության խանգարում, անքնություն, դիմադրողականության իջեցում՝ հուզական ծանրաբեռնվածության, ալկոհոլի, սթրեսների նկատմամբ:

Ուղեղի հետսալքարդային համախտանիշ (էնցեֆալոպաթիա)

Ուղեղի հետվնասվածքային համախտանիշ, ոչ փսիխոզային

Բացառությամբ՝

ուղեղի ընթացիկ ցնցման (S06.0)

F07.8 Անձի և վարքի օրգանական այլ խանգարումներ՝ պայմանավորված գլխուղեղի հիվանդությամբ, վնասվածքով և ֆունկցիայի խանգարումով
Աջ կիսագնդային օրգանական աֆեկտիվ խանգարում

F07.9 Անձի և վարքի օրգանական չճշտված խանգարում՝ պայմանավորված գլխուղեղի հիվանդությամբ, վնասվածքով կամ ֆունկցիայի խանգարումով
Օրգանական հոգեհամախտանիշ

F09 Չճշտված օրգանական կամ ախտանշանային (սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ

Ներառյալ՝

Փսիխոզը՝

- օրգանական՝ ԱՀՃ
- ախտանշանային՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

Փսիխոզի՝ ԱՀՃ (F29)

ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ՀՈԳԵԱԿՏԻՎ ՆՅՈՒՅԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ (F10-F19)

Այս բաժինն ընդգրկում է կլինիկական արտահայտությամբ և ծանրության աստիճանով տարբեր խանգարումների լայն տիրույթ, որոնց զարգացումը կապված է բժշկական ցուցումներով նշանակված կամ չնշանակված մեկ կամ մի քանի հոգեակտիվ նյութեր գործածելու հետ: Ծածկագրի երրորդ նիշը նույնականացնում է օգտագործված նյութը, իսկ չորրորդ նիշը ճշտում է վիճակի կլինիկական բնութագիրը: Այդպիսի ծածկագրումը խորհուրդ է տրվում կատարել յուրաքանչյուր ճշտված նյութի համար, սակայն անհրաժեշտ է նշել, որ ոչ բոլոր քառանիշ ծածկագրերն են կիրառելի բոլոր նյութերի համար:

Հոգեակտիվ նյութի նույնականացումը պետք է հիմնվի տեղեկատվության հնարավորինս շատ աղբյուրների վրա: Դրանք են՝ հիվանդի տված տեղեկությունները, արյան և այլ կենսաբանական հեղուկների հետազոտություն, բնորոշ սոմատիկ և հոգեբանական ախտանիշները, կլինիկական և վարքային նշանները և այլ ակնհայտ տվյալները, այնպիսիք, ինչպիսիք են հիվանդի մոտ եղած նյութերը կամ այլ տեղեկացված մարդկանց տվյալները: Թմրանյութ օգտագործողներից շատերը օգտագործում են ավելի քան մեկ թմրանյութ: Հիմնական ախտորոշումը հնարավորինս պետք է հաստատվի ըստ կլինիկական ախտանիշներն առաջացնող նյութի (կամ նյութերի խմբի): Այլ ախտորոշումները պետք է ծածկագրվեն այն դեպքում, երբ այլ հոգեակտիվ նյութերը ընդունվել են թունավորում առաջացնող քանակությամբ (ընդհանուր չորրորդ նիշը՝ .0), առողջությանը վնաս պատճառելու չափով (ընդհանուր չորրորդ նիշը՝ .1), բերել են կախվածության (ընդհանուր չորրորդ նիշը՝ .2) կամ այլ խանգարումների (ընդհանուր չորրորդ նիշը՝ .3-.9):

Միայն այն դեպքերում, երբ հոգեակտիվ նյութերի ընդունումը կրել է քառասյին կամ խառը բնույթ, կամ տարբեր հոգեմետ նյութերի դերը կլինիկական պատկերում հնարավոր չէ պարզել, անհրաժեշտ է ախտորոշել մի քանի (մեկից ավելի) թմրանյութերի օգտագործման հետևանքով առաջացած խանգարումները (F19.-):

Բացառությամբ՝

կախվածություն չառաջացնող նյութերի չարաշահման (F55)

Ստորև ներկայացված են չորրորդ նիշով արտահայվող ենթաբաժանումները, որոնք կիրառվում են հաջորդող F10-F19 դասերում.

.0 Սուր թունավորում

Հոգեակտիվ նյութի կիրառմամբ առաջացած վիճակ, որն արտահայտվում է գիտակցության, իմացական ունակությունների, ընկալման, հուզական կամ վարքի կամ այլ հոգեֆիզիոլոգիական ֆունկցիաների և ռեակցիաների խանգարումներով: Այդ խանգարումներն անմիջականորեն պայմանավորված են նյութի սուր դեղաբանական ազդեցությամբ և որոշ ժամանակ անց անհետանում են լրիվ վերականգնումով, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ են գալիս հյուսվածքային ախտահարումներ կամ այլ բարդություններ:

Բարդությունները կարող են ներառել վնասվածք, փսխման զանգվածի ասպիրացիա, զառանցանք, կոմա, ցնցումներ (ջրածություն) և այլ բժշկական բարդություններ: Այդ բարդությունների բնույթը կախված է հոգեակտիվ նյութի դեղաբանական դասից և ներմուծման եղանակից:

Սուր հարբածություն (ալկոհոլիզմի ժամանակ)

«Bad trips» (թմրանյութային հարբածություն)

Ալկոհոլային հարբածություն՝ ԱՀՃ

Ախտաբանական թունավորում

Տրանսի և մոլեգնության տիպի խանգարումներ հոգեակտիվ նյութից առաջացած թունավորման ժամանակ

Բացառությամբ՝

ինտոքսիկացիայի՝ առաջացած թունավորման ժամանակ (T36-T50)

.1 Գործածում վնասակար հեղուկներով

Հոգեակտիվ նյութերի օգտագործումը առողջությանը վնաս հասցնելու միջոց է: Վնասը կարող է լինել ֆիզիկական (ինչպես օրինակ՝ հոգեակտիվ նյութերի ինքնակիրառվող ներարկումներից առաջացած հեպատոտի դեպքեր) կամ հոգեկան (ինչպես օրինակ՝ ծանր ալկոհոլային հարբածությունից հետո երկրորդային դեպրեսիվ խանգարման դեպքեր):

Հոգեակտիվ նյութի չարաշահում

.2 Կախվածության համախտանիշ

Վարքային, ճանաչողական և ֆիզիոլոգիական համախտանիշերի համալիր է, որն առաջանում է նյութի կրկնակի ընդունումից հետո և սովորաբար ներառում է նյութն ընդունելու նկատմամբ ուժեղ հակումը, օգտագործման նկատմամբ հսկողության դժվարացումը, օգտագործման համառորեն շարունակումը՝ չնայած վնասակար ազդեցությանը, հոգեակտիվ նյութի օգտագործման շարունակումը՝ ի վնաս գործունեության մյուս տեսակների և պարտականությունների կատարման, ինչպես նաև օգտագործման թույլատրելի սահմանների (տոլերանտության) աճը, երբեմն էլ ժուժկալային (աբստինենտային) վիճակը:

Կախվածության համախտանիշը կարող է լինել որոշակի նյութի (օրինակ՝ ծխախոտի, ալկոհոլի կամ դիազեպամի) կամ նյութերի դասի (օրինակ՝ ափիոնային թմրանյութեր) կամ դեղաբանորեն տարբեր հոգեակտիվ նյութերի լայն տիրույթի նկատմամբ:

Քրոնիկ ալկոհոլիզմ

Դիսպոմանիա

.3 Ժուժկալային (աբսորինենտ , դադարեցման, զրկանք) վիճակ

Տարբեր զուգակցումներով և ծանրության տարբեր աստիճանի այնպիսի ախտանիշերի խումբ, որոնք ի հայտ են գալիս մշտական գործածումից հետո հոգեակտիվ նյութի ընդունման բացարձակ կամ հարաբերական դադարեցման ժամանակ: Ժուժկալային վիճակի սկիզբը և ընթացքը սահմանափակ են ժամանակի առումով և պայմանավորված են ինչպես հոգեակտիվ նյութի տեսակով, այնպես էլ ընդունման դադարեցումով կամ քանակի նվազեցումով, ինչպես նաև գործածած նյութի չափաքանակով:

Ժուժկալային վիճակը կարող է բարդանալ ջղաձգություններով (ցնցումներ):

.4 Ժուժկալային վիճակ՝ դելիրիումով

Վիճակ, որի ժամանակ վերը նկարագրված (.3 ընդհանուր չորրորդ նիշը) ժուժկալային վիճակը բարդացած է F05.- դասում բնութագրված դելիրիումով: Այս վիճակը կարող է ուղեկցվել նաև ջղաձգություններով: Այդ վիճակը դասակարգվում է F05.8 ենթադասում այն դեպքում, երբ խանգարման էթիոլոգիայում որոշակի դեր են խաղում օրգանական գործոնները:

Սպիտակ տենդ (ալկոհոլային)

.5 Փսիխոտիկ խանգարում

Հոգեակտիվ նյութերի օգտագործման ժամանակ կամ դրանից հետո առաջացած փսիխոտիկ այնպիսի ախտանիշերի համալիր, որոնք չեն բացատրվում միայն սուր թունավորմամբ, և որոնք չեն հանդիսանում ժուժկալային վիճակի բաղադրիչ մաս: Խանգարումը բնորոշվում է ցնորքով (սովորաբար լսողական, բայց հաճախ և մի քանի տեսակով), ընկալման խանգարմամբ (հաճախ պարանոիկ կամ հետապնդման մոլագարության տիպի), հոգեշարժողական խանգարումներով (զրգռվածություն կամ ստուպոր), ուժեղ վախից մինչև էքստազը տատանվող ոչ նորմալ աֆեկտով: Գիտակցությունը սովորաբար պարզ է, սակայն կարող է լինել մթազնման որոշ աստիճան, բայց առանց ծանր շփոթմունքի:

Ալկոհոլային՝

- հալյուցինոզ
- խանդի զառանցանք
- պարանոյա
- փսիխոզ՝ ԱՀԾ

Բացառությամբ՝

ալկոհոլային կամ այլ հոգեակտիվ նյութի օգտագործումից առաջացած մնացորդային կամ հետաձգված փսիխոտիկ խանգարումների (F10-F19 ընդհանուր չորրորդ .7 նիշով)

. 6 Ամենատիկ համախտանիշ

Մոտակա և հեռավոր անցյալի իրադարձությունների նկատմամբ հիշողության արտահայտված քրոնիկ նվազումով բնութագրվող համախտանիշ է: Իրադարձությունների անմիջական վերականգնումը հիշողության մեջ սովորաբար խանգարված չէ: Բնորոշ է հիշողության ավելի արտահայտված խանգարումը մոտակա իրադարձությունների, քան հեռավոր անցյալի նկատմամբ: Սովորաբար լավ

արտահայտված են ժամանակի զգացողության և իրադարձությունների հաջորդականության խանգարումները, ինչպես նաև առկա են նոր նյութի յուրացման դժվարություններ: Կոնֆաբուլյացիան հնարավոր է, բայց պարտադիր չէ: Մնացած ճանաչողական ֆունկցիաները համեմատաբար լավ են պահպանված, և հիշողության խանգարումները համաչափ չեն այլ խանգարումների արտահայտվածությանը:

Հիշողության խանգարում՝ պայմանավորված ակոհոլով կամ թմրանյութով
Կորսակովյան փսիխոզ կամ համախտանիշ՝ պայմանավորված ակոհոլով կամ այլ հոգեակտիվ նյութով կամ չճշտված

Անհրաժեշտության դեպքում կիրառել լրացուցիչ ծածկագիր (E51.2†, G32.8*), եթե այն զուգակցված է Վերնիկեի (Wernicke) հիվանդության կամ համախտանիշի հետ: **Բացառությամբ՝**

ոչ ակոհոլային կորսակովյան (Korsakov) փսիխոզի կամ համախտանիշի (F04)

.7 Մնացորդային և փսիխոտիկ խանգարում ուշ սկզբով

Խանգարում, որի ժամանակ ակոհոլի կամ հոգեակտիվ նյութերի ընդունմամբ հարուցված ճանաչողական գործառույթի, հույզերի, անձի կամ վարքի խանգարումները կարող են պահպանվել հոգեակտիվ նյութի անմիջական ազդեցության շրջանից հետո: Խանգարման սկիզբը պետք է անմիջականորեն կապված լինի հոգեակտիվ նյութի կիրառման հետ: Երբ խանգարումը սկսվում է հոգեակտիվ նյութի գործածման էպիզոդներից ուշ, այդ դեպքերը պետք է ծածկագրվեն վերը նշված չորրորդ նիշով միայն այն պարագայում, եթե հստակ և փաստարկված ձևով ապացուցված է խանգարման պատկանելիությունը հոգեակտիվ նյութի ազդեցության մնացորդային երևույթներին: Մնացորդային երևույթները (flashbacks) կարող են տարբերվել փսիխոտիկ վիճակից մասամբ իրենց էպիզոդային բնույթով, ավելի հաճախ՝ խիստ կարճ տևողությամբ և ակոհոլի և այլ հոգեակտիվ նյութերի գործածման նրանց նախկին փորձի կրկնությամբ:

Ակոհոլային դեմենցիա (թուլամտություն)

Քրոնիկ ակոհոլային ուղեղային համախտանիշ

Դեմենցիա և ճանաչողական գործառույթների խանգարման կայուն այլ թեթև ձևեր

«Ֆլեշբեկ» (Flashbacks) ռեմինեսցենցիա

Հոգեակտիվ նյութի օգտագործումից առաջացած հետաձգված փսիխոտիկ խանգարում

Հալուցիոզեն նյութի օգտագործումից հետո ընկալման խանգարում
Մնացորդային՝

- հուզական (աֆեկտիվ) խանգարում
- անձի և վարքի խանգարում

Բացառությամբ՝

ակոհոլային կամ հոգեակտիվ նյութով հարուցված՝

Կորսակովի համախտանիշի (F10-F19 ընդհանուր չորրորդ .6 նիշով)

փսիխոտիկ վիճակի (F10-F19 ընդհանուր չորրորդ .6 նիշով)

.8 Հոգեկան և վարքի այլ խանգարումներ

.9 Հոգեկան և վարքի խանգարում՝ չճշտված

F10 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած ակոհոլի օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F11 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած ափիոնային միջոցների օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F12 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած կանեփի (կաննաբիոիդներ) օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F13 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած հանգստացնող դեղերի (սեդատիվներ) և քնաբերների օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F14 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած կոկաինի օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F15 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած այլ խթանիչների (ներառյալ կոֆեինը) օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F16 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած հալյուցիոզենների օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F17 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած ծխախոտի օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F18 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած ցնդող լուծիչների օգտագործումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

F19 Հոգեկան և վարքի խանգարումներ՝ առաջացած մի քանի թմրամիջոցների միաժամանակյա օգտագործումից և այլ հոգեակտիվ նյութերի գործածումից

(ենթաբաժանումները տե՛ս անմիջապես վերևում, F10-ից առաջ)

Այս վերջին դասը պետք է օգտագործվի այն ժամանակ, երբ հայտնի է երկու և ավելի հոգեակտիվ նյութերի օգտագործման մասին, սակայն հնարավոր չէ սահմանել, թե դրանցից որն է ավելի պատասխանատու առաջացած վիճակի համար: Այս դասը պետք է կիրառել նաև այն դեպքերում, երբ ճշգրիտ որոշված չէ օգտագործված որոշ կամ բոլոր հոգեակտիվ նյութերի տեսակը, քանի որ բազմակի թմրանյութեր օգտագործողները հաճախ իրենք ստույգ չգիտեն, թե ինչ են օգտագործում:

Ներառյալ՝

թմրամիջոցների չարաշահումը՝ ԱՀՃ

ՇԻՂՈՖՐԵՆԻԱ, ՇԻՂՈՏԻՊԱՅԻՆ ԵՎ ԶԱՌԱՆՑԱՆՔԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ (F20-F29)

Այս բաժնում ներառված են շիզոֆրենիան՝ որպես խմբի կարևորագույն բաղադրիչ մաս, շիզոտիպային խանգարումը, քրոնիկ զառանցական խանգարումը և սուր և անցողիկ փսիխոտիկ խանգարումների մեծ խումբը: Շիզոաֆեկտիվ խանգարումները, չնայած իրենց հակասական բնույթին, ևս ընդգրկված են այս բաժնում:

F20 Շիզոֆրենիա

Շիզոֆրենային խանգարումները սովորաբար բնորոշվում են մտածողության և ընկալման էական և բնորոշ խանգարումներով, ինչպես նաև ոչ համարժեք կամ բթացած աֆեկտներով (հուզական արձագանք): Պարզ գիտակցությունը և ինտելեկտուալ կարողությունները սովորաբար պահպանված են լինում, բայց ժամանակի ընթացքում կարող են զարգանալ որոշակի իմացական խանգարումներ: Ամենակարևոր հոգեախտաբանական նշանները ներառում են մտքերի անդրադարձը (արձագանք), ուրիշի մտքի ներմուծման կամ սեփական մտքի գողացված լինելու զգացումը, տարածության վրա մտքերի հաղորդումը, զառանցական ընկալումը և դրա ազդեցությամբ (դրսից վերահսկման) զառանցական մտքերը, ակտիվ գործողությունը կամ անտարբերությունը (պասիվ, իներտ), հիվանդին երրորդ դեմքով մեկնաբանող կամ քննարկող լսողական ցնորքները, մտածողության խանգարումները և բացասական (նեգատիվ) ախտանիշները:

Շիզոֆրենիկ խանգարումների ընթացքը կարող է լինել երկարատև կամ էպիզոդային, խանգարումների առաջընթացով կամ կայուն դեֆիցիտով, կամ կարող են լինել հիվանդության մեկ կամ ավելի էպիզոդներ՝ լրիվ կամ ոչ լրիվ ռեմիսիայով:

Շիզոֆրենիա չպետք է ախտորոշվի արտահայտված դեպրեսիվ կամ մոլագար մանիակալ ախտանիշների առկայության դեպքում, քանի դեռ չի պարզվել, որ շիզոֆրենիայի ախտանիշներն են նախորդել աֆեկտիվ խանգարմանը: Շիզոֆրենիա չպետք է ախտորոշել նաև գլխուղեղի ակնհայտ հիվանդության դեպքում, ինչպես նաև թմրանյութային թունավորման և ժուժկալության ընթացքում:

Էպիլեպսիայի և գլխուղեղի այլ հիվանդությունների ժամանակ զարգացող նման խանգարումները պետք է ծածկագրել F06.2 ենթադասի տակ, իսկ եթե դրանք առաջացել են հոգեակտիվ նյութերի օգտագործումից՝ F10-F19 դասերի տակ -5 ընդհանուր չորրորդ նիշով:

Բացառությամբ՝

շիզոֆրենիայի՝

- սուր (չտարբերակված) (F23.2)
- ցիկլային (F25.2)

շիզոֆրենային ռեակցիայի (F23.2)

շիզոտիպային խանգարման (F21)

F20.0 Շիզոֆրենիա՝ պարանոյի դձ

Շիզոֆրենիայի ձև է, որի կլինիկական պատկերում գերիշխում է հարաբերական կայուն, հաճախ պարանոյի զառանցանքը, սովորաբար ուղեկցվում է ցնորքով, հատկապես լսողական, և ընկալման խանգարմամբ: Հույզերի, կամքի, խոսքի խանգարումները և կատատոնիկ ախտանիշները կամ բացակայում են, կամ համամատաբար թույլ են արտահայտված:

Շիզոֆրենիա՝ պարաֆրեն ձև

Բացառությամբ՝

- նախաձերունական (ինվոլյուցիոն) պարանոյի վիճակի (F22.8)
- պարանոյայի (F22.0)

F20.1 Շիզոֆրենիա՝ հեբեֆրենային ձև

Շիզոֆրենիայի ձև է, որի ժամանակ գերիշխում են աֆեկտիվ փոփոխությունները: Զառանցանքներն ու ցնորքները մակերեսային են և դրվագային (ֆրագմենտային), վարքը՝ տարօրինակ և անկանխատեսելի, սովորաբար՝ սեթևեթ (մաներիզմ): Տրամադրությունը փոփոխական է և ոչ համարժեք, մտածողությունը՝ ապակազմակերպված, խոսքը՝ անկապ: Առկա է

սոցիալական մեկուսացման միտում: Կանխատեսումը անբարենպաստ է «բացասական» ախտանիշերի, հատկապես աֆեկտիվ հարթեցման և կամքի կորստի, արագ զարգացման պատճառով: Հեբեֆրենիա ախտորոշվում է միայն դեռահասների (պատանիներ) և երիտասարդների մոտ:

Ապակազմակերպված շիզոֆրենիա
Հեբեֆրենիա

F20.2 Շիզոֆրենիա՝ կատատոնիկ ձև

Շիզոֆրենիայի ձև է, որի կլինիկական պատկերում գերիշխում են բևեռային բնույթի ընդմիջվող փսիխոմոտոր խանգարումներ, ինչպիսիք են հիպերկլինեզը և արգելակվածությունը (ստուպոր), ինքնաբերական հնազանդությունը (ենթարկվածություն) և նեգատիվիզմը: Հարկադրական կեցվածքը և դիրքերը կարող են պահպանվել երկար ժամանակ: Կտրուկ (անզուսպ) գրգռվածության անսպասելի և զարմանք հարուցող էպիզոդները համարվում են նշված վիճակի հատկանշական առանձնահատկությունը: Կատատոնիկ դրսևորումները կարող են համակցվել անրջանման (օնեյրոիդ) վիճակով՝ ուղեկցվելով պայծառ բեմական ցնորքներով:

Կատատոնիկ ստուպոր

Շիզոֆրենային՝

- կատալեպսիա
- կատատոնիա
- մոմանման ճկունություն (flexibilitas cerea)

F20.3 Շիզոֆրենիա՝ չտարբերակված

Շիզոֆրենիայի ախտորոշման հիմնական չափանիշներին համապատասխանող փսիխոտիկ վիճակ, որը սակայն չի համապատասխանում F20.0-F20.2 ենթադասերում դասակարգված շիզոֆրենիայի որևէ ձևի կամ ցուցաբերում է վերը նշված ձևերին (մեկից ավելի) բնորոշ հատկանիշներ՝ առանց ախտորոշիչ բնութագրիչների այս կամ այն առանձնահատուկ համալիրի ցայտուն գերակշռման:

Ատիպիկ շիզոֆրենիա

Բացառությամբ՝

սուր շիզոֆրենանման փսիխոտիկ խանգարումների (F23.2)

քրոնիկ չտարբերակված շիզոֆրենիայի (F20.5)

հետշիզոֆրենային դեպրեսիայի (F20.4)

F20.4 Հետշիզոֆրենային դեպրեսիա

Դեպրեսիայի էպիզոդ, որն առաջանում է որպես շիզոֆրենային հիվանդության հետևանք և կարող է տևել երկար ժամանակ: Շիզոֆրենիայի որոշ «դրական» կամ «բացասական» ախտանիշերը դեռ շարունակվում են, սակայն դրանք կլինիկական պատկերում այլևս գերակշռող չեն լինում: Դեպրեսիվ այս վիճակները կապված են ինքնասպանության բարձր ռիսկի հետ: Եթե հիվանդի մոտ այլևս չեն նկատվում շիզոֆրենիայի ախտանիշեր, ապա ախտորոշվում է դեպրեսիվ էպիզոդ (F32.-) Եթե շիզոֆրենիայի ախտանիշերը դեռևս ակնառու են և արտահայտված, ապա պետք է ախտորոշել շիզոֆրենիայի համապատասխան ձև (F20.0-F20.3):

F20.5 Մնացորդային (ռեզիդուալ) շիզոֆրենիա՝

Շիզոֆրենային հիվանդության զարգացման քրոնիկ փուլ է, անցում վաղ շրջանից դեպի ավելի ուշ փուլի, որը բնութագրվում է երկարատև, բայց ոչ անվերադարձ, «նեգատիվ» ախտանիշերով՝ հոգեշարժողական դանդաղեցում, ցածր ակտիվություն, հուզական բթացում, պասիվություն և նախաձեռնության պակաս, խոսքի քանակական և բովանդակային աղքատություն, ոչ խոսքային

հաղորդակցման՝ դեմքի արտահայտության, հայացքով շփման, ծայնի ելևէջականության (մոդուլյացիա) և դիրքի (կեցվածք) սահմանափակում, ինքնասպասարկման և հասարակական գործունեության մակարդակի իջեցում:

Քրոնիկ չտարբերակված շիզոֆրենիա

Մնացորդային վիճակ (գերմ. Restzustand) (շիզոֆրենային)

Մնացորդային շիզոֆրենային վիճակ

F20.6 Շիզոֆրենիա՝ հասարակ ձև

Խանգարում, որի ժամանակ դիտվում են աննկատ, բայց հարաճուն զարգացող վարքագծային տարօրինակություններ, հասարակության պահանջներին համապատասխանելու անկարողություն, կատարողականության (գործունեության բոլոր ոլորտներում) ընդհանուր անկում: Մնացորդային շիզոֆրենիային բնորոշ նեգատիվ գծերը (օրինակ՝ հույզերի բթացում, կամքի կորուստ) զարգանում են առանց նախորդող փսիխոտիկ հստակ ախտանշանների:

F20.8 Շիզոֆրենիայի այլ ձևեր

Սենեսթոպաթիկ շիզոֆրենիա

Շիզոֆրենանման՝

- Խանգարում՝ ԱՀՃ
- փսիխոզ՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

կարճատև շիզոֆրենանման խանգարումների (F23.2)

F20.9 Շիզոֆրենիա՝ չճշտված

F21 Շիզոտիպային խանգարում

Բնորոշվում է տարօրինակ վարքով, անսովոր, անկանոն մտածողությամբ և հույզերով, որոնք հիշեցնում են շիզոֆրենիայի ժամանակ նկատվող փոփոխությունները, սակայն այս խանգարման որևէ փուլում չեն դիտվում շիզոֆրենիային հատկանշական հստակ շեղումներ: Կարող են դիտվել հետևյալ նշանները՝ ոչ համարժեք կամ զսպված (սառը) աֆեկտ, անհեղոնիա, արտառոց կամ տարօրինակ վարք, շրջապատի հետ շփման սահմանափակում, սոցիալական մեկուսացում, տարօրինակ կամ պարանոյիդ գաղափարներ, որոնք չեն վերաճում իսկական զառանցանքի աստիճանի, կաչուն մտորումներ, մտածողության խանգարում և ընկալման խախտում, իրավիճակային անցողիկ փսիխոզանման էպիզոդներ՝ ինտենսիվ պատրանքներով, լսողական կամ այլ ցնորքներ, զառանցանքանման մտքեր՝ սովորաբար առանց արտաքին գրգիռների ազդեցության: Չկա հստակ սկիզբ, իսկ զարգացմամբ և ընթացքով նման է անձի խանգարմանը:

Ներառում է՝

Լատենտ շիզոֆրենային ռեակցիա

Շիզոֆրենիա՝

- սահմանային
- լատենտ (թաքնված)
- նախափսիխոտիկ
- պրոդրոմալ
- կեղծ նկրոտիկ
- կեղծ փսիխոպաթիկ

Անձի շիզոտիպային խանգարում

Բացառությամբ՝

Ասպերգերի (Asperger) համախտանիշի (F84.5)

անձի շիզոֆիլ խանգարման (F60.1)

F22 Քրոնիկական զառանցական խանգարումներ

Ներառում են մի շարք խանգարումներ, որոնց ժամանակ կայուն զառանցանքը հանդիսանում է միակ կամ առավել բնորոշ կլինիկական ախտանիշը, և որոնք չեն կարող դասակարգվել որպես օրգանական, շիզոֆրենիկ կամ աֆեկտիվ: Զառանցական խանգարումները, որոնք տևում են մի քանի ամսից քիչ, գոնե ժամանակավորապես, հարկավոր է նշել F23.- դասով:

F22.0 Զառանցական խանգարում

Զառանցանքի միակ պատկերի կամ զառանցանքի պատկերների շարքի զարգացումով բնութագրվող խանգարում, որը սովորաբար կայուն է և, երբեմն, պահպանվում է ողջ կյանքի ընթացքում: Զառանցանքի կամ զառանցանքի պատկերների շարքի բովանդակությունը տատանվող է: Այս ախտորոշման հետ անհամատեղելի են հստակ և կայուն լսողական ցնորքները (ձայներ), շիզոֆրենային ախտանիշերը՝ ինչպիսիք են արտաքինից (դրսից) հսկողության զառանցանքը և հույզերի արտահայտված բթացումը, ինչպես նաև ուղեղի հիվանդության հստակ նշանները: Սակայն պատահական կամ անցողիկ լսողական ցնորքների առկայությունը, հատկապես ծերերի մոտ, չի բացառում այս ախտորոշումը, այն պայմանով, որ դրանք չեն հանդիսանում տիպիկ շիզոֆրենային և կազմում են ընդհանուր կլինիկական պատկերի միայն մի փոքր մասը:

Պարանոյա

Պարանոյիդ՝

- փսիխոզ
- վիճակ

ուշ պարաֆրենիա

Հարաբերությունների սենսիտիվ զառանցանք

Բացառությամբ՝

պարանոյիդ՝

- անձի խանգարման (F60.0)
- հոգեծին փսիխոզի (F23.3)
- ռեակցիայի (F23.3)
- շիզոֆրենիայի (F20.0)

F22.8 Այլ քրոնիկ զառանցական խանգարումներ

Խանգարումներ, որոնց ժամանակ զառանցանքի մեկ կամ մի քանի պատկերները ուղեկցվում են կայուն ցնորքային ձայներով կամ շիզոֆրենային ախտանիշերով, որոնք սակայն չեն հաստատում շիզոֆրենիա ախտորոշումը (F20.0)

Զառանցանքային դիսմորֆոֆոբիա

Ինվոյուցիոն պարանոյիդ վիճակ

Կվերուլյանտ պարանոյա (Paranoia querulans)

F22.9 Քրոնիկ զառանցանքային խանգարում՝ չճշտված

F23 Սուր և անցողիկ փսիխոտիկ խանգարումներ

Խանգարումների բազմազան խումբ, որը բնութագրվում է փսիխոտիկ ախտանշանների սուր սկզբով, ինչպիսիք են՝ զառանցանքը, ցնորքները և ընկալման խանգարումները, սովորական վարքի ծանր խանգարումով: Սուր սկիզբը բնորոշվում է հստակ ախտաբանական կլինիկական պատկերի հարաճուն զարգացումով երկու շաբաթվա

կամ ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում: Այս խանգարումների ժամանակ բացակայում է ակնհայտ օրգանական պատճառը:

Հաճախ առկա է ցրվածություն և շփոթվածություն, սակայն ապակողմնորոշվածությունը ժամանակի, տեղի և շրջապատի նկատմամբ այնքան կայուն և ծանր չէ, որպեսզի հնարավոր լինի հաստատել օրգանական ծագման զառանցանքի (դելիրիում) ախտորոշումը (F05.-):

Լրիվ ապաքինումը սովորաբար տեղի է ունենում մի քանի ամսվա, իսկ ավելի հաճախ՝ մի քանի շաբաթվա կամ նույնիսկ օրերի ընթացքում: Եթե խանգարումը մնում է կայուն, անհրաժեշտ է փոխել այդ վիճակի դասակարգման դասը: Նկարագրված խանգարումը կարող է առնչվել կամ չառնչվել մեկ-երկու շաբաթ առաջ տեղի ունեցած սուր սթրեսին:

F23.0 Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում՝ առանց շիզոֆրենային ախտանիշերի:

Սուր փսիխոտիկ խանգարում, որի ժամանակ ցնորքները, զառանցանքները կամ ընկալման խանգարումներն ակնհայտ են, բայց խիստ անկայուն են՝ փոփոխվելով օրեցօր կամ նույնիսկ ժամ առ ժամ: Բացի այդ, հաճախ առկա է հուզական անկայունությունը, որը դրսևորվում է արտահայտված երջանկության կամ էքստազի, տագնապի և գրգռվածության անցողիկ զգացումներով: Բազմաձևությունը և անկայունությունը բնորոշ են ողջ կլինիկական պատկերին, իսկ առկա փսիխոտիկ գծերը չեն հաստատում շիզոֆրենիա (F20.-) ախտորոշումը: Այս խանգարումները հաճախ սկսվում են հանկարծակի, արագ զարգանում են մի քանի օրվա ընթացքում, և հաճախ ախտանիշերը նույնքան արագ անցնում են՝ չկրկնվելով հետագայում: Եթե վերը նշված ախտանիշերը կայուն են, այս ենթադասի ախտորոշման փոխարեն հաստատվում է քրոնիկ զառանցական խանգարումը (F22.-):

Սուր զառանցանք (Bouffée délirante)՝ առանց շիզոֆրենիայի ախտանիշերի կամ չճշտված

Ցիկլոիդ փսիխոզ՝ առանց շիզոֆրենիայի ախտանիշերի կամ չճշտված

F23.1 Սուր պոլիմորֆ փսիխոտիկ խանգարում՝ շիզոֆրենիայի ախտանիշերով:

Սուր փսիխոտիկ խանգարում, որին բնորոշ է F23.0 ենթադասում նկարագրված բազմաձև և անկայուն կլինիկական պատկերի առկայությունը, և, չնայած այդ անկայունությանը, շիզոֆրենիային հատուկ որոշ ախտանիշեր ժամանակի մեծ մասում նույնպես ակնհայտ են: Եթե շիզոֆրենային ախտանիշերը կայուն են, պետք է ախտորոշվի շիզոֆրենիա (F20.-):

Սուր զառանցանք՝ շիզոֆրենիայի ախտանիշերով

Ցիկլոիդ փսիխոզ՝ շիզոֆրենիայի ախտանիշերով

F23.2 Սուր շիզոֆրենանման փսիխոտիկ խանգարում

Սուր փսիխոտիկ խանգարում, որի ժամանակ փսիխոտիկ ախտանիշերը հարաբերականորեն կայուն են և համապատասխանում են շիզոֆրենիայի ախտորոշմանը, բայց տևողությունը մեկ ամսից պակաս է: F23.0 ենթադասում նկարագրված բազմաձև անկայուն գծերը բացակայում են:

Եթե շիզոֆրենային ախտանիշերը կայուն են, ախտորոշումը պետք է փոխվի շիզոֆրենիայի (F20.-):

Սուր (չտարբերակված) շիզոֆրենիա

Կարճ շիզոֆրենաձև՝

- խանգարում
- փսիխոզ

Օնեյրոֆրենիա

Շիզոֆրենային ռեակցիա

Բացառությամբ՝

օրգանական զառանցական (շիզոֆրենանման) խանգարման (F06.2)

շիզոֆրենաձև խանգարման՝ ԱՀՃ (F20.8)

F23.3 Այլ սուր, առավելապես զառանցական փսիխոտիկ խանգարումներ

Սուր փսիխոտիկ խանգարումներ, որոնց կլինիկական պատկերում հիմնականը համարվում են հարաբերականորեն կայուն զառանցանքն ու ցնորքները, որոնք, սակայն, թույլ չեն տալիս ախտորոշել շիզոֆրենիա (F20): Եթե զառանցանքը մնում է կայուն, պետք է ախտորոշվի որպես քրոնիկ զառանցական խանգարում (F22.-):

Պարանոյիդ ռեակցիա

Փսիխոզեն պարանոյիդ փսիխոզ

F23.8 Այլ սուր և անցողիկ փսիխոտիկ խանգարումներ

Ցանկացած այլ ճշտված փսիխոտիկ խանգարումներ, որոնք չունեն առաջացման ակնհայտ օրգանական պատճառ և չեն ծածկագրվում F23.0-23.3 դասերում:

F23.9 Սուր և անցողիկ փսիխոտիկ խանգարում՝ չճշտված

Կարճատև ռեակտիվ փսիխոզ՝ ԱՀՃ

Ռեակտիվ փսիխոզ

F24 Ինդոլցված զառանցական խանգարում

Ձառանցական խանգարում, որը համարվում է ընդհանուր հուզական սերտ կապ ունեցող մեկ կամ մի քանի անձանց համար: Դրանցից միայն մեկն է տառապում իսկական փսիխոտիկ խանգարումով: Ձառանցանքը փոխանցվում է (ինդոլցիա) մյուս անձ(եր)ին և սովորաբար անհետանում է հիվանդի հետ շփումը դադարեցնելուց հետո:

Ներառյալ՝

խելագարություն երկուսով (Folie a deux)

Ինդոլցված՝

- պարանոյիդ խանգարում
- փսիխոտիկ խանգարում

F25 Շիզոաֆեկտիվ խանգարումներ

Էպիզոդիկ (դրվագային) խանգարումներ, որոնց դեպքում նույն ցայտունությամբ են արտահայտված և մանիակալ, և շիզոֆրենային ախտանիշերը, որոնց հիման վրա, սակայն, հնարավոր չէ ախտորոշել միայն շիզոֆրենիա, կամ միայն դեպրեսիվ կամ մանիակալ էպիզոդ: Այլ վիճակները, որոնց ժամանակ աֆեկտիվ ախտանիշերը բարդվում են արդեն եղած շիզոֆրենիայի վրա, կամ էլ գոյակցում կամ զուգորդվում են քրոնիկ զառանցական խանգարումների այլ ձևերի հետ, դասակարգվում են F20-F29 դասերում: Աֆեկտիվ խանգարումների ժամանակ փսիխոտիկ ախտանիշերը՝ տրամադրության արտահայտված խանգարումների տեսքով, հիմք չեն ծառայում շիզոաֆեկտիվ խանգարում ախտորոշելու համար:

F25.0 Շիզոաֆեկտիվ խանգարում, մանիակալ տիպ

Խանգարում, որի ժամանակ և շիզոֆրենային, և մանիակալ ախտանիշերն այնքան արտահայտված են, որ հնարավոր չէ ախտորոշել շիզոֆրենիա կամ մանիակալ էպիզոդ : Այս դասը պետք է կիրառել եզակի էպիզոդի և կրկնվող խանգարման համար, որի ժամանակ էպիզոդների մեծ մասը հանդիսանում են շիզոաֆեկտիվ, մանիակալ տիպի:

Շիզոաֆեկտիվ փսիխոզ, մանիակալ տիպ

Շիզոֆրենաձև փսիխոզ, մանիակալ տիպ

F25.1 Շիզոաֆեկտիվ փսիխոզ, դեպրեսիվ տիպ

Խանգարում, որի ժամանակ և շիզոֆրենիայի, և մանիակալ ախտանիշներն այնքան ցայտուն են արտահայտված, որ հնարավոր չէ միանշանակ ախտորոշել շիզոֆրենիա կամ մանիակալ էպիզոդ: Այս դասը պետք է կիրառել ինչպես եզակի էպիզոդի, այնպես էլ կրկնվող խանգարման համար, որի ժամանակ էպիզոդների մեծ մասը հանդիսանում են շիզոաֆեկտիվ, դեպրեսիվ տիպի:

Շիզոաֆեկտիվ փսիխոզ, դեպրեսիվ տիպ

Շիզոֆրենաձև փսիխոզ, դեպրեսիվ տիպ

F25.2 Շիզոաֆեկտիվ խանգարումներ խառը տիպի

Ցիրկուլյար շիզոֆրենիա

Շիզոֆրենային և աֆեկտիվ խառը փսիխոզ

F25.8 Այլ շիզոաֆեկտիվ խանգարումներ

F25.9 Շիզոաֆեկտիվ խանգարումներ՝ չճշտված

Շիզոաֆեկտիվ փսիխոզ՝ ԱՀՃ

F28 Այլ ոչ օրգանական փսիխոտիկ խանգարումներ

Չառանցական կամ ցնորային խանգարումներ, որոնք հիմք չեն հանդիսանում ախտորոշելու շիզոֆրենիա (F20.-), քրոնիկ զառանցական խանգարում (F22.-), սուր կամ անցողիկ փսիխոտիկ խանգարում (F23.-), մանիակալ էպիզոդային փսիխոտիկ ձև (F30.2) կամ ծանր դեպրեսիվ էպիզոդ (F32.3)

Քրոնիկ ցնորային փսիխոզ

F29 Չճշտված ոչ օրգանական փսիխոզ

Ներառյալ՝

փսիխոզ՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

հոգեկան խանգարման՝ ԱՀՃ (F99)

օրգանական կամ ախտանշանային փսիխոզի՝ ԱՀՃ (F09)

ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

(F30-F39)

Այս բաժինն ընդգրկում է խանգարումներ, որոնց դեպքում որպես հիմնական խանգարում հանդես է գալիս հույզերի և տրամադրության փոփոխությունը դեպի դեպրեսիա (տագնապով կամ առանց տագնապի) կամ բարձր տրամադրություն: Տրամադրության փոփոխությունը սովորաբար ուղեկցվում է ակտիվության ընդհանուր մակարդակի փոփոխությամբ: Մնացած ախտանիշների մեծ մասը կամ երկրորդային են, կամ էլ հեշտությամբ բացատրվում են տրամադրության և ակտիվության փոփոխման համատեքստում: Այդ խանգարումների մեծ մասն ունի կրկնվելու միտում, և առանձին էպիզոդի սկիզբը հաճախ կարող է կապված լինել սթրեսային իրադարձությունների կամ իրավիճակների հետ:

F30 Մանիակալ էպիզոդ

Այս եռանիշ դասի բոլոր ենթադասերը պետք է կիրառվեն միայն մեկ էպիզոդի համար: Հիպոմանիակալ կամ մանիակալ էպիզոդները նախկինում մեկ կամ մի քանի աֆեկտիվ էպիզոդներ (դեպրեսիվ, հիպոմանիակալ, մանիակալ կամ խառը բնույթի) ունեցած անձանց մոտ պետք է ծածկագրվեն որպես երկբևեռ աֆեկտիվ խանգարում (F31.-):

Ներառյալ՝

երկբևեռ խանգարում, եզակի մանիակալ էպիզոդ

F30.0 Հիպոմանիա (հիպոմոլություն)

Խանգարում, որը բնութագրվում է տրամադրության կայուն թեթևակի բարձրացումով, բարձր էներգիայով և ակտիվությամբ, և սովորաբար ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր գործունեության արդյունավետության և բարեկեցության զգացումներով:

Հաճախ առկա են բարձր հաղորդասիրություն, շատախոսություն, ավելորդ տնավարություն, բարձրացած սեքսուալություն և քնի ցածր պահանջ, սակայն ոչ այն աստիճանի, որպեսզի հանգեցնեն գործունեության ծանր խանգարման կամ սոցիալական մերժման: Գրգռվածությունը, ինքնահավանությունը և կոպիտ (գոեհիկ) վարքագիծը կարող են փոխարինել ավելի սովորական էյֆորիկ փոխհարաբերություններին: Տրամադրության և վարքի խանգարումները չեն ուղեկցվում ցնորքներով կամ զառանցանքներով:

F30.1 Մանիա (մոլություն)՝ առանց փսիխոզի

Բարձր տրամադրություն, որը կապ չունի հիվանդի կյանքի իրական հանգամանքների հետ և կարող է տատանվել անհոգ ուրախությունից մինչև գրեթե անկառավարելի գրգռվածություն: Բարձր տրամադրությունն ուղեկցվում է մեծ եռանդով (էներգիա), որը հանգեցնում է գերակտիվության, շատախոսության և քնի ցածր պահանջի: Արտահայտված է ուշադրությունը կենտրոնացնելու անհնարինությունը և հաճախ առկա է զգալի ցրվածություն: Ինքնագերագնահատման զգացումը հաճախ ընդունում է պերճաշուք արտահայտում՝ գերլավատեսական և մեծամոլական գաղափարներով: Նորմալ սոցիալական արգելքների կորուստը կարող է հանգեցնել անմիտ, երբեմն էլ անշրջահայաց և հանդուգն, շրջապատի համար անընդունելի կամ հիվանդի բնավորությանը չհամապատասխանող վարքի:

F30.2 Մանիա (մոլություն) փսիխոզի ախտանիշերով

Ի լրումն F30.1 ենթադասում նկարագրված կլինիկական պատկերի՝ առկա են արտահայտված զառանցանքներ (սովորաբար մեծամոլական) կամ ցնորքներ (սովորաբար անմիջապես հիվանդին դիմող), կամ էլ այնպիսի ծայրահեղությամբ արտահայտված գրգռվածություն, շարժողական գերակտիվություն և մտքերի թռիչք, որ հիվանդը դառնում է անհասկանալի կամ սովորական շփման տեսանկյունից անհասանելի:

Մանիա (մոլություն)՝

- տրամադրությանը համապատասխան փսիխոտիկ ախտանիշերով
- տրամադրությանը չհամապատասխանող փսիխոտիկ ախտանիշերով

Մանիակալ ստուպոր

F30.8 Այլ մանիակալ էպիզոդներ

F30.9 Մանիակալ էպիզոդ՝ չճշտված

Մանիա (մոլություն)՝ ԱՀՃ

F31 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում

Երկու կամ ավելի էպիզոդներով բնութագրվող խանգարում, որի ժամանակ պացիենտի տրամադրությունն ու ակտիվության մակարդակը խանգարված են զգալիորեն: Այդ խանգարումները դեպքերի մի մասում իրենցից ներկայացնում են տրամադրության, եռանդի և ակտիվության բարձրացում (հիպոմանիա (հիպոմոլություն) կամ մանիա (մոլություն), այլ դեպքերում՝ տրամադրության անկում, եռանդի և ակտիվության նվազում (դեպրեսիա): Միայն հիպոմանիայի կամ մանիայի կրկնվող էպիզոդներն են դասակարգվում են որպես երկբևեռ:

Ներառյալ՝

Մանիակալ-դեպրեսիվ՝

- հիվանդություն
- փսիխոզ
- ռեակցիա

Բացառությամբ՝

երկբևեռ խանգարման, եզակի մանիակալ էպիզոդ (F30.-) ցիկլոթիմիայի (F34.0)

- F31.0 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, հիպոմանիայի ընթացիկ էպիզոդ
Պացիենտի մոտ ներկա պահին առկա են հիպոմանիակալ երևույթներ, անցյալում նշվել է առնվազն միանվագ այլ աֆեկտիվ էպիզոդ (հիպոմանիակալ, մանիակալ, դեպրեսիվ կամ խառը բնույթի)
- F31.1 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, ընթացիկ մանիակալ էպիզոդ՝ առանց փսիխոտիկ ախտանիշերի
Հիվանդի մոտ ներկա պահին առկա են մանիակալ երևույթներ՝ առանց փսիխոտիկ ախտանիշերի (F30.1 ենթադասի նման), անցյալում նշվել է առնվազն միանվագ այլ աֆեկտիվ էպիզոդ (հիպոմանիակալ, մանիակալ, դեպրեսիվ կամ խառը բնույթի):
- F31.2 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, ընթացիկ մանիակալ էպիզոդ՝ փսիխոտիկ ախտանիշերով
Հիվանդի մոտ ներկա պահին առկա են մանիակալ երևույթներ՝ փսիխոտիկ ախտանիշերով (F30.2 ենթադասի նման), անցյալում նշվել է առնվազն միանվագ այլ աֆեկտիվ էպիզոդ (հիպոմանիակալ, մանիակալ, դեպրեսիվ կամ խառը բնույթի):
- F31.3 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, թեթև կամ չափավոր արտահայտված դեպրեսիայի ընթացիկ էպիզոդ
Հիվանդի մոտ ներկա պահին առկա են մանիակալ դեպրեսիայի երևույթներ ինչպես թեթև և միջին ծանրության դեպրեսիվ էպիզոդի ժամանակ (F30.0 կամ F32.1), և անցյալում նշվել է հաստատված առնվազն միանվագ այլ հիպոմանիակալ մանիակալ կամ խառը աֆեկտիվ էպիզոդ:
- F31.4 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, ծանր դեպրեսիվ էպիզոդ՝ առանց փսիխոտիկ ախտանիշերի
Հիվանդի մոտ ներկա պահին առկա են մանիակալ դեպրեսիայի երևույթներ՝ ինչպես առանց փսիխոտիկ ախտանիշերի ծանր դեպրեսիվ էպիզոդի ժամանակ (F32.2), և անցյալում նշվել է հաստատված առնվազն միանվագ այլ հիպոմանիակալ, մանիակալ կամ խառը աֆեկտիվ էպիզոդ:
- F31.5 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, ծանր դեպրեսիվ էպիզոդ՝ փսիխոտիկ ախտանիշերով
Հիվանդի մոտ ներկա պահին առկա են մանիակալ դեպրեսիայի երևույթներ՝ ինչպես փսիխոտիկ ախտանիշերով ծանր դեպրեսիվ էպիզոդի ժամանակ (F32.3), և անցյալում նշվել է հաստատված առնվազն միանվագ հիպոմանիակալ, մանիակալ կամ խառը աֆեկտիվ էպիզոդ:
- F31.6 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, խառը բնույթի ընթացիկ էպիզոդ
Հիվանդի մոտ անցյալում նշվել է հաստատված առնվազն միանվագ հիպոմանիակալ, մանիակալ կամ խառը աֆեկտիվ էպիզոդ, իսկ ընթացիկ վիճակը իրենից ներկայացնում է մանիակալ դեպրեսիվ ախտանիշերի կամ համակցում, կամ արագ փոփոխում:

Բացառությամբ՝

խառը բնույթի եզակի աֆեկտիվ էպիզոդի (F38.0)

- F31.7 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում, ընթացիկ ռեմիսիա
 Հիվանդի անամնեզում պետք է առկա լինի գոնե մեկ հաստատված հիպոմանիակալ, մանիակալ կամ խառը աֆեկտիվ էպիզոդ և լրացուցիչ ևս մեկ այլ աֆեկտիվ էպիզոդ (հիպոմանիակալ, մանիակալ, դեպրեսիվ կամ խառը), բայց ներկա պահին չունի տրամադրության որևէ զգալի խանգարում, և վերջինս չի նկատվում արդեն մի քանի ամիս: Կանխարգելիչ բուժման ընթացքում ռեմիսիայի շրջանները պետք է ծածկագրվեն այս ենթադասում:
- F31.8 Այլ երկբևեռ աֆեկտիվ խանգարումներ
 Երկբևեռ խանգարում, II տեսակ
 Կրկնվող մանիակալ էպիզոդներ՝ ԱՀՃ
- F31.9 Երկբևեռ աֆեկտիվ խանգարում՝ չճշտված

F32 Դեպրեսիվ էպիզոդ

Թեթև, չափավոր և ծանր տիպիկ դեպրեսիվ էպիզոդների ժամանակ հիվանդը տառապում է տրամադրության անկումից, եռանդի կորստից և ակտիվության իջեցումից: Իջած է ուրախանալու, հաճույք ստանալու, հետաքրքրվելու, կենտրոնանալու ունակությունը: Սովորական է դառնում արտահայտված հոգնածությունը՝ առաջացած անգամ նվազագույն ջանքերից: Սովորաբար խանգարված է քունը և վատ է ախորժակը: Ինքնազնահատումը և ինքնավստահությունը գրեթե միշտ ցածր են՝ նույնիսկ հիվանդության թեթև ձևերի ժամանակ: Հաճախ լինում են սեփական մեղավորության և անպիտանության մտքեր: Օրեցօր քիչ փոփոխվող ցածր տրամադրությունը կախված չէ հանգամանքներից և կարող է ուղեկցվել այսպես կոչված «սոմատիկ» ախտանիշերով՝ շրջապատի նկատմամբ հետաքրքրության և հաճույք պատճառող զգացումների կորստով, առավոտյան սովորականից մի քանի ժամ վաղ արթնանալով, առավոտյան ժամերին դեպրեսիայի ուժեղացմամբ, արտահայտված հոգեշարժողական ընկճվածությամբ, տազնապով, ախորժակի անկմամբ, քաշի կորստով և սեռական ցանկության (լիբիդո) նվազմամբ: Ըստ ախտանիշերի թվի և ծանրության՝ դեպրեսիվ էպիզոդը կարող է դասակարգվել որպես թեթև, չափավոր կամ ծանր:

Ներառյալ՝

- եզակի էպիզոդ՝
 - դեպրեսիվ ռեակցիայի
 - փսիխոզեն դեպրեսիայի
 - ռեակտիվ դեպրեսիայի

Բացառությամբ՝

- հարմարվողականության կամ ադապտացիայի խանգարման (F43.2)
- հետադարձ դեպրեսիվ խանգարման (F33.-)
- դեպրեսիվ էպիզոդի՝ զուգակցված F91.- դասում դասակարգված վարքի խանգարումների հետ (F92.0)

- F32.0 Թեթև աստիճանի դեպրեսիվ էպիզոդ
 Սովորաբար արտահայտված են վերը նշված ախտանիշերից երկուսը կամ երեքը: Չնայած դրանց պատճառած անհանգստությանը՝ հիվանդը, հավանաբար, ի վիճակի է շարունակել իր սովորական գործունեությունը:
- F32.1 Միջին ծանրության դեպրեսիվ էպիզոդ
 Արտահայտված են չորս և ավելի ախտանիշեր վերը նշվածներից: Հիվանդը, հավանաբար, ունենում է մեծ դժվարություններ իր սովորական գործունեությունը շարունակելիս:
- F32.2 Ծանր դեպրեսիվ էպիզոդ՝ առանց փսիխոտիկ ախտանիշերի

Դեպրեսիայի էպիզոդ, որի ժամանակ ակնհայտ արտահայտված են հիվանդին տառապանք բերող մի շարք վերը նշված ախտանիշներ: Բնորոշ են ինքնահարգանքի կորուստը, անպիտանության և մեղավորության մտքերը: Հաճախ են դիտվում ինքնասպանության մտքեր և փորձեր: Սովորաբար առկա են մի շարք պսևդոսոմատիկ ախտանիշներ:

- Դեպրեսիա գրգռվածությամբ
 - Ծանր (խորը, մեծ) դեպրեսիա
 - Վիտալ դեպրեսիա
- } եզակի էպիզոդ՝ առանց փսիխոտիկ ախտանիշերի

F32.3 Ծանր աստիճանի դեպրեսիվ էպիզոդ՝ փսիխոտիկ ախտանիշերով

Դեպրեսիայի էպիզոդ, ինչպես նկարագրված է F32.2 ենթադասում, սակայն ցնորքների, զառանցանքների, հոգեշարժողական արգելակվածության առկայությամբ, որոնք այնքան ծանր են արտահայտված, որ հնարավոր չէ սովորական սոցիալական ակտիվությունը: Առկա է վտանգ կյանքի համար ինքնասպանության փորձերի, ջրագրկման կամ քաղցի հետևանքով:

Ցնորքները և զառանցանքները կարող են լինել տրամադրությանը համապատասխան կամ անհամապատասխան:

Եզակի էպիզոդ՝

- մեծ դեպրեսիայի՝ փսիխոտիկ ախտանիշերով
- հոգեծին դեպրեսիվ փսիխոզի
- փսիխոտիկ դեպրեսիայի
- ռեակտիվ դեպրեսիվ փսիխոզի

F32.8 Այլ դեպրեսիվ էպիզոդներ

Ատիպիկ դեպրեսիա

«Քողարկված» դեպրեսիայի եզակի էպիզոդ՝ ԱՀԾ

F32.9 Դեպրեսիվ էպիզոդ՝ չճշտված

Դեպրեսիա՝ ԱՀԾ

Դեպրեսիվ խանգարում՝ ԱՀԾ

F33 Հետադարձ դեպրեսիվ խանգարում

Խանգարում, որը բնութագրվում է (F32.-) դասում նկարագրված դեպրեսիվ էպիզոդին համանման դեպրեսիայի կրկնվող էպիզոդներով, առանց անամնեզում տրամադրության բարձրացման և էներգիայի հոսքի մանիայի բարձրացման ինքնուրույն էպիզոդների առկայության: Սակայն կարող են լինել տրամադրության թեթևակի բարձրացման և գերակտիվության (հիպոմանիա) կարճատև էպիզոդներ՝ անմիջապես դեպրեսիվ էպիզոդից հետո, երբեմն հրահրված հակադեպրեսանտով բուժմամբ: Հետադարձ դեպրեսիվ խանգարման առավել ծանր ձևերը (F33.2 և F33.3) ունեն շատ ընդհանուր գծեր արդեն նկարագրված այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են մանիակալ-դեպրեսիվ դեպրեսիան, մելանխոլիան, վիտալ դեպրեսիան և էնդոգեն դեպրեսիան: Առաջին էպիզոդը կարող է ի հայտ գալ ցանկացած տարիքում՝ սկսած մանկությունից մինչև ծերություն: Սկիզբը կարող է լինել ինչպես սուր, այնպես էլ աննկատ, իսկ տևողությունը՝ մի քանի շաբաթից մինչև մի քանի ամիս: Հետադարձ դեպրեսիվ խանգարումով հիվանդի մոտ մանիակալ էպիզոդի զարգացման վտանգը երբեք լիովին չի բացառվում: Եթե այն զարգանում է, ախտորոշումը պետք է փոխվի և բնութագրվի որպես երկբևեռ աֆեկտիվ խանգարում (F31.-):

Ներառյալ՝

հետադարձ էպիզոդներ՝

- դեպրեսիվ ռեակցիայի
- հոգեծին (փսիխոզեն) դեպրեսիայի

- ռեակտիվ դեպրեսիայի սեզոնային դեպրեսիվ խանգարում

Բացառությամբ՝

- կարճատև հետադարձ դեպրեսիվ էպիզոդների (F38.1)
- F33.0 Հետադարձ դեպրեսիվ խանգարում, թեթև աստիճանի ընթացիկ էպիզոդ
Դեպրեսիայի կրկնվող էպիզոդներով բնութագրվող խանգարում: Ընթացիկ էպիզոդն ունի արտահայտվածության թեթև աստիճան, ինչպես F32.0 ենթադասում նկարագրվածը, առանց անամնեզում նշվող մանիայի:
- F33.1 Հետադարձ դեպրեսիվ խանգարում, միջին ծանրության ընթացիկ էպիզոդ
Դեպրեսիայի կրկնվող էպիզոդներով բնութագրվող խանգարում: Ընթացիկ էպիզոդն ունի արտահայտվածության միջին ծանրություն, ինչպես F32.1 ենթադասում նկարագրվածը, առանց անամնեզում նշվող մանիայի
- F33.2 Հետադարձ դեպրեսիվ խանգարում, ընթացիկ էպիզոդ ծանր աստիճանի՝ առանց փսիխոտիկ ավտանիշերի
Դեպրեսիայի կրկնվող էպիզոդներով բնութագրվող խանգարում: Ընթացիկ էպիզոդն ունի արտահայտվածության ծանր աստիճան և զերծ է F32.2 ենթադասում նկարագրված փսիխոտիկ ավտանիշերից, առանց անամնեզում նշվող մանիայի:
Էնդոգեն դեպրեսիա՝ առանց փսիխոտիկ ավտանիշերի
Ծանր (խորը, մեծ) դեպրեսիա, հետադարձ՝ առանց փսիխոտիկ ավտանիշերի
Մանիակալ-դեպրեսիվ փսիխոզ, դեպրեսիվ տիպ՝ առանց փսիխոտիկ ավտանիշերի
Վիտալ դեպրեսիա, հետադարձ՝ առանց փսիխոտիկ ավտանիշերի
- F33.3 Հետադարձ դեպրեսիվ խանգարում, ծանր ընթացիկ էպիզոդ՝ փսիխոտիկ ավտանիշերով
Դեպրեսիվ կրկնվող էպիզոդներով բնութագրվող խանգարում: Ընթացիկ էպիզոդն ունի արտահայտության ծանր աստիճան և ուղեկցվում է F32.3 ենթադասում նկարագրված փսիխոտիկ ավտանիշերով, առանց նախկինում մանիայի էպիզոդների հիշատակման:
Էնդոգեն դեպրեսիա՝ փսիխոտիկ ավտանիշերով
Մանիակալ-դեպրեսիվ փսիխոզ, դեպրեսիվ տիպ՝ փսիխոտիկ ավտանիշերով
Ծանր կրկնվող էպիզոդներ՝
 - ծանր (մեծ) դեպրեսիայի՝ փսիխոտիկ ավտանիշերով
 - հոգեծին դեպրեսիվ փսիխոզի
 - փսիխոտիկ դեպրեսիայի
 - ռեակտիվ դեպրեսիվ փսիխոզի
- F33.4 Հետադարձ դեպրեսիվ խանգարում, ռեմիսիայի ընթացիկ շրջան
Հիվանդը նախկինում ունեցել է երկու կամ ավելի դեպրեսիվ էպիզոդներ, ինչպես նկարագրված է F33.0-F33.3 ենթադասերում, սակայն չի ունեցել դեպրեսիվ ավտանիշեր վերջին ամիսների ընթացքում:
- F33.8 Այլ հետադարձ դեպրեսիվ խանգարումներ
- F33.9 Հետադարձ դեպրեսիվ խանգարում՝ չճշտված
Միաբևեռ դեպրեսիա՝ ԱՀԾ

F34 Տրամադրության (աֆեկտիվ) քրոնիկ խանգարումներ

Տրամադրության կայուն և սովորաբար տատանվող խանգարումներ, որոնց ժամանակ առանձին էպիզոդների մեծ մասը բավարար ծանր չեն, որպեսզի նկարագրվեն որպես հիպոմանիակալ կամ թեթև դեպրեսիվ էպիզոդներ:

Խանգարումները տևում են տարիներ, ընդգրկելով նույնիսկ հիվանդի կյանքի զգալի մասը՝ պատճառելով էական անհանգստություն և հանգեցնելով անաշխատունակության: Առանձին դեպքերում հետադարձ կամ եզակի մանիակալ դեպրեսիվ էպիզոդները կարող են բարդվել քրոնիկ աֆեկտիվ խանգարման վրա:

F34.0 Ցիկլոթիմիա

Բազմաթիվ դեպրեսիվ և թեթև ոգևորության (տրամադրության բարձրացման) էպիզոդներ ներառող տրամադրության քրոնիկ անկայունություն, որոնցից ոչ մեկը բավական ծանր կամ տևական չէ, որպեսզի ախտորոշվի որպես երկբևեռ աֆեկտիվ խանգարում (F31.-) կամ հետադարձ դեպրեսիվ խանգարում (F33.-): Այդպիսի խանգարում հաճախ հայտնաբերվում է երկբևեռ աֆեկտիվ խանգարումով հիվանդների ազգականների մոտ: Ցիկլոթիմիայով որոշ հիվանդների մոտ վերջիվերջո զարգանում է երկբևեռ աֆեկտիվ խանգարում:

Անձի աֆեկտիվ խանգարում

Ցիկլոթիմիա

Ցիկլոթիմիկ անձ

F34.1 Դիսթիմիա

Առնվազն մի քանի տարի տևող տրամադրության քրոնիկ անկում, որը շատ ծանր չէ, և որի ժամանակ առանձին էպիզոդները բավական տևական չեն, որպեսզի հնարավոր լինի ախտորոշել որպես ծանր, չափավոր կամ թեթև հետադարձ դեպրեսիվ խանգարում (F33.-):

Դեպրեսիվ՝

- ներող
- անձի խանգարում

Ներոտիկ դեպրեսիա

Քրոնիկ (կայուն) տագնապային դեպրեսիա

Բացառությամբ՝

տագնապային դեպրեսիայի (թեթև կամ անկայուն) (F41.2)

F34.8 Տրամադրության այլ կայուն խանգարումներ (աֆեկտիվ)

F34.9 Տրամադրության (աֆեկտիվ) այլ կայուն խանգարումներ՝ չճշտված

F38 Տրամադրության (աֆեկտիվ) այլ խանգարումներ

Տրամադրության ցանկացած այլ խանգարումներ, որոնք հիմք չեն տալիս դասակարգել F30-F34 դասերում, քանի որ բավականաչափ ծանր կամ տևական չեն:

F38.0 Տրամադրության (աֆեկտիվ) այլ եզակի խանգարումներ

Խառը աֆեկտիվ էպիզոդ

F38.1 Տրամադրության (աֆեկտիվ) հետադարձ այլ խանգարումներ

Կրկնվող կարճ դեպրեսիվ էպիզոդ

F38.8 Տրամադրության (աֆեկտիվ) ճշտված այլ խանգարումներ

F39 Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ՝ չճշտված

Ներառյալ՝

Աֆեկտիվ փսիխոզ՝ ԱՀԾ

**ՍԹՐԵՍԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՆԵՎՐՈՏԻԿ ԵՎ ՍՈՄԱՏՈՖՈՐՄ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
(F40-F48)**

Բացառությամբ՝

այն դեպքերի, երբ զուգակցված են F91.- դասում դասակարգված վարքի խանգարման հետ (F92.8)

F40 Տագնապային (վախի) ֆոբիկ խանգարումներ

Խանգարումների խումբ, որի ժամանակ տագնապն առաջանում է միայն կամ առավելապես որոշակի իրավիճակներում, որոնք տվյալ պահին որևէ վտանգ չեն ներկայացնում: Արդյունքում հիվանդն այդպիսի իրավիճակներից խուսափում է կամ դրանց հակազդում է վախով: Հիվանդի անհանգստությունը կարող է կենտրոնանալ առանձին այնպիսի ախտանիշերի վրա, ինչպիսիք են՝ սրտխփոցը կամ ուշագնացության զգացումը, որոնց հաճախ ուղեկցում են երկրորդային բնույթ կրող՝ մահվան, հսկողությունը կորցնելու կամ խելագարվելու վախերը: Վախի իրավիճակում հայտնվելու հնարավորության սպասումը սովորաբար առաջացնում է վաղաժամ տագնապ: Վախի իրավիճակի հանդեպ տագնապայնությունը (anxiety) և դեպրեսիան հաճախ համակցվում են: Հարց է առաջանում, թե արդյոք միաժամանակ պետք է դնել երկու ախտորոշումները՝ վախային տագնապային խանգարումը և դեպրեսիվ էպիզոդը, թե հաստատել միայն մեկ ախտորոշում՝ ելնելով այդ վիճակների տևողությունից և հիվանդի խորհրդատվության ժամանակ բժշկի դիտարկումներից:

F40.0 Ագորաֆոբիա

Վախերի բավականին հստակ ձևավորված խումբ, որը ներառում է հետևյալ վախերը՝ տնից դուրս գալու, խանութներ մտնելու, ամբոխից և հասարակական վայրերից, գնացքով, ավտոբուսով կամ ինքնաթիռով միայնակ ճանապարհորդելու: Խուճապային խանգարումը հաճախ է ուղեկցում էպիզոդներին՝ լինի անցյալում, թե ներկայում: Դեպրեսիվ և կաշուն ախտանիշերն ու սոցիալական վախերը, որպես լրացուցիչ հատկանիշներ, նույնպես սովորական երևույթ են: Հաճախ խիստ արտահայտված է վախային իրավիճակներից խուսափելը, իսկ որոշ դեպքերում ագորաֆոբիայով տառապող մարդիկ այնքան էլ անհանգստացած չեն լինում, քանի որ ի վիճակի են խուսափել այդ վիճակներից:

Ագորաֆոբիա՝ առանց խուճապային խանգարման հիշատակման
Խուճապային խանգարում՝ ագորաֆոբիայով

F40.1 Սոցիալական ֆոբիաներ

Վախ է մարդկանց ուշադրությանն արժանանալու նկատմամբ, որը հանգեցնում է սոցիալական իրավիճակներից խուսափելուն: Ավելի խորը սոցիալական վախերը կապված են ցածր ինքնագնահատման և քննադատության հետ: Դրանք բնորոշվում են դեմքի կարմրելով, ձեռքերի դողով, սրտխառնոցով, միզարձակության մշտական պահանջով: Երբեմն հիվանդը համոզված է, որ տագնապի այդ երկրորդային արտահայտություններից որևէ մեկն է իր հիմնական խնդիրը: Ախտանիշերը կարող են սաստկանալ՝ վերաճելով խուճապի նոպաների:

Անտրոպոֆոբիա

Սոցիալական ներոզ

F40.2 Յուրահատուկ (մեկուսացված) վախեր (ֆոբիաներ)

Սահմանափակ, խիստ յուրահատուկ իրավիճակներով պայմանավորված վախեր, ինչպիսիք են որոշակի կենդանիների հարևանությունը, բարձրությունը, փակ տարածությունը, միզարձակումը և դեֆեկացիան հասարակական զուգարաններում, որոշակի սննդի օգտագործումը, ատամների բուժումը, արյան կամ վնասվածքի տեսքը: Չնայած այն բանին, որ վախի պատճառ հանդիսացող յուրահատուկ իրավիճակը պատահական բնույթ է կրում, միևնույն է, այդ

իրավիճակի հետ շփվելը կարող է առաջացնել ագորաֆոբիային կամ սոցիալական վախին բնորոշ խուճապ:

Ակրոֆոբիա

Վախ կենդանու հանդեպ

Կլաուստրոֆոբիա

Հասարակ ֆոբիա

Բացառությամբ՝

դիսմորֆոֆոբիայի (ոչ գառանցանքային) (F45.2)

հիվանդանալու վախի (նոզոֆոբիա) (F45.2)

F40.8 Այլ վախային տագնապային խանգարումներ

F40.9 Վախային տագնապային խանգարումներ՝ չճշտված

Ֆոբիա՝ ԱՀՃ

Վախային վիճակ՝ ԱՀՃ

F41 Տագնապային այլ խանգարումներ

Խանգարումներ, որոնց ժամանակ տագնապի արտահայտումը հանդիսանում է գլխավոր ախտանիշ և չի սահմանափակվում որևիցե կոնկրետ արտաքին իրավիճակով: Կարող են լինել նաև դեպրեսիվ և կաչուն ախտանիշեր, անգամ վախային տագնապայնության որոշ տարրեր՝ այն պայմանով, որ դրանք որոշակիորեն երկրորդային են կամ նվազ ծանր:

F41.0 Խուճապային խանգարում (էպիզոդային պարոքսիզմալ տագնապ)

Խանգարման բնորոշ նշան են հանդիսանում կտրուկ արտահայտված տագնապի (խուճապի) կրկնվող նոպաները, որոնք սահմանափակված չեն որևէ կոնկրետ իրավիճակով կամ հանգամանքների համալիրով, այդ իսկ պատճառով անկանխատեսելի են: Հիմնական ախտանիշերը, ինչպես և այլ տագնապային խանգարումների ժամանակ, ներառում են սրտխփոցի հանկարծակի առաջացում, ցավ կրծքավանդակում, շնչահեղձության, գլխապտույտի և անիրականության զգացում (դեպրեսոնալիզացիա կամ դեռեալիզացիա): Բացի այդ, որպես երկրորդային երևույթ, հաճախ առկա է մահվան, ինքնահսկողության կորստի կամ խելագարվելու վախը: Խուճապային խանգարումը չպետք է համարել հիմնական ախտորոշում, եթե հիվանդի մոտ խուճապի նոպայի սկսվելու շրջանում առկա է դեպրեսիվ խանգարում: Այդ դեպքում խուճապի նոպան հավանականորեն հանդիսանում է երկրորդային դեպրեսիայի նկատմամբ:

Խուճապային՝

- գրոհ(նոպա)
- վիճակ

Բացառությամբ՝

ագորաֆոբիայով խուճապային խանգարման (F40.0)

F41.1 Գեներալիզացված (համատարածուն) տագնապային խանգարում

Տագնապ, որը տարածված է և կայուն, բայց սահմանափակված չէ կոնկրետ միջավայրային հանգամանքներով («free-floating») կամ էլ հատուկ չի հրահրվում առավելապես այդ իրավիճակով: Չնայած ախտանիշերի փոփոխականությանը, այնուամենայնիվ, որոշակիորեն գերակշռում են մշտական նյարդայնությունը, դողը, վախի զգացումը, մկանային լարվածությունը, քրտնարտադրությունը, խելագարվելու զգացումը, սրտխփոցը, գլխապտույտը և էպիգաստրալ շրջանում տհաճ զգացողությունը: Հաճախ արտահայտված է դժբախտ պատահարի կամ

հիվանդության հանդեպ վախը, որ մոտակա ժամանակներում, ըստ հիվանդի, կարող է պատահել իր կամ հարազատների հետ:

Տագնապային՝

- ներոզ
- ռեակցիա
- վիճակ

Բացառությամբ՝

նևրապենիայի (F48.0)

F41.2 Խառը տագնապային և դեպրեսիվ խանգարում

Այս դասը պետք է օգտագործել, երբ միաժամանակ առկա են տագնապը և դեպրեսիան, որոնցից ոչ մեկը գերակշռող չէ, իսկ ախտանիշերի արտահայտվածության աստիճանը թույլ չի տալիս դրանք դիտել առանձին՝ դնելով տարբեր ախտորոշումներ: Իսկ եթե տագնապի և դեպրեսիայի ախտանիշերն այնքան ծանր են, որ հնարավորություն են տալիս հաստատել այդ ախտորոշումներն առանձին-առանձին, ապա պետք է ծածկագրել երկու ախտորոշումները:

Այս դեպքում տվյալ դասը չպետք է կիրառվի:

Տագնապային դեպրեսիա (թեթև կամ անկայուն)

F41.3 Այլ խառը տագնապային խանգարումներ

Տագնապի ախտանիշերը համակցվում են F42-48 դասերում դասակարգված այլ խանգարումների նշանների հետ: Ընդ որում, այդ խանգարումների ախտանիշերն իրենց արտահայտվածության աստիճանով չեն հանդիսանում այնքան ծանր, որպեսզի առանձին դիտարկման ժամանակ ախտորոշվի դրանցից մեկը:

F41.8 Այլ ճշտված տագնապային խանգարումներ

Տագնապային հիստերիա

F41.9 Տագնապային խանգարում՝ չճշտված

Տագնապ՝ ԱՀՃ

F42 Օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարում

Վիճակի էական առանձնահատկությունն է կրկնվող կաչուն մտքերի կամ հարկադրված գործողությունների առկայությունը: Կաչուն մտքերը իրենցից ներկայացնում են գաղափարներ, կերպարներ կամ մղումներ, որոնք միևնույն ձևով (ստերեոտիպ) և նորից ու նորից ծագում են հիվանդի գլխում: Դրանք գրեթե միշտ տխրեցնող և անհանգստացնող բնույթ ունեն, և հիվանդն անօգուտ փորձում է դիմակայել դրանց: Այդուհանդերձ, հիվանդի կողմից դրանք ընդունվում են որպես սեփական մտքեր, անգամ եթե դրանք ականա են և հաճախ զգվելի: Կաչուն գործողությունները կամ ծեսերը հանդիսանում են ստերեոտիպ վարվելակերպեր, որոնք կրկնվում են նորից և նորից: Դրանք հաճույք ստանալու միջոց չեն և չեն հանդիսանում օգտակար առաջադրանքների կատարմանը օժանդակող միջոց: Այդ գործողությունների նպատակը օբյեկտիվորեն անցանկալի այն որոշակի իրադարձության կանխումն է, որը ցավ է պատճառում, և որից վախենում է հիվանդը, այլապես դա կարող է վնաս հասցնել իրեն: Սովորաբար այդպիսի վարքը հիվանդի կողմից ընկալվում է որպես անիմաստ կամ անարդյունավետ, և նա պարբերաբար դրան դիմադրելու փորձեր է անում: Գրեթե միշտ առկա է տագնապը: Եթե մղումային (կոմպուլսիվ) գործողությունները ճնշվում են, տագնապն աստիճանաբար խորանում է:

Ներառյալ՝

անանկաստային նևրոզը

օբսեսիվ-կոմպուլսիվ նևրոզը

Քացառությամբ՝

օբսեսիվ-կոմպուլսիվ անձի (խանգարում) (F60.5)

F42.0 Առավելապես կաչուն մտքեր և խոհեր (մտավոր որոճ)

Սրանք կարող են ընդունել գաղափարների, մտային պատկերների կամ գործելու մղումների ձև, որոնք, գրեթե միշտ, հիվանդին պատճառում են տառապանք: Երբեմն գաղափարները հանդես են գալիս որպես անավարտ և անընդհատ դիտարկվող այլընտրանքներ, որոնք ուղեկցվում են առօրյա կյանքին վերաբերող սովորական, բայց անհրաժեշտ որոշումներ ընդունելու անկարողությամբ: Կապը կաչուն մտորումների և դեպրեսիայի միջև առավել սերտ է, այդ իսկ պատճառով սևեռուն-հարկադրական խանգարման ախտորոշմանը պետք է տալ նախապատվություն միայն այն դեպքում, եթե կաչուն մտքերն առաջանում կամ պահպանվում են դեպրեսիվ էպիզոդի բացակայության դեպքում:

F42.1 Գերազանցապես կոմպուլսիվ (հարկադրական) գործողություններ (կաչուն ծեսեր)

Հարկադրական (անհաղթահարելի) գործողությունների մեծ մասը վերաբերում է մաքրությանը (հիմնականում ձեռքերը լվանալը), այն երաշխիքների կրկնակի ստուգմանը, որ պոտենցիալ վտանգավոր իրավիճակը չի կարող առաջանալ, կամ կարգուկանոնի և կոկիկության պահպանմանը: Այդպիսի բացահայտ վարքագծի հիմքում սովորաբար ընկած է վտանգի վախը, որին կարող է ենթարկվել հիվանդը կամ հիվանդին ինքը կարող է ենթարկել մեկ ուրիշին, իսկ ծիսական բնույթ կրող գործողությունը հանդիսանում է վտանգը կանխելու արդյունավետ կամ խորհրդանշանական (սիմվոլիկ) փորձ:

F42.2 Խառը կաչուն մտքեր և գործողություններ

F42.8 Այլ կաչուն-հարկադրական խանգարումներ

F42.9 Կաչուն-հարկադրական (օբսեսիվ-կոմպուլսիվ) խանգարում՝ չճշտված

F43 Ծանր սթրեսի հակազդման և հարմարվողականության խանգարումներ

Այս դասը տարբերվում է մյուսներից նրանով, որ ներառում է խանգարումներ, որոնք նույնականացվում են ոչ միայն ախտանիշների և ընթացքի, այլ նաև երկու պատճառական ազդեցություններից մեկի կամ մյուսի առկայության հիման վրա, այն է՝ սուր սթրեսային ռեակցիա առաջացնող չափից ավելի անբարենպաստ իրադարձություն կամ կյանքում տեղի ունեցած երկարատև տհաճ հանգամանքների ազդեցությամբ հանգեցվող էական փոփոխություն, որը նպաստում է հարմարվողականության խանգարմանը: Չնայած պակաս ծանր հոգեցոցիալական սթրեսը (կյանքի իրադարձություններ) կարող է արագացնել սկիզբը կամ նպաստել այս գլխում ներկայացված լայն տիրույթի խանգարումների արտահայտմանը, դրա էթիոլոգիական նշանակությունը միշտ չէ, որ պարզ է և յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորվի՝ ելնելով անհատից, հաճախ նրա գերզգայունությունից, խոցելիությունից, այսինքն՝ կյանքի իրադարձությունները պարտադիր կամ բավարար չեն, որպեսզի բացատրվի խանգարման առաջացումը և ձևը: Ի հակադրություն դրան, այս դասում համատեղ խմբավորված խանգարումները միշտ դիտարկվում են որպես սուր ծանր սթրեսի կամ երկարատև վնասվածքի անմիջական հետևանք: Սթրեսային իրադարձությունները կամ երկարատև անբարենպաստ հանգամանքները հանդիսանում են գերակշռող պատճառային գործոն, և խանգարումը չի կարող առաջանալ առանց դրանց ազդեցության: Այս դասում ներառված խանգարումները, հետևաբար, կարող են դիտարկվել որպես երկարատև կամ ծանր սթրեսի հանդեպ խեղաթյուրված հարմարվողական ռեակցիաներ, որոնք խոչընդոտում են դրանց հաղթահարմանն

ուղղված արդյունավետ մեխանիզմների կիրառմանը և այդպիսով առաջացնում են սոցիալական գործունեության խնդիրներ:

F43.0 Սուր ռեակցիա սթրեսի նկատմամբ

Անցողիկ խանգարում է, որը զարգանում է հոգեկան ակնհայտ խանգարում չունեցող անձի մոտ՝ ի պատասխան անսովոր ֆիզիկական կամ հոգեկան սթրեսին, և որը սովորաբար մեղմանում է մի քանի ժամից կամ օրից: Անհատական խոցելիությունը և ինքնատիրապետման ունակությունը մեծ նշանակություն ունեն սթրեսային ռեակցիաների տարածվածության և ծանրության գործում: Այն ախտանիշերը, որոնց բնորոշ է խառը և փոփոխական պատկերը, ներառում են նախնական շփոթությունը՝ գիտակցության և ուշադրության որոշ նեղացումով, գրգռիչների ընկալման անկարողությունը և ապակողմնորոշվածությունը: Այդ վիճակը կարող է ուղեկցվել հաջորդող հեռացումով շրջապատող իրավիճակից (մինչև դիսոցիացիոն ստուպորի վիճակի՝ F44.2) կամ խռովությամբ և գերակտիվությամբ (թռիչքի կամ ֆուգայի ռեակցիա): Սովորաբար առկա են տագնապային խանգարման վեգետատիվ նշաններ (հաճախասրտություն, քրտնարտադրություն, մաշկի կարմրություն): Ախտանիշերը, սովորաբար, ի հայտ են գալիս սթրեսային գրգռիչի կամ իրադարձության ազդեցությունից անմիջապես հետո՝ մի քանի րոպեի ընթացքում, սակայն անհետանում են 2-3 օրվա սահմաններում (հաճախ՝ մի քանի ժամվա ընթացքում): Կարող է լինել սթրեսային իրադարձության մասնակի կամ լրիվ ամնեզիա (F44.0): Եթե վերը նշված ախտանիշերը կայուն են, անհրաժեշտ է փոխել ախտորոշումը:

Սուր՝

- ճգնաժամային ռեակցիա
- ռեակցիա սթրեսի նկատմամբ

Պայքարի հոգնածություն (պատերազմական հոգեկան վնասվածք) (combat fatigue)

Ճգնաժամային վիճակ

Հոգեկան շոկ

F43.1 Հետտրավմատիկ (հետվնասվածքային) սթրեսային խանգարում

Ի հայտ է գալիս որպես հետաձգված կամ ձգձգված պատասխան ռեակցիա չափազանց սպառնալից կամ աղետալի բնույթ կրող սթրեսային իրադարձության կամ իրավիճակի (կարճատև կամ երկարատև) հանդեպ, որը կարող է առաջացնել խորը դիսթրես գրեթե յուրաքանչյուրի մոտ: Նախատրամադրող այն գործոնները, ինչպիսիք են անձնային առանձնահատկությունները (կոմպուլսիվ, ասթենիկ) կամ անամնեզում նյարդային հիվանդության առկայությունը, կարող են նվազեցնել համախտանիշի զարգացման շեմը կամ խորացնել դրա ընթացքը, սակայն դրանք պարտադիր կամ բավարար չեն խանգարման առաջացումը բացատրելու համար: Բնորոշ նշաններն են՝ կպչուն հիշողություններում վնասող իրադարձության կրկնվող ապրումների էպիզոդները («flashbacks»), երազները կամ մղձավանջները, որոնք հակադրվում են «ընդարմացման» զգացողության կայուն ֆոնին և հուզական բթացմանը, այլ անձանցից օտարացմանը, շրջապատի նկատմամբ անտարբերությանը, անհեղոնիային և հոգեկան վնասվածքը հիշեցնող գործողություններից և իրավիճակներից խուսափողականությանը: Սովորաբար առկա է գերգրգռման և արտահայտված գերզգաստության վիճակ, մեկնարկային (վախի) բարձր ռեակցիա և անքնություն: Տագնապը և դեպրեսիան հաճախ են ուղեկցվում վերը նշված ախտանիշերով և նշաններով, իսկ ինքնասպանության մտքերն այնքան էլ հազվադեպ չեն: Սկիզբը հաջորդում է վնասվածքին՝ մի քանի շաբաթից մինչև

ամիսներ տևող գաղտնի շրջանից հետո: Ընթացքը տատանվում է, բայց դեպքերի մեծ մասն ավարտվում է լավացումով: Քիչ թվով դեպքերում վիճակը կարող է ընդունել քրոնիկ ընթացք, և տարիների ընթացքում ձևավորվում է անձի կայուն փոփոխություն (F62.0):

Վնասվածքային ներող

F43.2 Հարմարվողականության խանգարումներ

Սուբյեկտիվ դիսթրեսի և հուզական խանգարման վիճակներ են, որոնք ի հայտ են գալիս կյանքում տեղի ունեցած էական փոփոխությանը կամ սթրեսային իրադարձությանը հարմարվելու շրջանում և սովորաբար խոչընդոտում են անձի սոցիալական գործառնությանը և հասարակական դերակատարությանը:

Սթրեսային իրադարձությունը (ծանր կորուստ, բաժանում) կարող է խաթարել անհատի սոցիալական կապերի ամբողջականությունը: Դա կարող է խթանել սոցիալական աջակցման և արժեքների ավելի լայն համակարգը (արտագաղթ, փախստականի կարգավիճակ), կամ ներկայացնել կյանքի հիմնական անցումային փուլերի և բեկումների (դպրոց ընդունվելը, ծնող դառնալը, անձնական բաղձալի նպատակի ձախողումը, կենսաթոշակի անցնելը) լայն դիապազոնը: Անհատական նախատրամադրվածությունը կամ խոցելիությունը կարևոր դեր են խաղում հիվանդության առաջացման ռիսկի և հարմարվողականության խանգարումների դրսևորումների գործում, սակայն այդ վիճակը հնարավոր չէ առանց վնասվածքային գործոնի: Դրսևորումները բազմազան են և ներառում են տրամադրության անկում, տազնապ կամ անհանգստություն (կամ այդ զգացումների խառնուրդ), իրավիճակը հաղթահարելու, ամեն ինչ նախօրոք ծրագրավորելու կամ ներկա իրավիճակում շարունակելու անկարողության զգացում, ինչպես նաև ներառում է առօրյա կյանքում գործելու ունակության նվազման որոշակի աստիճան: Միաժամանակ կարող են միանալ վարքի խանգարումներ, հատկապես պատանեկան տարիքում: Բնորոշ գիծ կարող է լինել կարճատև կամ երկարատև դեպրեսիվ ռեակցիան կամ այլ հոյզերի և վարքի խանգարումը:

Մշակութային շոկ

Վշտի ռեակցիա

Հոսպիտալիզմ՝ երեխաների մոտ

Բացառությամբ՝

երեխաների մոտ բաժանումից առաջացած տազնապային խանգարման (F93.0)

F43.8 Ծանր սթրեսի հանդեպ այլ ռեակցիաներ

F43.9 Ծանր սթրեսի հանդեպ ռեակցիա՝ չճշտված

F44 Դիսոցիալ (կոնվերսիոն) խանգարումներ

Դիսոցիալ կամ կոնվերսիոն խանգարումներին բնորոշ է անցյալի իրադարձությունների վերաբերյալ հիշողությունների, իրեն որպես անհատ ընկալելու ունակության, անմիջական զգացումների և մարմնի շարժումները կառավարելու ունակության միջև գոյություն ունեցող նորմալ ինտեգրացիայի լրիվ կամ մասնակի կորուստը:

Դիսոցիալ խանգարումների բոլոր տեսակներն ունեն մի քանի շաբաթ կամ ամիսներ անց անհետանալու հակում, հատկապես, եթե դրանց առաջացումը պայմանավորված է կյանքում որևէ վնասվածքային դեպքով: Համեմատաբար ավելի քրոնիկ խանգարումներ, մասնավորապես պարալիզներ և զգացողությունների կորուստ կարող են զարգանալ, եթե սկիզբը զուգակցվում է անլուծելի խնդիրների կամ միջանձնային բարդությունների հետ: Այդ խանգարումներն անցյալում առավելապես դասակարգվում

էին որպէս «կոնվերսիոն հիստերիայի» տարբեր տեսակներ: Համարվում է, որ դրանք ունեն հոգեծին բնույթ (էթիոլոգիա), քանի որ առաջացման ժամկետով սերտորեն կապված են վնասվածքային դեպքերի, անլուծելի և անտանելի խնդիրների կամ խանգարված փոխհարաբերությունների հետ: Ախտանիշերը հաճախ համապատասխանում են հիվանդի այն պատկերացմանը, թե ինչպէս կարող է արտահայտվել հոգեկան հիվանդությունը: Բժշկական զննումը և հետազոտումը չեն հայտնաբերում որևէ բացահայտ ֆիզիկական կամ նյարդաբանական խանգարում: Բացի այդ, ակնհայտ է, որ ֆունկցիայի կորուստը հանդիսանում է հուզական բախումների (կոնֆլիկտ) կամ կարիքների արտահայտություն: Ախտանիշերը կարող են զարգանալ հոգեկան սթրեսի հետ սերտորեն կապակցված և հաճախ ի հայտ են գալիս հանկարծակի: Այս դասում ներառված են միայն նորմալում կամային ձևով վերահսկվող ֆիզիկական գործառնությունների խանգարումները և զգացողությունների կորուստը: Վեգետատիվ նյարդային համակարգի միջոցով միջնորդավորված խանգարումները, մասնավորապէս ցավային և այլ բարդ ֆիզիկական զգայությունները, դասակարգված են փսիխ-սոմատիկ (սոմատիզացիայի) խանգարումների (F45.0) դասում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հետագայում հնարավոր է լուրջ ֆիզիկական կամ հոգեկան խանգարումների զարգացում:

Ներառյալ՝

կոնվերսիոն՝

- հիստերիա
- ռեակցիա

հիստերիա

հիստերիկ փսիխոզ

Բացառությամբ՝

սիմուլյացիայի (գիտակցված սիմուլյացիա) (Z76.5)

F44.0 Դիսոցացված ամնեզիա

Հիմնական նշանն է հիշողության կորուստը՝ հատկապէս մոտակա կարևոր դեպքերի նկատմամբ, որը պայմանավորված չէ օրգանական հոգեկան հիվանդություններով և արտահայտված է այն աստիճան, որ չի կարող բացատրվել սովորական մոռացկոտությամբ կամ հոգնածությամբ:

Հիշողության կորուստը (ամնեզիա) սովորաբար կենտրոնանում է վնասվածքային այնպիսի դեպքերի վրա, ինչպիսիք են դժբախտ պատահարը կամ անսպասելի կորուստը, և սովորաբար մասնակի է և ընտրողական: Լրիվ և տարածուն (ընդհանրացված) ամնեզիան հազվադեպ է և սովորաբար հադիսանում է ամբուլատոր ավտոմատիզմի (ֆուգա, փախուստ) (F44.1) մաս: Այդ դեպքում խանգարումը այդպէս էլ պետք է դասակարգվի: Դիսոցացված ամնեզիա ախտորոշումը չպետք է դնել գլխուղեղի օրգանական ախտահարումների, թունավորման կամ ծայրահեղ հոգնածության առկայության դեպքում:

Բացառությամբ՝

ամնեստիկ խանգարումների՝ ալկոհոլի կամ հոգեակտիվ այլ նյութերի օգտագործման հետևանքով (F10-F19 ընդհանուր չորրորդ նիշով .6)

ամնեզիայի՝

- ԱՀՃ (R41.3)
- անտերոգրադ (R41.1)
- ռետրոգրադ (R41.2)

ոչ ալկոհոլային օրգանական ամնեստիկ համախտանիշի (F04)

ամնեզիա՝ էպիլեպսիայի նոպայից հետո (G40.-)

F44.1 Դիսոցացված ֆուգա

Դիսցացված ֆուգան կրում է դիսցացված ամնեզիայի բոլոր նշանները՝ գումարած արտաքուստ նպատակաուղղված տեղաշարժումներ (ճանապարհորդություն, զբոսանք), որոնք սակայն դուրս են ամենօրյա սովորական սահմաններից: Չնայած ֆուգայի շրջանում լինում է ամնեզիա, հիվանդի վարքը կողմնակի դիտորդների համար այդ ժամանակահատվածում կարող է թվալ լրիվ նորմալ:

Բացառությամբ՝

էպիլեպսիայի նոպայից հետո ֆուգայի (G40.-)

F44.2 Դիսցացված ստուպոր

Դիսցացված ստուպոր ախտորոշվում է այն դեպքում, երբ հիվանդը խորը ընկճված է, կամ բացակայում է անձի կամային շարժումը և արտաքին ազենտի (ազդակի) (լույս, աղմուկ, հպում) նկատմամբ նորմալ պատասխան ռեակցիան, սակայն զննումը և հետազոտումը չեն հայտնաբերում ակնհայտ սոմատիկ պատճառ: Բացի այդ, առկա է հոգեծին պատճառի որոշակի ակնհայտություն վերջին սթրեսային իրադարձությունների կամ խնդիրների ձևով:

Բացառությամբ՝

օրգանական կատատոնիկ խանգարման (F06.1)

ստուպորի՝

- ԱՀՃ (R40.1)
- կատատոնիկ (F20.2)
- դեպրեսիվ (F31-F33)
- մանիակալ (F30.2)

F44.3 Տրանս և մոլուցքային խանգարումներ

Խանգարումներ են, որոնց ժամանակ առկա է իրեն որպես անհատ զգալու ժամանակավոր կորստի զգացողությունը և շրջապատի ըմբռնման լրիվ բացակայությունը: Այս դասում ներառված են միայն ակամա և անցանկալի տրանսի վիճակներ, որոնք առաջանում են կրոնական և այլ մշակութային ընդունելի իրավիճակներից դուրս:

Բացառությամբ՝

վիճակների՝

- սուր կամ անցողիկ հոգեկան խանգարումների (F23.-)
- անձի օրգանական ծագման (էթիոլոգիայի) խանգարման (F07.0)
- հետկոնտուզիոն համախտանիշի (F07.2)
- հոգեակտիվ նյութով թունավորման (F10-F19 ընդհանուր չորրորդ նիշով .0)
- շիզոֆրենիայի (F20.)

F44.4 Շարժումների դիսցացված խանգարումներ

Խանգարումների ողջ բազմազանության ֆոնի վրա առկա է վերջույթը կամ դրա մի հատվածը կամ էլ վերջույթները շարժելու կարողության լրիվ կամ մասնակի կորուստը: Կարող է նկատվել խիստ նմանություն ատաքսիայի, ապրաքսիայի, ակինեզիայի, աֆոնիայի, դիզարթրիայի, դիսկինեզիայի, ինսուլտի կամ պարալիզի գրեթե բոլոր տեսակներին:

Հոգեծին (փսիխոզեն)՝

- աֆոնիա
- դիսֆոնիա

F44.5 Դիսցացված ցնցումներ

Դիսցիատիվ ցնցումները կարող են նմանվել էպիլեպտիկ նոպային՝ բավականին մոտ վերարտադրելով շարժումները, սակայն լեզվի կծելը, ընկնելով պայմանավորված քերծվածքներն ու կապտուկները և ակամա միզարձակումը

հազվադեպ են: Գիտակցությունը պահպանված է կամ փոխարինված է ստուպորի կամ տրանսի վիճակով:

- F44.6 Դիսոցացված անզգայացում կամ զգայական ընկալման կորուստ
Մաշկի անզգայացման շրջանները հաճախ ունեն սահմաններ: Այդտեղից պարզ է դառնում, որ դրանք ավելի շատ կապված են մարմնի ֆունկցիաների վերաբերյալ հիվանդի պատկերացումների, քան բժշկական գիտելիքների հետ: Կարող է լինել զգացողության տեսակները (եղանակավորություն, մոդալություն) տարբերակելու ունակության կորուստ, որը չի կարող լինել նյարդաբանական ախտահարումների հետևանք: Զգացողության բացակայության պայմաններում հիվանդը կարող է գանգատվել տարազգայություններից (պարեսթեզիա): Դիսոցիատիվ խանգարումների ժամանակ տեսողության և լսողության կորուստը հազվադեպ է լինում ամբողջական:
Հոգեծին (փսիխոզեն) խլություն
- F44.7 Դիսոցացված (կոնվերսիոն) խառը խանգարումներ
Համակցում F44.0-F44.6 դասերում դասակարգված խանգարումների հետ
- F44.8 Այլ դիսոցացված (կոնվերսիոն) խանգարումներ
Գանգերի (Ganser) համախտանիշ
Բարդ անձ
Հոգեծին (փսիխոզեն)
• շփոթ վիճակ
• մթնշաղային վիճակ
- F44.9 Դիսոցացված այլ խանգարումներ՝ չճշտված

F45 Սոմատոֆորմ խանգարումներ

Հիմնական նշանը հիվանդի կողմից սոմատիկ (մարմնական, ֆիզիկական) ախտանիշերի կրկնվող ներկայացումն է՝ միաժամանակ համառորեն պահանջելով բժշկական հետազոտություններ, չնայած նախկինում կատարված բազմաթիվ հետազոտությունների բացասական (նորմալ) արդյունքներին և հիվանդին վերահամոզելու բժիշկների ջանքերին այն մասին, որ ախտանիշերը չունեն որևէ ֆիզիկական հիմք: Եթե առկա է որևէ սոմատիկ խանգարում, ապա դրանով չի կարելի մեկնաբանել ինչպես հիվանդի ներկայացրած ախտանիշերի, այնպես էլ նրա դիսթրեսի և անհանգստության բնույթն ու ծանրության աստիճանը:

Բացառությամբ՝

- դիսոցացված խանգարումների (F44.-)
- մազերը պոկելուց (F98.4)
- թվատության (lalling) (առաջնալեզվային «լ», «ո» և «ր» հնչյունների արտաբերման խանգարում) (F80.0)
- սվսվախոսության (lispng) (սուլական «ս» և «զ» հնչյունների արտաբերման խանգարում) (F80.8)
- եղունգների կրծոտման (F98.8)
- այլ դասերում դասակարգվող խանգարումների կամ հիվանդությունների հետ կապված հոգեբանական և վարքային գործոնների (F54)
- օրգանական խանգարմամբ կամ հիվանդությամբ չպայմանավորված սեռական դիսֆունկցիայի (F52.-)
- բութ մատը ձծելուց (F98.8)
- տիկային խանգարումների (մանկական և դեռահասային տարիքում) (F95.-)
- Տուրետի համախտանիշի (F95.2)
- Տրիխոտիլոմանիայի (F63.3)

F45.0 Սոմատիզացված խանգարում

Հիմնական նշանը առնվազն երկու տարուց ոչ պակաս տևող բազմաթիվ, կրկնվող, հաճախ փոփոխվող սոմատիկ ախտանիշներն են: Հիվանդների մեծ մասն ունի առաջնային և մասնագիտացված բժշկական օգնության հետ շփման երկարատև և բարդ պատմություն, որի ընթացքում հնարավոր է, որ կատարված լինեն բազմաթիվ ոչ արդյունավետ հետազոտություններ և ախտորոշիչ միջամտություններ: Ախտանիշերը կարող են վերաբերվել մարմնի ցանկացած օրգանին կամ օրգանների համակարգին: Խանգարման ընթացքը քրոնիկ է և անկայուն, հաճախ կապվում է սոցիալական, միջանձային և ընտանեկան վարքի խանգարման հետ: Կարճատև գոյություն ունեցող (երկու տարուց պակաս) և ավելի նվազ արտահայտված ախտանիշերի համալիրները պետք է դասակարգվեն որպես չտարբերակված սոմատոֆորմ խանգարում (F45.1):

Բրիկեի (Briquet) հիվանդություն

Բազմակի փսիխոսոմատիկ խանգարում

Բացառությամբ՝

սիմուլյացիայի (գիտակցական սիմուլյացիա) (Z76.5)

F45.1 Չտարբերակված սոմատոֆորմ խանգարում

Չտարբերակված սոմատոֆորմ խանգարում պետք է ախտորոշել այն դեպքերում, երբ հիվանդի գանգատները բազմաթիվ են, փոփոխական և կայուն, որոնք սակայն չեն համապատասխանում սոմատոֆորմ խանգարմանը բնորոշ ամբողջական կլինիկական պատկերին:

Չտարբերակված փսիխոսոմատիկ խանգարում

F45.2 Հիպոխոնդրիկ խանգարում

Խանգարման հիմնական առանձնահատկությունը մեկ կամ ավելի ծանր և պրոգրեսիվող (առաջընթաց) ենթադրյալ ֆիզիկական խանգարումներ կամ հիվանդություններ ունենալու հիվանդի կայուն մտահոգությունն է: Հիվանդները ներկայացնում են կայուն սոմատիկ գանգատներ կամ ցուցաբերում են մշտական անհանգստություն իրենց արտաքին տեսքի կապակցությամբ: Նորմալ, սովորական զգացողությունները և նշանները հիվանդի կողմից հաճախ ընկալվում են որպես ոչ նորմալ և անհանգստացնող: Նա կենտրոնացնում է իր ուշադրությունը մեկ կամ երկու օրգանների կամ օրգանիզմի համակարգերի վրա: Հաճախ առկա է լինում արտահայտված դեպրեսիա և տագնապ, որոնք թույլ են տալիս հաստատել լրացուցիչ ախտորոշումներ:

Մարմնի դիսմորֆիկ խանգարում

Դիսմորֆոֆոբիա (ոչ զառանցանքային)

Հիպոխոնդրիկ նևրոզ

Հիպոխոնդրիա

Նոզոֆոբիա

Բացառությամբ՝

զառանցանքային դիսմորֆոֆոբիայի (F22.8)

սևեռուն զառանցանքների՝ սեփական մարմնի ձևի կամ գործառույթների մասին (F22.-)

F45.3 Սոմատոֆորմ վեգետատիվ դիսֆունկցիա

Հիվանդի գանգատները նման են վեգետատիվ նյարդային համակարգի կողմից առավելապես կամ լրիվ նյարդավորվող և հսկվող օրգանի կամ օրգան համակարգի, ինչպես օրինակ՝ սիրտ-անոթային, ստամոքս-աղիքային, շնչառական, միզասեռական, գործառնության խանգարման ախտանիշերին: Ախտանիշերը սովորաբար լինում են երկու տեսակի, որոնցից, և ոչ մեկը չի պատկանում կոնկրետ օրգանի կամ համակարգի ախտահարմանը: Առաջին

տեսակի գանգատների հիմքում ընկած են վեգետատիվ կառուցվածքների գրգռման օբյեկտիվ նշանները, որոնցից են սրտխփոցը, քրտնելը, կարմրելը, դողը (տրեմոր) և առողջության հնարավոր խանգարման հանդեպ վախն ու անհանգստությունը (դիսթրես): Ախտանիշերի երկրորդ խմբին պատկանում են ոչ սպեցիֆիկ կամ փոփոխական բնույթի սուբյեկտիվ խանգարումներ՝ ակնթարթային ցավեր ողջ մարմնում, այրոցի, ծանրության և ճնշման զգայություններ, կամ ուռածության կամ կամ փքվածության զգացում, որոնք հիվանդը վերագրում է որոշակի օրգանին կամ օրգանների համակարգին:

Սրտային ներոզ

Դա Կոստայի համախտանիշ (Da Costa)

Ստամոքսային ներոզ

Նեյրոցիրկուլյատոր ասթենիա

Հոգեծին (փսիխոզեն) բնույթի՝

- աէրոֆագիա
- հազ
- լուծ
- դիսպեպսիա
- դիզուրիա
- մեթեորիզմ (փորափքանք)
- զկռտոց
- խորը և հաճախակի շնչառություն (հիպերվենտիլյացիա)
- հաճախամիզություն
- գրգռված աղու համախտանիշ
- պիլորոսպազմ

Բացառությամբ՝

այլ դասերում դասակարգված հիվանդությունների կամ խանգարումների հետ զուգակցված հոգեբանական և վարքային գործոնների (F54)

F45.4 Քրոնիկ սոմատոֆորմ ցավային խանգարում

Հիմնական գանգատն է կայուն, կտրուկ, տանջող ցավը, ինչը լրիվ չի կարելի բացատրել ֆիզիոլոգիական խանգարումով կամ սոմատիկ հիվանդությամբ, և որը առաջանում է հուզական կոնֆլիկտի կամ հոգեւոցիալական խնդիրների հետ կապված, ինչը թույլ է տալիս դրանք դիտարկել որպես հիմնական պատճառական ազդեցություն: Սովորաբար արդյունքը լինում է կամ անհատական, կամ բժշկական բնույթի օգնության կամ ուշադրության զգալի ուժեղացումը: Դեպրեսիվ խանգարման կամ շիզոֆրենիայի ընթացքում առաջացած հոգեծին բնույթի ցավը չի կարող դասակարգվել այս դասում:

Փսիխալգիա

Հոգեծին՝

- մեջքի ցավ
- գլխացավ

Սոմատոֆորմ ցավային խանգարում

Բացառությամբ՝

մեջքի ցավի՝ ԱՀԾ (M54.9)

ցավի՝

- ԱՀԾ (R52.9)
- սուր (R52.0)
- քրոնիկ (R52.2)
- դժվար բուժվող (R52.1)

լարվածության գլխացավ (G44.2)

F45.8 Սոմատոֆորմ այլ խանգարումներ

Զգացողության, ֆունկցիայի կամ վարքի այլ խանգարումներ, որոնց հիմքում ընկած չեն սոմատիկ (մարմնական, ֆիզիկական) ախտահարումները, որոնք միջնորդավորված չեն վեգետատիվ նյարդային համակարգով, սահմափակված են որոշակի համակարգերով կամ մարմնի մասերով, և ժամանակի առումով սերտորեն կապված են սթրեսային իրադարձությունների կամ խնդիրների հետ:

Հոգեծին՝

- դիսմենորեա
- դիսֆագիա, ներառյալ «հիստերիկ կծիկը» (globus hystericus)
- քոր
- ծուլվզություն

Ատամների կրճտացում (բրուքսիզմ)

F45.9 Սոմատոֆորմ խանգարում՝ չճշտված

Փսիխոսոմատիկ խանգարում՝ ԱՀԾ

F48 Այլ ներողիկ խանգարումներ

F48.0 Ներասթենիա

Այս խանգարման ժամանակ առաջանում է մշակույթի հետ կապված փոփոխականություն: Առանձնանում է զգալի կերպով իրար ծածկող խանգարումների երկու տեսակ: Առաջին տիպի գլխավոր նշան է հանդիսանում մտավոր ծանրաբեռնվածությունից հետո գերհոգնածության զանգատները, որի հետ հաճախ կապված է արտադրական ցուցանիշների կամ առօրյա առաջադրանքների կատարման արդյունավետության որոշ նվազումը: Մտավոր հոգնածությունը հիվանդի կողմից սովորաբար նկարագրվում է որպես շեղող մտքերի և հիշողությունների ներխուժման, հիշողության թուլացման, կենտրոնանալու դժվարության կամ ցրվածության և մտավոր գործունեության անարդյունավետության տհաճ և կաշուն զգացում: Խանգարման մյուս տիպի ժամանակ հիմնական շեշտը դրվում է ֆիզիկական թուլության և նույնիսկ նվազագույն ծանրաբեռնվածությունից հետո ուժասպառության զգացողության վրա, որոնք ուղեկցվում են մկանային ցավերով և հանգստանալ չկարողանալով: Խանգարումների երկու տիպերն էլ բնորոշվում են մի շարք ընդհանուր տհաճ ֆիզիկական այնպիսի զգացումներով, ինչպիսիք են՝ գլխապտույտը, լարվածության գլխացավը և ընդհանուր անկայունության զգացումը: Բնորոշ են նաև սեփական մտավոր և ֆիզիկական ունակությունների անկման հետ կապված անհանգստությունը, գրգռվածությունը, ուրախանալու ունակության կորուստը (անհեղոնիա), աննշան արտահայտած դեպրեսիան ու տագնապը: Քունը խանգարված է սկզբնական և միջին փուլում, սակայն կարող է արտահայտված լինել նաև քնկոտությունը:

Հոգնածության համախտանիշ

Տվյալ խանգարմանը նախորդող սոմատիկ հիվանդությունը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր:

Բացառությամբ՝

ասթենիայի՝ ԱՀԾ (R53)

կենսաուժերի հյուծվածության վիճակի (burn-out) (Z73.0)

տկարության և հոգնածության (R53)

հետվիրուսային գերհոգնածության համախտանիշի (G93.3)

փսիխասթենիայի (F48.8)

F48.1 Դեպերսոնալիզացիայի-դեռեալիզացիայի (ապասանձնավորման-ապաիրականացման) համախտանիշ

Հազվադեպ խանգարում է, որի ժամանակ հիվանդն ակամա գանգատվում է իր մտավոր ակտիվության, մարմնի, շրջապատի որակական այնպիսի փոփոխություններից, որոնք թվում են անիրական, հեռացած և ավտոմատացված: Այս համախտանիշի տարբեր արտահայտությունների ֆոնի վրա հիվանդներն ավելի հաճախ գանգատվում են հույզերի կորստից, իրենց մտքերի, մարմնի և իրական աշխարհի հանդեպ սառնության և կտրվածության զգացումներից: Չնայած այս ապրումների դրամատիկ բնույթին, հիվանդը հասկանում է այդ փոփոխությունների անիրական լինելը: Գիտակցությունը մնում է նորմալ, չի տուժում հույզերի արտահայտման ունակությունը: Ապասանձնավորման-ապաիրականացման համախտանիշը կարող է զարգանալ որպես ախտորոշվող շիզոֆրենիայի, դեպրեսիվ, ֆոբիկ կամ օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարման բաղադրիչ մաս: Այս դեպքում ախտորոշումը պայմանավորված է հիմնական խանգարումով:

F48.8 Այլ ճշտված ներոտիկ խանգարումներ

Դհատի (Dhat) համախտանիշ («սերմնահեղուկի կորստի» հետ կապված հոգեբանական դիսթրես)

Մասնագիտական ներոզ, այդ թվում՝ գրեյու ջղակծկում (սպազմ)

Փսիխասթենիա

Փսիխասթենիկ ներոզ

Հոգեծին (փսիխոզեն) ուշաթափություն

F48.9 Ներոտիկ խանգարումներ՝ չճշտված

Ներոզ՝ ԱՀՃ

ՎԱՐՔԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԵՏ (F50-F59)

F50 Սննդի ընդունման խանգարումներ

Բացառությամբ՝

անորեքսիայի՝ ԱՀՃ (R63.0)

կերակրման դժվարությունների և սխալ գործելակերպի (R63.3)

վաղ հասակի մանկան կամ երեխայի կերակրման խանգարման (F98.2)

պոլիֆագիայի (R63.2)

F50.0 Նյարդային անորեքսիա

Հիվանդի կողմից մարմնի քաշի՝ դիտավորյալ առաջացրած և պահպանած իջեցումով բնութագրվող խանգարում: Այն սովորաբար առաջանում է դեռահասային տարիքի աղջիկների և երիտասարդ կանանց մոտ, կարող է լինել նաև պատանիների և երիտասարդ տղամարդկանց մոտ, ինչպես նաև երեխաների սեռական հասունացման շրջանում և տարեց կանանց մոտ՝ ընդհուպ մինչև դաշտանադադարի շրջանը: Խանգարումը պայմանավորված է ճարպակալման և կազմվածքը կորցնելու հոգեախտանաբանական յուրահատուկ վախով, որը դառնում է կաշուն սևեռուն գաղափար, որի արդյունքում հիվանդներն իրենց համար սահմանում են քաշի ցածր շեմ: Տարբեր աստիճանի թերսնվածության ֆոնի վրա սովորաբար առաջանում են երկրորդային ներզատական և նյութափոխանակային մի շարք փոփոխություններ և օրգանիզմի գործառույթների խանգարումներ: Ախտանիշերն են՝ սահմանափակ սննդակարգի ընտրություն, չափից ավելի ֆիզիկական վարժություններ,

ստիպողաբար հրահրված փսխում և լուծողական միջոցներով աղիների մաքրում, ինչպես նաև ախորժակ փակող և միզամուղ դեղորայքի ընդունում:

Բացառությամբ՝

ախորժակի կորստի (R63.0)

ախորժակի կորստի՝

- հոգեծին (F50.8)

F50.1 Ատիպիկ նյարդային անորեքսիա

Նյարդային անորեքսիայի որոշ նշաններին համապատասխանող խանգարում, որի լրիվ պատկերը, սակայն, թույլ չի տալիս հաստատել այդ ախտորոշումը: Օրինակ, վերը նշված խանգարման հիմնական ախտանիշերից մեկը, ինչպես օրինակ՝ ամենօրեա կամ հնարավոր ճարպակալման հանդեպ արտահայտված վախ, կարող է բացակայել քաշի նկատելի կորստի և նիհարելուն ուղղված վարքի առկայության դեպքում:

Այս ախտորոշումը չպետք է դնել քաշի կորուստ առաջացնող արդեն հայտնի սոմատիկ խանգարումների առկայության դեպքում:

F50.2 Նյարդային բուլիմիա

Շատակերության կրկնվող բռնկումներով և մարմնի քաշի հսկողության վերաբերյալ չափից ավելի մտահոգվածությամբ բնութագրվող համախտանիշ է: Սկզբում դա հանգեցնում է շատակերության, որին հաջորդում են փսխումը և լուծողականների ընդունումը: Այս խանգարումը շատ հատկանիշներով նման է նյարդային անորեքսիային, ներառյալ սեփական մարմնի քաշով և ձևով գերմտահոգվածությունը: Կրկնվող փսխումները հակված են առաջացնելու էլեկտրոլիտների հավասարակշռության խանգարում և սոմատիկ բարդություններ: Հաճախ, բայց ոչ միշտ, հիվանդի անամնեզում նշվում է նյարդային անորեքսիայի ավելի վաղ էպիզոդ, որի վաղեմությունը տատանվում է մի քանի ամսից մինչև մի քանի տարվա սահմաններում:

Բուլեմիա՝ ԱՀՃ

Նյարդային հիպերորեքսիա

F50.3 Ատիպիկ նյարդային բուլեմիա

Նյարդային բուլեմիայի որոշ նշաններին համապատասխանող խանգարում, որի լրիվ պատկերը, սակայն, թույլ չի տալիս հաստատել այդ ախտորոշումը: Օրինակ, կարող են առկա լինել շատակերության կրկնվող նոպաներ և լուծողական դեղորայքի չափից ավելի օգտագործում՝ սակայն առանց քաշի էական փոփոխության, կամ կարող է բացակայել նյարդային բուլեմիային բավական բնորոշ սեփական մարմնի քաշով և ձևով պայմանավորված գերմտահոգվածությունը:

F50.4 Հոգեբանական այլ խանգարումներով պայմանավորված շատակերություն

Շատակերություն սթրեսային այնպիսի իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են՝ ծանր կորուստը, դժբախտ դեպքը, ծննդաբերությունը և այլն:

Հոգեծին շատակերություն

Բացառությամբ՝

ճարպակալման (E66.-)

F50.5 Փսխում՝ պայմանավորված այլ հոգեբանական խանգարումներով

Դիսոցացված խանգարումների (F44.-) և հիպոխոնդրիկ խանգարման (F45.2) ժամանակ առաջացած կրկնվող փսխում, որը բացառապես չի հանդիսանում տվյալ գլխում չդասակարգված վիճակների հետևանք: Այս ենթադասը կարող է կիրառվել որպես O21.- դասի (առատ փսխում հղիության ժամանակ) լրացում, երբ հուզական գործոնները գերակայում են հղիների մոտ կրկնվող սրտխառնոցի և փսխման պատճառական հիմքում:

Հոգեծին փսխում

Բացառությամբ՝

սրտխառնոցի (R11)

փսխման՝ ԱՀՃ (R11)

F50.8 Սննդի ընդունման այլ խանգարումներ

Ուտելու համար ոչ պիտանի նյութեր ուտելը (խեղաթյուրված ախորժակ) (pica)

մեծերի մոտ

Ախորժակի հոգեծին կորուստ

Բացառությամբ՝

մանուկների և երեխաների կողմից ուտելու համար ոչ պիտանի նյութեր ուտելը

(խեղաթյուրված ախորժակ) (pica) (F98.3)

F50.9 Սննդի ընդունման խանգարում՝ չճշտված

F51 Քնի խանգարումներ՝ ոչ օրգանական ծագման (էթիոլոգիայի)

Շատ դեպքերում քնի խանգարումը հանդիսանում է հոգեկան կամ սոմատիկ խանգարումների ախտանիշերից մեկը: Հանդիսանում են արդյոք քնի խանգարումները տվյալ հիվանդի մոտ անկախ վիճակ, թե պարզապես այս կամ ցանկացած այլ գլխի դասերում ընդգրկված այլ խանգարման ախտանիշերից մեկը, անհրաժեշտ է որոշել կլինիկական դրսևորումների և ընթացքի, թերապևտիկ եզրակացության, մասնագիտական խորհրդատվությունների ընթացքում առկա առաջնահերթությունների հիման վրա: Հիմնականում, եթե քնի խանգարումը գլխավոր գանգատներից մեկն է և ինքնին ընկալվում է որպես հիվանդագին վիճակ, այս ծածկագիրը պետք է կիրառել տվյալ դեպքում առկա հոգեախտաբանական և ախտաբանաֆիզիոլոգիական խանգարումների ախտորոշումների ծածկագրերի հետ միաժամանակ: Այս դասը ներառում է քնի միայն այն խանգարումները, որոնց ժամանակ որպես առաջնային գործոն հանդես են գալիս հուզական պատճառները, և որոնք պայմանավորված չեն այլ դասերում նույնականացված սոմատիկ խանգարումներով:

Բացառությամբ՝

քնի խանգարման (օրգանական) (G47.-)

F51.0 Անքնություն՝ ոչ օրգանական ծագման (էթիոլոգիայի)

Քնի անբավարար տևողության և/կամ անբավարար որակի վիճակ, որը պահպանվում է բավական երկար ժամանակահատվածում, և ներառում է քուն մտնելու և քնի վիճակում մնալու դժվարությունները կամ վաղ վերջնական արթնացումը: Անքնությունը հանդիսանում է մի շարք հոգեկան և սոմատիկ խանգարումների ընդհանուր ախտանիշ, և պետք է ծածկագրվի այս ենթադասում՝ ի լրումն հիմնական հիվանդության, միայն, եթե վերջինս գերակշռում է կլինիկական պատկերում:

Բացառությամբ՝

անքնության (օրգանական) (G47.0)

F51.1 Քնկոտություն (հիպերսոմնիա)՝ ոչ օրգանական ծագման (էթիոլոգիայի)

Հիպերսոմնիան բնորոշվում է որպես ցերեկային ժամերին չափից ավելի քնկոտության և քնի նույնների (հաշվի չի առնվում ոչ համարժեք տևողությամբ քունը) վիճակ, կամ արտահայտվում է արթնանալուց հետո կայտառությանը ձգձգված անցումով: Օրգանական գործոնի բացակայության դեպքում հիպերսոմնիայի վիճակը սովորաբար կապում են հոգեկան խանգարումների հետ:

Բացառությամբ՝

հիպերսոմնիայի (օրգանական) (G47.1)

նարկուլեպսիայի (G47.4)

F51.2 Քուն-արթմնի ռեժիմի խանգարում՝ ոչ օրգանական ծագման (էթիոլոգիայի)
Իրենից ներկայացնում է անհատի մոտ առկա քուն-արթմնի հերթակարգի (ռեժիմ) և անհատի շրջապատի համար ցանկալի (պահանջվող) քուն-արթմնի հերթակարգի միջև ներդաշնակության (սինխրոնիզացիա) անբավարարություն, որի արդյունքում անհատը գանգատվում է կամ անքնությունից (ինսոմնիա), կամ քնկոտությունից (հիպերսոմնիա):

- Հոգեծին (փսիխոգեն) շրջվածություն՝
 - օրական (ցիրկադիան)
 - նիկտոհեմերալ (24 ժամյա)
 - քնային
- } ռիթմի

Բացառությամբ՝

քուն-արթմնի ռեժիմի խանգարումների (օրգանական) (G47. 2)

F51.3 Գիշերաշրջիկություն (սոմնամբուլիզմ) (լուսնոտություն)
Փոփոխված գիտակցության ձև է, որի ժամանակ զուգորդվում են քնի և արթուն վիճակները: Գիշերաշրջիկության էպիզոդի ժամանակ հիվանդն անկողնուց բարձրանում է գիշերային քնի առաջին երրորդի ընթացքում և շրջում է՝ ցուցաբերելով գիտակցության, հակազդման և շարժունակության ցածր մակարդակ: Զարթնելուց հետո սովորաբար չի հիշում տեղի ունեցածը:

F51.4 Սարսափներ քնած ժամանակ (գիշերային սարսափներ)
Ծայրահեղ սարսափի կամ խուճապի գիշերային էպիզոդներ, որոնք ուղեկցվում են ուժեղ բղավոցով, շարժումներով և ցայտուն արտահայտված վեգետատիվ նշաններով: Գիշերային քնի առաջին երրորդում հիվանդը խուճապահար ճիչով նստում է կամ վեր թռչում: Հաճախ նետվում է դեպի դուռը, կարծես փորձում է փախչել, չնայած շատ հազվադեպ է լքում ննջասենյակը: Պատահածի մասին չի հիշում կամ էլ հիշողությունը շատ սահմանափակ է (սովորաբար մեկ կամ երկու մտային պատկերներ):

F51.5 Գիշերային մղձավանջներ
Երազը ծանրաբեռնված է տագնապով կամ վախով: Հիվանդը մանրամասնորեն հիշում է երազի բովանդակությունը: Երազի պատկերները շատ վառ են և սովորաբար ներառում են կյանքի, անվտանգության կամ ինքնագնահատման դեմ ուղղված սպառնալիքների թեմաներ: Հաճախ է լինում միևնույն կամ համանման սարսափազդու մղձավանջի կրկնությունը: Տվյալ խանգարման բնորոշ էպիզոդի ընթացքում արտահայտված են վեգետատիվ դրսևորումները, սակայն չկա նկատելի բացականչություն կամ մարմնի շարժում: Զարթնելիս անհատը անմիջապես դառնում է առույգ և կողմնորոշվող:
Երազի տագնապային խանգարում

F51.8 Քնի այլ խանգարումներ՝ ոչ օրգանական ծագման (էթիոլոգիայի)

F51.9 Քնի խանգարում՝ ոչ օրգանական՝ ծագման (էթիոլոգիայի)՝ չճշտված
Քնի հուզական խանգարում՝ ԱՀԾ

F52 Սեռական դիսֆունկցիա՝ չպայմանավորված օրգանական խանգարումներով կամ հիվանդություններով

Սեռական դիսֆունկցիան ընդգրկում է տարբեր վիճակներ, որոնց պատճառով անձն ունակ չէ ունենալ սեռական հարաբերություն, որքան էլ որ ցանկանա: Սեռական ռեակցիան հանդիսանում է հոգեմարմնական (փսիխոսոմատիկ)՝ երկակի գործընթաց և, սովորաբար, երկու գործընթացներն էլ՝ և հոգեկանը, և սոմատիկը, ընդգրկված են սեռական դիսֆունկցիայի պատճառականության մեջ:

Բացառությամբ՝

Դհատի (Dhat) համախտանիշի («սերմնահեղուկի կորստի» հետ կապված հոգեբանական դիսթրես) (F48.8)

F52.0 Սեռական ցանկության բացակայություն կամ կորուստ

Սեռական ցանկության կորուստը համարվում է սկզբունքային խնդիր, և այն երկրորդային չէ սեռական այլ խնդիրների նկատմամբ, այնպիսիք, ինչպիսիք են էրեկցիայի բացակայությունը կամ դիսպարեունիան:

Սառածություն (ֆրիգիդություն)

Թուլացած (նվազած, հիպոակտիվ) սեռական ցանկության խանգարում

F52.1 Զգվանք սեռական հարաբերության նկատմամբ և սեռական բավականության բացակայություն

Սպասվող սեռական հարաբերությունն առաջացնում է այնքան ուժեղ վախ և տագնապ, որ ստիպում է խուսափել սեռական հարաբերությունից (զգվանք սեռական հարաբերության նկատմամբ), կամ սեռական ռեակցիան նորմալ է և ունենում են հեշտանք (օրգազմ), բայց բացակայում է համապատասխան հաճելի զգացումը (սեռական բավականության բացակայություն):

Անհեղոնիա (սեռական)

F52.2 Գենիտալ ռեակցիայի անբավարարություն

Տղամարդկանց համար սկզբունքային խնդիր է հանդիսանում էրեկցիայի խանգարումը (բավարար սեռական հարաբերության համար համապատասխան էրեկցիայի առաջացման կամ պահպանման դժվարություններ):

Կանանց մոտ սկզբունքային խնդիր է հանդիսանում հեշտոցի չորությունը կամ հեշտոցային քսման (լյարծուն հեղուկի արտադրության) անբավարարությունը:

Սեռական գրգռվածության խանգարում կնոջ մոտ

Էրեկտիլ խանգարում տղամարդու մոտ

Հոգեծին (փսիխոգեն) սեռական անկարողություն (իմպոտենցիա)

Բացառությամբ՝

օրգանական ծագման սեռական անկարողության (N48.4)

F52.3 Հեշտանքի (օրգազմի) դիսֆունկցիա

Հեշտանքը կամ չի առաջանում, կամ զգալիորեն ուշանում է

Արգելակված հեշտանք (տղամարդ) (կին)

Հեշտանքի փսիխոգեն բացակայություն (անօրգազմիա)

F52.4 Վաղաժամ սերմնաժայթքում

Սերմնաժայթքումն այն չափով վերահսկելու անկարողություն, որը բավարար կլիներ զուգընկերներին ստանալ բավականություն սեռական հարաբերությունից:

F52.5 Ոչ օրգանական վազինիզմ

Հեշտոցը շրջապատող կոնքի հատակի մկանների սպազմ, որը արգելակում է հեշտոցի բացմանը: Առնանդամի մուտքը հեշտոց անհնար է կամ ցավոտ:

Հոգեծին (փսիխոգեն) վազինիզմ

Բացառությամբ՝

վազինիզմի (օրգանական) (N94.2)

F52.6 Ոչ օրգանական դիսպարեունիա

Դիսպարեունիան (ցավի զգացում սեռական հարաբերության ժամանակ) առաջանում է և տղամարդկանց, և կանանց մոտ: Հաճախ դա կարող է լինել տեղային ախտաբանության ախտանիշ, որի դեպքում այն պետք է դասակարգել ըստ ախտաբանական վիճակի: Այս դասը պետք է օգտագործել միայն այն դեպքում, երբ չկա առաջնային ոչ օրգանական սեռական դիսֆունկցիա (օրինակ՝ վազինիզմ կամ հեշտոցի չորություն):

Հոգեծին դիսպարեունիա

Բացառությամբ՝

դիսպարեունիայի (օրգանական) (N94.1)

F52.7 Ուժեղացած սեռական հակում

Նիմֆոմանիա

Սատիրիազ

F52.8 Այլ սեռական դիսֆունկցիա՝ չպայմանավորված օրգանական խանգարմամբ կամ հիվանդությամբ

F52.9 Սեռական դիսֆունկցիա՝ չպայմանավորված օրգանական խանգարմամբ կամ հիվանդությամբ՝ չճշտված

F53 Հոգեկան և վարքային խանգարումներ՝ կապված հետծննդյան շրջանի հետ, այլ դասերում չդասակարգված

Այս դասն ընդգրկում է միայն հետծննդյան շրջանի հետ կապված (ծննդաբերությունից հետո 6 շաբաթվա ընթացքում առաջացած) այն հոգեկան խանգարումները, որոնք չեն համապատասխանում այս գլխի այլ դասերում դասակարգված խանգարումների չափանիշներին, և դա բացատրվում է կամ մատչելի տեղեկատվության պակասով, կամ այն բանով, որ առկա են լրացուցիչ կլինիկական դրսևորումներ, որոնք թույլ չեն տալիս այս խանգարումները դասակարգել այլ դասերում:

F53.0 Հոգեկան և վարքային թեթև խանգարումներ՝ կապված հետծննդյան շրջանի հետ, այլ դասերում չդասակարգված

Դեպրեսիա՝

- հետծննդյան (պոստնատալ)՝ ԱՀՃ
- հետծննդաբերական՝ ԱՀՃ

F53.1 Հոգեկան և վարքային ծանր խանգարումներ՝ կապված հետծննդյան շրջանի հետ, այլ դասերում չդասակարգված

Հետծննդյան փսիխոզ՝ ԱՀՃ

F53.8 Հոգեկան և վարքային այլ խանգարումներ՝ կապված հետծննդյան շրջանի հետ, այլ դասերում չդասակարգված

F53.9 Հետծննդյան հոգեկան խանգարում՝ չճշտված

F54 Հոգեբանական և վարքային գործոններ՝ կապված այլ դասերում դասակարգված խանգարումների կամ հիվանդությունների հետ

Այս դասը պետք է կիրառել հոգեբանական և վարքային այն գործոնների առկայությունը գրանցելու համար, որոնք ենթադրաբար հիմնական դեր են խաղում այլ գլուխներում դասակարգված սոմատիկ հիվանդությունների պատճառականության մեջ: Որպես հետևանք առաջացած հոգեկան խանգարումները սովորաբար ունեն թեթև (մեղմ) դրսևորում, հաճախ երկարատև են (օրինակ՝ անհանգստություն, հուզական կոնֆլիկտ, մռայլ կանխազգացում) և ինքնին թույլ չեն տալիս կիրառել այս գլխի դասերից որևէ մեկը:

Ներառյալ՝

հոգեբանական գործոնները, որոնք ներազդում են ֆիզիկական (սոմատիկ) վիճակների վրա

Այս դասի կիրառման օրինակներն են՝

- ասթմա F54 և J45.-
- դերմատիտ F54 և L23-L25
- ստամոքսի խոց F54 և K25.-
- լորձային կոլիտ F54 և K58.-

- խոցային կոլիտ F54 և K51.-
- եղնջացան F54 և L50.-

Զուգակցված սոմատիկ խանգարումը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր:

Բացառությամբ՝

լարվածության գլխացավի (G44.2)

F55 Կախվածություն չառաջացնող նյութերի չարաշահում

Կարող են օգտագործվել բազմազան դեղեր և ժողովրդական բուժական միջոցներ, բայց հատկապես կարևոր են հետևյալ խմբերը. (a) հակում չառաջացնող հոգեմետ այնպիսի դեղանյութեր, ինչպիսիք են՝ հակադեպրեսանտները, (b) լուծողականները և (c) ցավազրկողները, որոնք կարող են օգտագործվել առանց բժշկի նշանակման, ինչպես օրինակ՝ ասպիրինը, պարացետամոլը:

Այս դեղամիջոցների մշտական օգտագործումը երբեմն ուղեկցվում է օրգանների վրա այդ նյութերի վնասակար ազդեցություններով: Տարիամոզելու կամ այդ նյութերի օգտագործումն արգելելու փորձերը հաճախ առաջ են բերում դիմադրություն: Լուծողականների և ցավազրկողների պարագայում հիվանդի կողմից դիմադրությունը չի թուլանում նույնիսկ այն ժամանակ, երբ նախազգուշացնում են դրանց կողմնակի ազդեցության, մասնավորապես երիկամային դիսֆունկցիայի կամ էլեկտրոլիտային խանգարումների հնարավորության (կամ նույնիսկ զարգացման) մասին: Չնայած ակնհայտ է, որ հիվանդն ունի ուժեղ հակում ընդունելու այդ նյութերը, կախվածության կամ ժուժկալության (աբստինենցիա, զրկանք) ախտանիշերը չեն զարգանում այնպես, ինչպես հոգեակտիվ նյութերի օգտագործման դեպքերում՝ դասակարգված F10-F19 դասերում:

Չարաշահում

- թթվայնությունն իջեցնող միջոցների (անտացիդներ)
- դեղաբույսերի և ժողովրդական միջոցների
- ստերոիդների կամ հորմոնների
- վիտամինների

Լուծողական դեղորայք օգտագործելու հակում

Բացառությամբ՝

հոգեակտիվ նյութերի չարաշահման (F10-F19)

F59 Ֆիզիոլոգիական խանգարումների և սոմատիկ գործոնների հետ կապված վարքային խանգարումներ՝ չճշտված

Ներառյալ՝

Հոգեծին ֆիզիոլոգիական դիսֆունկցիա՝ ԱՀԾ

ԱՆՁԻ ԵՎ ՎԱՐՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՀԱՍՈՒՆ ՏԱՐԻՔՈՒՄ (F60-F69)

Այս բաժինը ներառում է կլինիկական նշանակություն ունեցող տարբեր վիճակներ և վարքի ձևեր (մոդել), որոնք ունեն կայունության միտում և առաջանում են որպես անհատին բնորոշ կենսակերպի և նրա շրջապատի հետ փոխհարաբերության արտահայտություն: Այս վիճակների և վարքի ձևերի մի մասը անհատական զարգացման ընթացքում ի հայտ են գալիս վաղ՝ որպես օրգանիզմի կառուցվածքային (կոնստիտուցիոնալ) գործոնների և սոցիալական փորձի միաժամանակյա ազդեցության

արդյունք, այն դեպքում, երբ մյուսները ձեռք են բերվում կյանքի ավելի ուշ փուլերում: Անձի յուրահատուկ խանգարումները (F60.-), խառը և անձի այլ խանգարումները (F61.-) և անձի կայուն (երկարատև պահպանվող) փոփոխությունները (F62.-) հանդիսանում են վարքագծի խորը արմատացած և երկարատև մոդելներ, որոնք մի շարք անձնական և սոցիալական իրավիճակներում արտահայտվում են որպես անզիջում (ոչ ճկուն) պատասխան ռեակցիաներ: Դրանք ծայրահեղորեն կամ զգալիորեն տարբերվում են այն բանից, թե ինչպես է տվյալ մշակույթին պատկանող միջին մակարդակի (սովորական) անձը ընկալում, մտածում, զգում և, հատկապես, շրջապատի հետ շփվում: Վարքի այդպիսի մոդելներն ունեն կայունության միտում և ընդգրկում են հոգեբանական գործունեության և վարքագծի բազմաթիվ ոլորտներ: Տվյալ խանգարումները հաճախ, սակայն ոչ միշտ, կապված են տարբեր աստիճանի ապրումների և սոցիալական բնույթի խնդիրների հետ:

F60 Անձի յուրահատուկ խանգարումներ

Դասը ներառում է անհատի անձի և վարքի ծանր խանգարումները և արտահայտված շեղումները, որոնք չեն հանդիսանում գլխուղեղի հիվանդության, վնասվածքի կամ այլ ախտահարման, կամ այլ հոգեկան խանգարման ուղղակի հետևանք: Սովորաբար այս խանգարումներն ընդգրկում են անձի մի քանի ոլորտ, գրեթե միշտ սերտորեն կապված են արտահայտված անձնական դիսթրեսի և սոցիալական կապերի խզման հետ: Սովորաբար ի հայտ են գալիս մանկական կամ դեռահասային տարիքում և շարունակվում են հետագա կյանքի ընթացքում:

F60.0 Անձի պարանոյի խանգարում

Անձի խանգարում, որը բնութագրվում է անհաջողության նկատմամբ գերզգայունությամբ, վիրավորանքը ներելու անհնարինությամբ, կասկածամտությամբ, իրականում չեզոք կամ ընկերական բնույթի գործողությունները որպես թշնամական կամ արհամարական մեկնաբանելու և այսպիսով իր կենսափորձը խեղաթյուրելու հակումով, ամուսնու (կնոջ) կամ զուգընկերոջ անհավատարմության վերաբերյալ կրկնվող անհիմն կասկածներով, սեփական իրավացիության մարտնչող և համառ գիտակցումով: Այդպիսի անձիք հակված են չափազանցված մեծամտության (ինքնագնահատման), և հաճախ լինում է չափազանցված ինքնահավանություն:

Անձի (խանգարում)`

- անզուսպ (ընդարձակվող, էքսպանսիվ) պարանոյի
- մոլեռանդ (ֆանատիկ)
- կվերույար
- պարանոյի
- զգայուն (խռովկան) պարանոյի

Բացառությամբ`

պարանոյայի (F22.0)

կվերույար պարանոյայի (F22.8)

պարանոյի դային`

- փսիխոզի (F22.0)
- շիզոֆրենիայի (F20)
- վիճակի (F22.0)

F60.1 Անձի շիզոիդ խանգարում

Անձի խանգարում, որին բնորոշ է մտերիմներից հեռանալը, սոցիալական և այլ կապերի (շփումների) թուլացումը` նախապատվությունը տալով

մտապատրանքներին, ճգնավորությանը և ինքնավերլուծությանը: Առկա է զգացմունքներն արտահայտելու և հաճույք զգալու սահմանափակ ունակություն:

Բացառությամբ՝

- Ասպերգերի (Asperger) համախտանիշի (F84.5)
- զառանցական խանգարման (F22.0)
- մանկական շիզոֆրենիայի խանգարման (F84.5)
- շիզոֆրենիայի (F20)
- շիզոֆրենանման խանգարման (F21)

F60.2 Անձի հակասոցիալական խանգարում

Սոցիալական պարտականությունների անտեսումով և շրջապատի նկատմամբ քարսիրտ անտարբերությամբ բնորոշվող անձի խանգարում: Նկատվում է զգալի անհամապատասխանություն հիվանդի վարքագծի և հիմնական սոցիալական նորմերի միջև: Վարքագիծը դժվարությամբ է փոփոխությունների ենթարկվում բացասական փորձի հիման վրա, ներառյալ՝ պատիժը: Հիվանդները դժվար են տանում անհաջողությունները և հեշտությամբ են դիմում ագրեսիայի, ներառյալ բռնությունը: Նրանք հակված են մեղադրելու ուրիշներին կամ տալ սեփական ճշմարտանման բացատրություններ սեփական վարքի մասին, որը հանգեցնում է կոնֆլիկտի հասարակության հետ:

Անձ (խանգարում)՝

- անբարոյական
- հակասոցիալական
- ասոցիալական
- փսիխոպաթիկ
- սոցիոպաթիկ

Բացառությամբ՝

- վարքի խանգարումների (F91.-)
- անձի հուզական անկայուն խանգարման (F60.3)

F60.3 Անձի հուզական անկայուն խանգարում

Անձի խանգարում, որին բնորոշ է մղումային (իմպուլսիվ) գործողություններին միտվածությունը՝ առանց հետևանքների մասին մտածելու: Տրամադրությունն անկախատեսելի է, քմահաճ է: Առկա է հույզերի պոռթկումների հակում և դրանք վերահսկելու անկարողություն: Նկատվում է կռվարարություն և կոնֆլիկտի հակում շրջապատող մարդկանց հանդեպ, հատկապես, երբ իմպուլսիվ արարքները կանխարգելվում կամ քննադատվում են: Կարելի է առանձնացնել խանգարման երկու տիպ՝ իմպուլսիվ, որը բնորոշվում է առավելապես հուզական անկայունությամբ և հուզական հսկողության անբավարարությամբ, և սահմանային տիպ, որը բնորոշվում է ինքնաընկալման, նպատակների և ներքին ձգտումների լրացուցիչ խանգարմամբ, դատարկության քրոնիկ զգացումով, լարված և անկայուն միջանձնային հարաբերություններով և ինքնակործան վարքի միտումով, ներառյալ սուիցիդալ ժեստերը և փորձերը:

Անձ (խանգարում).

- ագրեսիվ
- սահմանային
- դյուրաբորբոք (բռնկվող)

Բացառությամբ՝

- անձի հակասոցիալական խանգարման (F60.2)

F60.4 Անձի հիստերիկ խանգարում

Անձի խանգարում, որը բնորոշվում է մակերեսային և անկայուն դյուրագրգռությամբ, չափազանցված, ցուցադրական, թատերականացված

հուզականության հակումով, ինչպես նաև հույզերի չափազանցված արտահայտմամբ, ներշնչանքով, եսակենտրոնությամբ (էգոցենտրիզմ), սեփական ցանկությունների և թուլությունների հանդեպ թողտվությամբ, շրջապատին հաշվի չառնելով, հեշտ վիրավորվելու, գնահատման, հաջողության և ուշադրության մշտական ցանկության զգացումներով:

Անձ (խանգարում)

- հիստերիկ
- փսիխոինֆանտիլ

F60.5 Անձի անանկաստիկ (օբսեսիվ-կոմպուլսիվ) խանգարում

Անվստահության զգացումով, չափազանց մանրակրկիտությամբ, զսպվածությամբ և մանրամասներով մտահոգվածությամբ, համառությամբ, զգուշությամբ և կարծրությամբ բնորոշվող անձի խանգարում: Կարող են առկա լինել համառ և անցանկալի մտքեր կամ գործողություններ, որոնք չեն հասնում օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարման աստիճանի:

Անհատ (խանգարում)

- կոմպուլսիվ
- օբսեսիվ
- օբսեսիվ-կոմպուլսիվ

Քացառությամբ՝

օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարման (F42)

F60.6 Անձի տագնապային (խուսափողական) խանգարում

Ներքին լարվածության զգացումով, մռայլ կանխազգացումների առկայությամբ, անվտանգության զգացման բացակայությամբ, թերարժեքությամբ բնորոշվող անձի խանգարում: Արտահայտված են դուր գալու և ճանաչված լինելու մշտական ուժեղ ցանկությունը, մերժման և քննադատության հանդեպ գերզգայունությունը, անձնական կապվածության սահմանափակումը, որոշ գործողություններից խուսափելու միտումը՝ ըստ սովորույթի չափազանցներով ամենօրյա իրավիճակներում հնարավոր սպառնալիքները և վտանգները:

F60.7 Անձի կախվածության խանգարում

Անձի խանգարում, որը բնութագրվում է իրեն առնչվող մեծ և փոքր կենսական որոշումների ընդունման հարցում շրջապատող մարդկանցից զգալի և պասիվ կախվածությամբ (հույսը նրանց վրա դնելու միտում), միայնակ մնալու (լքվածության) հանդեպ արտահայտված վախով, անօգնականության և անիրագեկության զգացումներով, մեծերի և շրջակա մարդկանց ցանկություններին պասիվ համաձայնությամբ և առօրյա կյանքի պահանջներին թույլ ռեակցիայով: Ակտիվության (ուժի և էներգիայի) պակասը կարող է արտահայտվել մտավոր կամ հուզական ոլորտներում: Հաճախ առկա է պատասխանատվությունը մյուսների վրա դնելու միտում:

Անձ (խանգարում)՝

- ասթենիկ
- ոչ համարժեք (ոչ ադեկվատ)
- պասիվ
- անհաջողության դատապարտված

F60.8 Անձի յուրահատուկ այլ խանգարումներ

Անձ (խանգարում)՝

- էքսցենտրիկ
- «անզուսպ» («սանձարձակ»)
- թերզարգացած («ոչ հասուն»)
- ինքնասիրահարված (նարցիսային)

- պասիվ-ագրեսիվ
- հոգեհարկային

F 60.9 Անձի խանգարում՝ չճշտված
 Բնավորության ներքո՝ ԱՀՃ
 Հիվանդագին («ախտաբանական») անձ՝ ԱՀՃ

F61 Անձի խառը և այլ խանգարումներ

Այս դասը նախատեսված է անձի այն խանգարումների համար, որոնք հաճախ անհանգստացնում են հիվանդներին, բայց չունեն ախտանիշերի յուրահատուկ այն շարքը, որոնք դասակարգվում են F60.- դասում: Դրա հետևանքով ավելի դժվար են ախտորոշվում, քան F60.- դասում դասակարգված խանգարումները:

Օրինակներն են՝

- Անձի խառը խանգարումներ, որոնք ներառում են F60.- դասում դասակարգված խանգարումներին բնորոշ որոշ նշաններ, բայց առանց գերակշռող ախտանիշերի համալիրի, որը թույլ կտար դնել ավելի յուրահատուկ ախտորոշում:
- Անձի անհանգստացնող փոփոխություններ, որոնք դասակարգված չեն F60.- կամ F62.- դասերում և դիտարկվում են որպես երկրորդային առկա հիմնական ախտորոշման՝ աֆեկտիվ կամ տագնապային խանգարման նկատմամբ:

Բացառությամբ՝

չեշտված (ակցենտուացված) անձնային գծերի (Z73.1)

F62 Ուղեղի վնասվածքի կամ հիվանդության հետ կապ չունեցող անձի կայուն փոփոխություններ

Հասուն տարիքում անձի և վարքի խանգարումներ, որոնք առաջացել են աղետ կամ չափից դուրս երկարատև սթրես վերապրած, կամ ծանր հոգեկան հիվանդություն կրած, անցյալում անձի խանգարում չունեցող անհատի մոտ: Այս դասի ախտորոշումները պետք է դնել միայն այն դեպքում, երբ առկա են միջավայրի և սեփական անձի նկատմամբ անհատի ընկալման, վերաբերմունքի և մտքերի անձնական մոդելում որոշակի և կայուն փոփոխության առկայության ապացույցներ:

Անձի փոփոխությունը պետք է լինի էական և զուգակցվի ոչ ճկուն և նորմերին չհամապատասխանող վարքի հետ, որը չի նկատվել նախկինում՝ մինչև ախտաբանական ազդեցությունը: Փոփոխությունը չպետք է լինի առկա այլ հոգեկան խանգարման կամ որևիցե նախորդող հոգեկան հիվանդության մնացորդային ախտանիշերի անմիջական արտահայտություն:

Բացառությամբ՝

անձի և վարքի խանգարումների, որոնք պայմանավորված են գլխուղեղի հիվանդությամբ, վնասվածքով կամ դիսֆունկցիայով (F07.-)

F62.0 Անձի քրոնիկ փոփոխություններ աղետի ապրումներից հետո

Աղետի սթրեսի ազդեցությամբ առաջացած, առնվազն երկու տարի նշվող անձի երկարատև պահպանվող փոփոխություն: Սթրեսը պետք է լինի այն աստիճանի ծայրահեղ, որ անհրաժեշտություն չլինի հաշվի առնել անհատական խոցելիությունը, որպեսզի հնարավոր լինի բացատրել անձի վրա թողած խորը ազդեցությունը: Խանգարումը բնորոշվում է շրջապատի նկատմամբ թշնամական կամ կասկածանքի վերաբերմունքով, սոցիալական ինքնամեկուսացմամբ, դատարկության և անելանելիության զգացումով, «եզրին լինելու» մշտական

զգացումով, կարծես թե հիվանդին մշտապես ահաբեկում և մեկուսացնում են: Անձի խանգարման այս տիպին կարող է նախորդել հետվնասվածքային սթրեսային խանգարումը (F43.1):

Անձի փոփոխություն հետևյալից հետո՝

- համակենտրոնացման ճամբարում լինելը
- աղետ
- երկարատև՝
 - սպանվելու սպառնալիքով գերության մեջ լինելը
 - կյանքին սպառնացող իրադրությունում գտնվելը (օրինակ՝ ահաբեկության զոհ լինելու վտանգ)
- խոշտանգում

Բացառությամբ՝

հետվնասվածքային սթրեսային խանգարման (F43.1)

F62.1 Անձի կայուն փոփոխություններ հոգեկան հիվանդությունից հետո

Անձի փոփոխություն, առնվազն երկու տարի տևողությամբ, որը հետևանք է այն տառապանքի վնասվածքային ազդեցության, որը պատճառել է ծանր հոգեկան հիվանդությունը: Այս փոփոխությունը չի կարող բացատրվել նախկինում եղած անձի խանգարումով և պետք է տարբերվի շիզոֆրենիայի մնացորդային երևույթներից և նախորդող հոգեկան հիվանդությունից ոչ լրիվ ապաքինմամբ պայմանավորված այլ վիճակներից: Այս խանգարումը բնորոշվում է այլ անձանցից չափից ավելի կախվածությամբ և նրանց հանդեպ պահանջկոտ վերաբերմունքով: Այն համոզմունքը, որ հիվանդությունը փոխել է իրեն կամ ինքը հիվանդության պատճառով դարձել է «պիտակավորված» (խարանված), բերում է սերտ և վստահելի միջանձնային հարաբերությունների կառուցման և պահպանման անկարողությանը, սոցիալական մեկուսացմանը: Դիտվում է պասիվություն, հետաքրքրությունների սահմանափակվածություն, ակտիվ հանգստի մեջ ցածր ներգրավվածություն: Մշտապես գանգատվում է վատ ինքնազգացողությունից, որը կարող է կապված լինել հիպոխոնդրիկ պահանջների և հիվանդագին վարքագծի հետ: Նկատվում է վատ կամ անկայուն տրամադրություն, որը ընթացիկ հոգեկան խանգարման կամ մնացորդային հուզական ախտանիշերով նախորդող հոգեկան հիվանդության արդյունքը չէ, ինչպես նաև առկա են սոցիալական և մասնագիտական գործունեության վաղեմի խնդիրներ:

F62.8 Անձի այլ կայուն փոփոխություններ

Քրոնիկ ցավային անձնային համախտանիշ

F62.9 Անձի կայուն փոփոխություններ՝ չճշտված

F63 Սովորույթի և հակումների խանգարումներ

Այս դասը ընդգրկում է վարքի որոշ խանգարումներ, որոնք չեն դասակարգվել այլ դասերում: Դրանք բնորոշվում են կրկնվող գործողություններով, որոնք չունեն պարզ խելամիտ հիմնավորում, չեն կարող վերահսկվել և հիմնականում վնաս են հասցնում հիվանդի և շրջապատի մարդկանց շահերին: Հիվանդը հայտարարում է, որ որ իր վարքը կապված է գործողություն կատարելու հանկարծակի մղումների հետ: Այս խանգարումների պատճառը լրիվ պարզված չէ, և դրանք խմբավորված են՝ նկարագրական խոշոր նմանությունների, այլ ոչ թե որոշ կարևոր հատկանիշների պատճառով:

Բացառությամբ՝

ալկոհոլի կամ հոգեակտիվ նյութերի չափից ավելի սովորության օգտագործման (F10-F19)

հակման (մղում) և սովորույթի խանգարումների՝ ներառյալ սեռական վարքագիծը (F65.-)

F63.0 Մոլախաղի հիվանդագին հակում (գեմբլինգ)

Խանգարման էությունը կայանում է մոլախաղերի հաճախակի կրկնվող էպիզոդներում, որոնք գերակայում են հիվանդի կյանքում՝ ի վնաս սոցիալական, մասնագիտական, նյութական և ընտանեկան արժեքներին և պարտականություններին:

Մոլախաղերի կաչուն հակում

Բացառությամբ՝

մանիակալ (մոլագարային) էպիզոդով անձանց մոլախաղերի հակման (F30.-)

մոլախաղերի և գրագի հակվածության՝ ԱՀՃ (Z72.6)

մոլախաղերի հակվածության՝ անձի ապասոցիալական խանգարման դեպքում (F60.2)

F63.1 Հրկիզման ախտաբանական հակում (պիրոմանիա)

Խանգարում, որը բնորոշվում է գույքի և այլ օբյեկտների հրկիզման բազմաթիվ գործողություններով կամ հրկիզման փորձերով, որոնք կատարվում են առանց որևէ բացահայտ դրդապատճառի, ինչպես նաև կրակի և այրվելու հետ կապված թեմաներով մշտական մտազբաղությամբ: Նշված վարքագիծը հաճախ ուղեկցվում է այդ գործողությունից առաջ աճող լարվածությամբ և ուժեղ գրգռվածությամբ՝ անմիջապես դրանից հետո:

Բացառությամբ՝

հրկիզման (կատարված)՝

- անձի ապասոցիալական խանգարումով տառապող չափահաս մարդու կողմից (F60.2)
- ալկոհոլով կամ հոգեակտիվ նյութերով թունավորման դեպքում (F10-F19 ընդհանուր չորրորդ նիշով .0)
- որպես պատրվակ հոգեկան խանգարման մեջ կասկածվող անձին հետևելու համար (Z03.2)
- վարքի խանգարումների դեպքում (F91.-)
- օրգանական հոգեկան խանգարումների դեպքում (F00-F09)
- շիզոֆրենիայի դեպքում (F20.-)

F63.2 Գողության ախտաբանական հակում (կլեպտոմանիա)

Խանգարում, որը բնորոշվում է անձի կողմից իր համար ոչ անհրաժեշտ կամ դրամային արժեք չներկայացնող առարկաներ գողանալու մղումներին դիմակայելու կրկնվող անհաջող փորձերով: Գողացված առարկաները, ընդհակառակը, կարող են փչացվել, տրվել այլ անձանց կամ պահեստավորվել: Այդպիսի վարքը սովորաբար ուղեկցվում է աճող լարվածության զգացումով մինչև գողությունը և բավարարվածության զգացումով՝ գողության ընթացքում կամ անմիջապես դրանից հետո:

Բացառությամբ՝

գողությամբ ուղեկցվող դեպրեսիվ խանգարման (F31-F33)

օրգանական հոգեկան խանգարումների (F00-F09)

խանութի կողոպուտի՝ որպես առիթ, հոգեկան խանգարման կասկածով անձին հետևելու համար (Z03.2)

F63.3 Տրիխոտիլոմանիա

Խանգարում, որը բնորոշվում է մազերի զգալի կորստով՝ պայմանավորված անձի կողմից սեփական մազերը պոկոտելու մղումներին դիմակայելու

անկարողությամբ (կրկնվող անհաջող փորձեր): Մազերը պոկելուն սովորաբար նախորդում է աճող լարվածությունը, իսկ ավարտին հաջորդում է հանգստության կամ բավարարվածության զգացումը: Այս փստորոշումը չպետք է դնել, եթե նախորդել է մաշկաբորբը, կամ մազերը պոկելը հետևանք է զառանցանքի կամ ցնորքի:

Բացառությամբ՝

մազերի պոկումով ուղեկցվող նույնատիպային (ստերետոիպ) շարժողական խանգարման (F98.4)

F63.8 Սովորության և հակումային (մղումային) այլ խանգարումներ

Մշտական կրկնվող ոչ ադեկվատ վարքի այլ ձևեր, որոնք չեն հանդիսանում փստորոշված հոգեկան համախտանիշի երկրորդային արտահայտումներ, և որոնց ժամանակ, ակնհայտ է, որ հիվանդը կատարում է անհաջող փորձեր՝ ճնշելու հակումը այդպիսի վարքի նկատմամբ: Մարդը զգում է լարվածություն նախանշանային շրջանում, իսկ այդ գործողության ընթացքում առաջանում է թեթևության զգացում:

Մեջընդմիջվող (բռնկումային) խանգարում

F63.9 Սովորության և հակումային խանգարում՝ չճշտված

F64 Սեռական նույնականացման խանգարումներ

F64.0 Տրանսսեքսուալիզմ

Հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին:

F64.1 Երկակի դերի տրանսվեստիզմ

Հակառակ սեռին բնորոշ հագուստի պարբերաբար կրում՝ այդ սեռի կյանքում ժամանակավոր մասնակցություն ունենալու ցանկությամբ, բայց առանց փոխելու իր սեռը, այդ թվում և վիրաբուժական ճանապարհով,ինչպես նաև առանց հագուստի փոփոխման սեռական գրգռվածություն:

Սեռական նույնականացման խանգարում երիտասարդ կամ հասուն տարիքում, ոչ տրանսսեքսուալ տիպ:

Բացառությամբ՝

Ֆետիշային տրանսվեստիզմի (F65.1)

F64.2 Սեռական նույնականացման խանգարում մանկական հասակում

Խանգարում, որը սովորաբար սկսվում է վաղ մանկական տարիքում և շարունակվում է մինչև սեռական հասունության սկսվելը: Այն բնորոշվում է կայուն և ուժեղ տառապանքով սեփական սեռի կապակցությամբ, միաժամանակ մեծ ցանկությամբ լինել կամ համառ պահանջով ճանաչել իրեն հակառակ սեռի ներկայացուցիչ: Առկա է մշտական հետաքրքրություն՝ հակառակ սեռի հագուստի և զբաղմունքների նկատմամբ, և հրաժարում սեփական սեռի առանձնահատկություններից:

Ափստորոշման համար անհրաժեշտ է սեռական նույնականացման խորը խանգարման առկայություն: Տղայական շարժումների առկայությունը աղջկա մոտ կամ աղջկական գծերի առկայությունը տղայի մոտ բավարար չեն փստորոշումը դնելու համար:

Սեռական հասունության տարիքի հասած կամ հասնող անձանց մոտ սեռական նույնականացման խանգարումների դեպքում պետք է ծածկագրել ոչ թե այս, այլ F66.- դասով:

Բացառությամբ՝

էզոդիստոնիկ սեռական կողմնորոշման (F66.1)
սեռական ձևավորման խանգարման (F66.0)

F64.8 Սեռական նույնականացման այլ խանգարումներ

F64.9 Սեռական նույնականացման խանգարում՝ չճշտված
Տվյալ սեռին բնորոշ վարքից շեղում՝ ԱՀՃ

F65 Սեռական նախընտրության խանգարումներ

Ներառյալ՝

պարաֆիլիա

F65.0 Ֆետիշիզմ

Ուղղվածություն՝ դեպի որոշ անշունչ օբյեկտներ՝ որպես սեռական գրգռման և սեռական բավարարման խթանիչներ: Շատ ֆետիշներ հանդիսանում են մարդու մարմինը լրացնող միջոցներ, ինչպես օրինակ՝ հագուստի կամ կոշիկի պարագաները: Ֆետիշների այլ տարածված օրինակներից են յուրահատուկ մակերևույթ ունեցող նյութերը, ինչպես օրինակ՝ ռետինը, պլաստիկը և կաշին: Անհատի համար ֆետիշային օբյեկտներն իրենց նշանակությամբ տարբեր են: Որոշ դեպքերում դրանք ուղղակի ծառայում են սովորական ճանապարհով հասած սեռական գրգռվածության բարձրացման համար (օրինակ՝ զուգընկերոջը հատուկ հագուստ հագցնելը):

F65.1 Ֆետիշային տրանսվեստիզմ

Հակառակ սեռի հագուստներ հագնելը հիմնականում այն բանի համար, որպեսզի հասնեն սեռական գրգռման և ստեղծեն հակառակ սեռի մարդու կերպար: Ֆետիշային տրանսվեստիզմը տարբերվում է տրանսսեքսուալ տրանսվեստիզմից սեռական (սեքսուալ) գրգռվածության հետ ունեցած ցայտուն արտահայտված կապով և հեշտանքի (օրգազմ) առաջացման և հաջորդող սեռական գրգռվածության թուլացման ժամանակ հագուստից ազատվելու ուժեղ ցանկությամբ: Խանգարումը կարող է լինել տրանսսեքսուալիզմի զարգացման վաղ շրջան:

Տրանսվեստային ֆետիշիզմ

F65.2 Էքսիբիցիոնիզմ

Անձանոթ մարդկանց (հատկապես հակառակ սեռի) և հասարակական վայրերում սեփական սեռական օրգանները ցուցադրելու կրկնվող կամ կայուն միտում, առանց մտերիմ շփման մտադրության: Սովորաբար, բայց ոչ պարտադիր, սեռական օրգանների ցուցադրման պահին դիտվում է սեռական գրգռվածություն, որը սովորաբար ուղեկցվում է մաստուրբացիայով (ձեռնաշարժությամբ):

F65.3 Վուայլերիզմ

Սեքսուալ կամ ինտիմ գործողությամբ զբաղվող կամ մերկացող մարդկանց դիտելու կրկնվող կամ կայուն հակում: Դա կատարվում է գաղտնի այն անձից, որին հետևում են, և սովորաբար դա հանգեցնում է սեռական գրգռման և մաստուրբացիայի:

F65.4 Պեդոֆիլիա

Սեռական ձգտում երեխաների (տղա, աղջիկ կամ երկուսն էլ) նկատմամբ՝ սովորաբար նախահասունության կամ վաղ հասունության տարիքում:

F65.5 Սադոմազոֆիլիզմ

Այնպիսի սեռական (սեքսուալ) գործողության նախընտրություն, որը պայմանավորված է ցավ պատճառելու կամ նվաստացնելու և կախվածություն առաջացնելու ցանկությամբ: Եթե անհատը նախընտրում է լինել այդպիսի գրգռման օբյեկտ, դա մազոխիզմի արտահայտություն է, իսկ, եթե անհատը կատարողն է, ապա դա սադիզմի երևույթ է: Հաճախ տվյալ անհատը հասնում է սեռական գրգռման թե սադիստական և թե մազոխիստական գործողություններից:

Մազոխիզմ

Սադիզմ

F65.6 Սեռական նախընտրության բազմակի խանգարումներ

Երբեմն նույն հիվանդի մոտ դիտվում են մի քանի ոչ նորմալ սեռական նախընտրություններ, որոնցից և ոչ մեկը չի գերակշռում: Ավելի հաճախ զուգակցվում են ֆետիշիզմը, տրանսվեստիզմը և սադոմազոխիզմը:

F65.8 Սեռական նախընտրության այլ խանգարումներ

Սեռական հակումների և գործողությունների այլասերված այլ ձևերի բազմազանություն, ներառյալ՝ ամոթալի բովանդակությամբ հեռախոսազանգերը, սեռական գրգռվածություն առաջացնելու նպատակով մարդաշատ հասարակական վայրերում մարդկանց քվելու ձգտումը, կենդանիների հետ սեռական գործողությունները, սեռական գրգռվածությունն ուժեղացնելու համար սեղմելու (խեղդելու) կամ անօքսիայի կիրառումը:

Ֆրոտարիզմ (ֆրոտաժ)

Նեկրոֆիլիա

F65.9 Սեռական նախընտրության խանգարում՝ չճշտված

Սեռական շեղում՝ ԱՀՃ

F66 Սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարումներ

Ծանոթություն:

Սեռական կողմնորոշումն ինքնին որպես խանգարում չի դիտարկվում:

F66.0 Սեռական հասունության խանգարում

Հիվանդը տառապում է սեփական սեռական պատկանելության կամ սեքսուալ կողմնորոշման անորոշությունից, ինչը հանդիսանում է տագնապի և դեպրեսիայի պատճառ: Առավել հաճախ դա առաջանում է դեռահասների մոտ, որոնք համոզված չեն իրենց կողմնորոշման մեջ, այսինքն չգիտեն, թե իրենք հոմոսեքսուալ՝ են, հետերոսեքսուալ՝, թե՛ բիսեքսուալ: Սեռական հասունության խանգարում կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ անհատը, նույնիսկ ակնհայտ կայուն հարաբերություններ ունենալով (հաճախ երկարատև կապերի շրջանում), հայտնաբերում է, որ իր սեռական կողմնորոշումը փոփոխվում է:

F66.1 Էգոդիստոնիկ սեռական կողմնորոշում

Սեռի պատկանելությունը և սեռական կողմնորոշումը (հետերոսեքսուալ, հոմոսեքսուալ, բիսեքսուալ կամ նախապուբերտատ) կասկած չեն հարուցում, սակայն ուղեկցող հոգեբանական և վարքային խանգարումների հետևանքով անհատը ցանկանում է փոխել դա և այդ նպատակով կարող է դիմել բժշկական միջամտության:

F66.2 Սեռական հարաբերության խանգարում

Սեռային պատկանելությունը կամ սեքսուալ կողմնորոշումը (հետերոսեքսուալ, հոմոսեքսուալ կամ բիսեքսուալ) հանդիսանում են դժվարությունների պատճառ

զուգընկերների միջև սեռական հարաբերությունների ձևավորման և պահպանման գործում:

F66.8 Հոգեւոցախալակաւ գարգացման այլ խանգարումներ

F66.9 Հոգեւոցախալակաւ գարգացման խանգարում՝ չճշտված

F68 Անձի և վարքի այլ խանգարումներ հասուն տարիքում

F68.0 Հոգեբանական պատճառներով սոմատիկ ախտանիշերի չափազանցում

Սոմատիկ ախտանիշերը, որոնք համապատասխանում են հաստատված սոմատիկ խանգարմանը, հիվանդությանը կամ հաշմանդամությանը (անկարողություն) և իրականում առաջացել են դրանց հետևանքով, հիվանդի հոգեբանական վիճակի պատճառով սաստկանում են կամ ձեռք են բերում ձգձգվող ընթացք: Հիվանդը սովորաբար տառապում է ցավից կամ կարողությունների նվազումից և հաճախ լրիվ կլանված է իր տագնապով (որը կարող է լինել արդարացված)՝ կապված ցավի կամ անկարողության տևողության հնարավոր երկարաձգման կամ վատթարացման հետ:

Փոխհատուցված ներոզ

F68.1 Ֆիզիկական կամ հոգեբանական անկարողության (հաշմանդամություն) կամ ախտանիշերի կանխամտածված առաջացնելը կամ ձևացնելը (կեղծված խանգարում)

Հիվանդը բազմիցս, առանց որևէ ակնհայտ պատճառի, ձևացնում է (կեղծագործում) ախտանիշեր և նույնիսկ կարող է վնասել իրեն, որպեսզի առաջացնի ախտանիշեր և խանգարման նշաններ: Շարժառիթներն անհայտ են, և միգրացե առկա է հիվանդի դեր որդեգրելու մի ներքին նպատակ: Խանգարումը հաճախ համակցվում է անձի և փոխհարաբերությունների նկատելի խանգարումների հետ:

«Հիվանդանոցային մորեխի» (ցատկող միջատի) համախտանիշ

Մյունհաուզենի համախտանիշ

Թափառական հիվանդ

Բացառությամբ՝

արհեստական (արտիֆիցիալ) մաշկաբորբի (L98.1)

հիվանդությունը ձևացնող կամ կեղծագործող անձի համար (ակնհայտ դրդապատճառով) (Z76.5)

F68.8 Անձի և վարքի այլ ճշտված խանգարումներ՝ հասուն տարիքում

Բնավորության խանգարումներ՝ ԱՀՃ

Փոխհարաբերությունների խանգարում՝ ԱՀՃ

F69 Անձի և վարքի այլ խանգարում հասուն տարիքում՝ չճշտված

ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՅՈՒԹՅՈՒՆ

(F70-79)

Մտավոր զարգացման կանգի կամ թերզարգացման վիճակ, որն առաջին հերթին բնութագրվում է զարգացման ընթացքում առաջացող այն ունակությունների նվազումով, որոնք որոշում են բանականության (ինտելեկտ) ընդհանուր մակարդակը, այսինքն՝ ճանաչողական, խոսքի, շարժունակության և սոցիալական կարողությունները: Մտավոր հետամնացությունը կարող է առաջանալ որևիցե հոգեկան կամ սոմատիկ խանգարման ֆոնի վրա կամ առանց դրա:

Մտավոր հետամնացության աստիճանը սովորաբար գնահատվում է ինտելեկտի ստանդարտացված թեստերով: Դրանք կարող են լրացվել տվյալ շրջապատող միջավայրում սոցիալական հարմարողականությունը (ադապտացիա) գնահատող հավելյալ սանդղակներով: Այս մեթոդները ապահովում են մտավոր հետամնացության աստիճանի մոտավոր որոշումը: Ախտորոշումը կախված է նաև հմուտ մասնագետի կողմից հետազոտվող անձի մտավոր գործառնության համապարփակ գնահատման արդյունքներից:

Մտավոր ունակությունները և սոցիալական հարմարողականությունը ժամանակի ընթացքում կարող են փոխվել, սակայն բավականին թույլ: Լավացումը կարող է լինել մարզման և վերականգնման արդյունք: Ախտորոշումը պետք է հիմնվի տվյալ պահին առկա մտավոր գործունեության մակարդակի վրա:

Մտավոր հետամնացության հետ զուգակցված այնպիսի վիճակների, ինչպիսիք են աուտիզմը, զարգացման այլ խանգարումները, էպիլեպսիան, վարքի խանգարումը կամ ծանր ֆիզիկական հաշմանդամությունը, նույնականացման անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր:

Ստորև թվարկված չորրորդ նիշով ենթաբաժանումները կիրառվում են F70-F79 դասերի հետ՝ վարքի խանգարման ծանրության աստիճանի նույնականացման համար:

- .0 Վարքի խանգարման բացակայություն կամ թույլ արտահայտում
- .1 Խնամք և բուժում պահանջող վարքի էական խանգարում
- .8 Վարքի այլ խանգարումներ
- .9 Առանց վարքի խանգարումը նշելու

F70 Թեթև աստիճանի մտավոր հետամնացություն

(ենթաձևակարգման համար տե՛ս վերևում, մինչև F70-ը)

Մտավոր զարգացման գործակցի ցուցանիշը գտնվում է 50-69-ի սահմաններում (երբ հասուն տարիքում մտավոր զարգացումը համապատասխանում է 9-12 տարեկանին): Հնարավոր են որոշ դժվարություններ դպրոցում սովորելիս: Շատ մեծահասակներ ի վիճակի կլինեն աշխատել, պահպանել նորմալ սոցիալական հարաբերություններ և իրենց ավանդը ներդնել հասարակական կյանքում:

Ներառյալ՝

- թուլամտությունը (պարզունակ անձ)
- թեթև արտահայտված մտավոր ենթանորմալությունը (սահմանային մտավոր հետամնացություն)

F71 Չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն

(ենթաբաժանումների համար տե՛ս վերևում, մինչև F70-ը)

Մտավոր զարգացման գործակիցը գտնվում է 35-49-ի սահմաններում (երբ հասուն տարիքում մտավոր զարգացումը համապատասխանում է 6-9 տարեկանին): Հավանաբար զարգացման ուշացումը նկատելի է մանկուց, բայց նրանց մեծ մասը կարող է սովորել և հասնել որոշակի աստիճանի անկախության ինքնասպասարկման գործում, ձեռք բերել համարժեք հաղորդակցության և ուսումնական հմտություններ: Մեծահասակները կարող են ունենալ տարբեր աստիճանի աջակցության կարիք կյանքում և աշխատանքում :

Ներառյալ՝

- չափավոր արտահայտված մտավոր ենթանորմալությունը:

F72 Ծանր աստիճանի մտավոր հետամնացություն

(ենթաբաժանումների համար տե՛ս վերևում, մինչև F70-ը)
Մտավոր զարգացման գործակիցը սովորաբար 20-34-ի սահմաններում է (երբ հասուն տարիքում մտավոր զարգացումը համապատասխանում է 3-6 տարեկանին):
Հավանական է մշտական աջակցության անհրաժեշտությունը:

Ներառյալ՝

ծանր մտավոր ենթանորմալությունը

F73 Խորը մտավոր հետամնացություն

(ենթաբաժանումների համար տե՛ս վերևում, մինչև F70-ը)
Մտավոր զարգացման գործակիցը 20-ից ցածր է (հասուն տարիքում մտավոր զարգացումը ցածր է երեք տարեկան հասակից): Արտահայտվում է ինքնասպասարկման, միզարձակման և կղազատման վերահսկման, հաղորդակցման և շարժունակության ծանր սահմանափակումներով:

Ներառյալ՝

խորը մտավոր ենթանորմալություն

F78 Մտավոր հետամնացության այլ ձևեր

(ենթաբաժանումների համար տե՛ս վերևում, մինչև F70-ը)

F79 Մտավոր հետամնացություն՝ չճշտված

(ենթաբաժանումների համար տե՛ս վերևում, մինչև F70-ը)

Ներառյալ՝

- մտավոր՝
- անբավարարությունը՝ ԱՀԾ
- ենթանորմալությունը՝ ԱՀԾ

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
(F80-F89)**

Այս բաժնում ներառված խանգարումներն ունեն ընդհանուր նշաններ. (ա) սկիզբը՝ պարտադիր վաղ մանկական կամ մանկական տարիքում, (բ) կենտրոնական նյարդային համակարգի կենսաբանական հասունացման հետ սերտորեն կապված գործառույթների (ֆունկցիաներ) զարգացման անբավարարություն կամ ուշացում, (գ) կայուն ընթացք՝ առանց ռեմիսիաների և ռեցիդիվների: Դեպքերի մեծ մասում տուժում են հետևյալ ֆունկցիաները՝ խոսքը, տեսատարածական ունակությունները և շարժումների կոորդինացիան: Սովորաբար ուշացումը կամ անբավարարությունն արտահայտված են այնքան վաղ, որքան հնարավոր է դրանք հավաստիորեն հայտնաբերել և աստիճանաբար նվազում են երեխայի տարիքային աճին զուգահեռ, չնայած թեթև անբավարարությունը հաճախ մնում է նաև հասուն տարիքում:

F80 Խոսքի զարգացման յուրահատուկ խանգարումներ

Խանգարումներ, որոնց ժամանակ, սկսած զարգացման ամենավաղ փուլերից, տուժում է լեզվային հմտությունների ձեռք բերման նորմալ ընթացքը: Այդ վիճակներն անմիջականորեն չեն առնչվում նյարդաբանական և խոսքի մեխանիզմների խանգարումներին, զգայական անբավարարությանը, մտավոր հետամնացությանը կամ շրջակա միջավայրի գործոններին:

Խոսքի և լեզվի զարգացման յուրահատուկ խանգարումները հաճախ ուղեկցվում են հարակից այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են՝ կարդալու և հնչյունների

արտասանության դժվարությունները, միջանձնային հարաբերությունների խանգարումները, հուզական և վարքի խանգարումները:

F80.0 Խոսքի արտաբերման յուրահատուկ խանգարում

Չարգացման յուրահատուկ խանգարում է, որի ժամանակ երեխայի խոսքում օգտագործվող հնչյունները տարիքին համապատասխանող մտավոր ունակությունների մակարդակից ցածր են, բայց խոսքի ունակության մակարդակը նորմալ է:

Չարգացման հետ կապված՝

- հնչյունաբանական խանգարում
- խոսքի արտաբերման խանգարում

Դիսլալիա

Խոսքի արտաբերման ֆունկցիոնալ խանգարում

Թլվատություն (lalling) (առաջնալեզվային «լ», «ռ» և «ր» հնչյունների արտաբերման խանգարում)

Բացառությամբ՝

խոսքի արտաբերման անբավարարության հետևանքով՝

- աֆազիայի՝ ԱՀՃ (R47.0)
- ապրաքսիայի՝ ԱՀՃ (R48.2)
- լսողության կորստի (H90-H91)
- մտավոր հետամնացության (F70-F79)

խոսքի զարգացման խանգարման՝

- արտահայտչական (էքսպրեսիվ) (F80.1)
- ընկալման (ռեցեպտիվ) (F80.2)

F80.1 Արտահայտչական խոսքի խանգարում

Չարգացման հետ կապված յուրահատուկ խանգարում, որի ժամանակ երեխայի խոսակցական լեզուն օգտագործելու ունակությունը գտնվում է իր տարիքի համեմատությամբ ավելի ցածր մտավոր մակարդակում, սակայն լեզուն հասկանալի գտնվում է տարիքային նորմայի սահմաններում:

Արտաբերման (արտասանման) անկանոնությունները կարող են լինել կամ բացակայել:

Չարգացման հետ կապված դիսֆազիա կամ աֆազիա, արտահայտչական տիպ:

Բացառությամբ՝

էպիլեպսիայի հետ զուգակցված ձեռքբերովի աֆազիայի (Լանդաու-Կլեֆներ) (Landau-Kleffner) (F80.3)

դիսֆազիայի կամ աֆազիայի՝

- ԱՀՃ (R47.0)
- զարգացման հետ կապված, ընկալման (ռեցեպտիվ) տիպ (F80.2)

ընտրողական մուտիզմի (F94.0)

մտավոր հետամնացության (F70-F79)

զարգացման պերվազիվ խանգարումների (F84.-)

F80.2 Ընկալման (ռեցեպտիվ) խոսքի խանգարում

Չարգացման հետ կապված յուրահատուկ խանգարում, որի ժամանակ խոսքը հասկանալու երեխայի ունակությունը գտնվում է ավելի ցածր մակարդակում, քան երեխայի տարիքն է: Այս դեպքում նկատելի տուժում են լեզվի օգտագործման բոլոր կողմերը և առկա են հնչյունների արտաբերման շեղումներ:

Բնածին լսողական անընկալունակություն

Չարգացման հետ կապված՝

- աֆազիա և դիսֆազիա, ընկալման (ռեցեպտիվ) տիպ
- Վեռնիկեի (Wernicke) աֆազիա

Բառային խլություն (լսողական վերբալ ազնոզիա)

Բացառությամբ՝

էպիլեպսիայի հետ զուգակցված ձեռքբերովի աֆազիայի (Լանդաու-Կլեֆների) (Landau-Kleffner) (F80.3)

աուտիզմի (F84.0-F84.1)

դիսֆազիայի և աֆազիայի՝

- ԱՀՃ (R47.0)
- զարգացման, արտահայտչական (էքսպրեսիվ) տիպ (F80.1)

ընտրողական մուտիզմի (F94.0)

խլության պատճառով խոսքի թերզարգացման (H90-H91)

մտավոր հետամնացության (F70-F79)

F80.3 Ձեռքբերովի աֆազիա էպիլեպսիայի ժամանակ (Լանդաու-Կլեֆների) (Landau-Kleffner)

Խանգարում, որի ժամանակ նախկինում խոսքի նորմալ զարգացում ունեցող երեխան կորցնում է խոսքն ընկալելու, հասկանալու և արտաբերման ունակությունները, բայց պահպանվում է ընդհանուր բանականությունը: Խանգարման սկիզբն ուղեկցվում է էլեկտրաուղեղագրի (ԷՈւԳ) նոպայաձև (պարոքսիզմային) շեղումներով: Հիվանդների մեծ մասը ունենում է էպիլեպտիկ նոպաներ: Խանգարումը սովորաբար սկսվում է 3-7 տարեկան հասակում, իսկ երեխայի խոսելու ունակությունների կորուստը տևում է մի քանի օր կամ շաբաթներ: Նոպաների սկսվելու և խոսքի կորստի միջև ժամանակային կապը խիստ տարբեր է, և մեկը մյուսին նախորդելու պարբերականությունը կարող է տատանվել մի քանի ամսից մինչև երկու տարի:

Խանգարման հնարավոր պատճառ է համարվում գլխուղեղի բորբոքային ախտահարումը (էնցեֆալիտ): Հիվանդների մոտ 2/3-ը մնում են լեզվի ընկալման քիչ թե շատ ծանր անբավարարությամբ:

Բացառությամբ՝

Աֆազիայի՝

- ԱՀՃ (R47.0)
- աուտիզմի ժամանակ (F84.0-F84.1):
- մանկական հասակի դեզինտեգրատիվ խանգարումների հետևանքով (F84.2-F84.3)

F80.8 Խոսքի և լեզվի զարգացման այլ խանգարումներ

Սվսվախոսություն (lispng) (սուլական «ս» և «զ» հնչյունների արտաբերման խանգարում) (F80.8)

F80.9 Խոսքի և լեզվի զարգացման այլ խանգարում՝ չճշտված

Լեզվի/խոսքի խանգարում ԱՀՃ

F81 Ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ

Խանգարումներ, որոնց դեպքում զարգացման վաղ շրջանից սկսած խաթարվում է հմտությունների ձեռքբերման նորմալ հաջորդականությունը: Սա ուղղակի սովորելու հնարավորության պակասի հետևանք չէ: Այն միայն մտավոր հետամնացության արդյունք կամ գլխուղեղի վնասվածքի կամ հիվանդության հետևանք չէ:

F81.0 Կարդալու յուրահատուկ խանգարում

Խանգարման հիմնական ախտանիշը կարդալու ունակության զարգացման յուրահատուկ և զգալի արտահայտված խանգարումն է, ինչը բացառապես չի կարելի բացատրել մտավոր կարողությունների մակարդակով, տեսողության սրության կամ դպրոցում անհամապատասխան ուսուցման հետ կապված

խնդիրներով: Խանգարված կարող են լինել կարդացածը հասկանալու, կարդացած բառը ճանաչելու ունակությունը, կարդալու խոսքային և կարդալու ժամանակ պահանջող խնդիրների լուծման ունակությունները: Այս խանգարման հետ սովորաբար համակցվում են ուղղագրության դժվարությունները, որոնք հաճախ պահպանվում են նաև դեռահաս տարիքում, անգամ եթե կա կարդալու որոշակի առաջխաղացում:

Կարդալու զարգացման յուրահատուկ խանգարում ունեցող անձանց մոտ անամնեզում հաճախ նշվում են խոսքի ունակությունների զարգացման կամ լեզվային բառապաշարի խանգարումներ: Դպրոցում ուսուցման տարիներին սովորական են համարվում հուզական կամ վարքային շեղումները:

«Վետադարձ կարդալը»

Չարգացման դիսլեքսիա

Կարդալու յուրահատուկ հապաղում (հետ մնալը)

Բացառությամբ՝

ալեքսիայի՝ ԱՀՃ (R48.0)

դիսլեքսիայի՝ ԱՀՃ (R48.0)

հուզական խանգարումների ֆոնի վրա երկրորդային բնույթի ձեռքբերովի կարդալու դժվարությունների (F93)

F81.1 Ուղղագրության յուրահատուկ խանգարում

Խանգարում, որի հիմնական նշանը ուղղագրության (spelling) ունակությունների զարգացման յուրահատուկ և բավականին արտահայտված անբավարարությունն է՝ անամնեզում կարդալու յուրահատուկ խանգարման բացակայության պարագայում: Սա չի կարող բացատրվել ինտելեկտի ցածր մակարդակով, տեսողության սրության կամ դպրոցում ոչ համարժեք ուսուցման հետ կապված խնդիրների առկայությամբ: Խանգարումը վերաբերում է ինչպես խոսքը տառերով ճիշտ արտասանելու, այնպես էլ բառերը ճիշտ գրելու ունակություններին:

Ուղղագրության յուրահատուկ հապաղում (առանց կարդալու խանգարման)

Բացառությամբ՝

ագրաֆիայի՝ ԱՀՃ (R48.8)

ուղղագրության դժվարությունների՝

- կապված կարդալու խանգարման հետ (F81.0)
- ոչ համարժեք ուսուցման հետևանքով (Z55.8.)

F81.2 Հաշվելու ունակությունների յուրահատուկ խանգարում

Խանգարումը ներառում է թվաբանական ունակությունների յուրահատուկ անբավարարություն, որը չի կարող բացատրվել միայն մտավոր հետամնացությամբ կամ դպրոցում ոչ համարժեք ուսուցմամբ: Անբավարարությունն ավելի շատ վերաբերում է հիմնական թվաբանական գործողությունների՝ գումարման, հանման, բազմապատկման և բաժանման կատարմանը, քան ավելի վերացական մաթեմատիկական ունակություններին, որոնք պահանջվում են հանրահաշվում, եռանկյունաչափությունում, երկրաչափությունում կամ բարդ հաշվարկների ժամանակ:

Չարգացման հետ կապված՝

- ակալկուլիա
- հաշվի (թվաբանական) խանգարում
- Գերստմանի (Gerstmann) համախտանիշ

Բացառությամբ՝

ակալկուլիայի՝ ԱՀՃ (R48.8)

հաշվելու (թվաբանական) դժվարությունների՝

- կապված կարդալու կամ ուղղագրության խանգարման հետ (F81.1)
- ոչ համարժեք ուսուցման հետևանքով (Z55.8)

F81.3 Ուսումնական ունակությունների խառը խանգարում

Խանգարումների վատ ուրվագծված մնացորդային խումբ, որոնց ժամանակ առկա է ինչպես թվաբանական, այնպես էլ կարդալու և ուղղագրության հմտությունների զգալի անբավարարություն, որը չի կարելի բացառապես բացատրել միայն մտավոր հետամնացությամբ կամ դպրոցում ոչ համարժեք ուսուցմամբ:

Այս դասը պետք է կիրառել այն խանգարումների համար, որոնք միաժամանակ բավարարում են F81.2 և F81.0 կամ F81.1 ենթադասերի չափանիշներին:

Բացառությամբ՝

յուրահատուկ՝

- թվաբանական ունակությունների խանգարման (F81.2)
- կարդալու խանգարման (F81.0)
- ուղղագրության խանգարման (F81.1)

F81.8 Ուսումնական ունակությունների զարգացման այլ խանգարումներ

Արտահայտչական (էքսպրեսիվ) գրի զարգացման խանգարում

F81.9 Ուսումնական ունակությունների զարգացման խանգարում՝ չճշտված

Գիտելիքներ ձեռք բերելու անկարողություն՝ ԱՀՃ

Ուսուցման՝

- անկարողություն՝ ԱՀՃ
- խանգարում՝ ԱՀՃ

F82 Շարժողական գործառույթի զարգացման յուրահատուկ խանգարում

Խանգարում, որի հիմնական նշանն է հանդիսանում շարժողական համակարգման զարգացման զգալի իջեցումը, որը չի կարող բացատրվել միայն սովորական մտավոր հետամնացությամբ կամ որևիցե յուրահատուկ բնածին կամ ձեռքբերովի նյարդաբանական խանգարումով: Սակայն մեծամասամբ մանրակրկիտ կլինիկական հետազոտումը հայտնաբերում է նյարդաբանական զարգացման անհասության այնպիսի նշաններ, ինչպիսիք են՝ առանց հենարանի՝ ազատ դիրքում վերջույթների խորեանման շարժումները, հայելանման շարժումները և զուգակցված շարժողական այլ նշաններ, ինչպես նաև նուրբ և խոշոր շարժումների համակարգման (կոորդինացիա) խանգարումներ:

Ներառյալ՝

ոչ ճկուն երեխայի համախտանիշ զարգացման հետ կապված՝

- կոորդինացիայի խանգարում
- դիսպրաքսիա

Բացառությամբ՝

քայլվածքի և շարժունակության խանգարումների (R26.-)

կոորդինացիայի անբավարարության (R27.-)

կոորդինացիայի անբավարարության

- երկրորդային՝ մտավոր հետամնացության ժամանակ (F70-F79)

F83 Հոգեբանական զարգացման յուրահատուկ խառը խանգարումներ

Այս մնացորդային դասը նախատեսված է այն խանգարումների համար, որոնք խառն են իրենց բնույթով՝ ներառելով խոսքի և լեզվի, ուսումնական հմտությունների և

շարժողական գործառույթի զարգացման յուրահատուկ խանգարումներ, որոնցից և ոչ մեկը չի գերակշռում այն չափով, որ թույլ տար խանգարումներից որևիցե մեկը հաստատել որպես հիմնական ախտորոշում:

Այս խառը դասը պետք է կիրառել միայն այն դեպքում, երբ առկա նշված յուրահատուկ խանգարումների նշանները մեծ չափով համընկնում են (իրար են ծածկում): Այդ խանգարումները, սովորաբար, բայց ոչ միշտ, կապված են ճանաչողական ֆունկցիաների ընդհանուր անբավարարության որոշակի աստիճանի հետ:

Այսպիսով, տվյալ դասը պետք է կիրառել այն դեպքերում, երբ կա F80.-, F81.- և F82. դասերի երկու կամ ավել չափանիշներին համապատասխանող դիսֆունկցիաներ:

F84 Հոգեբանական զարգացման տարածված (պերվազիվ) խանգարումներ

Խանգարումների խումբ է, որը բնորոշվում է սոցիալական փոխհարաբերություններում և հաղորդակցման ոլորտում որակական շեղումներով, ինչպես նաև հետաքրքրությունների և գործողությունների սահմանափակ, ստերեոտիպային և կրկնվող դրսևորումներով: Այդ որակական փոփոխությունները հանդիսանում են անհատի գործունեության համընդհանուր գիծ և դիտվում են բոլոր իրավիճակներում:

Տվյալ խանգարումների հետ զուգակցված բժշկական վիճակի և մտավոր հետամնացության նույնականացման անհրաժեշտության դեպքում կիրառել լրացուցիչ ծածկագիր:

F84.0 Մանկական աուտիզմ

Ջարգացման պերվազիվ խանգարումների տեսակ, որը բնորոշվում է՝ (ա) մինչև երեք տարեկան հասակը արտահայտվող ախտաբանական կամ անբավարար զարգացմամբ, (բ) ոչ նորմալ գործառնության բնորոշ դրսևորումներով հոգեախտաբանության բոլոր երեք ոլորտներում՝ փոխադարձ սոցիալական հարաբերությունների, հաղորդակցության և սահմանափակ, ստերեոտիպային և կրկնվող վարքի:

Ի լրումն այս յուրահատուկ ախտորոշիչ նշանների՝ սովորական է մի շարք ոչ յուրահատուկ այնպիսի խնդիրների առկայությունը, ինչպիսիք են՝ վախը (ֆոբիա), քնի, սննդի ընդունման խանգարումները, զայրույթի պոռթկումները և հարձակողականությունը (իր նկատմամբ):

Աուտիկ խանգարում

Մանկական՝

- աուտիզմ
- փսիխոզ

Կանների (Kanner) համախտանիշ

Բացառությամբ՝

աուտիստիկ փսիխոպաթիայի (F84.5)

F84.1 Ատիպիկ աուտիզմ

Ջարգացման պերվազիվ խանգարման տեսակ է, որը մանկական աուտիզմից տարբերվում է կամ խանգարման սկզբի տարիքով, կամ մանկական աուտիզմի ախտորոշման համար անհրաժեշտ ախտաբանական խանգարումների եռյակի բացակայությամբ:

Այս ենթադասը պետք է կիրառել այն ժամանակ, երբ ախտաբանական կամ անբավարար զարգացումն ի հայտ է գալիս միայն երեք տարեկանից հետո և հոգեախտաբանության 3 ոլորտներից մեկում կամ երկուսում անբավարար են աուտիզմի ախտորոշման համար անհրաժեշտ և միաժամանակ բավականաչափ ցուցադրելի շեղումների թիվը (այդ ոլորտներն են՝ փոխադարձ սոցիալական

հարաբերություններ, հաղորդակցություն և սահմանափակ, ստերեոտիպային և կրկնվող վարք), չնայած այլ ոլորտ(ներ)ում առկա բնորոշ խանգարումներին:
Ատիպիկ աուտիզմը ավելի հաճախ զարգանում է խորը հետամնաց կամ խոսքի ընկալման զարգացման ծանր յուրահատուկ խանգարում ունեցող անհատների մոտ:

Մանկական ատիպիկ փսիխոզ

Աուտիզմի նշաններով մտավոր հետամնացություն

Մտավոր հետամնացությունը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառել F70-79 լրացուցիչ ծածկագրերը:

F84.2 Ռետտի (Rett) համախտանիշ

Մինչ այժմ միայն աղջիկների մոտ հայտնաբերվող վիճակ է, որի ժամանակ ավելի վաղ նորմալ զարգացումը բարդանում է խոսքի, հենաշարժողական և ձեռքերով օգտվելու հմտությունների մասնակի կամ լրիվ կորստով՝ միաժամանակ ուղեկցվելով գլխի աճի դանդաղումով: Խանգարումներն առաջանում են կյանքի 7-24 ամիսների ընթացքում: Բնորոշ է ձեռքերի նպատակային շարժումների կորուստը, ձեռքերի ստերեոտիպային շրջանաձև շարժումները և ուժեղացած շնչառությունը (հիպերվենտիլյացիա): Սոցիալական և խաղային զարգացումը կանգ է առնում, սակայն սոցիալական հետաքրքրությունները դեռևս մնում են պահպանված: Չորս տարեկան հասակում սկսում է զարգանալ խորեաթետոիդ շարժումներով ուղեկցվող մարմնի ատաքսիան և ապրաքսիան: Գրեթե միշտ հաջորդում է ծանր մտավոր հետամնացությունը:

F84.3 Մանկական հասակի դեզինտեգրատիվ այլ խանգարումներ

Զարգացման տարածված խանգարում, որին բնորոշ է, մինչև խանգարման նշանների ի հայտ գալը, լիովին նորմալ զարգացման շրջանի առկայությունը, որին հետագայում՝ մի քանի ամսվա ընթացքում հաջորդում է զարգացման տարբեր ոլորտներում ձեռքբերած հմտությունների արտահայտված կորուստը: Սովորաբար դա ուղեկցվում է շրջապատի նկատմամբ հետքրքրության լրիվ կորստով, ստերեոտիպային, մոնոտոն շարժողական վարքով և սոցիալական ու հաղորդակցության ոլորտներում աուտիզմին նմանվող խանգարումներով: Որոշ դեպքերում կարող է նշված լինել այս խանգարման պատճառային կապը էնցեֆալոպաթիայի հետ, բայց ախտորոշումը պետք է հիմնվի վարքի առանձնահատկությունների վրա:

Մանկական թուլամտություն (Dementia infantilis)

Դեզինտեգրատիվ փսիխոզ

Հելլերի (Heller) համախտանիշ

Համակեցության (սիմբիոտիկ) փսիխոզ

Խանգարման հետ կապված նյարդաբանական հիվանդությունները նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր:

Բացառությամբ՝

Ռետտի համախտանիշի (F84.2)

F84.4 Մտավոր հետամնացությամբ և ստերեոտիպ շարժումներով զուգակցվող գերակտիվ խանգարում

Վատ ձևակերպված, անորոշ նոզոլոգիայի խանգարում է: Այս խումբը նախատեսված է արտահայտված գերակտիվություն, ուշադրության խանգարում, ինչպես նաև ստերեոտիպային վարք ցուցաբերող մտավոր հետամնացությամբ երեխաների խմբի համար (մտավոր զարգացման ցուցանիշը ցածր 35-ից): Նրանց վիճակը չի լավանում խթանիչ դեղերից (ի տարբերություն մտավոր զարգացման նորմալ ցուցանիշով երեխաների), իսկ նշանակման պահին կարող

են ցուցաբերել ծանր դիսֆորիկ ռեակցիա (երբեմն՝ հոգեշարժողական հետամնացության հետ միասին): Դեռահասային տարիքում գերակտիվությունը թերակտիվությամբ փոխարինվելու միտում ունի (բնորոշ չէ նորմալ բանականությամբ գերշարժուն երեխաներին): Այս համախտանիշը հաճախ կապված է զարգացման ընդհանուր (գլոբալ) կամ յուրահատուկ տարբեր հապաղումների հետ: Հայտնի չէ, թե որքանով է վարքագծային մոդելը պայմանավորված մտավոր զարգացման ցածր ցուցանիշով կամ ուղեղի օրգանական ախտահարմամբ:

F84.5 Ասպերգերի (Asperger) համախտանիշ

Անհայտ նոզոլոգիայի խանգարում, որը բնութագրվում է աուտիզմին բնորոշ փոխադարձ սոցիալական հարաբերությունների որակական անկանոնություններով, զուգակցվելով հետաքրքրությունների և զբաղմունքների (գործողությունների) սահմանափակ, ստերեոտիպային և կրկնվող դրսևորումներով:

Աուտիզմից տարբերվում է նրանով, որ բացակայում է խոսքի և ճանաչողական զարգացման ընդհանուր հապաղումը կամ հետամնացությունը: Այս խանգարումը հաճախ համակցվում է անվարժ կամ ոչ սահուն շարժումների հետ:

Արտահայտված է դեռահասային և հասուն տարիքում վերը նշված խանգարումների պահպանման միտումը: Հասուն տարիքի սկզբնական շրջանում պարբերաբար լինում են փսիխոտիկ էպիզոդներ:

Աուտիստիկ փսիխոպաթիա

Շիզոֆրենիա խանգարում մանկական տարիքում

F84.8 Զարգացման տարածված (պերվազիվ) այլ խանգարումներ

F84.9 Զարգացման տարածված (պերվազիվ) խանգարում՝ չճշտված

F88 Հոգեբանական զարգացման այլ խանգարումներ

Ներառյալ՝

Զարգացման ագնոզիա

F89 Հոգեբանական զարգացման խանգարում՝ չճշտված

Ներառյալ՝

Զարգացման խանգարում՝ ԱՀԾ

ՍՈՎՈՐԱԲԱՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ՍԿՍՎՈՂ ՎԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՀՈՒՋԱԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ (F90–F98)

F90 Գերշարժումային (հիպերկինետիկ) խանգարումներ

Խանգարումների խումբ, որը բնորոշվում է վաղ սկզբով (սովորաբար կյանքի առաջին հինգ տարիների ընթացքում), մտավոր կենտրոնացում պահանջող գործունեության կայունության բացակայությամբ և, առանց մինչև վերջ հասցնելու, մեկ գործից մյուսին անցնելու հակումով: Միաժամանակ նշվում է անկազմակերպ, անկառավարելի և չափից ավելի ակտիվություն: Կարող են միանալ և որոշ այլ խանգարումներ:

Հիպերկինետիկ խանգարումներով երեխաները հաճախ լինում են հուսահատ և մղումային (իմպուլսիվ), կանոնների չմտածված խախտումների հետևանքով հակված են դժբախտ պատահարների և կարգապահական նկատողությունների՝ մինչ կգիտակցեն իրենց հանդուգն վարքը:

Մեծերի հետ հարաբերություններում հաճախ անզուսպ են, առանց սովորական զգուշության և զսպվածության: Մյուս երեխաները նրանց չեն սիրում, և նրանք կարող են հայտնվել մեկուսացման մեջ: Ճանաչողական ֆունկցիայի նվազումը տարածված երևույթ է, իսկ շարժողական և խոսքի զարգացման յուրահատուկ հապաղումները անհամամասնորեն հաճախ են հանդիպում: Երկրորդական բարդությունները ներառում են հակահասարակական վարքը և ցածր ինքնագնահատականը:

Բացառությամբ՝

- տագնապային խանգարումների (F41.-)
- տրամադրության (աֆեկտիվ) խանգարումների (F30-F39)
- զարգացման պերվազիվ (ընդհանուր, տարածված) խանգարումների (F84.-)
- շիզոֆրենիայի (F20.-)

F90.0 Ուշադրության և ակտիվության խանգարումներ
ուշադրության պակասի (դեֆիցիտ) խանգարում՝ զուգակցված գերակտիվության հետ
ուշադրության պակասի և գերակտիվության խանգարում
ուշադրության պակասի համախտանիշ՝ զուգակցված գերակտիվության հետ

Բացառությամբ՝

վարքի խանգարման հետ զուգակցված գերշարժումային խանգարման (F90.1)

F90.1 Վարքի գերշարժումային (հիպերկինետիկ) խանգարում
Գերշարժումային խանգարում՝ զուգակցված վարքի խանգարման հետ

F90.8 Գերշարժումային այլ խանգարումներ

F90.9 Գերշարժումային խանգարում՝ չճշտված
Մանկական կամ դեռահասային տարիքի գերշարժումային ռեակցիա՝ ԱՀՃ
Գերշարժումային համախտանիշ՝ ԱՀՃ

F91 Վարքի խանգարումներ

Խանգարումներ, որոնք բնորոշվում են չշփվող, հարձակողական կամ հանդուգն վարքի կրկնվող, կայուն գծերով: Այդպիսի վարքը կարելի է գնահատել որպես տարիքային սոցիալական խանգարումների գերազույն արտահայտում, սակայն այն կարող է լինել ավելի ծանր, քան սովորական մանկական անհնազանդությունը կամ դեռահասային անկարգապահությունը, և կարող է տևել զգալի ժամանակ (վեց ամիս և ավել):

Վարքի այդպիսի խանգարման նշանները կարող են լինել նաև այլ հոգեկան վիճակների ախտանիշեր: Այդ դեպքում նախընտրությունը պետք է տալ հիմնական ախտորոշմանը: Վարքի օրինակները, որոնց վրա հիմնվում է ախտորոշումը, ներառում են չափից դուրս կռվարարությունը և ծաղրելու ձգտումը, դաժանությունը այլ մարդկանց և կենդանիների նկատմամբ, գույքի լուրջ վնասումը, հրկիզումները, գողությունը, մշտական կեղծությունը, դպրոցում դասերը բաց թողնելը և տնից փախուստները, սովորաբար գրգռվածության հաճախակի և ծանր բռնկումները, անհնազանդությունը:

Վերը նշված ցանկացած նշանի առկայությունը, երբ այն վառ է արտահայտված, բավարար է ախտորոշման համար, սակայն առանձին հակասոցիալական գործողությունները չեն կարող հիմք ծառայել դրա համար:

Բացառությամբ՝

- տրամադրության (աֆեկտիվ) խանգարումների (F30-F39)
- զարգացման պերվազիվ խանգարումների (F84.-)
- շիզոֆրենիայի (F20.-)
- այն դեպքերի, երբ վարքի խանգարումը զուգակցվում է՝
 - հուզական խանգարումների հետ (F92.-)
 - գերշարժումային խանգարումների հետ (F90.1)

- F91.0 Ընտանեկան շրջանում սահմանափակվող վարքի խանգարում
 Վարքի խանգարում, որը բնորոշվում է հակասոցիալական և ագրեսիվ վարքով (այլ ոչ միայն ընդդիմադիր, հանդուգն, հարաբերությունները խզող վարք), որի ժամանակ վարքի շեղումը լրիվ կամ գրեթե լրիվ սահմանափակվում է տան և ընտանիքի անդամների կամ ամենամոտ հարազատների փոխհարաբերությունների շրջանակներում: Այս խանգարման ախտորոշումը պահանջում է F91 դասի չափանիշների լրիվ համալիրը, նույնիսկ ծնող-երեխա փոխհարաբերությունների ծանր խանգարումը ինքնին չի հանդիսանում բավարար՝ ախտորոշման համար:
- F91.1 Վարքի ոչ սոցիալականացված խանգարում
 Վարքի խանգարում, որը բնորոշվում է կայուն հակասոցիալական կամ ագրեսիվ վարքով (լրիվ համապատասխանող F91- դասի չափանիշներին, այլ ոչ թե ընդդիմադիր, հանդուգն, հարաբերությունները խզող վարքագծերն ընդգրկող), այլ երեխաների հետ հարաբերություններում անհատի մոտ զգալի արտահայտված անկանոնություններով:
 Վարքի խանգարում, մեկուսացած ագրեսիվ տիպ
 Ոչ սոցիալականացված ագրեսիվ վարք
- F91.2 Վարքի սոցիալականացված խանգարում
 Խանգարում, որը ներառում է կայուն հակասոցիալական կամ ագրեսիվ վարք (լրիվ համապատասխանող F91.- դասի չափանիշներին, այլ ոչ միայն ընդդիմադիր, հանդուգն, հարաբերությունները խզող վարքագծերն ընդգրկող) և հանդիպում է հասակակիցների խմբում հիմնականում լավ ինտեգրված անհատների մոտ:
 Վարքի խանգարում, խմբակային տիպ
 Խմբակային օրինազանցություն
 Օրինազանցություն՝ հանցախմբի անդամության պայմաններում
 Գողություն ուրիշների ընկերակցությամբ
 Անփութություն դպրոցում, բացակայություններ՝ դասերից
- F91.3 Հակադրության հրահրող խանգարում
 Վարքի խանգարում, որը սովորաբար հանդիպում է փոքր տարիքի երեխաների մոտ և հիմնականում բնորոշվում է արտահայտված հանդգնությամբ, չենթարկվելով, հարաբերությունները խզող վարքով, որը չի ներառում իրավախախտ գործողություններ, հարձակողական կամ հակասոցիալական վարքի ավելի ծայրահեղ ձևեր: Ախտորոշումը պահանջում է լրիվ համապատասխանություն F91.- դասի չափանիշներին, անգամ եթե չարաճճիության կամ չենթարկվելու ծանր ձևերն ինքնին բավական չեն ախտորոշման համար: Անհրաժեշտ է պահպանել զգուշություն՝ այս դասը կիրառելուց առաջ, հատկապես ավելի մեծ տարիքի երեխաների նկատմամբ, քանի որ կլինիկորեն նշանակալի վարքի խանգարումը սովորաբար ուղեկցվում է պարզապես հանդգնությունը, չենթարկվելը կամ հարաբերությունները խզող վարքը գերազանցող հակասոցիալական կամ ագրեսիվ վարքով:
- F91.8 Վարքի այլ խանգարումներ
- F91.9 Վարքի խանգարում՝ չճշտված
 Մանկական՝
 - վարքագծային խանգարում՝ ԱՀԾ
 - վարքի խանգարում՝ ԱՀԾ

F92 Վարքի և հույզերի (էմոցիաների) խառը խանգարումներ

Այս խումբը բնորոշվում է ցայտուն արտահայտված դեպրեսիայի, կայուն ագրեսիվ, հակասոցիալական կամ հանդուգն վարքի, տագնապի և այլ հուզական խանգարումների համակցությամբ:

Դրանք պետք է համապատասխանեն ինչպես մանկական տարիքում վարքի խանգարումների (F91.-), այնպես էլ մանկական տարիքի հուզական խանգարումների (F93.-) կամ հասուն տարիքին բնորոշ ներոտիկ խանգարումների (F40-F48), տրամադրության խանգարումների (F30-F39) չափանիշներին:

F92.0 Վարքի դեպրեսիվ խանգարում

Այս ենթադասը նախատեսում է վարքի խանգարման (F91.-) և տրամադրության կայուն արտահայտված ընկճման (F32.-) համակցություն, որն արտահայտվում է այնպիսի ախտանիշերով, ինչպիսիք են՝ չափից ավելի տառապանքը, ամենօրյա գործունեության նկատմամբ հետաքրքրությունների և բավականության կորուստը, ինքնամեղադրումը և հուսահատությունը: Կարող են լինել նաև քնի և ախորժակի խանգարումներ:

Վարքի խանգարում՝ դասակարգված F91.- դասում, զուգակցված F32.- դասում
դասակարգված դեպրեսիվ խանգարման հետ

F92.8 Վարքի և հույզերի խառը այլ խանգարումներ

Այս դասը նախատեսում է մանկական տարիքում վարքի խանգարումների (F91.-) համակցություն կայուն արտահայտված այնպիսի հուզական ախտանիշերի հետ, ինչպիսիք են՝ անհանգստությունը, մոլեգնությունը, կաշունությունը, դեպրեսոնալիզացիան, դեռեալիզացիան, ֆոբիաները կամ հիպոխոնդրիան:

F91.- դասում դասակարգված վարքի խանգարում՝ համակցված հետևյալի հետ՝

- (F93.-) դասում նշված հուզական խանգարում
- (F40-F48) դասերում նշված ներոտիկ խանգարում

F92.9 Վարքի և հույզերի խառը խանգարում՝ չճշտված

F93 Հուզական խանգարումներ, որոնց սկիզբը յուրահատուկ է մանկական հասակին

Հիմնականում ավելի շատ նորմալ զարգացման դրսևորումների չափազանցված արտահայտություններն են, քան որակական առումով ախտաբանական շեղումներ:

Զարգացման շրջանին համապատասխանությունը հանդիսանում է այն հանգուցային ախտորոշիչ չափանիշը, որն օգտագործվում է մանկական հասակին յուրահատուկ այս հուզական խանգարումները ներոտիկ խանգարումներից տարբերակելու համար (F40-F48):

Բացառությամբ՝

այն դեպքերի, երբ զուգակցված են վարքի խանգարման հետ (F92.-)

F93.0 Բաժանմամբ պայմանավորված տագնապային խանգարում երեխաների մոտ

Սա պետք է ախտորոշել, երբ բաժանման վախը ստեղծում է տագնապի կենտրոնացում, և երբ այդպիսի տագնապն առաջին անգամ ի հայտ է գալիս կյանքի առաջին տարիներին: Բաժանումից առաջացած նորմալ անհանգստությունից տվյալ խանգարումը տարբերվում է արտահայտվածության անսովոր աստիճանով կամ ծանրությամբ (ներառյալ սովորական տարիքից հետո դրա կայուն տևողությունը), և երբ այդ տագնապը ստեղծում է սոցիալական գործունեության զգալի խնդիրներ:

Բացառությամբ՝

տրամադրության (աֆեկտիվ) խանգարումների (F30-F39)

ներոտիկ խանգարումների (F40-F48)

մանկական տարիքի ֆոբիկ տագնապային խանգարման (F39.1)

մանկական տարիքի սոցիալական տագնապային խանգարման (F93.2)

F93.1 Ֆորիկ տագնապային խանգարում մանկական տարիքում

Վախեր մանկական տարիքում, որոնք բնորոշում են զարգացման որոշակի փուլի ընդգծված յուրահատկությունը և ի հայտ են գալիս (որոշակի չափով) երեխաների մեծ մասի մոտ, բայց ոչ նորմալ արտահայտվածության աստիճանով: Մյուս վախերը, որոնք առաջանում են մանկական տարիքում, բայց չեն հանդիսանում հոգեւոցիալական զարգացման նորմալ մաս (օրինակ՝ ագորաֆորիա), պետք է ծածկագրել F40-F48 բաժնի համապատասխան դասում:

Բացառությամբ՝

Գեներալիզացված (համատարածուն) տագնապային խանգարման (F41.1)

F93.2 Սոցիալական տագնապային խանգարում մանկական տարիքում

Այս խանգարմանը բնորոշ են անձանոթ անձանց հանդեպ վախը և նոր, տարօրինակ կամ սոցիալապես սպառնալից իրավիճակներում առաջացած սոցիալական տագնապը կամ անհանգստությունը: Այս դասը պետք է կիրառել միայն այն դեպքում, եթե այդպիսի վախերն առաջանում են կյանքի վաղ տարիներին, ունեն արտահայտվածության անսովոր աստիճան և ուղեկցվում են սոցիալական գործունեության խնդիրներով:

Մանկական հասակի կամ դեռահասային խուսափման խանգարում

F93.3 Սիբլինգային (սիբսային) մրցակցության խանգարում

Երեխայի հուզական խանգարման որոշ աստիճան, որը սովորաբար առաջանում է իրենից անմիջապես փոքր եղբոր (քրոջ) ծնվելուց հետո: Այն ցուցաբերում են վաղ տարիքի երեխաներից շատերը: Սիբսերի (քույր, եղբայր) միջև մրցակցության արտահայտմամբ խանգարումը պետք է ակտորոշել միայն այն դեպքում, երբ խանգարման աստիճանը և տևողությունը վիճակագրորեն անսովոր են և կապված են սոցիալական փոխհարաբերության շեղումների հետ: Սիբսերի խանդ

F93.8 Մանկական տարիքի հուզական այլ խանգարումներ

Նույնականացման խանգարում

Գերտագնապային խանգարում

Բացառությամբ՝

մանկական տարիքի սեռական նույնականացման խանգարման (F64.2)

F93.9 Մանկական տարիքի հուզական խանգարում՝ չճշտված

F94 Սոցիալական գործունեության խանգարումներ, որոնց սկիզբը բնորոշ է մանկական տարիքին

Խանգարումների բավական տարաբնույթ խումբ է, որոնց ընդհանուր գիծ են հանդիսանում զարգացման ընթացքում առաջացող սոցիալական գործունեության շեղումները: Բայց դրանք (ի տարբերություն զարգացման պերվազիվ խանգարումների) առաջնային ձևով չեն բնորոշվում գործունեության բոլոր ոլորտները ներգրավող ակնհայտ կոնստիտուցիոնալ սոցիալական անկարողությամբ կամ անբավարարությամբ: Շատ դեպքերում միջավայրի լուրջ այլասերումները կամ զրկանքները հավանաբար էական դեր են խաղում այս խանգարումների էթիոլոգիայում:

F94.0 Ընտրողական մուտիզմ

Բնորոշվում է հուզականությամբ պայմանավորված խոսքի արտահայտված այնպիսի ընտրողականությամբ (սելեկտիվությամբ), ինչպիսին երեխան ցուցաբերում է խոսքային ունակությունները որոշ իրավիճակներում, բայց ի վիճակի չէ այդպես խոսել այլ (որոշակի) իրավիճակներում: Խանգարումը սովորաբար կապված է անձի նկատելի առանձնահատկությունների հետ, որոնք

ներառում են սոցիալական անհանգստությունը, ինքնամփոփությունը, դյուրազգացությունը կամ դիմադրողականությունը:

Ընտրողական (սելեկտիվ) մուտիզմ

Բացառությամբ՝

զարգացման պերվազիվ խանգարումների (F84.-)

շիզոֆրենիայի (F20.-)

խոսքի և լեզվի զարգացման յուրահատուկ խանգարումների (F80.-)

վաղ մանկական հասակում բաժանման վախի բաղադրիչ մաս կազմող անցողիկ մուտիզմի (F93.0)

F94.1 Մանկական տարիքի կապվածության ռեակտիվ խանգարում

Սկսվում է կյանքի առաջին հինգ տարիների ընթացքում և բնորոշվում է մանկական սոցիալական փոխհարաբերությունների մոդելի կայուն շեղումներով, որոնք կապված են հուզական խանգարումների հետ և իրենցից ներկայացնում են շրջակա իրավիճակի փոփոխությունների նկատմամբ ռեակցիաներ (օրինակ՝ վախ, գերզգուշավորություն, հասակակիցների հետ սոցիալական վատ փոխհարաբերություններ, իր և ուրիշների նկատմամբ ագրեսիվություն, տառապանք և, որոշ դեպքերում, աճի կանգ): Համախտանիշը հավանաբար առաջանում է որպես ծնողների կողմից երեխայի խնամքի լրիվ բացակայության, անտեսման, բռնության կամ դաժան վերաբերմունքի անմիջական արդյունք:

Այս խանգարմանն ուղեկցող սնուցվածության խանգարման (քաշի պակասի) կամ դանդաղած աճը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր:

Բացառությամբ՝

Ասպերգերի (Asperger) համախտանիշի (F84.5)

մանկական հասակի ապարգելակված կապվածության խանգարման (F94.2)

դաժան վերաբերմունքի համախտանիշի (T74)

ընտրողական կապվածության մոդելի նորմալ (թույլատրելի) փոփոխությունների մանկական տարիքում սեռական կամ ֆիզիկական բռնության, որը հանգեցնում է հոգեւոցիալական խնդիրների (Z61.4-Z61.6)

F94.2 Մանկական տարիքի կապվածության ապարգելակված խանգարում

Ոչ նորմալ սոցիալական գործունեության մասնակի դրսևորում է, որն առաջանում է կյանքի առաջին հինգ տարիների ընթացքում և ունի պահպանվելու միտում՝ անկախ շրջակա միջավայրի պայմանների արտահայտված փոփոխություններից, այն է՝ ցրված, ոչ ընտրողաբար կենտրոնացած կապվածության ձգտող վարքագիծ, իր նկատմամբ ուշադրություն պահանջող և չտարբերակված ընկերական վարք, հասակակիցների հետ վատ կարգավորված փոխհարաբերություններ:

Ըստ հանգամանքների՝ կարող են միանալ հուզական և վարքագծային խանգարումներ:

Փսիխոպաթիա կապվածության անբավարարությունից

Մանկական փակ տիպի հաստատության համախտանիշ

Բացառությամբ՝

Ասպերգերի (Asperger) համախտանիշի (F84.5)

երեխաների հոսպիտալիզմի (F43.2)

գերշարժումային (հիպերկինետիկ) խանգարման (F90.-)

մանկական տարիքում կապվածության ռեակտիվ խանգարման (F94.1)

F94.8 Մանկական տարիքում սոցիալական գործունեության այլ խանգարումներ

F94.9 Մանկական տարիքում սոցիալական գործունեության խանգարում՝ չճշտված

F95 Տիկեր (տիկային խանգարումներ)

Համախտանիշեր, որոնց գերակշռող արտահայտությունն են տիկի (ջղակծկում) որոշ ձևեր: Տիկը իրենից ներկայացնում է ակամա, արագ, կրկնվող, ոչ ռիթմիկ շարժումներ (սովորաբար ներառում են սահմանափակ մկանային խմբեր) կամ ձայնային հնչյուն, որոնք առաջանում են հանկարծակի և չունեն որոշակի նպատակ: Տիկերն ունեն անհաղթահարելիության միտում, սակայն սովորաբար դրանք կարող են ճնշվել տարբեր տևողության ժամանակահատվածներում: Դրանք ուժեղանում են սթրեսից և անհետանում են քնած վիճակում: Սովորական պարզ շարժողական տիկերը ներառում են թարթելը, պարանոցի ջղաձգումները, ուսերի թափահարումը և դեմքի ծամաձուրությունները: Սովորական պարզ ձայնային տիկերը ներառում են հազալը (կոկորդ մաքրելը), հաչոցանման ձայները, փնչացնելը, սուլոցը: Սովորական բարդ շարժողական տիկերը ներառում են ինքն իրեն հարվածելը, թռչկոտելը և ցատկելը: Սովորական բարդ ձայնային տիկերը ներառում են հատուկ բառերի կրկնությունը և, երբեմն, հասարակության մեջ անընդունելի (հաճախ անպարկեշտ) բառերի (կոպրոլալիա) և սեփական ձայների կամ բառերի կրկնությունը (պալիլալիա):

F95.0 Անցողիկ տիկային խանգարում

Համապատասխանում է տիկային խանգարումների ընդհանուր չափանիշներին, սակայն տիկերը պահպանվում են ոչ ավելի, քան 12 ամիս: Տիկերը սովորաբար արտահայտվում են թարթելով, դեմքը ծամաձուռելով և գլխի թափահարումով:

F95.1 Քրոնիկ շարժողական կամ ձայնային (վոկալ) տիկեր

Համապատասխանում է տիկային խանգարումների ընդհանուր չափանիշներին: Առկա են շարժողական կամ ձայնային (բայց ոչ երկուսը միասին) տիկեր, որոնք կարող են լինել կամ հատուկենտ, կամ բազմակի (հաճախ բազմակի) և տևում են ավելի, քան մեկ տարի:

F95.2 Զուգակցված ձայնային և բազմակի շարժողական տիկային խանգարում (դե լա Տուրետի համախտանիշ) (de la Tourette)

Տիկային խանգարման տեսակ, որի ժամանակ կան կամ եղել են բազմաթիվ շարժողական տիկեր և մեկ կամ ավելի ձայնային տիկեր, չնայած չկա անհրաժեշտություն դրանց միաժամանակյա առաջացման համար: Խանգարումը սովորաբար սաստկանում է դեռահասային տարիքում և միտված է պահպանվել չափահաս տարիքում: Ձայնային տիկերը բազմակի են՝ հանկարծակի կրկնվող պայթյունային ձայնարկություններ, հազալու, խոխոացնելու ձայներ, ինպես նաև կարող է լինել անպարկեշտ բառերի և արտահայտությունների օգտագործում: Երբեմն միանում է ժեստերի կրկնությունը (էխոպրաքսիա), որը նույնպես կարող է կրել անպարկեշտ բնույթ (կոպրոպրաքսիա):

F95.8 Այլ տիկային խանգարումներ

F95.9 Տիկային խանգարում՝ չճշտված

Տիկ՝ ԱՀԾ

F98 Այլ հուզական և վարքի խանգարումներ, որոնք սովորաբար սկսվում են մանկական և դեռահասային տարիքում

Խանգարումների տարասեռ խումբ է, որոնց ընդհանուր բնորոշ գիծը մանկական տարիքում սկսվելն է, մինչդեռ դրանք միմյանցից տարբեր են շատ առումներով: Որոշ վիճակներ հանդիսանում են հստակ բնութագրված համախտանիշեր, իսկ մյուսները՝ ընդամենը ախտանիշերի համալիրներ, որոնց անհրաժեշտ է ներառել այս դասում իրենց հաճախականության և հոգեւոցիալական խնդիրների հետ ունեցած կապի, ինչպես նաև այլ համախտանիշերի մեջ ներառվելու անհնարինության պատճառով:

Բացառությամբ՝

- շունչը պահելու (աֆեկտ-շնչական) նոպաների (R06.8)
- մանկական տարիքի սեռական նոյնականացման խանգարման (F64.2)
- Կլեյն-Լևինի (Kleine-Levin) համախտանիշի (G47.8)
- օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարման (F42)
- հուզական խնդիրների հետևանքով քնի խանգարումների (F51)

F98.0 Ոչ օրգանական էնուրեզ

Խանգարում, որը բնորոշվում է ակամամիզությամբ ցերեկը կամ գիշերը, որը չի համապատասխանում անհատի տարիքին, և որը չի հանդիսանում որևիցե նյարդային հիվանդության, էպիլեպսիայի նոպայի կամ միզուղիների որևիցե անկանոնության հետևանքով միզապարկի գործունեության նկատմամբ անբավարար հսկողության հետևանք:

Էնուրեզը (ակամամիզությունը) կարող է առկա լինել ծննդյան օրվանից կամ ի հայտ գալ միզապարկի գործունեությունը հսկելու ունակության ձեռքբերումից հետո: Ակամամիզությունը կարող է կապված լինել կամ չլինել ավելի խորը հուզական կամ վարքի խանգարման հետ:

- Ակամամիզություն (առաջնային) (երկրորդային) ոչ օրգանական բնույթի Ֆունկցիոնալ էնուրեզ
- Հոգեծին (փսիխոգեն) էնուրեզ
- Անմիզապահություն՝ ոչ օրգանական ծագման

Բացառությամբ՝

էնուրեզի՝ ԱՀՃ (R32)

F98.1 Ոչ օրգանական էնկոպրեզ

Կրկնվող, կամավոր կամ ակամա կղկղում, սովորաբար նորմալ կամ գրեթե նորմալ կազմավորված կղանքով, այն տեղերում, որոնք անհատին շրջապատող սոցիալ-մշակութային միջավայրում նախատեսված չեն այդ նպատակի համար: Խանգարումը կարող է հանդես գալ որպես վաղ մանկության շրջանում նորմալ համարվող անկղապահության ախտաբանական շարունակություն, կամ որպես աղիների գործունեության նկատմամբ արդեն ձեռք բերված հսկողության հետագա կորստի հետևանք, կամ էլ կարող է ներառել դիտավորյալ կղում անհամապատասխան վայրերում՝ չնայած աղիների գործունեության նորմալ ֆիզիոլոգիական հսկողության առկայությանը: Վիճակը կարող է հանդիպել որպես միախտանիշ խանգարում, կամ այն կարող է ավելի ընդարձակ համարվող հուզական (F93.-) կամ վարքի (F91.-) խանգարման մաս կազմել:

- Ֆունկցիոնալ էնկոպրեզ
- Ոչ օրգանական ծագման անկղապահություն
- Հոգեծին (փսիխոգեն) էնկոպրեզ

Էնկոպրեզի հետ գոյություն ունեցող փորկապության պատճառը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր:

Բացառությամբ՝

էնկոպրեզի՝ ԱՀՃ (R15)

F98.2 Սնունդ ընդունելու խանգարում վաղ մանկական հասակում և երեխաների մոտ

Սնունդ ընդունելու խանգարման բազմազան դրսևորումներ, որոնք սովորաբար բնորոշ են վաղ հասակի երեխաներին: Խանգարման հիմնական արտահայտություններն են սննդից հրաժարվելը և ոչ մի օրգանական հիվանդություն չունեցող երեխայի ծայրաստիճան քմահաճ, տարօրինակ կամ չարաճճի վարքագիծը՝ անհրաժեշտ քանակի և որակի սննդի և բավականաչափ փորձառու խնամողի առկայության պայմաններում: Դրան կարող է միանալ կամ չմիանալ «մաստակ ծամելու» («որոճալու») գործողությունը՝ ռումինացիան

(կրկնվող ռեգուրգիտացիա կամ որձկում՝ առանց սրտխառնոցի և ստամոքսաղիքային հիվանդության):

Վաղ մանկական հասակի ռումինացիա («որոճում»)

Բացառությամբ՝

Նյարդային անորեքսիայի և սննդի ընդունման (ուտելու) այլ խանգարումների (F50)

կերակրմանն առնչվող՝

- կերակրման և սննդի ներմուծման դժվարությունների (R63.3)
- նորածնի կերակրման խնդիրների (P92)

վաղ հասակի մանուկների կամ երեխաների կողմից ուտելու համար ոչ պիտանի նյութեր ուտելը (pica) (F98.3)

F98.3 Ուտելու համար ոչ պիտանի նյութեր ուտելը (pica) վաղ հասակի մանուկների և երեխաների կողմից

Ոչ սննդային նյութեր (օրինակ՝ հող, կավիճ, ներկի ծեփեր, այլ) ուտելու կայուն ձգտում: Դա կարող է լինել լայն տարածված հոգեկան խանգարմանը (ինչպիսին աուտիզմն է) բնորոշ ախտանիշերից մեկը կամ կարող է արտահայտվել որպես հարաբերականորեն ինքնուրույն հոգեախտաբանական վարքագիծ: Միայն այս վերջին դեպքն է դասակարգված տվյալ ենթադասում:

Խեղաթյուրված ախորժակի այս ֆենոմենն ավելի շատ տարածված է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մոտ: Եվ, եթե միաժամանակ առկա է մտավոր հետամնացություն, հիմնական ախտորոշումը պետք է ընտրվի F70-F79 բաժնի դասերից:

F98.4 Շարժումների ստերեոտիպային խանգարում

Ինքնական կրկնվող, միօրինակ, ֆունկցիոնալ նշանակություն չունեցող (հաճախ ռիթմիկ) շարժումներ, որոնք չեն հանդիսանում որևիցե ախտորոշված հոգեկան կամ նյարդային հիվանդության բաղկացուցիչ մաս: Այն դեպքում, երբ այդպիսի շարժումները հանդիսանում են որևիցե հիվանդության ախտանիշեր, պետք է ծածկագրվի միայն հիմնական հիվանդությունը: Ինքնավնասման չհանգեցնող այդ շարժումները ներառում են մարմնի և գլխի օրորումը (ճոճումը), մազերը քաշելը և փաթաթելը, մատներով կտկտացնելը, ծափ տալը: Հիվանդին վնաս հասցնող ստերեոտիպային գործողությունները ներառում են՝ կրկնվող հարվածներ գլխով, հարվածներ դեմքին, մատն աչքը մտցնելը, ձեռքերի, շրթունքների կամ մարմնի այլ մասերի կծոտում: Այդպիսի ստերեոտիպային շարժումներով խանգարումները հաճախ կապված են մտավոր հետամնացության հետ (երբ դա առկա է, պետք է ծածկագրել երկու վիճակները): Եթե մատն աչքը մտցնելը դիտվում է անբավարար տեսողությամբ երեխայի մոտ, անհրաժեշտ է ծածկագրել երկու վիճակներն էլ: Ըստ որում, մատն աչքը մտցնելը ծածկագրվում է այս դասով, իսկ տեսողության խանգարումը՝ համապատասխան սոմատիկ հիվանդության ծածկագրով:

Ստերեոտիպային (սովորության) խանգարում

Բացառությամբ՝

ակամա ոչ նորմալ շարժումների (R25.-)

օրգանական ծագման շարժողական խանգարումների (G20-G25)

եղունգների կրծոտման (F98.8)

քթի քշփորման (F98.8)

ավելի ընդարձակ հոգեկան խանգարման մաս կազմող ստերեոտիպերի (F00-F95)

մատը ձեռքի դեպքի (F98.8)

տիկային խանգարումների (F95.-)

տրիխոտիլոմանիայի (F63.3)

F98.5 Կակազություն

Խոսքի խանգարում, որը բնութագրվում է ձայների, վանկերի կամ բառերի հաճախակի կրկնումով կամ երկարացմամբ, կամ հաճախակի երկմտանքներով կամ դադարներով, որոնք ընդհատում են խոսքի ռիթմիկ ընթացքը (սահունությունը): Այն պետք է դասակարգել որպես խանգարում միայն այն դեպքում, երբ այնքան ծանր է արտահայտված, որ խանգարում է խոսքի սահունությունը:

Բացառությամբ՝

խառնաշփոթ (շնչակտուր) խոսքի (F98.6)

տիկային խանգարումների (F95.-)

F98.6 Խառնաշփոթ խոսք

Խոսքի արագ տեմպ, որն ուղեկցվում է սահունության անկումով, սակայն առանց կրկնությունների կամ երկմտանքների, և արտահայտված է ծանրության այնպիսի աստիճանով, որը հանգեցնում է խոսքի հասկանալիության (պարզորոշության, հստակության) նվազմանը: Խոսքը խառնաշփոթ է և ոչ ռիթմիկ՝ ուղեկցվելով արագ և ընդհատվող պոռթկումներով, որոնց արդյունքում խանգարվում է նախադասությունների ու արտահայտությունների ճիշտ կառուցումը:

Բացառությամբ՝

կակազության (F98.5)

տիկային խանգարումների (F95.-)

F98.8 Այլ ճշտված հուզական խանգարումներ և սովորաբար մանկական և

դեռահասային տարիքում սկսված վարքի խանգարումներ

Ուշադրության պակասի (դեֆիցիտ) համախտանիշ՝ առանց գերակտիվության

Անզուսպ մաստուրբացիա

Եղունգների կրծոտում

Քթի քչկորում

Մատի ծծում

F98.9 Հուզական և վարքի չճշտված խանգարումներ, որոնք սովորաբար սկսվում են

մանկական և դեռահասային տարիքում

ՉՃՇՏՎԱԾ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

(F99-F99)

F99 Հոգեկան խանգարում՝ առանց հավելյալ ճշգրտան

Ներառյալ՝

հոգեկան հիվանդություն՝ ԱՀԾ

Բացառությամբ՝

օրգանական հոգեկան խանգարման՝ ԱՀԾ (F06.9)

ԳԼՈՒԽ VI ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՋԻ00 - ՋԻ99) (G00 - G99)

Բացառությամբ՝

պերինատալ շրջանում ծագող որոշ վիճակների (P00-P96)
որոշ վարակիչ և մակաբուժային հիվանդությունների (A00-B99)
հղիության, ծննդաբերության և հետծննդաբերական շրջանի բարդությունների
(O00-O99)
բնածին արատների, դեֆորմացիաներ և քրոմոսոմային անկանոնությունների
(Q00-Q99)
ներգատական, սնուցման և նյութափոխանակության հիվանդությունների (E00-
E90)
վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների ազդեցության
որոշ այլ հետևանքների (S00-T98)
նորագոյացությունների (C00-D48)
կլինիկական և լաբորատոր հետազոտություններով հայտնաբերած
ախտանիշերի, նշանների և նորմայից շեղումների՝ այլ դասերում
չդասակարգված (R00-R99)

Սույն գլուխը ներառում է հետևյալ բաժինները՝

G00-G09 Կենտրոնական նյարդային համակարգի բորբոքային հիվանդություններ
G10-G14 Կենտրոնական նյարդային համակարգն առաջնային ձևով ախտահարող
համակարգային ապաճումներ (ատրոֆիաներ)
G20-G26 Արտաբրգային (էքստրապիրամիդային) և շարժողական խանգարումներ
G30-G32 Նյարդային համակարգի այլ դեգեներատիվ հիվանդություններ
G35-G37 Կենտրոնական նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ
G40-G47 Էպիլոգային և պարոքսիզմային խանգարումներ
G50-G59 Նյարդի, նյարդարմատի և հյուսակի ախտահարումներ
G60-G64 Բազմանյարդախտություն (պոլինևրոպաթիա) և ծայրամասային նյարդային
համակարգի այլ խանգարումներ
G70-G73 Մկանանյարդային միակցման (սինապս) և մկանի հիվանդություններ
G80-G83 Ուղեղային պարալիզ (մանկական) և այլ պարալիտիկ համախտանիշեր
G90-G99 Նյարդային համակարգի այլ խանգարումներ

Աստիճանաված են հետևյալ դասերը՝

G01* Մենինգիտ՝ մանրէային (բակտերիալ) հիվանդությունների ժամանակ՝ այլ
դասերում դասակարգված
G02* Մենինգիտ՝ այլ դասերում դասակարգված այլ վարակիչ և մակաբուժային
հիվանդությունների ժամանակ՝
G05* Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված
հիվանդությունների ժամանակ
G07* Ներգանգային և ներողնաշարային արքցես (թարախակույտ) և գրանուլոմա՝ այլ
դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

- G13* Կենտրոնական նյարդային համակարգն առաջնային ձևով ախտահարող համակարգային ապաճումներ (ատրոֆիա)՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G22* Պարկինսոնիզմ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G26* Արտաբրգային (էքստրապիրամիդային) և շարժողական խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G32* Նյարդային համակարգի այլ դեգեներատիվ հիվանդություններ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G46* Գլխուղեղի անոթային համախտանիշեր՝ ուղեղի անոթային հիվանդությունների ժամանակ
- G53* Գանգային նյարդերի ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G55* Նյարդարմատի և հյուսակի սեղմում (ճնշում)՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G59* Միանյարդախտություն (մոնոնևրոպաթիա)՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G63* Բազմանյարդախտություն (պոլինևրոպաթիա)՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G73* Մկանանյարդային միակցման և մկանի հիվանդություններ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G94* Գլխուղեղի այլ խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G99* Նյարդային համակարգի այլ խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՈՐԲՈՔԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(G00-G09)**

***G00 Մանրէային (բակտերիա) մենինգիտի՝ այլ դասերում չդասակարգված
Ներառյալ՝***

- արախնոիդիտը
 - լեպտոմենինգիտը
 - մենինգիտը
 - պախիմենինգիտը
- } մանրէային

Բացառությամբ՝

մանրէային

- մենինգոէնցեֆալիտի (G04.2)
- մենինգոմիելիտի (G04.2)

G00.0 Գրիպոզ մենինգիտ

Մենինգիտ՝ հարուցված հեմոֆիլուս ինֆլուէնցայով (*Haemophilus influenza*)

G00.1 Պնևմոկոկային մենինգիտ

G00.2 Ստրեպտոկոկային մենինգիտ

G00.3 Ստաֆիլոկոկային մենինգիտ

G00.8 Այլ մանրէային մենինգիտ

Մենինգիտ՝ հարուցված

- Աղիքային ցուպիկով
- Ֆրիդլենդերի բացիլով
- Կլեբսիելայով

G00.9 Մանրէային մենինգիտ՝ չճշտված
Մենինգիտ՝

- թարախային՝ ԱՀՃ
- թարախածին՝ ԱՀՃ
- թարախակալված՝ ԱՀՃ

**G01* Մենինգիտ՝ այլ դասերում դասակարգված մանրէային հիվանդությունների
դեպքում**

Ներառյալ՝

Մենինգիտ՝ հետևյալ դեպքերում՝

- սիբիրյան խոց (A22.8†)
- գոնոկոկային (A54.8†)
- լեպտոսպիրոզ (A27.-†)
- լիստերիոզ (A32.1†)
- Լայմի հիվանդություն (A69.2†)
- մենինգոկոկային (A39.0†)
- նեյրոսիֆիլիս (A52.1†)
- սալմոնելային վարակ (A02.2†)
- սիֆիլիս՝
 - բնածին (A50.4†)
 - երկրորդային (A51.4†)
- տուբերկուլյոզային (A17.0†)
- տիֆանման տենդ (A01.0†)

Բացառությամբ՝

մենինգոէնցեֆալիտի և մենինգոմիելիտի՝ առաջացած այլ դասերում
դասակարգված մանրէային հիվանդությունների ժամանակ (G05.0*)

**G02* Մենինգիտներ՝ այլ դասերում դասակարգված վարակիչ և մակաբուծային
հիվանդությունների ժամանակ**

Բացառությամբ՝

մենինգոէնցեֆալիտի և մենինգոմիելիտի՝ այլ դասերում դասակարգված
վարակիչ և մակաբուծային հիվանդությունների ժամանակ (G05.1–G05.2*):

G02.0* Մենինգիտ՝ այլ դասերում դասակարգված վիրուսային հիվանդությունների
դեպքում

Մենինգիտ (վիրուսով հարուցված)՝

- ադենովիրուսային (A87.1†)
- էնտերովիրուսային (A87.0†)
- հերպես-վիրուսային (herpes simplex) (B00.3†)
- վարակային մոնոնուկլեոզ (B27.-†)
- կարմրուկ (B05.1†)
- խոզուկ (B26.1†)
- կարմրախտ (B06.0†)
- ջրծաղիկ (varicella) (B01.0†)
- գոտևորող որքին (herpes zoster) (B02.1†)

G02.1* Մենինգիտ՝ առաջացած միկոզների (սնկային վարակների) ժամանակ

Մենինգիտ հետևյալ դեպքերում՝

- կանդիդային (B37.5†)
- կոկցիդիոդոմիկոզ (B38.4†)
- կրիպտոկոկային (B45.1†)

- G02.8* Մենինգիտ՝ այլ դասերում դասակարգված ճշտված վարակիչ և մակաբուծային այլ հիվանդությունների ժամանակ
 Մենինգիտ՝ պայմանավորված
- աֆրիկյան տրիպանոսոմոզով (B56.-†)
 - Չագասի (Chagas) հիվանդությամբ (քրոնիկ) (B57.4†)

**G03 Մենինգիտ՝ պայմանավորված այլ և չճշտված պատճառներով
 Ներառյալ՝**

- արախնոիդիտը
 - լեպտոմենինգիտը
 - մենինգիտը
 - պախիմենինգիտը
- } այլ և չճշտված պատճառների հետևանքով առաջացած

Բացառությամբ՝

- մենինգոէնցեֆալիտի (G04.-)
 - մենինգոմիելիտի (G04.-)
- G03.0 Ոչ թարախածին մենինգիտ
 Ոչ մանրէային մենինգիտ
- G03.1 Քրոնիկ մենինգիտ
- G03.2 Բարորակ հետադարձ մենինգիտ (Mollaret)
- G03.8 Մենինգիտ՝ հարուցված այլ ճշտված պատճառներով
- G03.9 Մենինգիտ՝ չճշտված
 Արախնոիդիտ (ողնուղեղային)՝ ԱՀՃ

G04 Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ

Ներառյալ՝

- սուր վերընթաց միելիտը
- մենինգոէնցեֆալիտը
- մենինգոմիելիտը

Բացառությամբ՝

- բարորակ միալգիկ էնցեֆալոմիելիտի (G93.3)
 - էնցեֆալոպաթիայի՝
 - ԱՀՃ (G93.4)
 - ալկոհոլային (G31.2)
 - թունավոր (տոքսիկ) (G92)
 - ցրված կարծրախտի (G35)
 - միելիտ՝
 - սուր լայնակի (G37.3)
 - ենթասուր մեռուկացնող (նեկրոտիկ) (G37.4)
- G04.0 Սուր դիսեմինացված (տարածուն) էնցեֆալիտ
- էնցեֆալիտ
 - էնցեֆալոմիելիտ
- } հետպատվաստումային
- Պատվաստանյութը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G04.1 Արևադարձային (տրոպիկական) սպաստիկ պարապլեգիա
- G04.2 Մանրէային մենինգոէնցեֆալիտ և մենինգոմիելիտ՝ այլ դասերում չդասակարգված
- G04.8 Այլ էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ
 Հետվարակային էնցեֆալիտ և էնցեֆալոմիելիտ՝ ԱՀՃ
- G04.9 Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ չճշտված

G05* Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

Ներառյալ՝

մենինգոէնցեֆալիտը և մենինգոմիելիտը՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

G05.0* Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված մանրէային հիվանդությունների ժամանակ

Էնցեֆալիտ, միելիտ կամ էնցեֆալոմիելիտ հետևյալ դեպքերում՝

- լիստերիոզի (G32.1†)
- մենինգոկոկային (G39.8†)
- սիֆիլիսի՝
 - բնածին (G50.4†)
 - ուշ (G52.1†)
- տուբերկուլյոզի (A17.8†)

G05.1* Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված վիրուսային հիվանդությունների ժամանակ

Էնցեֆալիտ, միելիտ կամ էնցեֆալոմիելիտ՝ հետևյալ դեպքերում՝

- ադենովիրուսային (A85.1†)
- ցիտոմեգալովիրուսային (B25.8†)
- էնտերովիրուսային (A85.0†)
- հերպես-վիրուսային (herpes simplex) (B00.4†)
- ինֆլուենզա (J10.8†, J10.8†, J11.8†)
- կարմրուկ (B05.0†)
- խոզուկ (B26.2†)
- հետջրծաղիկային (B01.1†)
- կարմրախտ (B06.0†)
- գոտևորող որքին (zoster) (B02.0†)

G05.2* Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված այլ վարակիչ և մակաբուծային հիվանդությունների ժամանակ

Էնցեֆալիտ, միելիտ կամ էնցեֆալոմիելիտ հետևյալ դեպքերում՝

- աֆրիկյան տրիպանոսոմոզի (B56.-†)
- Չագասի (Chagas) հիվանդության (քրոնիկ) (B57.4†)
- նեգլերիազի (ազատ ապրող ամեոբայից առաջացած մենինգիտի) (B60.2†)
- տոքսոպլազմոզի (B58.2†)

Էոզինոֆիլային մենինգոէնցեֆալիտի (B83.2†)

G05.8* Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ

Էնցեֆալիտ՝ համակարգային կարմիր գայլախտի ժամանակ (M32.1†)

G06 Ներգանգային և ներողնաշարային արքցես (թարախակույտ) և գրանուլոմա

Վարակային հարուցիչը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է լրացուցիչ ծածկագիր (B95-B97):

G06.0 Ներգանգային արքցես և գրանուլոմա

Արքցես (էմբոլիկ)

- գլխուղեղի (ցանկացած մասի)

- ուղեղիկային
- ուղեղային
- ականջածին (օտոզեն)

Ներգանգային արքցես կամ գրանուլոմա

- վերկարծրենային (էպիդուրալ)
- արտակարծրենային (էքստրադուրալ)
- ենթակարծրենային (սուբդուրալ)

G06.1 Ներողնաշարային արքցես և գրանուլոմա Ողնուղեղի արքցես (էմբոլիկ) (ցանկացած մասի)

Ներողնաշարային արքցես և գրանուլոմա՝

- վերկարծրենային (էպիդուրալ)
- արտակարծրենային (էքստրադուրալ)
- ենթակարծրենային (սուբդուրալ)

G06.2 Արտակարծրենային (էքստրադուրալ) և ենթակարծրենային (սուբդուրալ) արքցես՝ չճշտված

G07* Ներգանգային և ներողնաշարային արքցես (թարախակույտ) և գրանուլոմա՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

Ներառյալ՝

գլխուղեղի արքցեսը՝

- ամեոբային (A06.6†)
- գոնոկոկային (A54.8†)
- տուբերկուլյոզային (A17.8†)

Գլխուղեղի գրանուլոմա շիստոսոմոզի ժամանակ (B65.-†)

Տուբերկուլոմա՝

- գլխուղեղի (A17.8†)
- ուղեղաթաղանթների (A17.1†)

G08 Ներգանգային և ներողնաշարային ֆլեբիտ և թրոմբոֆլեբիտ

Ներառյալ՝

- Սեպտիկ՝
 - էմբոլիա
 - էնդոֆլեբիտներ
 - ֆլեբիտ
 - թրոմբոֆլեբիտ
 - մակարդուկագոյացում (թրոմբոզ)
- } գանգային կամ ներողնաշարային երակային ծոցերի կամ երակների

Բացառությամբ՝

ներգանգային ֆլեբիտի և թրոմբոֆլեբիտի

- բարդացնող՝
 - վիժումը, արտարգանդային կամ մոլայր հղիությունը (O00–O07, O08.7)
 - հղիությունը, ծննդաբերությունը և հետծննդաբերական շրջանը (O22.5, O87.3)

- ոչ թարախածին բնույթի (I 67.6)

ոչ թարախածին ներողնաշարային ֆլեբիտի և թրոմբոֆլեբիտի (G95.1)

G09 Կենտրոնական նյարդային համակարգի բորբոքային հիվանդությունների հետևանքներ

Ծանոթություն:

Այս դասը (G09) անհրաժեշտ է կիրառել G00-G08 դասերում առաջնակի ներառված (բացառությամբ աստղանիշով նշվածները) վիճակները նշելու համար՝ որպես այլ դասերում դասակարգված հետևանքների պատճառ: «Հետևանքներ» հասկացությունը ներառում է այնպիսի վիճակներ, որոնք ճշտված են որպես այդպիսին կամ որպես ուշացած ազդեցություններ կամ այնպիսիք, որոնք ի հայտ են եկել պատճառ հանդիսացող վիճակից մեկ տարի հետո կամ ավելի ուշ: Այս դասի կիրառման դեպքում պետք է հղում կատարվի 2-րդ հատորում բերված հիվանդության և մահացության ծածկագրման համապատասխան կանոններին և ուղեցույցներին:

Դրանք չպետք է օգտագործել կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) քրոնիկ բորբոքային հիվանդությունների դեպքում: Կիրառել միայն կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) ընթացիկ բորբոքային հիվանդությունների ժամանակ:

ԳԵՐԱԶԱՆՑԱՊԵՍ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԱՆՏԱՀԱՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՏՐՈՖԻԱՆԵՐ (ԱՊԱՃՈՒՄՆԵՐ) (G10–G14)

G10 Հանրինգտոնի հիվանդություն

Ներառյալ՝

Հանտինգտոնի խորեան (Huntington)

G11 Ժառանգական ատաքսիա (ապակարգություն)

Բացառությամբ՝

ուղեղային պարալիզի (մանկական) (կաթված) (G80.-)

ժառանգական և իդիոպաթիկ նյարդախտության (նևրոպաթիա) (G60.)

նյութափոխանակության խանգարումների (E70–E90)

G11.0 Բնածին՝ ոչ հարաճուն (պրոգրեսիվ) ատաքսիա

G11.1 Վաղ ուղեղիկային ատաքսիա

Ծանոթություն:

Սկիզբը՝ սովորաբար մինչև 20 տարեկան հասակը:

Վաղ ուղեղիկային ատաքսիա՝ հետևյալ հիվանդությունների հետ ուղեկցվող՝

- էսենցիալ տրեմոր
- միոկլոնուս (Hunt-ի ատաքսիա)
- պահպանված ջլային ռեֆլեքսներ

Ֆրիդրեյխի ատաքսիա (աուտոսոմ-ռեցեսիվային)

X-կապակցված ռեցեսիվային ողնուղեղ-ուղեղիկային ատաքսիա

G11.2 Ուշ ուղեղիկային ատաքսիա

Ծանոթություն:

Սկիզբը՝ սովորաբար 20 տարեկանից հետո:

G11.3 Ուղեղիկային ատաքսիա՝ ԴՆԹ-ի շղթայի վերականգնման խանգարմամբ

Ատաքսիա տելեանգիէկտազիա (Լուի-Բարի համախտանիշ) (Louis-Bar)

Բացառությամբ՝

Կոկեյնի (Cockayne) համախտանիշի (Q87.1)

պիգմենտային քսերոդերմիայի (xeroderma pigmentosum) (Q82.1)

G11.4 Ժառանգական սպաստիկ պարապլեգիա

G11.8 Այլ ժառանգական ատաքսիաներ

G11.9 Ժառանգական ատաքսիա՝ ճշտված

ժառանգական ուղեղիկային՝

- ատաքսիա՝ ԱՀՃ

- դեգեներացիա
- հիվանդություն
- համախտանիշ

G12 Ողնուղեղային մկանային ատրոֆիա (ապաճում) և նմանատիպ համախտանիշեր

G12.0 Մանկական ողնուղեղային մկանային ատրոֆիա, I տիպ (Werdnig-Hoffman)

G12.1 Այլ ժառանգական ողնուղեղային մկանային ատրոֆիա

Հարաճուն (պրոգրեսիվ)՝ բուլբար պարալիզ երեխաների մոտ (Fazio-Londe)

Ողնուղեղային մկանային ատրոֆիա

- մեծերի ձև
- մանկական ձև, II տիպ
- դիստալ ձև
- պատանեկան, III տիպ (Kugelberg-Welander)
- թիակ-նրբոլոքային ձև (scapuloperoneal)

G12.2 Շարժիչ նեյրոնի հիվանդություն

Շարժիչ նեյրոնի ընտանեկան հիվանդություն

Կողմնային կարծրախտ՝

- ամիոտրոֆիկ
- առաջնային

Հարաճուն (պրոգրեսիվ)՝

- կոճղեզային (բուլբար) պարալիզ
- ողնուղեղային մկանային ատրոֆիա

G12.8 Այլ ողնուղեղային մկանային ատրոֆիաներ և նմանատիպ համախտանիշեր

G12.9 Ողնուղեղային մկանային ատրոֆիա՝ չճշտված

G13* Կենտրոնական նյարդային համակարգն առաջնային ձևով ախտահարող համակարգային ատրոֆիաներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

G13.0* Պարանեոպլաստիկ ներոմիոպաթիա և ներոպաթիա (նյարդախտություն)

Կարցինոմատոզ ներոմիոպաթիա (C00-C97†)

Զգացողական պարանեոպլաստիկ ներոմիոպաթիա (Denny Brown) (C00-D48†)

G13.1* Կենտրոնական նյարդային համակարգն առաջնային ձևով ախտահարող այլ

համակարգային ատրոֆիա՝ առաջացած նեոպլաստիկ հիվանդությունների

(ուռուցքային, նորագոյացություններ) ժամանակ

Պարանեոպլաստիկ լիմբիկ էնցեֆալոպաթիա (Denny Brown) (C00-D48†)

G13.2* Կենտրոնական նյարդային համակարգն առաջնային ձևով ախտահարող այլ

համակարգային ատրոֆիա՝ առաջացած միքստեղենայի ժամանակ

(E00.1†, E03-†)

G13.8* Կենտրոնական նյարդային համակարգն առաջնային ձևով ախտահարող այլ

համակարգային ատրոֆիա՝ առաջացած այլ դասերում դասակարգված այլ

հիվանդությունների ժամանակ

G14 Հետպոլիոմիելիտիպային համախտանիշ

Ներառյալ՝

Հետպոլիոմիելիտիտային միելիտիկ համախտանիշը

Բացառությամբ՝

պոլիոմիելիտի հետևանքների (B91)

**ԱՐՏԱԲՐԳԱՅԻՆ (ԷՔՍՏՐԱՊԻՐԱՄԻԴԱԼ) ԵՎ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
(G20-G26)**

G20 Պարկինսոնի հիվանդություն (Parkinson)

Ներառյալ՝

- հեմիպարկինսոնիզմը
- դողկոցային պարալիզը (Paralysis agitans)
- պարկինսոնիզմը կամ Պարկինսոնի հիվանդությունը՝
 - ԱՀՃ
 - իդիոպաթիկ
 - առաջնային

G21 Երկրորդային պարկինսոնիզմ

- G21.0 Չարորակ նեյրոլեպտիկ համախտանիշ
- Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G21.1 Դեղամիջոցներով հարուցված այլ երկրորդային պարկինսոնիզմ
- Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G21.2 Երկրորդային պարկինսոնիզմ՝ հարուցված այլ արտաքին գործոններով
- Արտաքին գործոնը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G21.3 Հետէնցեֆալիտային պարկինսոնիզմ
- G21.4 Անոթային պարկինսոնիզմ
- G21.8 Այլ երկրորդային պարկինսոնիզմ
- G21.9 Երկրորդային պարկինսոնիզմ՝ չճշտված

G22* Պարկինսոնիզմ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

Ներառյալ՝

- սիֆիլիսային պարկինսոնիզմը (A52.1†)

G23 Հիմնային հանգույցների այլ դեգեներատիվ հիվանդություններ

Բացառությամբ՝

- բազմահամակարգային դեգեներացիայի (G90.3)
- G23.0 Հալերվորդեն-Սպատցի (Hallervorden-Spatz) հիվանդություն
- Դժգույն գնդի (պալիդար) պիգմենտային դեգեներացիա
- G23.1 Հարաճուն (պրոգրեսիվ) վերկորիզային (սուպրանուկլեար) օֆթալմոպաթիա (Steele-Richardson-Olszewski)
- G23.2 Ստրիատոնիգրալ դեգեներացիա
- G23.8 Հիմնային հանգույցների այլ ճշտված դեգեներատիվ հիվանդություններ
- Հիմնային հանգույցների կալցիֆիկացիա
- G23.9 Հիմնային հանգույցների դեգեներատիվ հիվանդություններ՝ չճշտված

G24 Դիսպրոնիա

Ներառյալ՝

- դիսկինեզիա

Բացառությամբ՝

- աթետոիդ ուղեղային պարալիզի (G80.3)
- G24.0 Դիստոնիա՝ առաջացած դեղամիջոցներից
Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G24.1 Իդիոպաթիկ ընտանեկան դիստոնիա
Իդիոպաթիկ դիստոնիա՝ ԱՀՃ
- G24.2 Իդիոպաթիկ ոչ ընտանեկան դիստոնիա
- G24.3 Սպաստիկ ծուղվություն
- Բացառությամբ՝**
ծուղվության՝ ԱՀՃ (M43.6)
- G24.4 Իդիոպաթիկ բերան-դիմային (օրոֆագիա) դիստոնիա
Բերան-դիմային (օրոֆագիա) դիսկինեզիա՝ ԱՀՃ
- G24.5 Բլեֆարոսպազմ
- G24.8 Այլ դիստոնիա
- G24.9 Դիստոնիա՝ չճշտված
Դիսկինեզիա՝ ԱՀՃ

G25 Այլ արտաբրգային (էքստրապիրամիդային) և շարժողական խանգարումներ

- G25.0 Էսենցիալ տրեմոր (դոդ)
Ընտանեկան տրեմոր
- Բացառությամբ՝**
տրեմորի՝ ԱՀՃ (R25.1)
- G25.1 Տրեմոր՝ առաջացած դեղամիջոցներից
Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G25.2 Տրեմորի այլ ճշտված ձևեր
Ինտենցիոն տրեմոր
- G25.3 Միոկլոնուս
Դեղամիջոցներով հարուցված միոկլոնուս
Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- Բացառությամբ՝**
դիմային միոկլիմիայի (G51.4)
միոկլոնիկ էպիլեպսիայի (G40.-)
- G25.4 Դեղամիջոցներով հարուցված խորեա
Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- G25.5 Խորեայի այլ ձևեր
Խորեա՝ ԱՀՃ
- Բացառությամբ՝**
խորեայի՝ ԱՀՃ՝ սրտի ներգրավմամբ (I02.0)
Հանտինգտոնի խորեայի (G10)
ռևմատիկ խորեայի (I02.-)
Սիդենհամի խորեայի (I 02.-)
- G25.6 Դեղամիջոցներով հարուցված և օրգանական ծագման այլ տիկեր (ջղածություններ)
Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):
- Բացառությամբ՝**

- Տուրետի (Ժիլ դե լա Տուրետ) համախտանիշի (F95.2)
տիկի (ջղաձգման)՝ ԱՀՃ (F95.9)
- G25.8 Այլ ճշտված արտաբրգային և շարժողական խանգարումներ
«Անհանգիստ ոտքերի» համախտանիշ
«Ռիգիդ մարդու» համախտանիշ
- G25.9 Արտաբրգային և շարժողական խանգարումներ՝ չճշտված

**G26* Արտաբրգային և շարժողական խանգարումներ՝ առաջացած այլ դասերում
դասակարգված հիվանդությունների դեպքում**

**ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ԴԵԳԵՆԵՐԱՏԻՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(G30-G32)**

G30 Ալցհեյմերի (Alzheimer) հիվանդություն

Ներառյալ՝

ծերունական և նախածերունական ձևերը

Բացառությամբ՝

ծերունական՝

- ուղեղի դեգեներացիայի՝ այլ դասերում չդասակարգված (G31.1)
- դեմենիցիայի՝ ԱՀՃ (F03)

ծերության՝ ԱՀՃ (R54)

G30.0 Ալցհեյմերի հիվանդություն՝ վաղ սկզբով

Ծանոթություն:

Հիվանդության սկիզբը՝ սովորաբար մինչև 65 տարեկան հասակը:

G30.1 Ալցհեյմերի հիվանդություն՝ ուշ սկզբով

Ծանոթություն:

Հիվանդության սկիզբը՝ սովորաբար 65 տարեկանից հետո:

G30.8 Ալցհեյմերի հիվանդության այլ տեսակ

G30.9 Ալցհեյմերի հիվանդություն՝ չճշտված

**G31 Նյարդային համակարգի այլ դեգեներատիվ հիվանդություններ՝ այլ դասերում
չդասակարգված**

Բացառությամբ՝

Ռեյի (Rey) համախտանիշի (G93.7)

G31.0 Ուղեղի սահմանափակ ատրոֆիա

Ճակատաքունքային դեմենցիա

Պիկի հիվանդություն

Հարաճուն (պրոգրեսիվ) մեկուսացված աֆազիա

G31.1 Ուղեղի ծերունական դեգեներացիա՝ այլ դասերում չդասակարգված

Բացառությամբ՝

Ալցհեյմերի հիվանդության (G30.-)

ծերության՝ ԱՀՃ (R54)

G31.2 Նյարդային համակարգի դեգեներացիա՝ ալկոհոլի հետևանքով

Ալկոհոլային՝

- ուղեղիկային
 - ատաքսիա (ապակարգություն)
 - դեգեներացիա
- ուղեղային դեգեներացիա
- էնցեֆալոպաթիա

- Վեգետատիվ նյարդային համակարգի դիսֆունկցիա՝ ալկոհոլի հետևանքով
- G31.8 Նյարդային համակարգի այլ ճշտված դեգեներատիվ հիվանդություններ
 Գորշ նյութի դեգեներացիա (Alpers)
 Լյուիի մարմնիկներով դեմենցիա (հիվանդություն)
 Ենթասուր մեռուկացնող էնցեֆալոպաթիա (Leigh)
- G31.9 Նյարդային համակարգի դեգեներատիվ հիվանդություն՝ չճշտված

G32* Նյարդային համակարգի այլ դեգեներատիվ խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

- G32.0* Ողնուղեղի ենթասուր համակցված դեգեներացիա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

Բացառությամբ՝

Ողնուղեղի ենթասուր համակցված դեգեներացիա՝ վիտամին B₁₂-ի անբավարարության ժամանակ (E53.8†)

- G32.8* Նյարդային համակարգի այլ ճշտված դեգեներատիվ խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՄԻԵԼԻՆԻԶԱՑՆՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ (G35-G37)

G35 Ցրված սկլերոզ (կարծրախտ)

Բազմակի կարծրախտ՝

- ԱՀՃ
- ուղեղաբնի
- ողնուղեղի
- ցրված (բազմակի, բազմօջախ, դիսեմինացված)
- Գեներալիզացված (համատարածուն)

G36 Սուր ցրված դեմիելինիզացիայի այլ ձևեր

Բացառությամբ՝

հետվարակային էնցեֆալիտի և էնցեֆալոմիելիտի՝ ԱՀՃ (G04.8)

- G36.0 Օպտիկոնևրոմիելիտ (Neuromyelitis optica) (Devic)

Դեմիելինիզացիա՝ տեսողական նյարդի բորբոքման ժամանակ

Բացառությամբ՝

տեսողական նյարդի բորբոքման՝ ԱՀՃ (H46)

- G36.1 Սուր և ենթասուր հեմոռագիկ լեյկոէնցեֆալիտ (Hurst)

- G36.8 Այլ ճշտված սուր ցրված դեմիելինիզացիա

- G36.9 Սուր ցրված դեմիելինիզացիա՝ չճշտված

G37 Կենտրոնական նյարդային համակարգի այլ դեմիելինիզացնող հիվանդություններ

- G37.0 Դիֆուզ սկլերոզ (կարծրախտ)

Պերիաքսիալ էնցեֆալիտ

Շիլդերի (Schilder) հիվանդություն

Բացառությամբ՝

ադրենոլեյկոդիստրոֆիայի (Addison-Schilder) (E71.3)

- G37.1 Բրտամարմնի (corpus callosum) կենտրոնական դեմիելինիզացիա
 G37.2 Կամրջի (պոնտին) կենտրոնական հատվածի միելինոլիզ
 G37.3 Սուր լայնակի միելիտ՝ կենտրոնական նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդության ժամանակ
 Սուր լայնակի միելիտ՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

- գրված սկլերոզի (կարծրախտի) (G35)
 օպտիկոնևրոմիելիտի (Devic) (G36.0)
 G37.4 Ենթասուր մեռուկացնող միելիտ
 G37.5 Կոնցենտրիկ սկլերոզ (Balo)
 G37.8 Կենտրոնական նյարդային համակարգի այլ ճշտված դեմիելինիզացնող հիվանդություններ
 G37.9 Կենտրոնական նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություն՝ չճշտված

**ԷՊԻԶՈՂԻԿ ԵՎ ՊԱՐՈՔՍԻԶՄԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
 (G40-G47)**

G40 Էպիլեպսիա

Բացառությամբ՝

- Լանդաու-Կլեֆների համախտանիշի (F80.3)
 ցնցումային նոպա՝ ԱՀՃ (R56.8)
 էպիլեպտիկ վիճակի (ստատուս) (G41.-)
 Տոդի պարալիզի (Todd) (G83.8)
 G40.0 Տեղակայված (ֆոկալ, մասնակի, պարցիալ) իդիոպաթիկ էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշեր՝ տեղակայված ցնցումներով սկիզբ ունեցող նոպաներով
 Բարորակ մանկական էպիլեպսիա՝ էլեկտրաուղեղագրի վրա կենտրոնական-քունքային պիկերով
 Մանկական էպիլեպսիա՝ էլեկտրաուղեղագրի վրա ծոծրակային մասում պարոքսիզմային (նոպայածև) ակտիվությամբ
 G40.1 Տեղակայված (ֆոկալ, մասնակի, պարցիալ) ախտանիշային (սիմպտոմատիկ) էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշեր՝ պարզ մասնակի նոպաներով Նոպաներ՝ առանց գիտակցության խանգարման (փոփոխության)
 Երկրորդային տարածուն նոպաների վերածվող պարզ մասնակի նոպաներ
 G40.2 Տեղակայված (ֆոկալ, մասնակի, պարցիալ) ախտանիշային (սիմպտոմատիկ) էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշեր՝ բարդ մասնակի (կոմպլեքսային պարցիալ) նոպաներով
 Գիտակցության խանգարումով ուղեկցվող նոպաներ՝ հաճախ էպիլեպտիկ ավտոմատիզմներով
 Երկրորդային տարածուն նոպաների վերածվող բարդ մասնակի նոպաներ
 G40.3 Գեներալիզացված (համատարածուն) իդիոպաթիկ էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշեր
 Բարորակ
 - վաղ մանկական հասակի միոկլոնիկ էպիլեպսիա
 - նորածնային ցնցումներ (ընտանեկան)
 Մանկական աբսանսային էպիլեպսիա (պիկնոլեպսիա)
 Տարածուն ցնցումային նոպաներով (grand mal) էպիլեպսիա՝ արթնացման ժամանակ

Պատանեկան

- արսանսային էպիլեպսիա
- միոկլոնիկ էպիլեպսիա (իմպուլսիվ փոքր նոպա (petit mal))

Ոչ յուրահատուկ (սպեցիֆիկ) էպիլեպտիկ նոպաներ՝

- ատոնիկ
- կլոնիկ
- միոկլոնիկ
- տոնիկ
- տոնիկ-կլոնիկ

G40.4 Այլ գեներալիզացված (համատարածուն) էպիլեպսիա և էպիլեպտիկ համախտանիշեր

էպիլեպսիա՝

- միոկլոնիկ արսանսներով
- միոկլոնիկ-աստատիկ նոպաներով

Մանկական (ինֆանտիլ) սպազմեր

Լենոքս-Գաստոյի (Lennox-Gastaut) համախտանիշ

«Սալամյան» գրոհներ (նոպաներ) (Salaam)

Ախտանիշային վաղ միոկլոնիկ էնցեֆալոպաթիա

Ուեստի (West) համախտանիշ

G40.5 Հատուկ էպիլեպտիկ համախտանիշեր

էպիլեպսիա մասնակի անընդմեջ (Epilepsia partialis continua, Կոժնիկովի)

էպիլեպտիկ ցնցումներ հետևյալ պատճառներից՝

- ալկոհոլ
- դեղեր
- հորմոնային փոփոխություններ
- քնի զրկում
- սթրեսային գործոնների ազդեցություն

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G40.6 Մեծ նոպաներ (Grandmal)՝ չճշտված (petit mal նոպայի հետ զուգակցված կամ առանց դրա)

G40.7 Փոքր նոպաներ (Petit mal)՝ չճշտված (առանց Grand mal նոպայի)

G40.8 էպիլեպսիայի այլ ձևեր

էպիլեպսիաներ և էպիլեպտիկ համախտանիշեր՝ առանց նոպաների մասնակի (ֆոկալ) կամ գեներալիզացված (համատարածուն) բնույթը ճշտելու

G40.9 էպիլեպսիա՝ չճշտված

էպիլեպտիկ

- ջղաձգումներ՝ ԱՀՃ
- նոպայաձև բռնկումներ, պարոքսիզմեր՝ ԱՀՃ
- ցնցումներ՝ ԱՀՃ

G41 էպիլեպտիկ ստատուս (վիճակ) (Status epilepticus)

G41.0 Մեծ նոպաների (Grand mal) էպիլեպտիկ ստատուս

Տոնիկ-կլոնիկ էպիլեպտիկ վիճակ

Բացառությամբ՝

մասնակի անընդմեջ (շարունակական) էպիլեպսիայի (epilepsia partialis continua) (Kozhevnikof) (G40.5)

G41.1 Փոքր նոպաների (Petitmal) էպիլեպտիկ ստատուս

Աբսանսային էպիլեպտիկ ստատուս
G41.2 Բարդ մասնակի էպիլեպտիկ ստատուս
G41.8 Այլ էպիլեպտիկ ստատուս
G41.9 էպիլեպտիկ ստատուս՝ չճշտված

G43 Միգրեն

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

Բացառությամբ՝

գլխացավի՝ ԱՀՃ (R51)

G43.0 Միգրեն՝ առանց աուրայի (հասարակ միգրեն)

G43.1 Միգրեն՝ աուրայով (դասական միգրեն)

Միգրեն՝

- աուրա՝ առանց գլխացավի
- հիմային (բազիլյար)
- համարժեքներ (էկվիվալենտներ)
- ընտանեկան հեմիպլեգիկ
- զուգակցված՝
 - սուր սկիզբ ունեցող աուրայով
 - երկարաձգված աուրայով
 - բնորոշ (տիպիկ) աուրայով

G43.2 Միգրենոզ ստատուս (status migrainosus)

G43.3 Բարդացած միգրեն

G43.8 Այլ միգրեն

Օֆթալմոպլեգիկ միգրեն

Ռետինալ (ցանցաթաղանթային) միգրեն

G43.9 Միգրեն՝ չճշտված

G44 Գլխացավերի այլ համախտանիշեր

Բացառությամբ՝

ատիպիկ դիմային ցավի (G50.1)

գլխացավի՝ ԱՀՃ (R51)

եռարմատ (եռորյակ, տրիգեմինալ) ներալգիայի (G50.0)

G44.0 Փնջային (կլաստերային) գլխացավի համախտանիշ

Քրոնիկ պարոքսիզմային հեմիկրանիա

Փնջային (կլաստերային, հիստամինային) գլխացավ

- քրոնիկ
- դիպլաձային (էպիզոդիկ)

G44.1 Անոթային գլխացավ՝ այլ դասերում չդասակարգված

Անոթային գլխացավ՝ ԱՀՃ

G44.2 Լարվածության գլխացավ

Քրոնիկ լարվածության գլխացավ

Դիպլաձային լարվածության գլխացավ

Լարվածության գլխացավ՝ ԱՀՃ

G44.3 Քրոնիկ հետմնասվածքային գլխացավ

G44.4 Դեղամիջոցների ընդունումից առաջացած գլխացավ՝ այլ դասերում

չդասակարգված

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G44.8 Այլ ճշտված գլխացավի համախտանիշեր

G45 Ուղեղի անցողիկ (տրանզիտոր) իշեմիկ գրոհներ և նմանադիպ համախտանիշեր

Բացառությամբ՝

նորածնային ուղեղային իշեմիայի (P91.0)

G45.0 Ողնաշարահիմնային (վերտեբրո-բազիլյար) զարկերակային համախտանիշ

G45.1 Քնային (կարոտիսային) զարկերակի համախտանիշ (կիսագնդային)

G45.2 Բազմակի և երկկողմանի նախաուղեղային զարկերակային համախտանիշեր

G45.3 Անցողիկ կուրություն (amaurosis fugax)

G45.4 Անցողիկ գլոբալ ամնեզիա

Բացառությամբ՝

ամնեզիայի՝ ԱՀՃ (R41.3)

G45.8 Այլ անցողիկ ուղեղային իշեմիկ գրոհներ և դրանց հետ կապված համախտանիշեր

G45.9 Անցողիկ ուղեղային իշեմիկ գրոհ՝ չճշտված

Ուղեղային զարկերակի սպազմ

Անցողիկ ուղեղային իշեմիա՝ ԱՀՃ

G46* Ուղեղանոթային համախտանիշեր՝ ուղեղի անոթային հիվանդությունների ժամանակ (I60–I67†)

G46.0* Միջին ուղեղային զարկերակի համախտանիշ (I66.0†)

G46.1* Առաջային ուղեղային զարկերակի համախտանիշ (I66.1†)

G46.2* Հետին ուղեղային զարկերակի համախտանիշ (I66.2†)

G46.3* Ուղեղաբնի ինսուլտի համախտանիշ (I60–I67†)

Համախտանիշ՝

- Բենեդիկտի (Benedikt)
- Կլոդի (Claude)
- Ֆովիլի (Foville)
- Միլյար-Գուբլերի (Millard-Gubler)
- Վալենբերգի (Wallenberg)
- Վեբերի (Weber)

G46.4* Ուղեղիկային ինսուլտի համախտանիշ (I60–I67†)

G46.5* Միայն (զուտ, բացառապես) շարժողական լակունար համախտանիշ (I60–I67†)

G46.6* Միայն (զուտ, բացառապես) զգացողական լակունար համախտանիշ (I60–I67†)

G46.7* Այլ լակունար համախտանիշեր (I60–I67†)

G46.8* Գլխուղեղի այլ անոթային համախտանիշեր՝ ուղեղի անոթային հիվանդությունների ժամանակ (I60–I67†)

G47 Քնի խանգարումներ

Բացառությամբ՝

մղձավանջների (F51.5)

ոչ օրգանական ծագման քնի խանգարումների (F51.-)

գիշերային սարսափների (F51.4)

քնի մեջ քայլելու (լուսնոտություն) (F51.3)

G47.0 Քուն մտնելու և քունը պահպանելու խանգարումներ (անքնություն)

G47.1 Չափից ավելի քնկոտության խանգարումներ (հիպերսոմնիաներ)

G47.2 Քնի և առույգության պարբերականության խանգարումներ

- Քնելու փուլի երկարաձգման համախտանիշ
- Քնելու-արթնանալու անկանոն դրսևորումներ
- G47.3 Շնչադադար (ապնոէ) քնի մեջ
 - Շնչադադար քնի մեջ՝
 - կենտրոնական
 - օբստրուկտիվ

Բացառությամբ՝

- պիկվիկյան համախտանիշի (E66.2)
- նորածնի մոտ քնի շնչադադարի (P28.3)
- G47.4 Նարկոլեպսիա և կատապլեքսիա
- G47.8 Քնի այլ խանգարումներ
 - Կլեյն-Լևինի համախտանիշ
- G47.9 Քնի այլ խանգարումներ՝ չճշտված

**ԱՌԱՆՁԻՆ ՆՅԱՐԴԵՐԻ, ՆՅԱՐԴԱՐՄԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍԱԿՆԵՐԻ
ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐ
(G50–G59)**

Բացառությամբ՝

- նյարդի, նյարդարմատի և հյուսակի ընթացիկ վնասվածքային ախտահարումների (տե՛ս նյարդի վնասումները՝ ըստ մարմնի մասերի)
 - ներալգիա՝ ԱՀՃ (M79.2)
 - ներիտ (նյարդաբորբ)՝ ԱՀՃ (M79.2)
- ծայրամասային ներիտ (նյարդաբորբ)՝ հղիության ընթացքում (O26.8)
- ռադիկուլիտ (նյարդարմատաբորբ)՝ ԱՀՃ (M54.1)

***G50 Եռարմատ (եռորյակ նյարդի) ախտահարումներ
Ներառյալ՝***

- Գանգային 5-րդ նյարդի ախտահարումները
- G50.0 Եռորյակ (եռարմատ) նյարդի ներալգիա
 - Պարոքսիզմային դիմային ցավի համախտանիշ
 - Ցավոտ ջղաձգում (Tic douloureux)
- G50.1 Ոչ տիպիկ դիմային ցավ
- G50.8 Եռորյակ (եռարմատ) նյարդի այլ ախտահարումներ
- G50.9 Եռորյակ (եռարմատ) նյարդի ախտահարումներ՝ չճշտված

***G51 Դիմային նյարդի ախտահարումներ
Ներառյալ՝***

- Գանգային 7-րդ նյարդի ախտահարումները
- G51.0 Բելի պարալիզ
 - Դիմային պարալիզ
- G51.1 Ծնկաձև հանգույցի բորբոքում (գանգլիոնիտ)

Բացառությամբ՝

- ծնկաձև հանգույցի հետհերպեսային գանգլիոնիտի (B02.2)
- G51.2 Մելկերսոնի համախտանիշ
 - Մելկերսոն-Ռոզենտալի համախտանիշ
- G51.3 Կլոնիկ հեմիֆացիալ սպազմ
- G51.4 Դիմային միոկլիմիա
- G51.8 Դիմային նյարդի այլ ախտահարումներ

G51.9 Դիմային նյարդի ախտահարումներ՝ չճշտված

**G52 Այլ գանգային նյարդերի ախտահարումներ
Բացառությամբ՝**

խանգարումների՝

- լսողական (8-րդ) նյարդի (H93.3)
- տեսողական (2-րդ) նյարդի (H46, H47.0)

պարալիտիկ շլուքային (strabismus)՝ նյարդի պարալիզի հետևանքով առաջացած (H49.0–H49.2)

G52.0 Հոտառական նյարդի ախտահարումներ

Գանգային 1-ին նյարդի ախտահարումներ

G52.1 Լեզվաընկալային նյարդի ախտահարումներ

Գանգային 9-րդ նյարդի ախտահարում

Լեզվաընկալային ներալգիա

G52.2 Թափառող նյարդի ախտահարումներ

Շնչաորովայնային (թոքաստամոքսային, պնևմոգաստրիկ) (10-րդ) նյարդի ախտահարում

G52.3 Ենթալեզվային նյարդի ախտահարումներ

Գանգային 12-րդ նյարդի ախտահարում

G52.7 Գանգային նյարդերի բազմակի ախտահարումներ

Գանգային բազմանյարդաբորբ (պոլիներիտ)

G52.8 Այլ ճշտված գանգային նյարդերի ախտահարումներ

G52.9 Գանգային նյարդի ախտահարում՝ չճշտված

**G53.0* Գանգային նյարդի ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ**

G53.0* Ներալգիա՝ առաջացած գոտևորող որքինից հետո (B02.2†)

Հետհերպեսային՝

- ծնկաձև հանգույցի հանգուցաբորբ (գանգլիոնիտ)
- եռորյակային (տրիգեմինալ) ներալգիա

G53.1* Գանգային նյարդերի բազմակի պարալիտիկ ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված վարակիչ և մակաբուծային հիվանդությունների ժամանակ (A00–B99†)

G53.2* Գանգային նյարդերի բազմակի պարալիտիկ ախտահարումներ՝ սարկոիդոզի ժամանակ (D86.8†)

G53.3* Գանգային նյարդերի բազմակի պարալիտիկ ախտահարումներ՝ նորագոյացությունների ժամանակ (C00–D48†)

G53.8* Գանգային նյարդի այլ ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ

**G54 Նյարդարմատի և հյուսակի ախտահարումներ
Բացառությամբ՝**

նյարդարմատների և հյուսակների ընթացիկ վնասվածքային ախտահարումների (տե՛ս նյարդերի վնասվածքները՝ ըստ մարմնի մասերի)

Միջողային սկավառակի ախտահարումներ (M50–M51)

ներալգիա կամ նյարդաբորբ (ներիտ)՝ ԱՀՃ (M79.2)

նյարդաբորբ կամ նյարդարմատի բորբոքում (ռադիկուլիտ)

- բազկային՝ ԱՀՃ (M54.1)

- գոտկային՝ ԱՀՃ (M54.1)
- գոտկասրբոսկրային՝ ԱՀՃ (M54.1)
- կրծքային՝ ԱՀՃ (M54.1)

ռադիկուլիտ՝ ԱՀՃ (M54.1)

ռադիկուլոպաթիա (նյարդարմատախտություն)՝ ԱՀՃ (M54.1)

սպոնդիլյոզ (M47.-)

G54.0 Բազկային հյուսակի ախտահարումներ

Կրծքային վերին անցքի համախտանիշ

G54.1 Գոտկասրբոսկրային հյուսակի ախտահարումներ

G54.2 Պարանոցային նյարդարմատի ախտահարումներ՝ այլ դասերում չդասակարգված

G54.3 Կրծքային նյարդարմատների ախտահարումներ՝ այլ դասերում չդասակարգված

G54.4 Գոտկասրբոսկրային նյարդարմատի ախտահարումներ՝ այլ դասերում

չդասակարգված

G54.5 Ներալգիկ ամիոտրոֆիա

Պարսոնաժ-Ալդրեն-Տուրների համախտանիշ (Parsonage-Aldren-Turner)

Ուսագոտու նյարդաբորբ (ներիտ)

G54.6 Վերջույթի ֆանտոմի համախտանիշ՝ ցավով

G54.7 Վերջույթի ֆանտոմի համախտանիշ՝ առանց ցավի

Վերջույթի ֆանտոմի համախտանիշ՝ ԱՀՃ

G54.8 Այլ նյարդարմատի և հյուսակի ախտահարումներ

G54.9 Նյարդարմատի և հյուսակի ախտահարում՝ չճշտված

G55* Նյարդարմատի և հյուսակի ճնշման համախտանիշեր՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

G55.0* Նյարդարմատի և հյուսակի ճնշման համախտանիշեր՝ նորագոյացությունների ժամանակ (C00-D48†)

G55.1* Նյարդարմատի և հյուսակի ճնշման համախտանիշեր՝ միջողային սկավառակների խանգարումների ժամանակ (M50-M51†)

G55.2* Նյարդարմատի և հյուսակի ճնշման համախտանիշեր՝ սպոնդիլյոզի ժամանակ (M47.-†)

G55.3 Նյարդարմատի և հյուսակի ճնշման համախտանիշեր՝ այլ դորսոպաթիաների ժամանակ (M45-M46†, M48.-†, M53-M54†)

G55.8 Նյարդարմատի և հյուսակի ճնշման համախտանիշեր՝ այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ

G56 Վերին վերջույթի մոնոնևրոպաթիա (միանյարդախտություն) Բացառությամբ՝

նյարդի ընթացիկ վնասվածքային վնասման (տե՛ս նյարդի վնասվածքները՝ ըստ մարմնի մասերի)

G56.0 Դաստակային թունելի համախտանիշ

G56.1 Միջային նյարդի (n. medianus) այլ ախտահարում

G56.2 Ծղիկային նյարդի (n. ulnaris) ախտահարում

Ծղիկային նյարդի ուշ (tardy, tardive) պարալիզ

G56.3 Ճաճանչային նյարդի (n. radialis) ախտահարում

G56.4 Կաուզալգիա

G56.8 Վերին վերջույթի այլ մոնոնևրոպաթիաներ

Վերին վերջույթի միջմատնային նևրոմա (նյարդուռուցք)

G56.9 Վերին վերջույթի մոնոնևրոպաթիա՝ չճշտված

G57 Ստորին վերջույթի մոնոնևրոպաթիաներ

Բացառությամբ՝

նյարդի ընթացիկ վնասվածքային ախտահարման (տե՛ս նյարդի վնասվածքները՝ ըստ մարմնի մասերի)

G57.0 Նստանյարդի ախտահարում (n. ischiadicus)

Բացառությամբ՝

իշիասի՝

- ԱՀՃ (M54.3)
- կապված միջողային սկավառակի վնասվածքի հետ (M51.1)

G57.1 Ազդրի ցավ՝ ոչ նորմալ զգայությամբ (meralgia paraesthetica)

Ազդրի կողմնային մաշկային նյարդի համախտանիշ

G57.2 Ազդրային նյարդի (n. femoralis) ախտահարում

G57.3 Կողմնային ծնկափոսային նյարդի ախտահարում

Նրբուլոքային (պերոնեալ) նյարդի պարալիզ

G57.4 Միջային ծնկափոսային նյարդի ախտահարում

G57.5 Գարշապարային (տարզալ) թունելի համախտանիշ

G57.6 Ներբանային նյարդի ախտահարում

Մորտոնի (Morton) մետատարզալգիա

G57.8 Ստորին վերջույթի այլ մոնոնևրոպաթիաներ

Ստորին վերջույթի միջմատային նևրոմա

G57.9 Ստորին վերջույթի մոնոնևրոպաթիա՝ չճշտված

G58 Այլ մոնոնևրոպաթիաներ

G58.0 Միջկողային նևրոպաթիա

G58.7 Բազմակի մոնոնևրիտ

G58.8 Այլ ճշտված մոնոնևրոպաթիաներ

G58.9 Մոնոնևրոպաթիա՝ չճշտված

G59* Մոնոնևրոպաթիա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

G59.0* Շաքարային մոնոնևրոպաթիա (E10-E14† ընդհանուր 4-րդ հատկանիշով՝ .4†)

G59.8* Այլ մոնոնևրոպաթիաներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

ՊՈԼԻՆԵՎՐՈՊԱԹԻԱՆԵՐ (ԲԱԶՄԱՆՅԱՐԴԱՆՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ԱՆՏԱՀԱՐՈՒՄՆԵՐ (G60-G64)

Բացառությամբ՝

ներալգիայի՝ ԱՀՃ (M79.2)

նյարդաբորբի (նևրիտ)՝ ԱՀՃ (M79.2)

ծայրամասային նյարդաբորբի՝ հղիության ժամանակ (O26.8)

ռադիկուլիտ (նյարդարմատաբորբի)՝ ԱՀՃ (M54.1)

G60 Ժառանգական և իդիոպաթիկ նևրոպաթիա (նյարդախտություն)

G60.0 Ժառանգական շարժողական (մոտոր) և զգացողական (սենսոր) ներոպաթիա Հիվանդություն՝

- Շարկո-Մարի-Տուֆի (Charcot-Marie-Tooth)
- Դեժերին-Սոտի (Déjerine-Sottas)

Ժառանգական շարժողական և զգացողական (սենսոր) ներոպաթիա՝ I-IV տեսակներ

Մանկական գերաճային (հիպերտրոֆիկ) ներոպաթիա

Նրբոլոքային մկանային ատրոֆիա (աքսոնային տեսակ) (գերաճային տեսակ)

Ռուսի-Լևիի համախտանիշ (Roussy-Lévy)

G60.1 Ռեֆսումի հիվանդություն (Refsum)

G60.2 Ներոպաթիա՝ զուգակցված ժառանգական ատաքսիայի (ապակարգություն) հետ

G60.3 Իդիոպաթիկ հարաճուն (պրոգրեսիվոդ) ներոպաթիա

G60.8 Այլ ժառանգական և իդիոպաթիկ ներոպաթիա

Մորվանի հիվանդություն (Morvan)

Նելատոնի համախտանիշ (Nelaton)

Զգացողական ներոպաթիա

- գերակշռող (դոմինանտային) ժառանգում
- ոչ գերակշռող (ռեցեսիվային) ժառանգում

G60.9 Ժառանգական և իդիոպաթիկ ներոպաթիա՝ չճշտված

G61 Բորբոքային պոլիներոպաթիա (բազմանյարդախտություն)

G61.0 Գիյեն-Բարեի համախտանիշ

Սուր (հետ-)վարակային պոլիներիտ (բազմանյարդաբորբ)

Միլեր Ֆիշերի համախտանիշ

G61.1 Շիճուկային ներոպաթիա

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G61.8 Այլ բորբոքային պոլիներոպաթիաներ

G61.9 Բորբոքային պոլիներոպաթիա՝ չճշտված

G62 Այլ պոլիներոպաթիաներ

G62.0 Դեղորայքային պոլիներոպաթիա

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G62.1 Ալկոհոլային պոլիներոպաթիա

G62.2 Պոլիներոպաթիա՝ առաջացած այլ թունավոր նյութերից

Թունավոր նյութը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G62.8 Այլ ճշտված պոլիներոպաթիաներ

Ճառագայթային պոլիներոպաթիա

Պատճառը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G62.9 Պոլիներոպաթիա՝ չճշտված

Ներոպաթիա՝ ԱՀՃ

G63* Պոլիներոպաթիա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

G63.0* Պոլիներոպաթիա՝ այլ դասերում դասակարգված վարակիչ և մակարուծային հիվանդությունների ժամանակ

Պոլիներոպաթիա՝ հետևյալ դեպքերում՝

- դիֆթերիա (A36.8†)
- ինֆելցիոն մոնոնուկլեոզ (B27.-†)
- լեպտա (A30.-†)
- Լայմի հիվանդություն (A69.2†)
- խոզուկ (B26.8†)
- հետհերպեսային (B02.2†)
- ուշ սիֆիլիս (A52.1†)
- բնածին ուշ սիֆիլիս (A50.4†)
- տուբերկուլյոզ (A17.8†)

G63.1* Պոլիներոպաթիա՝ նորագոյացությունների ժամանակ (C00–D48†)

G63.2* Շաքարային դիաբետի պոլիներոպաթիա (E10-E14 ընդհանուր 4-րդ հատկանիշով՝ .4†)

G63.3* Պոլիներոպաթիա՝ այլ ներզատական հիվանդությունների և նյութափոխանակության խանգարումների ժամանակ (E00-E07†, E15-E16†, E20-E34†, E70-E89†)

G63.4* Պոլիներոպաթիա՝ թերսնուցման ժամանակ (E40-E64†)

G63.5* Պոլիներոպաթիա՝ շարակցական հյուսվածքի համակարգային ախտահարումների ժամանակ (M30-M35†)

G63.6* Պոլիներոպաթիա՝ այլ մկանակմախքային ախտահարումների ժամանակ (M00-M25†, M40-M96†)

G63.8* Պոլիներոպաթիա՝ այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ
Ուրեմիկ ներոպաթիա (N18.-†)

G64 Ծայրամասային նյարդային համակարգի այլ ախտահարումներ Ներառյալ՝

ծայրամասային նյարդային համակարգի խանգարումը՝ ԱՀՃ

ՄԿԱՆԱՆՅԱՐԴԱՅԻՆ ՄԻԱԿՑՄԱՆ (ՆՅԱՐԴԱՄԿԱՆԱՅԻՆ ՍԻՆԱՊՍԻ) ԵՎ ՄԿԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ (G70-G73)

G70 Ծանր միասթենիա (Myasthenia gravis) և մկանանյարդային այլ խանգարումներ Բացառությամբ՝

բոտուլիզմի (A05.1)

նորածնի անցողիկ ծանր միասթենիայի (transient neonatal myasthenia gravis) (P94.0)

G70.0 Ծանր միասթենիա (Myasthenia gravis)

Եթե հիվանդությունը հարուցված է դեղամիջոցով, ապա այն նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G70.1 Թունավորմամբ պայմանավորված (տոքսիկ) մկանանյարդային խանգարումներ Թունավոր նյութը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G70.2 Բնածին և ձեռքբերովի (զարգացման հետ կապված) միասթենիա

G70.8 Մկանանյարդային այլ ճշտված խանգարումներ

G70.9 Մկանանյարդային խանգարում՝ չճշտված

**G71 Մկանների առաջնային ախտահարումներ
Բացառությամբ՝**

բնածին բազմակի արթրոգրիպոզի (arthrogryposis multiplex congenita) (Q74.3)
նյութափոխանակության խանգարումների (E70-E90)
միոզիտի (M60.-)

G71.0 Մկանային դիստրոֆիա

Մկանային դիստրոֆիա (սնուցման խանգարում)՝

- աուտոսոմ ռեցեսիվային, մանկական տեսակ, Դյուշենի կամ Բեկերի տեսակին նմանվող
- բարորակ (Բեկերի, Becker)
- բարորակ թիականրբոլոքային՝ վաղ առաջացող կոնտրակտուրաներով (Էմերի-Դրեյֆուսի, Emery-Dreifuss)
- հեռավոր (դիստալ)
- դիմաթիակաբազկային
- վերջույթ-գոտի (ուսագոտի, կոնքագոտի) տեսակի
- ակնային
- ակնաընկալային
- թիականրբոլոքային
- ծանր (Դյուշենի, Duchenne)

Բացառությամբ՝

բնածին մկանային դիստրոֆիայի՝

- ԱՀՃ (G71.2)
- մկանաթելի յուրահատուկ (ճշտված) ձևաբանական փոփոխություններով (G71.2)

G71.1 Միոտոնիկ խանգարումներ

Միոտոնիկ դիստրոֆիա (Ստեյներտի, Steinert)

Միոտոնիա՝

- խոնդրոդիստրոֆիկ
- դեղորայքային
- ախտանիշային

Բնածին միոտոնիա (Myotonia congenita)

- ԱՀՃ
- դոմինանտային (Թոմսենի, Thomsen)
- ռեցեսիվային (Բեկերի, Becker)

Նեյրոմիոտոնիա (Իսահակի, Isaacs)

Բնածին պարամիոտոնիա

Պսևդոմիոտոնիա

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G71.2 Բնածին միոպաթիաներ

Բնածին մկանային դիստրոֆիա՝

- ԱՀՃ
- մկանաթելի յուրահատուկ ձևաբանական (մորֆոլոգիական) խանգարումներով

Հիվանդություն՝

- կենտրոնական կորիզի
- փոքր կորիզային

- բազմակորիզային
Մկանաթելի տեսակի անհամամասնություն (դիսպրոպորցիա)
Միոպաթիա
- միոտոբուլյար (կենտրոնական կորիզային)
- նեմալինային

G71.3 Միտոքոնդրիումային միոպաթիա՝ այլ դասերում չդասակարգված

G71.8 Մկանների առաջնային այլ ախտահարումներ (խանգարումներ)

G71.9 Մկանների առաջնային ախտահարում (խանգարում)՝ չճշտված
ժառանգական միոպաթիա՝ ԱՀԾ

G72 Այլ միոպաթիաներ

Բացառությամբ՝

- բնածին բազմակի արթրոգրիպոզի (arthrogryposis multiplex congenita) (Q74.3)
- դերմատոպոլիմիոզիտի (M33.-)
- մկանի իշեմիկ ինֆարկտի (M62.2)
- միոզիտի (M60.-)
- պոլիմիոզիտի (M33.2)

G72.0 Դեղորայքային միոպաթիա

Դեղամիջոցը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G72.1 Ալկոհոլային միոպաթիա

G72.2 Միոպաթիա՝ առաջացած այլ թունավոր (տոքսիկ) նյութերից

Թունավոր նյութը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G72.3 Պարբերական պարալիզ

Պարբերական պարալիզ (ընտանեկան)՝

- հիպերկալիեմիկ
- հիպոկալիեմիկ
- միոտոնիկ
- նորմոկալիեմիկ

G72.4 Բորբոքային միոպաթիա՝ այլ դասերում չդասակարգված

G72.8 Այլ ճշտված միոպաթիաներ

G72.9 Միոպաթիա՝ չճշտված

G73* Մկանանյարդային միակցման և մկանի ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

G73.0* Միասթենիկ համախտանիշ՝ ներզատական հիվանդությունների ժամանակ
Միասթենիկ համախտանիշ հետևյալ դեպքերում՝

- շաքարային դիաբետի ամիոտրոֆիա (E10-E14† ընդհանուր 4-րդ հատկանիշով՝ .4†)
- թիրեոտոքսիկոզ (հիպերթիրեոիդիզմ) (E05.-†)

G73.1* Իտոն-Լամբերտի (Eaton-Lambert) համախտանիշ (C00-D48†)

G73.2* Այլ միասթենիկ համախտանիշեր՝ ուռուցքային հիվանդության (նորագոյացության) ժամանակ (C00-D48†)

G73.3* Միասթենիկ համախտանիշեր՝ այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ

G73.4* Միոպաթիա՝ այլ դասերում դասակարգված վարակիչ և մակաբուծային հիվանդությունների ժամանակ

G73.5* Միոպաթիա՝ առաջացած ներզատական հիվանդությունների ժամանակ
Միոպաթիա հետևյալ դեպքերում՝

- հիպերպարաթիրեոիդիզմ (E21.0-E21.3†)
- հիպոպարաթիրեոիդիզմ (E20.-†)

Թիրեոտոքսիկ միոպաթիա (E05.-†)

G73.6* Միոպաթիա՝ նյութափոխանակության խանգարումների ժամանակ
Միոպաթիա հետևյալ դեպքերում՝

- գլիկոգենի կուտակման հիվանդություն (E74.0†)
- ճարպի կուտակման խանգարումներ (E75.-†)

G73.7* Միոպաթիա՝ այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ
Միոպաթիա հետևյալ դեպքերում՝

- ռևմատոիդ արթրիտ (M05-M06†)
- սկլերոդերմիա (M34.8†)
- «չորության» համախտանիշ (Շեգրենի, Sjögren) (M35.0†)
- համակարգային կարմիր գայլախտ (lupus erythematosus) (M32.1†)

ՈՒՂԵՂԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՉ ԵՎ ԱՅԼ ՊԱՐԱԼԻՏԻԿ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԵՐ (G80-G83)

G80 Ուղեղային պարալիզ (լուծանք)

Բացառությամբ՝

ժառանգական սպաստիկ պարապլեգիայի (G11.4)

G80.0 Սպաստիկ կվադրիպլեգիկ ուղեղային պարալիզ
Սպաստիկ տետրապլեգիկ ուղեղային պարալիզ

G80.1 Սպաստիկ դիպլեգիկ ուղեղային պարալիզ
Բնածին սպաստիկ պարալիզ (ուղեղային)
Սպաստիկ ուղեղային պարալիզ՝ ԱՀՃ

G80.2 Սպաստիկ հեմիպլեգիկ ուղեղային պարալիզ

G80.3 Դիսկինետիկ ուղեղային պարալիզ
Աթետոիդ ուղեղային պարալիզ
Դիստոնիկ ուղեղային պարալիզ

G80.4 Ատաքսիկ ուղեղային պարալիզ

G80.8 Ուղեղային պարալիզի այլ ձև
Ուղեղային պարալիզի խառը համախտանիշեր

G80.9 Ուղեղային պարալիզ՝ չճշտված
Ուղեղային պարալիզ՝ ԱՀՃ

G81 Հեմիպլեգիա

Ծանոթություն:

Առաջնային ծածկագրման համար այս դասը պետք է օգտագործվի միայն այն ժամանակ, երբ հեմիպլեգիան (լրիվ) (ոչ լրիվ) նշվում է առանց հետագա ճշտման, կամ հաստատվում է, որ այն վաղուց առկա խանգարում է կամ երկարատև գոյություն ունի, սակայն պատճառը ճշտված չէ: Այս դասը կիրառում են նաև բազմակի ծածկագրման ժամանակ՝ ցանկացած պատճառից առաջացած հեմիպլեգիայի ձևերի նույնականացման նպատակով:

Բացառությամբ՝

բնածին ուղեղային պարալիզի (G80.-)

G81.0 Թորշոմած հեմիպլեգիա

G81.1 Սպաստիկ հեմիպլեգիա
G81.9 Հեմիպլեգիա՝ չճշտված

G82 Պարապլեգիա և փերրապլեգիա

Ծանոթություն:

Առաջնային ծածկագրման համար այս դասը պետք է օգտագործվի միայն այն ժամանակ, երբ թվարկված վիճակները նշվում են առանց հետագա ճշտման կամ հաստատվում է, որ այն վաղուց առկա խանգարում է կամ երկարատև գոյություն ունի, սակայն պատճառը ճշտված չէ: Այս դասը կիրառում են նաև բազմակի ծածկագրման ժամանակ՝ ցանկացած պատճառից առաջացած այս վիճակների նույնականացման նպատակով:

Բացառությամբ՝

- բնածին ուղեղային պարալիզի (G80.-)
- G82.0 Թորշոնած պարապլեգիա
- G82.1 Սպաստիկ պարապլեգիա
- G82.2 Պարապլեգիա՝ չճշտված
 - Երկու ստորին վերջույթների պարալիզ՝ ԱՀՃ
 - Պարապլեգիա (ստորին)՝ ԱՀՃ
- G82.3 Թորշոնած տետրապլեգիա
- G82.4 Սպաստիկ տետրապլեգիա
- G82.5 Տետրապլեգիա՝ չճշտված
 - Կվադրիպլեգիա՝ ԱՀՃ

G83 Այլ պարալիտիկ համախտանիշեր

Ծանոթություն:

Առաջնային ծածկագրման համար այս դասը պետք է օգտագործվի միայն այն ժամանակ, երբ թվարկված վիճակները նշվում են առանց հետագա ճշտման կամ հաստատվում է, որ այն վաղուց առկա խանգարում է կամ երկարատև գոյություն ունի, սակայն պատճառը ճշտված չէ: Այս դասը կիրառում են նաև բազմակի ծածկագրման ժամանակ՝ ցանկացած պատճառից առաջացած այս վիճակների նույնականացման նպատակով:

Ներառյալ՝

- պարալիզը (լրիվ), (ոչ լրիվ), բացի (G80-G82) դասում նշվածից
- G83.0 Վերին վերջույթների դիպլեգիա
 - Դիպլեգիա (վերին)
 - Երկու վերին վերջույթների պարալիզ
- G83.1 Ստորին վերջույթի մոնոպլեգիա
 - Ստորին վերջույթի պարալիզ
- G83.2 Վերին վերջույթի մոնոպլեգիա
 - Վերին վերջույթի պարալիզ
- G83.3 Մոնոպլեգիա՝ չճշտված
- G83.4 Ձիու պոչի համախտանիշ
 - Ներոզեն միզապարկ՝ կապված ձիու պոչի համախտանիշի հետ

Բացառությամբ՝

- ողնուղեղային միզապարկի՝ ԱՀՃ (G95.8)
- G83.8 Այլ ճշտված պարալիտիկ համախտանիշեր
 - Տողի պարալիզ (հետէպիլեպտիկ)

G83.9 Պարալիտիկ համախտանիշ՝ չճշտված

ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ (G90-G99)

G90 Վեգետատիվ (ավտոնոմ) նյարդային համակարգի խանգարումներ Բացառությամբ՝

ալկոհոլի հետևանքով վեգետատիվ նյարդային համակարգի դիսֆունկցիայի
(G31.2)

G90.0 Իդիոպաթիկ ծայրամասային վեգետատիվ ներուպաթիա
Ուշաթափություն՝ կապված կարոտիդային ծոցի գրգռման հետ

G90.1 Ընտանեկան դիզավտոնոմիա (Riley-Day)

G90.2 Հորների համախտանիշ
Բեռնար (Հորների) համախտանիշ

G90.3 Բազմահամակարգային (մուլտիսիստեմային) դեգեներացիա
Նեյրոգեն օրթոստատիկ հիպոտենզիա (Shy-Drager)

Բացառությամբ՝
օրթոստատիկ հիպոտենզիայի՝ ԱՀՃ (I95.1)

G90.4 Վեգետատիվ դիզոնֆլեքսիա

G90.8 Վեգետատիվ նյարդային համակարգի այլ խանգարումներ

G90.9 Վեգետատիվ նյարդային համակարգի խանգարում՝ չճշտված

G91 Հիդրոցեֆալիա

Ներառյալ՝
ծեռքբերովի հիդրոցեֆալիան

Բացառությամբ՝
հիդրոցեֆալիայի՝
• բնածին (Q03.-)
• բնածին տոքսոպլազմոզի հետևանքով առաջացած (P37.1)

G91.0 Հաղորդակցվող (կոմունիկատիվ) հիդրոցեֆալիա

G91.1 Խցանող (օբստրուկտիվ) հիդրոցեֆալիա

G91.2 Հիդրոցեֆալիա՝ նորմալ ներգանգային ճնշմամբ

G91.3 Հետվնասվածքային հիդրոցեֆալիա՝ չճշտված

G91.8 Այլ հիդրոցեֆալիա

G91.9 Այլ հիդրոցեֆալիա՝ չճշտված

G92 Թունավոր (տոքսիկ) էնցեֆալոպաթիա

Թունավոր նյութը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G93 Գլխուղեղի այլ ախտահարումներ

G93.0 Ուղեղի բշտեր (կիստաներ)
Ոստայնենու (արախնոթիդային) բուշտ (կիստա)
Պորէնցեֆալիկ բուշտ (ծեռքբերովի)

Բացառությամբ՝
նորածնի ծեռքբերովի հարփորոքային (պերիվենտրիկուլյար) բշտերի (P91.1)
բնածին ուղեղային բշտերի (Q04.6)

G93.1 Ուղեղի անթթվածնության (անօքսիկ) ախտահարում՝ այլ դասերում
չդասակարգված

Բացառությամբ՝

վիճակը բարդացնող՝

- վիժման, արտարգանդային կամ մոլյար հղիության (O 00-O 07, O 08.8)
- հղիության, ծննդի կամ ծննդաբերության (O29.2, O74.3, O89.2)
- վիրահատական և բժշկական օգնության (T80-T88)

նորածնային անօքսիայի (P21.9) դեպքերի

G93.2 Ներգանգային բարորակ գերճնշում (հիպերտենզիա)

Բացառությամբ՝

հիպերտենզիոն էնցեֆալոպաթիայի (I 67.4)

G93.3 Հետվիրուսային հոգնածության համախտանիշ

Բարորակ միալգիկ էնցեֆալոմիելիտ

G93.4 Էնցեֆալոպաթիա՝ չճշտված

Բացառությամբ՝

էնցեֆալոպաթիայի՝

- ալկոհոլային (G31.2)
- թունավոր (G92)

G93.5 Գլխուղեղի սեղմում (ճզմում)

- սեղմում (կոմպրեսիա)
 - ճողվածք
- } գլխուղեղի (ուղեղաբնի, ցողունի)

Բացառությամբ՝

գլխուղեղի վնասվածքային սեղմման դիֆուզ (S06.2)

գլխուղեղի վնասվածքային սեղմման դիֆուզ

- օջախային (ֆոկալ) (S06.3)

G93.6 Գլխուղեղի այտուց

Բացառությամբ՝

գլխուղեղի այտուցի՝

- ծննդաբերական վնասվածքի հետևանքով առաջացած (P11.0)
- վնասվածքային (S06.1)

G93.7 Ռեյի համախտանիշ

Արտաքին գործոնը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G93.8 Գլխուղեղի այլ ճշտված ախտահարումներ

Ճառագայթային (պոստռադիացիոն) էնցեֆալոպաթիա

Արտաքին գործոնը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

G93.9 Գլխուղեղի ախտահարում՝ չճշտված

**G94* Գլխուղեղի այլ ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված
հիվանդությունների ժամանակ**

G94.0* Ուղեղի ջրգողություն (հիդրոցեֆալիա)՝ առաջացած այլ դասերում
դասակարգված վարակիչ և մակաբուծային հիվանդությունների ժամանակ (A00-
B99†)

G94.1* Ուղեղի ջրգողություն՝ առաջացած ուռուցքային հիվանդության ժամանակ (C00-
D48†)

G94.2* Ուղեղի ջրգողություն՝ առաջացած այլ դասերում դասակարգված այլ
հիվանդությունների ժամանակ

G94.8* Գլխուղեղի այլ ճշտված ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ (C00-D48†)

G95 Ողնուղեղի այլ հիվանդություններ

Բացառությամբ՝

միելիտի (G04.-)

G95.0 Սիրինգոմիելիա և սիրինգոբուլբիա

G95.1 Անոթային (վասկուլյար) միելոպաթիաներ՝

Ողնուղեղի սուր ինֆարկտ (էմբոլիկ) (ոչ էմբոլիկ)

Ողնուղեղի զարկերակային մակարդուկագոյացում (թրոմբոզ)

Հեմատոմիելիա

Ոչ թարախածին ներողնաշարային ֆլեբիտ և թրոմբոֆլեբիտ

Ողնուղեղի այտուց

Ենթասուր նեկրոտիկ միելոպաթիա

Բացառությամբ՝

ներողնաշարային ֆլեբիտի և թրոմբոֆլեբիտի՝ բացի ոչ թարախածին տեսակից (G08)

G95.2 Ողնուղեղի սեղմում կամ ճզմում՝ չճշտված

G95.8 Ողնուղեղի այլ ճշտված հիվանդություններ

Ողնուղեղային միզապարկ՝ ԱՀՃ

Միելոպաթիա՝

- դեղորայքային
- ճառագայթային

Արտաքին գործոնը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

Բացառությամբ՝

նեյրոգեն միզապարկի՝

- ԱՀՃ (N31.9)
- պայմանավորված ձիու պոչի (cauda equina) համախտանիշով (G83.4)

միզապարկի նյարդամկանային դիսֆունկցիայի՝ առանց նշելու ողնուղեղի ախտահարման մասին (N31.-)

G95.9 Ողնուղեղի հիվանդություն՝ չճշտված

Միելոպաթիա՝ ԱՀՃ

G96 Կենտրոնական նյարդային համակարգի այլ խանգարումներ

G96.0 Ուղեղ-ողնուղեղային հեղուկի արտահոսք

Բացառությամբ՝

ողնուղեղային պունկցիայի անցքից արտահոսքի (G97.0)

G96.1 Ուղեղաթաղանթների ախտահարումներ՝ այլ դասերում չդասակարգված

Մենինգիալ կպումներ (ուղեղային) (ողնուղեղային)

G96.8 Կենտրոնական նյարդային համակարգի այլ ճշտված խանգարումներ

G96.9 Կենտրոնական նյարդային համակարգի խանգարում (ախտահարում)՝ չճշտված

G97 Նյարդային համակարգի խանգարումներ բժշկական միջամտությունից հետո (պոսոպորոցեդուրային)՝ այլ դասերում չդասակարգված

G97.0 Ուղեղ-ողնուղեղային հեղուկի արտահոսք՝ ողնուղեղային պունկցիայի անցքից

G97.1 Ողնուղեղային և գոտկային պունկցիային հաջորդող այլ հետևանք (ռեակցիա)

- G97.2 Ներգանգային գերճնշում (հիպերտենզիա)՝ փորոքային շունտավորումից հետո
- G97.8 Նյարդային համակարգի այլ խանգարումներ՝ բժշկական միջամտությունից հետո (պոստպրոցեդուրային)
- G97.9 Նյարդային համակարգի խանգարում բժշկական միջամտությունից հետո՝ չճշտված

G98 Նյարդային համակարգի այլ խանգարումներ՝ այլ դասերում չդասակարգված Ներառյալ՝

Նյարդային համակարգի խանգարում ԱՀՃ

G99* Նյարդային համակարգի այլ խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

- G99.0* Վեգետատիվ (ավտոնոմ) ներոպաթիա՝ ներզատական և մետաբոլիկ հիվանդությունների ժամանակ
Ամիլոիդ վեգետատիվ ներոպաթիա (E85.-†)
Դիաբետիկ վեգետատիվ ներոպաթիա (E10-E14 ընդհանուր 4-րդ հատկանիշով՝ .4†)
- G99.1* Վեգետատիվ նյարդային համակարգի այլ խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- G99.2* Միելոպաթիա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
Առաջնային ողնուղեղային և ողնաշարային զարկերակի ճնշման (սեղմման) համախտանիշ (M47.0†)
Միելոպաթիա հետևյալ դեպքերում՝
- միջողնային սկավառակի խանգարումներ (M50.0†, M51.0†)
 - ուռուցքային հիվանդություն (C00–D48†)
 - սպոնդիլոզ (M47.-†)
- G99.8* Նյարդային համակարգի այլ ճշտված խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
Ուրեմիկ պարալիզ (N18.5†)

**ԳԼՈՒԽ VII ԱԶՔԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՊԱՐԱՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ԷյՋ00 - ԷյՋ59) (H00 - H59)**

Բացառությամբ՝

պերինատալ շրջանում ծագող առանձին վիճակների (P00-P96)
որոշ վարակիչ և մակաբուժային հիվանդությունների (A00-B99)
հղիության, ծննդաբերության և հետծննդաբերական շրջանների
բարդությունների (O00-O99)
բնածին (զարգացման) արատների, դեֆորմացիաների և քրոմոսոմային
անկանոնությունների (Q00-Q99)
ներզատական համակարգի հիվանդությունների, սնուցման և
նյութափոխանակության խանգարումների (E00-E90)
վնասվածքների, թունավորումների և արտաքին պատճառների
ներգործության որոշ այլ հետևանքների (S00-T98)
նորագոյացությունների (C00-D48)
ախտանիշերի, նշանների, կլինիկական և լաբորատոր հետազոտություններով
հայտնաբերված ախտաբանական շեղումների՝ այլ դասերում չդասակարգված
(R00-R99)

Սույն գլուխը ներառում է հետևյալ բաժինները

H00-H06 Կոպի, արցունքային համակարգի և ակնակապճի հիվանդություններ
H10-H13 Շաղկապենու (կոնյունկտիվայի) հիվանդություններ
H15-H22 Սպիտապատյանի (սկլերա), եղջերենու, ծիածանաթաղանթի և թարթչային
մարմնի հիվանդություններ
H25-H28 Ոսպնյակի հիվանդություններ
H30-H36 Անոթային թաղանթի և ցանցենու հիվանդություններ
H40-H42 Գլաուկոմա
H43-H45 Ապակենման մարմնի և ակնազնդի հիվանդություններ
H46-H48 Տեսողական նյարդի և տեսողական ուղիների հիվանդություններ
H49-H52 Աչքի մկանների հիվանդություններ, աչքերի համաձայնեցված շարժման,
ակոմոդացիայի (հարմարեցման) և ռեֆրակցիայի (լուսաբեկման)
խանգարումներ
H53-H54 Տեսողության խանգարումներ և կուրություն
H55-H59 Աչքի և նրա հավելյալ ապարատի այլ հիվանդություններ

Աստիգմատիզմը են հետևյալ դասերը.

H03* Կոպի ախտահարումներ՝ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
H06* Արցունքային համակարգի և ակնակապճի ախտահարումներ՝ այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ
H13* Շաղկապենու ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված
հիվանդությունների ժամանակ
H19* Սկլերայի (սպիտապատյանի) և եղջերենու ախտահարումներ՝ այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ
H22* Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի ախտահարումներ՝ այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ

- H28* Կատարակտ (ոսպնյակի պղտորում) և կատարակտի այլ ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- H32* Խորհոռետիանալ (անոթաթաղանթ-ցանցենային) խանգարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- H36* Ցանցենու ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- H42* Գլաուկոմա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- H45* Ապակենման մարմնի և ակնակապճի ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- H48* Տեսողական (2-րդ) նյարդի և տեսողական ուղիների ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
- H58* Աչքի և նրա հավելյալ ապարատի այլ ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

**ԿՈՊԵՐԻ, ԱՐՑՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱԿՆԱԿԱՊՃԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(H00-H06)**

H00 Ակնագարիկ (*hordeolum*) և կոպի կոչպուկ (*chalazion*)

- H00.0 Ակնագարիկ (հորդեոլում) և կոպեզրի այլ խորը բորբոքում
- աբսցես (թարախակույտ)
 - ֆուրունկուլ
 - ակնագարիկ (գարեհատ)
- } կոպի
- H00.1 Կոպի խալազիոն

H01 Կոպի այլ բորբոքումներ

- H01.0 Բլեֆարիտ (կոպաբորբ)
Բացառությամբ՝
բլեֆարոկոնյունկտիվիտի (H10.5)
- H01.1 Կոպի ոչ վարակային դերմատոզ (մաշկախտ)
- Դերմատիտ (մաշկաբորբ)՝
 - ալերգիկ
 - շփավարակային (կոնտակտային)
 - թեփուկամաշկություն (էկզեմատոզ)
 - սկավառակաձև գայլախտ (discoid lupus erythematosus)
 - քսերոդերմա (չորամաշկություն)
- } կոպի
- H01.8 Կոպի ճշտված այլ բորբոքում
- H01.9 Կոպի բորբոքում՝ չճշտված

H02 Կոպի այլ խանգարումներ

- Բացառությամբ՝**
կոպի զարգացման բնածին արատների (Q10.0-Q10.3)
- H02.0 Կոպեզրի ներշրջում (էնտրոպիոն) և կոպի տրիխիազ
- H02.1 Կոպեզրի արտաշրջում (էկտրոպիոն)
- H02.2 Լագոֆթալմ («նապաստակի աչք»)
- H02.3 Բլեֆարոխալազիս (կոպաթուլացում)
- H02.4 Կոպի պտոզ

H02.5 Կոպի ֆունկցիայի վրա ներագրող այլ խանգարումներ
Անկիլոբլեֆարոն
Բլեֆարոֆիմոզ
Կոպի ռետրակցիա

Բացառությամբ՝

- բլեֆարոսպազմի (G24.5)
- մկանային կծկանքի (տիկի) (հոգեծին) (F95.-)
 - օրգանական (G25.6)

H02.6 Կոպի քսանթելազմա

H02.7 Կոպի և շուրջակնային շրջանի կազմափոխական խանգարումներ՝

- Քլոազմա
 - Մադարոզ
 - Վիտիլիգո
- } կոպի

H02.8 Կոպի ճշտված այլ խանգարումներ՝

Կոպեզրի հիպերտրիխոզ
Կոպի օտար մարմին

H02.9 Կոպի հիվանդություն՝ չճշտված

H03* Կոպի ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

H03.0* Կոպի մակաբուծային վարակ (ախտահարում)՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

Կոպի մաշկաբորբ՝ առաջացած դեմոդեքս (demodex) տզի տեսակներից (B88.0†)

Կոպի մակաբուծային ախտահարում հետևյալ հիվանդությունների դեպքում՝

- լեյշմանիազ (B55.-†)
- լոիազիս (loiasis) (B74.3†)
- օնխոցերկոզ (B73†)
- ֆթիրիազ (ոջլոտություն) (B85.3†)

H03.1* Կոպի ախտահարում՝ առաջացած այլ վարակիչ հիվանդությունների ժամանակ՝ այլ դասերում դասակարգված

Կոպի ախտահարում հետևյալ հիվանդությունների ժամանակ՝

- հասարակ տենդաբշտիկով (հերպես վիրուսային, herpes simplex) վարակ (B00.5†)
- բոր, բորոտություն (A30.-†)
- կոնտագիոզ մոլլուսկ (molluscum contagiosum) (B08.1†)
- տուբերկուլյոզ (A18.4†)
- ֆրամբեզիա (արևադարձային գրանուլոմա, էնդեմիկ տրեպոնեմատոզ) (yaws) (A66.-†)
- գոտևորող որքին (B02.3†)

H03.8* Կոպի ախտահարում՝ առաջացած այլ դասերում դասակարգված այլ հիվանդությունների ժամանակ

Կոպի ախտահարում՝ առաջացած իմպետիգոյի (impetigo) ժամանակ (L01.0†)

H04 Արցունքային համակարգի հիվանդություններ

Բացառությամբ՝

արցունքային համակարգի բնածին արատների (Q10.4-Q10.6)

H04.0 Արցունքագեղձաբորբ (դակրիոադենիտ)

Արցունքագեղձի քրոնիկ գերաճ (հիպերտրոֆիա)

H04.1 Արցունքագեղձի այլ հիվանդություններ
Արցունքաբուշտ (դակրիոփս)
Չոր աչքի համախտանիշ
Արցունքային՝

- բուշտ (կիստա)
- գեղձի ապաճում (ատրոֆիա)

H04.2 Էպիֆորա (առատ արցունքահոսություն)

H04.3 Արցունքատար ուղիների սուր և չճշտված բորբոքում

- Դակրիոցիստիտ (արցունքապարկի բորբոքում) (ֆլեգմոնոզ)
- Դակրիոպերիցիստիտ (արցունքապարկի բորբոքում)
- Կանալիկուլիտ (արցունքային խողովակիկների բորբոքում)

} սուր, ենթասուր կամ չճշտված

Բացառությամբ՝

նորածնի դակրիոցիստիտ (արցունքապարկի բորբոքում) (P39.1)

H04.4 Արցունքատար ուղիների քրոնիկ բորբոքում

- Արցունքապարկի բորբոքում
- Արցունքային՝
 - կանալիկուլիտ (խողովակիկների բորբոքում)
 - մուկոցելե (լորձապարկ)

} քրոնիկ

H04.5 Արցունքատար ուղիների նեղացում (ստենոզ) և անբավարարություն

Դակրիոլիթ (արցունքային քարեր)

Էվերսիա (արցունքակետի արտաշրջում)

Նեղացում արցունքային՝

- խողովակիկի
- ծորանի
- պարկի

H04.6 Արցունքատար ուղիների այլ փոփոխություններ

Արցունքային խուղակ

H04.8 Արցունքային համակարգի այլ հիվանդություններ

H04.9 Արցունքային համակարգի հիվանդություն՝ չճշտված

H05 Ակնակապճի հիվանդություններ

Բացառությամբ՝

ակնակապճի բնածին արատների (Q10.7)

H05.0 Ակնակապճի փափուկ հյուսվածքների սուր բորբոքում

- Աբսցես (թարախակույտ)
- Բջջանքաբորբ (ցելյուլիտ)
- Օստեոմիելիտ
- Պերիօստիտ (վերնոսկրաբորբ)

} ակնակապճի

Տենոնիտ (տենոնյան պատյանի բորբոքում)

H05.1 Ակնակապճի քրոնիկ բորբոքային հիվանդություններ

Ակնակապճի գրանուլոմա (հատիկուռուցք)

H05.2 Արտակնության (էկզոֆթալմի) վիճակներ

Ակնագնդի տեղաշարժ (կողմնային)՝ ԱՀՃ

- արյունազեղում
- այտուց

} ակնակապճի

H05.3 Ակնակապճի դեֆորմացիա

- ապաճում (ատրոֆիա)
- էկզոստոզ

} ակնակապճի

H05.4 Ներակնություն (enophthalmos)

H05.5 Թափանցող վերքից հետո ակնակապճում հին և չհեռացված օտար մարմին
Ռետրոբուլբար (հետակնագնդային) օտար մարմին

H05.8 Ակնակապճի այլ հիվանդություններ
Ակնակապճի բուշտ (կիստա)

H05.9 Ակնակապճի հիվանդություն՝ չճշտված

H06* Արցունքային համակարգի և ակնակապճի ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

H06.0* Արցունքային համակարգի ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ

H06.1* Ակնակապճի մակարածային ինֆեստացիա՝ առաջացած այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ
Ակնակապճի պարկաճիճվային (էփինոկոկ) վարակ (B67.-†)
Ակնակապճի միազ (B87.2†)

H06.2* Դիսթրոֆիկ էկզոֆթալմ (արտակնություն՝ առաջացած վահանաձև գեղձի
ֆունկցիայի խանգարման ժամանակ) (E05.-.†)

H06.3* Ակնակապճի այլ ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ

**ՇԱՂԿԱՊԵՆՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(H10-H13)**

H10 Շաղկապենաբորբ (կոնյունկտիվիտ)

Բացառությամբ՝

կերատոկոնյունկտիվիտի (H16.2)

H10.0 Լորձաթարախային շաղկապենաբորբ

H10.1 Սուր ատոպիկ շաղկապենաբորբ

H10.2 Սուր այլ շաղկապենաբորբեր

H10.3 Սուր շաղկապենաբորբ՝ չճշտված

Բացառությամբ՝

նորածինների ակնաբորբի (ophthalmia neonatorum) (P39.1)

H10.4 Քրոնիկ շաղկապենաբորբ (կոնյունկտիվիտ)

H10.5 Բլեֆարոկոնյունկտիվիտ (կոպաշաղկապենաբորբ)

H10.8 Այլ շաղկապենաբորբեր

H10.9 Շաղկապենաբորբ՝ չճշտված

H11 Շաղկապենու այլ հիվանդություններ

Բացառությամբ՝

կերատոկոնյունկտիվիտի (H16.2)

H11.0 Պտերիգիում (մսամուլ, pterygium)

Բացառությամբ՝

կեղծ պտերիգիումի (H11.8)

H11.1 Շաղկապենու կազմափոխում և նստվածք (շերտավորում)
Շաղկապենային՝

- արգիրոզ (արգիրիա)

- քարեր
- գունավորում (պիգմենտացիա)
- չորություն (քսերոզ)՝ ԱՀՃ

H11.2 Շաղկապենու սպիներ
Սիմբլեֆարոն

H11.3 Շաղկապենու արյունազեղում

Ենթաշաղկապենային (ենթալորձաթաղանթային) արյունազեղում

H11.4 Շաղկապենու այլ անոթային խանգարումներ և բշտեր (կիստաներ)
Շաղկապենային՝

- անևրիզմ
- գերարյունություն (հիպերեմիա)
- այտուց

H11.8 Շաղկապենու ճշտված այլ հիվանդություններ
Կեղծ պտերիզիում

H11.9 Շաղկապենու հիվանդություն՝ չճշտված

**H13* Շաղկապենու ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված
հիվանդությունների ժամանակ**

H13.0* Շաղկապենու ֆիլարիային (filaria) ինվազիա (B74.-†)

H13.1* Շաղկապենու բորբոքում՝ առաջացած այլ դասերում դասակարգված վարակիչ և
մակարոնային հիվանդությունների ժամանակ

Շաղկապենու բորբոքում՝

- ականթամեդերային (B60.1†)
- ադենովիրուսային ֆոլիկուլյար (սուր) (B30.1†)
- խլամիդիային (A74.0)
- դիֆթերիային (A36.8†)
- գոնոկոկային (A54.3†)
- հեմոռագիկ (սուր) (համաճարակային) (B30.3†),
- հասարակ տենդաբշտիկային (հերպեսվիրուսային) (B00.5†)
- մենինգոկոկային (A39.8†)
- Նյուքասլի (Newcastle) (B30.8†)
- գոտևորող որքին (zoster) (B02.3†)

H13.2* Շաղկապենու բորբոքում՝ առաջացած այլ դասերում դասակարգված
հիվանդությունների ժամանակ

H13.3* Ակնային պեմֆիգոիդ (L12.-†)

H13.8* Շաղկապենու այլ ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված
հիվանդությունների ժամանակ

**ՍՊԻՏԱՊԱՏՅԱՆԻ (ՍԿԼԵՐԱ), ԵՂՋԵՐԵՆՈՒ, ԾԻԱԾԱՆԱԹԱՂԱՆԹԻ ԵՎ
ԹԱՐԹԻՉԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(H15-H22)**

H15 Սպիտապատյանի (սկլերայի) հիվանդություններ

H15.0 Սկլերիտ (սպիտապատյանի բորբոքում)

H15.1 Էպիսկլերիտ

H15.8 Սպիտապատյանի այլ ախտահարումներ

Հասարակածային ստաֆիլոմա (ծիածանաթաղանթի արտանկում)

Սպիտապատյանի էկտազիա (լայնացում)

Բացառությամբ՝

դեգեներատիվ միոպիայի (կարճատեսության) (H44.2)

H15.9 Սպիտապատյանի հիվանդություն՝ չճշտված

H16 Կերատիտ (եղջերենու կամ եղջրաթաղանթի բորբոքում)

H16.0 Եղջերենու խոց

խոց՝

- Եղջերենու
 - ԱՀՃ
 - կենտրոնական
 - եզրային (ծայրամասային)
 - թափածակվող
 - օղակաձև
 - հիպոպիոնով
- Մուրենի (Mooren)

H16.1 Մակերեսային այլ կերատիտներ՝ առանց շաղկապենու բորբոքման

Կերատիտ՝

- զրլավոր
- թելավոր
- արեոլյար
- մակերեսային-կետիկային
- աստղաձև
- մետաղադրամաձև

Ֆոտոկերատիտ

Ձյունային կուրություն

H16.2 Կերատոկոնյունկտիվիտ

Կերատոկոնյունկտիվիտ՝

- ԱՀՃ
- արտաքին գործոնների ազդեցության հետևանքով
- նեյրոտրոֆիկ
- ֆլիկտենուլյար

Հանգուցավոր օֆթալմիա

Մակերեսային կերատիտ՝ կոնյունկտիվիտով

H16.3 Ինտերստիցիալ (ստրոմալ) և խորը կերատիտ

H16.4 Եղջերենու նեովասկուլյարիզացիա (անոթավորում)

Ստվերանման անոթներ (եղջերենու)

Պաննուս (եղջերենու) (քրոնիկ մակերեսային անոթային կերատիտ)

H16.8 Կերատիտի այլ ձևեր

H16.9 Կերատիտ՝ չճշտված

H17 Եղջերենու սպիներ և պղտորումներ

H17.0 Կպչուն լեյկոմա

H17.1 Եղջերենու այլ կենտրոնական պղտորում

H17.8 Եղջերենու այլ սպիներ և պղտորումներ

H17.9 Եղջերենու սպի և պղտորում (հատ)՝ չճշտված

H18 Եղջերենու այլ հիվանդություններ

H18.0 Եղջերենու գունակավորում (պիգմենտացիա) և նստվածք
Եղջերենու արյունազեղում
Կայզեր-Ֆլեյշերի (Kayser-Fleischer) օղ
Կրուկենբերգի (Krukenberg) գիծ (իլիկ)
Ստեհլիի (Stehli) գիծ

Ախտահարում առաջացնող դեղամիջոցները նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

H18.1 Բշտային (բուլոզ) կերատոպաթիա

H18.2 Եղջերենու այլ այտուց

H18.3 Եղջերենու թաղանթների փոփոխություններ

- ծալք
 - պատռվածք
- } դեցեմետյան թաղանթի

H18.4 Եղջերենու դեգեներացիա (կազմափոխություն)

Ծերունական աղեղ (arcus senilis)

Ժապավենաձև կերատոպաթիա

Բացառությամբ՝

Մուրենի խոցի (Mooren) (H16.0)

H18.5 Եղջերենու ժառանգական դիստրոֆիա

Դիստրոֆիա՝

- եղջերենու՝
 - էպիթելային
 - հատիկավոր
 - մաղանման (lattice)
 - բծավոր (մակուլյար)
- Ֆուքսի (Fuchs)

H18.6 Կերատոկոնուս

H18.7 Եղջերենու այլ դեֆորմացիա

Եղջերենու՝

- էկտազիա
- ստաֆիլոմա

Դեցեմետոցելե

Բացառությամբ՝

եղջերենու զարգացման բնածին արատների (Q13.3-Q13.4)

H18.8 Եղջերենու այլ ճշտված հիվանդություններ

- անզգայություն
 - թերզգայություն
 - կրկնվող էրոզիա
- } եղջերենու

H18.9 Եղջերենու հիվանդություն՝ չճշտված

H19* Սպիրապայտյանի (սկլերայի) և եղջերենու ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

H19.0* Սկլերիտ և էպիսկլերիտ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

Սիֆիլիտիկ էպիսկլերիտ (A52.7†)

Տուբերկուլյոզային էպիսկլերիտ (A18.5†)

Էպիսկլերիտ գոտևորող որքինի ժամանակ (zoster) (B02.3†)

- H19.1* Հերպես-վիրուսային (herpes simplex) կերատիտ և կերատոկոնյունկտիվիտ (B00.5†)
Ճյուղանման և սկավառակաձև կերատիտ
- H19.2* Կերատիտ և կերատոկոնյունկտիվիտ՝ առաջացած այլ դասերում դասակարգված վարակիչ և մակաբուծային այլ հիվանդությունների ժամանակ
Համաճարակային կերատոկոնյունկտիվիտ (B30.0†)
Կերատիտ և կերատոկոնյունկտիվիտ (ինտերստիցիալ)՝ առաջացած հետևյալ հիվանդությունների ժամանակ՝
- ականթամեմբրազ (B60.1†)
 - կարմրուկ B05.8†)
 - սիֆիլիս (A50.3†)
 - տուբերկուլյոզ (A18.5†)
 - գոտևորող որքին (B02.3†)
- H19.3* Կերատիտ և կերատոկոնյունկտիվիտ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
Չոր (չորության) կերատոկոնյունկտիվիտ (keratoconjunctivitis sicca)
(արցունքազեղծի անբավարար ֆունկցիայի արդյունքում) (M35.0†)
- H19.8* Սպիտապատյանի և եղջերենու այլ ախտահարումներ՝ առաջացած այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
Կերատոկոնյունկտիտ՝ Դաունի համախտանիշի ժամանակ

H20 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի բորբոքում (իրիդոցիկլիտ)

- H20.0 Սուր և ենթասուր ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի բորբոքում
- առաջային ուլեիտ
 - ցիկլիտ (թարթիչային մարմնի բորբոքում)
 - իրիտ (ծիածանաբորբ)
- } սուր, կրկնվող կամ ենթասուր
- H20.1 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի քրոնիկ բորբոքում
- H20.2 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի բորբոքում՝ առաջացած արհեստական ոսպնյակներից
- H20.8 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի այլ բորբոքում
- H20.9 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի բորբոքում՝ չճշտված

H21 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի այլ հիվանդություններ Բացառությամբ՝

- սիմպաթիկ ուլեիտի (H44.1)
- H21.0 Հիֆեմա
- Բացառությամբ՝**
վնասվածքային հիֆեմայի (S05.1)
- H21.1 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի այլ անոթային հիվանդություններ
Ծիածանաթաղանթի կամ թարթիչային մարմնի նոր անոթավորում
Ծիածանաթաղանթի ռուբեոզ (նորանոթավորում)
- H21.2 Ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի կազմափոխություն
Դեգեներացիա (կազմափոխություն)՝
- ծիածանաթաղանթի (պիգմենտային)
 - բբի եզրի
- Իրիդոչիզիս
Ծիածանաթաղանթի ապաճում (ատրոֆիա) (էսենցիալ) (պրոգրեսիվոզ)
Միոտիկ բբային բուշտ (կիստա)

- Ծիածանաթաղանթի կիսաթափանցիկություն (լուսանցիկություն)
- H21.3 Ծիածանաթաղանթի, թարթչային մարմնի և աչքի առաջնային խցիկի բուշտ
Ծիածանաթաղանթի, թարթչային մարմնի և աչքի առաջնային խցիկի բուշտ՝
- ԱՀՃ
 - էքսուդատիվ
 - իմպլանտացիոն
 - մակաբուծային

Բացառությամբ՝

- բբի միոտիկ բշտի (H21.2)
- H21.4 Բբային թաղանթներ
Ծիածանաթաղանթի «բոմբաժ» (արտափքում)
Բբային՝
- խցանում (օկլյուզիա)
 - առանձնացում (սեկլյուզիա)
- H21.5 Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի այլ սպիներ (կպումներ) և
պատուվածքներ
Գոնիոսինեխիաներ
Իրիդոդիալիզ
Առաջնային խցիկի անկյան խորացում (ռեցեսիա)
Սինեխիաներ՝
- ԱՀՃ
 - առաջնային
 - հետին

Բացառությամբ՝

- կորեկտոպիայի (Q13.2)
- H21.8 Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի այլ ճշտված հիվանդություններ
- H21.9 Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի հիվանդություն՝ չճշտված

***H22* Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի ախտահարումներ՝ այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ***

- H22.0* Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի բորբոքում՝ այլ դասերում
դասակարգված վարակիչ հիվանդությունների ժամանակ
Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի բորբոքում հետևյալ
հիվանդությունների ժամանակ՝
- գոնոկոկային վարակ (A54.3†)
 - հասարակ տենդաբշտիկային վարակ (herpes simplex) (B00.5†)
 - սիֆիլիս (երկրորդային) (A51.4†)
 - տուբերկուլյոզ (A18.5†)
 - գոտևորող որքին (zoster) (B02.4†)
- H22.1* Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի բորբոքում՝ առաջացած այլ դասերում
դասակարգված հիվանդությունների ժամանակ
Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի բորբոքում հետևյալ
հիվանդությունների ժամանակ՝
- անկիլոզացնող սպոնդիլիտ
 - սարկոիդոզ
- H22.8* Ծիածանաթաղանթի և թարթչային մարմնի այլ ախտահարումներ՝ առաջացած
այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ

**ՈՍՊԼՅԱԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(H25-H28)**

H25 Ծերունական կատարակտ (նսայնյակի պղպորում)

Բացառությամբ՝

պատիճավոր (կապսուլյար) գլաուկոմայի՝ նսայնյակի պսևդոէքսֆոլիացիայով (H40.1)

H25.0 Սկսվող ծերունական կատարակտ

Ծերունական կատարակտ՝

- պսակաձև
- կեղևային
- կետավոր

Ենթապատիճային բևեռային ծերունական կատարակտ (առաջային) (հետին) Զրային ճեղքեր

H25.1 Ծերունական կորիզային կատարակտ

Դարչնագույն կատարակտ

Կորիզային սկլերոտիկ կատարակտ

H25.2 Ծերունական կատարակտ, մորգանյան տեսակ

Ծերունական գերհասուն կատարակտ

H25.8 Ծերունական այլ կատարակտ

Ծերունական կատարակտի համակցված ձևեր

H25.9 Ծերունական կատարակտ՝ չճշտված

H26 Այլ կատարակտ

Բացառությամբ՝

բնածին կատարակտի (Q12.0)

H26.0 Մանկական, պատանեկան և նախածերունական կատարակտ

H26.1 Վնասվածքային կատարակտ

Պատճառը նույնականացնելու անհրաժեշտության դեպքում կիրառվում է արտաքին պատճառների լրացուցիչ ծածկագիր (Գլուխ XX):

H26.2 Բարդացած կատարակտ

Կատարակտ՝ ծիածանաթաղանթի և թարթիչային մարմնի քրոնիկ բորբոքման ժամանակ

Երկրորդային կատարակտ՝ աչքի ախտահարումների ժամանակ

Գլաուկոմատոզ բժեր (ենթապատիճային)

H26.3 Կատարակտ՝ առաջացած դեղամիջոցներից

Q10-Q18 Աչքի, ականջի, դեմքի և պարանոցի բնածին (զարգացման) արատներ
Q20-Q28 Արյան շրջանառության համակարգի բնածին (զարգացման) արատներ
Q30-Q34 Շնչառական համակարգի բնածին (զարգացման) արատներ
Q35-Q37 Շրթունքի ճեղքվածք (նապաստակի շրթունք) և քիմքի ճեղքվածք (գայլի երախ)
Q38-Q45 Մարսողական համակարգի բնածին (զարգացման) այլ արատներ
Q50-Q56 Սեռական համակարգի բնածին (զարգացման) արատներ
Q60-Q64 Միզային համակարգի բնածին (զարգացման) արատներ
Q65-Q79 Մկանակմախքային (ոսկրամկանային) համակարգի բնածին (զարգացման) արատներ և դեֆորմացիաներ
Q80-Q89 Բնածին (զարգացման) այլ արատներ
Q90-Q99 Քրոմոսոմային անկանոնություններ՝ չդասակարգված այլ դասերում

**ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԾԻՆ (ԶԱՐԳԱՑՄԱՆ) ԱՐԱՏՆԵՐ
(Q00-Q07)**

Q00 Անէնցեֆալիա և նմանարիպ զարգացման արատներ

Q00.0 Անէնցեֆալիա
Ացեֆալիա
Ակրանիա
Ամիելոէնցեֆալիա
Հեմիանէնցեֆալիա
Հեմիցեֆալիա
Q00.1 Կրանիոռախիշիզիս
Q00.2 Ինէնցեֆալիա

Q01 Էնցեֆալոցելե

Ներառյալ՝

էնցեֆալոմիելոցելե
հիդրոէնցեֆալոցելե
հիդրոմենինգոցելե՝ գանգային
մենինգոցելե՝ գանգուղեղային
մենինգոէնցեֆալոցելե

Բացառությամբ՝

Մեկել-Գրուբերի (Meckel-Gruber) համախտանիշի (Q61.9)

Q01.0 Ճակատային էնցեֆալոցելե
Q01.1 Քթաճակատային էնցեֆալոցելե

Q01.2 Ծոծրակային էնցեֆալոցելե
Q01.8 Այլ մասերի էնցեֆալոցելե
Q01.9 Էնցեֆալոցելե՝ չճշտված

Q02 Միկրոցեֆալիա

Ներառյալ՝

Հիդրոմիկրոցեֆալիան
Միկրոէնցեֆալոն

Բացառությամբ՝

Մեկե-Գրուբերի (Meckel-Gruber) համախտանիշի (Q61.9)

Q03 Բնածին հիդրոցեֆալիա

Ներառյալ՝

նորածնի հիդրոցեֆալիան

Բացառությամբ՝

Առնոլդ-Կիարիի (Arnold-Chiari) համախտանիշի (Q07.0)

հիդրոցեֆալիայի՝

- ձեռք բերովի (G91.-),
- բնածին տոքսոպլազմոզից առաջացած (P37.1)
- ողնաշարի փեղեկման (spina bifida) հետ համակցված (Q05.0-Q05.4)

Q03.0 Սիլվյան ջրանցքի բնածին արատ

Սիլվյան ջրանցքի՝

- անկանոնություն
- անանցանելիություն (օբստրուկցիա)՝ բնածին
- նեղացում (ստենոզ)

Q03.1 Մաժանդու (Magendie) և Լուշկայի (Luschka) անցքերի ատրեզիա

Դենդի-Ուոլկերի (Dandy-Walker) համախտանիշ

Q03.8 Այլ բնածին հիդրոցեֆալիա

Q03.9 Բնածին հիդրոցեֆալիա՝ չճշտված

Q04 Ուղեղի բնածին (զարգացման) այլ արատներ

Բացառությամբ՝

միաչքության (ցիկլոպիա) (Q87.0)

մակրոցեֆալիայի (Q75.3)

Q04.0 Բրտամարմնի բնածին արատներ

Բրտամարմնի ագենեզիա

Q04.1 Առինէնցեֆալիա

Q04.2 Հոլոպրոզէնցեֆալիա

Q04.3 Ուղեղի այլ ռեդուկցիոն (հետաճով պայմանավորված) դեֆորմացիաներ

- բացակայություն
 - ագենեզիա
 - ապլազիա
 - հիպոպլազիա
- } ուղեղի որևէ մասի

Ագիրիա

Հիդրաէնցեֆալիա

Լիսէնցեֆալիա

Միկրոգիրիա

Պախիգիրիա

Բացառությամբ՝

- բրտամարմնի բնածին արատների (Q04.0)
- Q04.4 Սեպտոօպտիկ դիսպլազիա
- Q04.5 Մեգալէնցեֆալիա
- Q04.6 Բնածին ուղեղային բշտեր (կիստաներ)
 - Պորէնցեֆալիա
 - Շիզէնցեֆալիա

Բացառությամբ՝

- ձեռքբերովի պորէնցեֆալիկ բշտի (G93.0)
- Q04.8 Ուղեղի այլ ճշտված բնածին արատներ
 - Մակրոգիրիա
- Q04.9 Ուղեղի բնածին արատ՝ չճշտված
 - Բնածին՝

- անկանոնություն
 - դեֆորմացիա
 - հիվանդություն կամ ախտահարում
 - բազմակի անկանոնություններ
- } գլխուղեղի՝ ԱՀԾ

Q05 Ողնաշարի ճեղքվածք կամ փեղեկում (*Spina bifida*) (ողնաշարային խողովակի ոչ լրիվ փակում)

Ներառյալ՝

- հիդրոմենինգոցելե (ողնուղեղային)
- մենինգոցելե (ողնուղեղային)
- մենինգոմիելոցելե
- միելոցելե
- միելոմենինգոցելե
- ռախիշիզիս
- ողնաշարի ճեղքվածք (բաց) (պարկանման), spina bifida (aperta) (cystica)
- սիրինգոմիելոցելե

Բացառությամբ՝

- Առնոլդ-Կիարիի (Arnold-Chiari) համախտանիշի (Q07.0)
- ողնաշարի փակ ճեղքվածքի (spina bifida occulta) (Q76.0)
- Q05.0 Ողնաշարի պարանոցային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ հիդրոցեֆալիայով
- Q05.1 Ողնաշարի կրծքային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ հիդրոցեֆալիայով
 - Ողնաշարի ճեղքվածք՝
 - մեջքային կամ թիկնային (դորսալ)
 - կրծքագոտկային (թորակոյունբալ)

} հիդրոցեֆալիայով
- Q05.2 Ողնաշարի գոտկային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ հիդրոցեֆալիայով
 - Ողնաշարի գոտկասրբոսկրային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ հիդրոցեֆալիայով
- Q05.3 Ողնաշարի սրբոսկրային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ հիդրոցեֆալիայով
- Q05.4 Ողնաշարի չճշտված ճեղքվածք՝ հիդրոցեֆալիայով
- Q05.5 Ողնաշարի պարանոցային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ առանց հիդրոցեֆալիայի
- Q05.6 Ողնաշարի ճեղքվածք՝ (spina bifida) կրծքային հատվածի՝ առանց հիդրոցեֆալիայի
 - Ողնաշարի ճեղքվածք՝
 - թիկնային կամ մեջքային (դորսալ)՝ ԱՀԾ
 - կրծքագոտկային (թորակոյունբալ)՝ ԱՀԾ

- Q05.7 Ողնաշարի գոտկային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ առանց հիդրոցեֆալիայի
 Ողնաշարի գոտկասրբոսկրային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ ԱՀՃ
- Q05.8 Ողնաշարի սրբոսկրային հատվածի ճեղքվածք (spina bifida)՝ առանց հիդրոցեֆալիայի
- Q05.9 Ողնաշարի ճեղքվածք (spina bifida)՝ չճշտված

Q06 Ողնաշարի բնածին (զարգացման) այլ արատներ

- Q06.0 Ամիելիա
- Q06.1 Ողնուղեղի հիպոպլազիա և դիսպլազիա
 Ատելոմիելիա
 Միելատելիա
 Ողնուղեղի միելոդիսպլազիա
- Q06.2 Դիաստեմատոմիելիա
- Q06.3 Ձիու պոչի զարգացման (բնածին) այլ արատներ
- Q06.4 Հիդրոմիելիա
 Հիդրոռախիս
- Q06.8 Ողնուղեղի զարգացման այլ ճշտված արատներ
- Q06.9 Ողնուղեղի զարգացման (բնածին) արատ՝ չճշտված
 Բնածին՝
- անկանոնություն
 - դեֆորմացիա
 - հիվանդություն կամ ախտահարում
- } ողնուղեղի կամ
 } թաղանթների՝ ԱՀՃ

Q07 Նյարդային համակարգի բնածին (զարգացման) այլ արատներ
Բացառությամբ՝

- ընտանեկան դիսավտոնոմիայի (Ռայլի-Դեյի, Riley-Day) (G90.1)
 նեյրոֆիբրոմատոզի (ոչ չարորակ) (Q85.0)
- Q07.0 Առնոլդ-Վիարիի (Arnold-Chiari) համախտանիշ
- Q07.8 Նյարդային համակարգի այլ ճշտված բնածին (զարգացման) արատներ
 Նյարդի ազնեցիա
 Բազկային հյուսակի այլ տեղակայում
 Ծնոտի շարժման և թարթելու (ծամելու-թարթելու) համախտանիշ
 Մարկուս-Գանի (Marcus Gunn) համախտանիշ
- Q07.9 Նյարդային համակարգի բնածին (զարգացման) արատներ՝ չճշտված
 Բնածին՝
- անկանոնություն
 - դեֆորմացիա
 - հիվանդություն կամ ախտահարում
- } նյարդային
 } համակարգի՝ ԱՀՃ

ԱԶՔԻ, ԱԿԱՆՋԻ, ԴԵՄՔԻ ԵՎ ՊԱՐԱՆՈՑԻ ԲՆԱԾԻՆ (ԶԱՐԳԱՑՄԱՆ) ԱՐԱՏՆԵՐ (Q10-Q18)

Բացառությամբ՝

- շրթունքի և քիմքի փեղեկման (Q35-Q37)
 բնածին արատի՝
- ողնուղեղի պարանոցային հատվածի (Q05.0, Q05.5, Q67.5, Q76.0-Q76.4)
 - կոկորդի (Q31.-)

- շրթունքի՝ այլ դասերում չդասակարգված (Q38.0)
- քթի (Q30.-)
- հարվահանագեղձի (Q89.2)
- վահանաձև գեղձի (Q89.2)

Q10 Կոպի, արցունքային ապարատի և ակնակապճի բնածին (զարգացման) արարներ

Բացառությամբ՝

Կրիպտոֆթալմի՝

- ԱՀՃ (Q11.2)
- համախտանիշի (Q87.0)

Q10.0 Բնածին պտոզ

Q10.1 Բնածին էկտրոպիոն

Q10.2 Բնածին էնտրոպիոն

Q10.3 Կոպի զարգացման այլ արատներ

Աբլեֆարիա

Բացակայություն կամ ագենեզիա՝

- թարթիչների
- կոպի

Հավելյալ՝

- կոպ
- ակնային մկան

Բնածին բլեֆարոֆիմոզ

Կոպի կոլոբոմա

Կոպի բնածին արատ՝ ԱՀՃ

Q10.4 Արցունքային ապարատի բացակայություն կամ ագենեզիա

Արցունքային կետի բացակայություն

Q10.5 Արցունքային ծորանի բնածին նեղացում և սեղմվածք

Q10.6 Արցունքային ապարատի զարգացման այլ արատներ

Արցունքային ապարատի բնածին արատ՝ ԱՀՃ

Q10.7 Ակնակապճի բնածին արատ

Q11 Անակնություն (անօֆթալմ), միկրոֆթալմ և մակրոֆթալմ

Q11.0 Ակնագնդի բուշտ (բշտանման ակնագունդ)

Q11.1 Անօֆթալմի այլ տեսակ՝

- ագենեզիա
 - ապլազիա
- } աչքի

Q11.2 Միկրոֆթալմ

Կրիպտոֆթալմ՝ ԱՀՃ

Աչքի դիսպլազիա

Աչքի հիպոպլազիա

Ռուդիմենտար աչք

Բացառությամբ՝

կրիպտոֆթալմի համախտանիշի (Q87.0)

Q11.3 Մակրոֆթալմ

Բացառությամբ՝

մակրոֆթալմի՝ բնածին գլաուկոմայի դեպքում (Q15.0)

Q12 Ոսպնյակի բնածին (զարգացման) արատներ

- Q12.0 Բնածին կատարակտ
- Q12.1 Ոսպնյակի բնածին տեղաշարժ
- Q12.2 Ոսպնյակի կոլոբոմա
- Q12.3 Բնածին աֆակիա
- Q12.4 Սֆերոֆակիա
- Q12.8 Ոսպնյակի բնածին այլ արատներ
- Q12.9 Ոսպնյակի բնածին արատներ՝ չճշտված

Q13 Աչքի առաջային հատվածի բնածին (զարգացման) արատներ

- Q13.0 Ծիածանաթաղանթի կոլոբոմա
Կոլոբոմա՝ ԱՀՃ
- Q13.1 Ծիածանաթաղանթի բացակայություն
Անիրիդիա
- Q13.2 Ծիածանաթաղանթի զարգացման այլ արատներ
Անիզոկորիա բնածին
Բբի ատրեզիա (անանցքություն)
Ծիածանաթաղանթի բնածին արատ՝ ԱՀՃ
Կորեկտոպիա
- Q13.3 Եղջերենու բնածին պղտորում
- Q13.4 Եղջերենու զարգացման այլ արատներ
Եղջերենու բնածին արատ՝ ԱՀՃ
Միկրոկորնեա
Պետերի (Peter) անկանոնություն
- Q13.5 Երկնագույն սպիտապատյան (սկլերա)
- Q13.8 Աչքի առաջային հատվածի բնածին այլ արատներ
Ռիգերի (Rieger) անկանոնություն
- Q13.9 Աչքի առաջային հատվածի բնածին արատ՝ չճշտված

Q14 Աչքի հետին հատվածի բնածին (զարգացման) արատներ

- Q14.0 Ապակենման մարմնի բնածին արատ
Ապակենման մարմնի բնածին պղտորում
- Q14.1 Ցանցաթաղանթի բնածին արատ
Ցանցաթաղանթի բնածին անևրիզմա
- Q14.2 Տեսողական նյարդի սկավառակի բնածին արատ
Տեսողական նյարդի սկավառակի կոլոբոմա
- Q14.3 Աչքի անոթաթաղանթի բնածին արատ
- Q14.8 Աչքի հետին հատվածի բնածին այլ արատ
Ակնահատակի կոլոբոմա
- Q14.9 Աչքի հետին հատվածի բնածին արատ՝ չճշտված

Q15 Աչքի բնածին (զարգացման) այլ արատներ

- Բացառությամբ՝
 - բնածին նիստազմի (H55)
 - ակնային ալբինիզմի (E70.3)
 - պիգմենտային ռետինիտի (H35.5)

- Q15.0 Բնածին գլաուկոմա
 Բուֆթալմ
 Նորածնային գլաուկոմա
 Հիդրոֆթալմ
 Բնածին կերատոգլոբոմա՝ գլաուկոմայով
 Մեգալոկորնեա՝ գլաուկոմայով
 Մակրոֆթալմ՝ բնածին գլաուկոմայի դեպքում
 Մակրոկորնեա՝ գլաուկոմայով
- Q15.8 Աչքի բնածին (զարգացման) այլ ճշտված արատներ
- Q15.9 Աչքի բնածին արատ՝ չճշտված
 Բնածին՝
- անկանոնություն
 - դեֆորմացիա
- } աչքի՝ ԱՀՃ

Q16 Ականջի՝ լսողության խանգարման հանգեցնող բնածին (զարգացման) արատներ

Բացառությամբ՝

- բնածին խլության (H90.-)
- Q16.0 Ականջախեցու բնածին բացակայություն
- Q16.1 Լսողական արտաքին անցուղու բնածին ատրեզիա (անանցքություն) և ստրիկտուրա
 Անցուղու ոսկրային հատվածի անցքի ատրեզիա կամ ստրիկտուրա
- Q16.2 Եվստախյան փողի բացակայություն
- Q16.3 Լսողական ոսկրիկների բնածին արատ
 Լսողական ոսկրիկների սերտաճում
- Q16.4 Միջին ականջի բնածին (զարգացման) այլ արատներ
 Միջին ականջի բնածին արատ՝ ԱՀՃ
- Q16.5 Ներքին ականջի բնածին արատ
 Անկանոնություն՝
- թաղանթային լաբիրինթի
 - կորոտյան օրգանի
- Q16.9 Լսողության խանգարումներ առաջացնող բնածին արատ՝ չճշտված
 Ականջի բնածին բացակայություն՝ ԱՀՃ

Q17 Ականջի բնածին (զարգացման) այլ արատներ

Բացառությամբ՝

- նախաականջիկային ծոցի (Q18.1)
- Q17.0 Լրացուցիչ ականջախեցի
 Հավելյալ այծիկ
 Պոլիոտիա
 Նախաականջիկային ելուն կամ պոլիպ
 Հավելյալ՝
- ականջ
 - բլթակ
- Q17.1 Մակրոտիա
- Q17.2 Միկրոտիա
- Q17.3 Ականջի այլ անկանոնություն
 Սրածայր ականջ
- Q17.4 Ոչ ճիշտ տեղակայված ականջ

Յածր տեղակայված ականջներ

Բացառությամբ՝

պարանոցային ականջախեցու (Q18.2)

Q17.5 Դուրս գցված ականջ

Լոշտակություն

Q17.8 Ականջի բնածին (զարգացման) այլ ճշտված արատներ

Ականջի բլթակի բնածին բացակայություն

Q17.9 Ականջի զարգացման արատ՝ չճշտված

Ականջի բնածին անկանոնություն՝ ԱՀՃ

Q18 Դեմքի և պարանոցի այլ բնածին (զարգացման) արատներ

Բացառությամբ՝

շրթունքների և քիմքի փեղեկման (Q35-Q37) Q67.0-Q67.4 դասերում

դասակարգված վիճակների

գանգի և դիմային ոսկրերի բնածին արատների (Q75.-) միաչքության (ցիկլոպիա) (Q87.0)

ատամնադիմային անկանոնությունների (ներառյալ կծվածքի անկանոնությունը) (K07.-)

դեմքի արտաքին տեսքը փոփոխող արատների համախտանիշերի (Q87.0)

պահպանված վահանալեզվային ծորանի (Q89.2)

Q18.0 Խոռիկային ճեղքի ծոց, խուղակ և բուշտ

Խոռիկային ռուդիմենտ (մնացուկ)

Q18.1 Նախաականջային ծոց և բուշտ

Խուղակ՝

- ականջախեցու՝ բնածին
- պարանոցականջային

Նախաայծիկային ծոց և բուշտ

Q18.2 Խոռիկային ճեղքի այլ արատներ

Խոռիկային ճեղքի արատ՝ ԱՀՃ

Պարանոցային ականջախեցի

Օտոցեֆալիա

Q18.3 Թևանման պարանոց

Pterygium colli

Q18.4 Մակրոստոմիա

Q18.5 Միկրոստոմիա

Q18.6 Մակրոխեյլիա

Շրթունքի բնածին գերած (հիպերտրոֆիա)

Q18.7 Միկրոխեյլիա

Q18.8 Դեմքի և պարանոցի բնածին (զարգացման) այլ ճշտված արատներ

Միջային՝

- բուշտ (կիստա)
 - խուղակ
 - ծոց
- } դեմքի և պարանոցի

Q18.9 Դեմքի և պարանոցի բնածին (զարգացման) արատ՝ չճշտված

Դեմքի և պարանոցի բնածին անկանոնություն՝ ԱՀՃ

**ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԾԻՆ (ՁԱՐԳԱՑՄԱՆ) ԱՐԱՏՆԵՐ
(Q20-Q28)**

**Q20 Սրտի խոռոչների և դրանց կապերի (միացումների) բնածին արարներ
Բացառությամբ՝**

- դեքստրակարդիայի (աջասրտություն)՝ շրջադարձ տեղակայմամբ (situs inversus) (Q89.3)
- նախասրտերի հայելանման դասավորության՝ շրջադարձ տեղակայմամբ (situs inversus) (Q89.3)
- նախասրտի հայելանման արտացոլմամբ դասավորության՝ զուգակցված տեղակայված շրջադասության հետ (Q89.3)
- Q20.0 Զարկերակային ընդհանուր ցողուն
Բաց (չփակված, չխցանված) զարկերակային ցողուն
- Q20.1 Աջ փորոքի ելքային բացվածքի երկատում
Տաուսինգ-Բինգի (Taussing-Bing) համախտանիշ
- Q20.2 Ձախ փորոքի ելքային բացվածքի երկատում
- Q20.3 Փորոքազարկերակային անհամապատասխան (դիսկորդանտային) հաղորդակցում
Աորտայի դեքստրատրանսպոզիցիա
Խոշոր անոթների տրանսպոզիցիա (լրիվ, ամբողջական)
- Q20.4 Փորոքի մուտքի բացվածքի երկատում
Ընդհանուր փորոք
Եռախոռոչ երկնախասրտային սիրտ
Միակ փորոք
- Q20.5 Նախասիրտ-փորոքային անհամապատասխան (դիսկորդանտային) հաղորդակցում
Շտկված տրանսպոզիցիա
Ձախ տրանսպոզիցիա
Փորոքային շրջադասություն (ինվերսիա)
- Q20.6 Նախասրտային ականջիկների իզոմերիա
Նախասրտային ականջիկների իզոմերիա՝ ասպլենիայով կամ պոլիսպլենիայով
- Q20.8 Սրտի խոռոչների և դրանց կապերի (միացումների) բնածին այլ արատներ
- Q20.9 Սրտի խոռոչների և դրանց կապերի (միացումների) բնածին արատ՝ չճշտված

**Q21 Սրտի միջնապատի (խորոքի) բնածին (զարգացման) արարներ
Բացառությամբ՝**

- սրտի միջնապատի ձեռքբերովի դեֆեկտի (I51.0)
- Q21.0 Փորոքային միջնապատի դեֆեկտ
- Q21.1 Նախասրտային միջնապատի դեֆեկտ
Պսակաձև ծոցի դեֆեկտ
Զսերտաճած (բաց) կամ պահպանված՝
 - օվալ (ձվաձև) անցք
 - երկրորդային անցքի դեֆեկտ (II տիպ)Երակային ծոցի դեֆեկտ
- Q21.2 Նախասիրտ-փորոքային միջնապատի դեֆեկտ
Ընդհանուր նախասիրտ-փորոքային (ատրիովենտրիկուլյար) խողովակ
Էնդոկարդի դեֆեկտ՝ սրտի հիմքի շրջանում
Նախասրտային միջնապատի առաջնային անցքի դեֆեկտ՝ (I տիպ)
- Q21.3 Ֆալոյի (Fallot) տետրադա

Միջփորոքային միջնապատի դեֆեկտ՝ թոքային զարկերակի նեղացումով (ստենոզով) կամ ատրեզիայով (անանցքությամբ), աորտայի դեքստրապոզիցիայով և աջ փորոքի գերաճով

Q21.4 Աորտայի և թոքային զարկերակի միջև գտնվող (աորտոպուլմոնալ) միջնապատի դեֆեկտ

Աորտայի միջնապատի դեֆեկտ

Աորտա-թոքային զարկերակային պատուհան

Q21.8 Սրտի միջնապատի բնածին այլ արատներ

Էյզենմենգերի (Eisenmenger) դեֆեկտ

Ֆալոյի (Fallot) պենտադա

Բացառությամբ՝

Էյզենմենգերի՝

- համալիրի (I27.8)
- համախտանիշի (I27.8)

Q21.9 Սրտի միջնապատի բնածին արատ՝ չճշտված

Միջնապատի (սրտի) դեֆեկտ՝ ԱՀՃ

Q22 Թոքային և եռփեղկ փականների բնածին (զարգացման) արարներ

Q22.0 Թոքային զարկերակի փականի ատրեզիա (անանցքություն)

Q22.1 Թոքային զարկերակի փականի բնածին նեղացում (ստենոզ)

Q22.2 Թոքային զարկերակի փականի բնածին անբավարարություն

Թոքային զարկերակի փականի բնածին հետհոսք (ռեգուրգիտացիա)

Q22.3 Թոքային զարկերակի փականի այլ բնածին արատներ

Թոքային զարկերակի փականի բնածին արատ՝ ԱՀՃ

Q22.4 Եռփեղկ փականի բնածին նեղացում

Եռփեղկ փականի ատրեզիա

Q22.5 Էբշտեյնի (Ebstein) անկանոնություն

Q22.6 Սրտի աջակողմյան հիպոպլազիայի (թերաճության) համախտանիշ

Q22.8 Եռփեղկ փականի բնածին այլ արատներ

Q22.9 Եռփեղկ փականի բնածին արատ՝ չճշտված

Q23 Աորտայի և երկփեղկ փականների բնածին (զարգացման) արարներ

Q23.0 Աորտայի փականի բնածին նեղացում

Աորտային փականի բնածին՝

- ատրեզիա (անանցքություն)
- նեղացում (ստենոզ)

Բացառությամբ՝

ենթաաորտային բնածին նեղացման (Q24.4)

ենթաաորտային բնածին նեղացման՝ սրտի ձախակողմյան հիպոպլազիայի համախտանիշի դեպքում (Q23.4)

Q23.1 Աորտայի փականի բնածին անբավարարություն

Երկփեղկ աորտայի փական

Բնածին աորտայի անբավարարություն

Q23.2 Երկփեղկ փականի բնածին նեղացում (միտրալ)

Երկփեղկ փականի բնածին ատրեզիա

Q23.3 Երկփեղկ փականի բնածին անբավարարություն

Q23.4 Սրտի ձախակողմյան հիպոպլազիայի համախտանիշ

- Աորտայի բացվածքի կամ փականի ատրեզիա կամ արտահայտված հիպոպլազիա՝ զուգակցված աորտայի վերել հատվածի հիպոպլազիայով և ձախ փորոքի զարգացման դեֆեկտով (երկփեղկ փականի նեղացում կամ ատրեզիա)
- Q23.8 Աորտայի և երկփեղկ փականների բնածին այլ արատներ
- Q23.9 Աորտայի և երկփեղկ փականների բնածին արատ՝ չճշտված

Q24 Սրտի այլ բնածին (զարգացման) արատներ
Բացառությամբ՝

- Էնդոկարդի ֆիբրոելաստոզի (I42.4)
- Q24.0 Դեքստրակարդիա (աջասրտություն)
- Բացառությամբ՝**
- դեքստրակարդիայի՝ տեղակայված շրջադասությամբ (situs inversus) (Q89.3)
 նախասրտային ականջիկների իզոմերիայի (ասպլենիայով կամ պոլիսպլենիայով) (Q20.6)
 նախասրտի հայելանման արտացոլմամբ դասավորության՝ զուգակցված տեղակայված շրջադասության հետ (Q89.3)
- Q24.1 Ձախասրտություն (Laevocardia)
 Սրտի տեղակայում կրծքավանդակի ձախ կետում՝ դեպի ձախ դարձված գազաթով, սակայն որովայնի խոռոչի օրգանների շրջադասությամբ և սրտի արատներով (դեֆեկտներ) կամ խոշոր անոթների շտկված տրանսպոզիցիայով
- Q24.2 Եռանախասրտային սիրտ (cor triatriatum)
- Q24.3 Թոքային զարկերակի փականի ձագարածն նեղացում
- Q24.4 Բնածին ենթաաորտային նեղացում
- Q24.5 Պսակածն անոթների բնածին արատ
 Բնածին պսակածն (զարկերակային) անևրիզմա
- Q24.6 Սրտի հաղորդականության բնածին խանգարում կամ շրջափակում (բլոկադա)
- Q24.8 Սրտի այլ բնածին ճշտված արատներ
 Բնածին՝
- ձախ փորոքի դիվերտիկուլ
- արատ՝
- սրտամկանի
 - պերիկարդի
- Սրտի ոչ ճիշտ դիրք
- Ուիլի (Uhl) հիվանդություն
- Q24.9 Սրտի բնածին արատ՝ չճշտված
 Բնածին՝
- անկանոնություն
 - հիվանդություն
- } սրտի՝ ԱՀԾ

Q25 Խոշոր զարկերակների բնածին (զարգացման) արատներ

- Q25.0 Բաց զարկերակային ծորան
 Բաց բոտալյան ծորան (ductus Botallo)
 Պահպանված զարկերակային ծորան (ductus arteriosus)
- Q25.1 Աորտայի կոարկտացիա
 Աորտայի կոարկտացիա (նախածորանային, պրեդուկտալ) (հետծորանային, պոստդուկտալ)
- Q25.2 Աորտայի ատրեզիա (անանցքություն)
- Q25.3 Աորտայի նեղացում (ստենոզ)

Վերփականային աորտային նեղացում

Բացառությամբ՝

բնածին աորտային նեղացման (Q23.0)

Q25.4 Աորտայի բնածին այլ արատներ՝

- բացակայություն
 - ապլազիա
 - բնածին՝
 - անևրիզմա
 - լայնացում
- } աորտայի

Վալսալվայի (Valsalva) ծոցի անևրիզմա (պատռված)

Աորտայի կրկնակի աղեղ (աորտայի անոթային օղ)

Աորտայի հիպոպլազիա

Պահպանված՝

- աորտայի աղեղի գալարներ
- աորտայի աջ աղեղ

Բացառությամբ՝

աորտայի հիպոպլազիայի՝ սրտի ձախակողմյան հիպոպլազիայի համախտանիշի դեպքում

Q25.5 Թոքային զարկերակի ատրեզիա

Q25.6 Թոքային զարկերակի նեղացում

Q25.7 Թոքային զարկերակի բնածին այլ արատներ

Աբերանտ (ոչ նորմալ) թոքային զարկերակ

- ազենեզիա
 - անևրիզմա, բնածին
 - անկանոնություն
 - հիպոպլազիա
- } թոքային զարկերակի

Թոքային զարկերակաերակային անևրիզմա

Q25.8 Խոշոր զարկերակների բնածին այլ արատներ

Q25.9 Խոշոր զարկերակի բնածին արատ՝ չճշտված

Q26 Խոշոր երակների բնածին (զարգացման) արատներ

Q26.0 Սիներակի բնածին նեղացում (ստենոզ)

Սիներակի բնածին նեղացում (ստորին) (վերին)

Q26.1 Պահպանված ձախ վերին սիներակ

Q26.2 Թոքային երակների միացման լրիվ (տոտալ) անկանոնություն

Q26.3 Թոքային երակների միացման մասնակի (պարցիալ) անկանոնություն

Q26.4 Թոքային երակների միացման անկանոնություն՝ չճշտված

Q26.5 Դռներակի միացման անկանոնություն

Q26.6 Դռներակային երակի և լյարդային զարկերակի (երակազարկերակային) խուղակ

Q26.8 Խոշոր երակների բնածին այլ արատներ

Սիներակի բացակայություն (ստորին) (վերին)

Կենտ ստորին սիներակ (ողջ ընթացքով)

Պահպանված ձախ հետին հիմնական երակ

Կոր թուրքական թրի (թոքային երակաբլթային) համախտանիշ

Q26.9 Խոշոր երակի բնածին արատներ՝ չճշտված

Սիներակի անկանոնություն (ստորին) (վերին)՝ ԱՀՃ

Q27 Ծայրամասային անոթային համակարգի բնածին (զարգացման) այլ արատներ

Բացառությամբ՝

անկանոնությունների՝

- ուղեղային և նախաուղեղային անոթների (Q28.0-Q28.3)
- պսակաձև անոթների (Q24.5)
- թոքային զարկերակի (Q25.5-Q25.7)

ցանցենու բնածին անևրիզմիայի (Q14.1)

հեմանգիոմայի և լիմֆանգիոմայի (D18.-)

Q27.0 Պորտային զարկերակի բնածին բացակայություն և թերզարգացում (հիպոպլազիա)

Միակ (եզակի) պորտային զարկերակ

Q27.1 Երիկամային զարկերակի բնածին նեղացում

Q27.2 Երիկամային զարկերակի բնածին այլ արատներ

Երիկամային զարկերակի բնածին արատ՝ ԱՀՃ

Երիկամային բազմակի զարկերակներ

Q27.3 Ծայրամասային զարկերակաերակային անկանոնություն (արատ)

Չարկերակաերակային անևրիզմա

Բացառությամբ՝

ձեռքբերովի զարկերակաերակային անևրիզմիայի (I77.0)

Q27.4 Բնածին ֆլեբէկտազիա

Q27.8 Ծայրամասային անոթային համակարգի այլ ճշտված անկանոնություններ

Ենթաանրակային աբերանտային (ոչ նորմալ, նորմալից շեղված) զարկերակ՝

- բացակայություն
 - ատրեզիա (անանցքություն)
- } զարկերակի կամ երակի՝ այլ դասերում չդասակարգված

Բնածին՝

- անևրիզմա (ծայրամասային)
- զարկերակի նեղացում
- վարիկոզ

Q27.9 Ծայրամասային անոթային համակարգի այլ բնածին արատներ՝ չճշտված

Չարկերակի կամ երակի անկանոնություն՝ ԱՀՃ

Q28 Արյան շրջանառության համակարգի այլ բնածին անկանոնություններ (զարգացման արատներ)

Բացառությամբ՝

բնածին անևրիզմիայի (զարկերակային)՝

- ԱՀՃ (Q27.8)
- պսակաձև (Q24.5)
- ծայրամասային (Q27.8)
- թոքային (Q25.7)
- ցանցենու (Q14.1)

պատռվածքի՝ հետևյալ դեպքերում

- ուղեղային զարկերակաերակային արատ կամ անկանոնություն (I60.8)
- նախաուղեղային անոթների արատ (I72.-)

Q28.0 Նախաուղեղային անոթների զարկերակաերակային անկանոնություն

Բնածին զարկերակաերակային նախաուղեղային անևրիզմ (չպատռված)

Q28.1 Նախաուղեղային անոթների այլ արատներ

Բնածին՝

- նախաուղեղային անոթների արատ՝ ԱՀՃ
- նախաուղեղային անևրիզմա (չպատռված)

Q28.2 Ուղեղային անոթների զարկերակաերակային արատ

Գլխուղեղի զարկերակաերակային արատ՝ ԱՀՃ

Բնածին զարկերակաերակային ուղեղային անևրիզմա (չպատռված)
Q28.3 Ուղեղային անոթների այլ արատներ
Բնածին՝

- ուղեղային անևրիզմա (չպատռված)
- ուղեղային անոթների արատ (անկանոնություն)՝ ԱՀՃ

Q28.8 Արյան շրջանառության համակարգի այլ բնածին ճշտված անկանոնություններ
Ճշտված տեղակայման բնածին անևրիզմա՝ այլ դասերում չդասակարգված

Q28.9 Արյան շրջանառության համակարգի բնածին արատ (անկանոնություն)՝ չճշտված

ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԲՆԱԾԻՆ (ԶԱՐԳԱՑՄԱՆ) ԱՐԱՏՆԵՐ (Q30-Q34)

Q30 Քթի բնածին արատներ

Բացառությամբ՝

քթի միջնապատի բնածին ծռվածության (Q67.4)

Q30.0 Խոհանների ատրեզիա (անանցքություն)

- ատրեզիա } քթուղիների (առաջային հատվածի)
- բնածին նեղացում } (հետին հատվածի)

Q30.1 Չգարգացած (ագենեզիա) և թերգարգացած քիթ
Քթի բնածին բացակայություն

Q30.2 Ճաքճքած, ներհրված և փեղեկված քիթ

Q30.3 Քթի միջնապատի բնածին պերֆորացիա (անցք)

Q30.8 Քթի բնածին այլ արատներ

Հավելյալ քիթ

Քթի ծոցի պատի բնածին անկանոնություն

Q30.9 Քթի բնածին արատ՝ չճշտված

Q31 Կոկորդի բնածին (զարգացման) արատներ

Բացառությամբ՝

բնածին (կոկորդային) ստրիդորի՝ ԱՀՃ (P28.8)

Q31.0 Կոկորդի թաղանթ

Կոկորդի թաղանթ՝

- ԱՀՃ
- ձայնային ճեղքի մակարդակի
- ձայնային ճեղքից ներքև

Q31.1 Կոկորդի բնածին նեղացում ձայնային ճեղքից ներքև

Q31.2 Կոկորդի հիպոպլազիա

Q31.3 Լարինգոցելե

Q31.5 Բնածին լարինգոմալյացիա

Q31.8 Կոկորդի այլ բնածին արատներ

- բացակայություն
 - ագենեզիա
 - ատրեզիա
- } մատանեաձև աճառի, մակկոկորդի բուն ձայնային ճեղքի, կոկորդի կամ վահանաձև աճառի

Վահանաձև աճառի փեղեկում

Կոկորդի բնածին նեղացում՝ այլ դասերում չդասակարգված

Մակկոկորդի ճեղք

Մատանեաձև աճառի հետին մասի փեղեկում

Q31.9 Կոկորդի բնածին արատ՝ չճշտված

**Q32 Շնչափողի և բրոնխի բնածին (զարգացման) արատներ
Բացառությամբ՝**

բնածին բրոնխոէկտազի (Q33.4)

Q32.0 Բնածին փափկեցում (տրախեոնալյացիա)

Q32.1 Շնչափողի բնածին այլ արատներ
Շնչափողային աճառի անկանոնություն
Շնչափողի ատրեզիա (անանցքություն)
Բնածին՝

- լայնացում
 - արատ
 - նեղացում (ստենոզ)
- } շնչափողի

Բնածին տրախեոցելե

Q32.2 Բնածին բրոնխոնալյացիա

Q32.3 Բրոնխի բնածին նեղացում

Q32.4 Բրոնխի բնածին այլ արատներ

- բացակայություն
 - ազենեզիա
 - ատրեզիա
 - բնածին արատ՝ ԱՀՃ
 - դիվերտիկուլ
- } բրոնխի

Q33 Թոքերի բնածին (զարգացման) արատներ

Q33.0 Թոքերի բնածին բուշտ (բշտային թոք)

Բնածին՝

- խորշիկավոր (մեղվահացին նմանվող) թոք
թոքի հիվանդություն՝
- բշտային (կիստոզ)
- բազմաբշտային (պոլիկիստոզ)

Բացառությամբ՝

թոքերի բշտային հիվանդության՝ ձեռք բերովի կամ չճշտված (J98.4)

Q33.1 Թոքի հավելյալ բիլթ

Q33.2 Թոքի սեկվեստրացիա

Q33.3 Թոքի ազենեզիա

Թոքի (բլթի) բացակայություն

Q33.4 Բնածին բրոնխոէկտազ

Q33.5 Էկտոպիկ հյուսվածք թոքում

Q33.6 Թոքի հիպոպլազիա և դիսպլազիա

Բացառությամբ՝

անհասունությամբ (կարճ գեստացիայով) պայմանավորված թոքային
հիպոպլազիայի (P28.0)

Q33.8 Թոքի բնածին այլ արատներ

Q33.9 Թոքի բնածին արատ՝ չճշտված

Q34 Շնչառական համակարգի օրգանների բնածին (զարգացման) այլ արատներ

Q34.0 Պլևրայի (թոքամզի) անկանոնություն

Q34.1 Միջնորմի բնածին բուշտ

Q34.8 Շնչառական օրգանների բնածին ճշտված այլ արատներ

Քիթըմպանի ատրեզիա (անանցքություն)
Q34.9 Շնչառական օրգանների բնածին արատ՝ չճշտված
Բնածին՝

- բացակայություն
 - անկանոնություն՝ ԱՀՃ
- } շնչառական օրգանների

**ՇՐԹՈՒՆՔԻ ՓԵՂԵԿՈՒՄ (ՆԱՊԱՍՏԱԿԻ ՇՐԹՈՒՆՔ) ԵՎ ՔԻՄՔԻ
ՓԵՂԵԿՈՒՄ (ԳԱՅԼԻ ԵՐԱԽ)
(Q35-Q37)**

Քթի զուգակցված արատները նույնականացնելու համար կիրառվում է լրացուցիչ
ծածկագիր՝ (Q30.2):

Բացառությամբ՝

Ռոբինի (Robin) համախտանիշի (Q87.0)

Q35 Քիմքի փեղեկում (գայլի երախ)

Ներառյալ՝

- քիմքի ճեղքը
- քիմքի փեղեկումը (palatoschisis)

Բացառությամբ՝

շրթունքի և փափուկ քիմքի համակցված փեղեկման (Q37.-)

Q35.1 Կարծր քիմքի փեղեկում

Q35.3 Փափուկ քիմքի փեղեկում

Q35.5 Կարծր և փափուկ քիմքերի համակցված փեղեկում

Q35.7 Լեզվակի փեղեկում

Q35.9 Քիմքի փեղեկում՝ չճշտված

Q36 Շրթունքի փեղեկում (նապաստակի շրթունք)

Ներառյալ՝

- շրթունքի փեղեկումը (cheiloschisis)
- շրթունքի բնածին ճեղքը
- նապաստակի շրթունքը (labium leporinum)

Բացառությամբ՝

շրթունքի և փափուկ քիմքի համակցված փեղեկման (Q37.-)

Q36.0 Շրթունքի երկկողմանի փեղեկում

Q36.1 Շրթունքի միջին (կենտրոնական) փեղեկում

Q36.9 Շրթունքի միակողմանի փեղեկում

Շրթունքի փեղեկում՝ ԱՀՃ

Q37 Շրթունքի և քիմքի համակցված փեղեկում

Q37.0 Կարծր քիմքի փեղեկում՝ համակցված շրթունքի երկկողմանի փեղեկման հետ

Q37.1 Կարծր քիմքի փեղեկում՝ համակցված շրթունքի միակողմանի փեղեկման հետ
Կարծր քիմքի և շրթունքի՝ համակցված փեղեկում՝ ԱՀՃ

Q37.2 Փափուկ քիմքի փեղեկում՝ համակցված շրթունքի երկկողմանի փեղեկման հետ

Q37.3 Փափուկ քիմքի փեղեկում՝ համակցված շրթունքի միակողմանի փեղեկման հետ
Փափուկ քիմքի և շրթունքի՝ համակցված փեղեկում՝ ԱՀՃ

Q37.4 Կարծր ու փափուկ քիմքերի՝ փեղեկում՝ համակցված շրթունքի երկկողմանի
փեղեկման հետ

Q37.5 Կարծր ու փափուկ քիմքերի՝ փեղեկում՝ համակցված շրթունքի միակողմանի փեղեկման հետ

Կարծր ու փափուկ քիմքերի և շրթունքի համակցված փեղեկում՝ ԱՀՃ

Q37.8 Քիմքի չճշտված փեղեկում՝ համակցված շրթունքի երկկողմանի փեղեկման հետ

Q37.9 Քիմքի փեղեկում՝ համակցված շրթունքի միակողմանի փեղեկման հետ՝ չճշտված Քիմքի և շրթունքի համակցված փեղեկում՝ ԱՀՃ

**ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԲՆԱԾԻՆ
(ԶԱՐԳԱՑՄԱՆ) ԱՅԼ ԱՐԱՏՆԵՐ
(Q38-Q45)**

**Q38 Լեզվի, բերանի և ըմպանի բնածին (զարգացման) այլ արատներ
Բացառությամբ՝**

մակրոստոմիայի (Q18.4)

միկրոստոմիայի (Q18.5)

Q38.0 Շրթունքի բնածին արատներ՝ այլ դասերում չդասակարգված
Բնածին՝

- շրթունքի խուղակ
- շրթունքի զարգացման արատ՝ ԱՀՃ

Վան դեր Վուդի (Van der Woude) համախտանիշ

Բացառությամբ՝

շրթունքի փեղեկման (Q36.-)

շրթունքի փեղեկման՝

- համակցված քիմքի փեղեկման հետ (Q37.-)

մակրոխեյլիայի (մեծ շրթունք) (Q18.6)

միկրոխեյլիայի (փոքր շրթունք) (Q18.7)

Q38.1 Անկիլոզլոսիա

լեզվի սանձիկի կարճացում

Q38.2 Մակրոզլոսիա

Q38.3 Լեզվի բնածին այլ արատներ

Ազլոսիա

Լեզվի երկատում

Բնածին՝

- սերտաճում (կպում)
- ճեղք
- արատ՝ ԱՀՃ

} Լեզվի

Հիպոզլոսիա

Լեզվի հիպոպլազիա

Միկրոզլոսիա

Q38.4 Թքագեղձերի և ծորանների բնածին անկանոնություններ
Բացակայություն՝

- հավելյալ
- ատրեզիա (անանցքություն)

} թքագեղձի կամ ծորանի

Թքագեղձի բնածին խուղակ

Q38.5 Քիմքի բնածին արատներ՝ այլ դասերում չդասակարգված

Լեզվակի բացակայություն

Քիմքի բնածին արատ՝ ԱՀՃ

Բարձրակամար քիմք

Բացառությամբ՝

քիմքի փեղեկման (Q35.-)

քիմքի փեղեկման՝

- համակցված շրթունքի փեղեկման հետ (Q37.-)

Q38.6 Բերանի բնածին այլ արատներ

Բերանի բնածին արատ՝ ԱՀՃ

Q38.7 Ընկանային գրպանիկ

Ընկանային գրպանիկ (դիվերտիկուլ)

Բացառությամբ՝

ընկանային գրպանիկի համախտանիշի (D82.1)

Q38.8 Ընկանի բնածին այլ արատներ

ընկանի բնածին արատ՝ ԱՀՃ

Q39 Կերակրափողի բնածին (զարգացման) արատներ

Q39.0 Կերակրափողի ատրեզիա (անանցքություն)՝ առանց խուղակի

Կերակրափողի ատրեզիա՝ ԱՀՃ

Q39.1 Կերակրափողի ատրեզիա՝ շնչափող-կերակրափողային խուղակով

Կերակրափողի ատրեզիա՝ բրոնխ-կերակրափողային խուղակով

Q39.2 Բնածին շնչափող-կերակրափողային խուղակ՝ առանց ատրեզիայի

Բնածին շնչափող-կերակրափողային խուղակ՝ ԱՀՃ

Q39.3 Կերակրափողի բնածին նեղացում (ստենոզ) և ստրիկտուրա (սեղմվածք)

Q39.4 Կերակրափողային թաղանթ

Q39.5 Կերակրափողի բնածին լայնացում

Q39.6 Կերակրափողի դիվերտիկուլ

Կերակրափողային գրպան

Q39.8 Կերակրափողի բնածին այլ արատներ

- Բացակայություն
 - Բնածին տեղաշարժ
 - Երկատում (երկատում)
- } կերակրափողի

Q39.9 Կերակրափողի բնածին արատ՝ չճշտված

Q40 Ստամոքսական ուղու վերին մասի բնածին (զարգացման) այլ արատներ

Q40.0 Ստամոքսաեղքի բնածին գերաճական նեղացում (հիպերտրոֆիկ պիլորոստենոզ)

Բնածին կամ վաղ մանկական՝

- կծկում
 - գերաճ (հիպերտրոֆիա)
 - սպազմ
 - ստենոզ
 - ստրիկտուրա
- } ստամոքսաեղքի

Q40.1 Ստոծանու կերակրափողային բացվածքի բնածին ճողվածք

Ստամոքսամուտքի (կարդիալ հատված) տեղաշարժ՝ ստոծանու կերակրափողի բացվածքի միջոցով

Բացառությամբ՝

ստոծանու բնածին ճողվածքի (Q79.0)

Q40.2 Ստամոքսի այլ ճշտված բնածին արատներ

Բնածին՝

- ստամոքսի տեղաշարժ
- ստամոքսի դիվերտիկուլ

- ավազե ժամացույցի տեսքով ստամոքս

Ստամոքսի երկատում

Մեգալոգաստրիա

Միկրոգաստրիա

Q40.3 Ստամոքսի բնածին արատ՝ չճշտված

Q40.8 Մարսողական ուղու վերին հատվածի բնածին այլ ճշտված արատներ

Q40.9 Մարսողական ուղու վերին հատվածի բնածին արատ՝ չճշտված
Բնածին՝

- | | | |
|-----------------------------|---|--------------------|
| • անկանոնություն (անոմալիա) | } | մարսողական ուղու |
| • դեֆորմացիա | | վերին հատվածի՝ ԱՀՃ |

Q41 Բարակ աղու բնածին բացակայություն, ատրեզիա (անանցքություն) և նեղացում (սրենոզ)

Ներառյալ՝

բարակ աղու կամ աղիների բնածին խցանումը, անանցանելիությունը (օկլյուզիա) և սեղմվածքը՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

մեկոնիումային աղիքային անանցանելիության (հլետու) (E84.1)

Q41.0 12-մատնյա աղիքի բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում

Q41.1 Աղիճ աղու (jejunum) բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում
Խնձորի կեղևի համախտանիշ
Աղիճ աղու (jejunum) սերտաճում

Q41.2 Ջստաղիքի (ileum) բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում

Q41.8 Բարակ աղու այլ ճշտված հատվածների բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում

Q41.9 Բարակ աղու չճշտված հատվածի բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում
Աղիների բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում՝ ԱՀՃ

Q42 Հաստ աղու բնածին բացակայություն, ատրեզիա (անանցքություն) և նեղացում (սրենոզ)

Ներառյալ՝

հաստ աղու բնածին խցանումը, անանցելիությունը (օկլյուզիա) և ստրիկտուրա (սեղմվածքը)

Q42.0 Ուղիղ աղու բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում՝ խուլակով

Q42.1 Ուղիղ աղու բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում՝ առանց խուլակի
Ուղիղ աղու սերտաճում

Q42.2 Հետանցքի բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում՝ խուլակով

Q42.3 Հետանցքի բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում՝ առանց խուլակի
Հետանցքի սերտաճում

Q42.8 Հաստ աղու այլ հատվածների բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում

Q42.9 Հաստ աղու հատվածի բնածին բացակայություն, ատրեզիա և նեղացում՝
չճշտված

Q43 Աղիների այլ բնածին (զարգացման) արարներ

Q43.0 Մեկելի (Meckel) դիվերտիկուլ

Պահպանված՝

- պորտ-միջընդերքային ծորան

- դեղնուցային ծորան
- Q43.1 Հիրշպրունգի (Hirschsprung) հիվանդություն
Ազանգլիոնոզ
Բնածին (ազանգլիոնիկ) մեգակլոլոն
- Q43.2 Խթաղիքի այլ բնածին ֆունկցիոնալ խանգարումներ
Խթաղիքի (colon) բնածին լայնացում
- Q43.3 Աղիների ամրացման (ֆիքսացիա) բնածին անկանոնություններ (արատներ)
Բնածին կպումներ (ծգաններ)
 - ճարպոնի, ախտաբանական
 - որովայնամզի
 Ջեկսոնի (Jackson) թաղանթ
 Խթաղիքի ոչ ճիշտ շրջադարձ
 Շրջադարձ՝
 - անբավարար
 - ոչ լրիվ
 - անավարտ
 } կույր աղիքի և խթաղիքի
- Ընդհանուր միջընդերք
- Q43.4 Աղու կրկնապատկում
- Q43.5 Արտատեղային (էկտոպիկ) հետանցք
- Q43.6 Ուղիղ աղիքի և հետանցքի բնածին խուղակ
Բացառությամբ՝
բնածին խուղակի
 - ուղիղաղիք-հեշտոցային (Q52.2)
 - միզուկ-ուղիղաղիքային (Q64.7)
 պոչուկային ուղու (պիլոնիդայ) խուղակի կամ ծոցի (L05.-)
 ուղիղ աղիքի և հետանցքի բացակայությամբ, ատրեզիայով (անանցքություն) և նեղացումով (ստենոզ) (Q42.0, Q42.2)
- Q43.7 Պահպանված կլոակա (կոյանցք)
Կլոակա՝ ԱՀՃ
- Q43.8 Աղիների այլ ճշտված բնածին արատներ
Բնածին՝
 - կույր հանգույցի համախտանիշ
 - խթաղիքի դիվերտիկուլիտ
 - աղիների դիվերտիկուլ
 Դոլիխոկոլոն
 Մեգալոապենդիքս
 Մեգալոդուոդենում
 Միկրոկոլոն
 Տրանսպոզիցիա՝
 - որդանման ելունի
 - հաստ աղու
 - աղիների
- Q43.9 Աղիքերի բնածին արատ՝ չճշտված

Q44 Լեղապարկի, լեղուղիների և լյարդի բնածին (զարգացման) արատներ

- Q44.0 Լեղապարկի բնածին ազենեզիա (բացակայություն), ապլազիա (ապաճ) և հիպոպլազիա (թերաճ)
Լեղապարկի բնածին բացակայություն

- Q44.1 Լեղապարկի բնածին այլ արատներ
 Լեղապարկի զարգացման բնածին արատ՝ ԱՀՃ
 Ներյարդային լեղապարկ
- Q44.2 Լեղածորանների ատրեզիա (անանցքություն)
- Q44.3 Լեղածորանների բնածին նեղացում (ստենոզ) և ստրիկտուրա (սեղմվածք)
- Q44.4 Լեղածորանի բուշտ (կիստա)
- Q44.5 Լեղուղիների բնածին այլ արատներ
 Հավելյալ լյարդային ծորան
 Լեղածորանի բնածին արատ՝ ԱՀՃ
 Կրկնակի
 - լեղածորան
 - բշտային ծորան
- Q44.6 Լյարդի կիստոզ հիվանդություն
 Լյարդի ֆիբրոկիստոզ հիվանդություն
- Q44.7 Լյարդի բնածին այլ արատներ
 Հավելյալ լյարդ
 Ալաջիլի (Alagille) համախտանիշ
 Բնածին
 - լյարդի բացակայություն
 - հեպատոմեգալիա
 - լյարդի արատ՝ ԱՀՃ

**Q45 Մարսողական համակարգի օրգանների բնածին (զարգացման) այլ արատներ
 Բացառությամբ՝**

- բնածին
 - ստոծանու ճողվածքի (Q79.0)
 - ստոծանու կերակրափողային բացվածքի ճողվածքի (Q40.1)
- Q45.0 Ենթաստամոքսային գեղձի բնածին ագենեզիա (բացակայություն), ապլազիա (ապաճ) և հիպոպլազիա (թերաճ)
 Ենթաստամոքսային գեղձի բնածին բացակայություն
- Q45.1 Օղակաձև ենթաստամոքսային գեղձ
- Q45.2 Ենթաստամոքսային գեղձի բնածին բուշտ (կիստա)
- Q45.3 Ենթաստամոքսային գեղձի և դրա ծորանի բնածին այլ արատներ
 Հավելյալ ենթաստամոքսային գեղձ
 Ենթաստամոքսային գեղձի կամ դրա ծորանի բնածին արատ՝ ԱՀՃ

Բացառությամբ՝

- Շաքարային դիաբետի՝
 - բնածին (E10.-)
 - նորածնի՝ (P70.-)
 ենթաստամոքսային գեղձի կիստոֆիբրոզի (E84.-)
- Q45.8 Մարսողական համակարգի այլ ճշտված բնածին արատներ
 Մարսողական ուղու (լրիվ) (մասնակի) բացակայություն՝ ԱՀՃ
 - Երկատում (կրկնապատկում) } մարսողական օրգանների՝ ԱՀՃ
 - Ոչ ճիշտ դիրք, բնածին }
- Q45.9 Մարսողական համակարգի բնածին արատ՝ չճշտված
 Բնածին՝
 - անկանոնություն } մարսողական համակարգի՝ ԱՀՃ
 - դեֆորմացիա }

**ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԲՆԱԾԻՆ (ՁԱՐԳԱՑՄԱՆ) ԱՐԱՏՆԵՐ
(Q50-Q56)**

Բացառությամբ՝

անդրոգտենային դիմակայունության (ռեզիստենտության) համախտանիշի (E34.5)
համախտանիշերի՝ կապված քրոմոսոմների ձևի և թվի անկանոնությունների
հետ (Q90-Q99)
տեստիկուլյար ֆեմինիզացիայի համախտանիշի (E34.5)

Q50 Ձվարանների, ֆալոպյան փողերի և լայն կապանների բնածին արարներ

Q50.0 Ձվարանի բնածին բացակայություն

Բացառությամբ՝

Տերների (Turner) համախտանիշի (096.-)

Q50.1 Ձվարանի զարգացման բուշտ (կիստա)

Q50.2 Ձվարանի բնածին ոլորում

Q50.3 Ձվարանի բնածին այլ արատներ

Հավելյալ ձվարան

Ձվարանի զարգացման բնածին արատ՝ ԱՀՃ

Ձվարանի ձգվածություն (ցուպիկաձև գոնադ)

Q50.4 Ֆալոպյան փողի սաղմնային բուշտ

Ֆիմբրիալ բուշտ

Q50.5 Լայն կապանի սաղմնային բուշտ

Բուշտ

- էպոֆորոնի
- Գարտների (Gartner) ծորանի
- հարձվարանային (պարովարիալ)

Q50.6 Ֆալոպյան փողերի և լայն կապանի բնածին այլ արատներ

- բացակայություն
 - հավելյալ
 - ատրեզիա (անանցքություն)
- } ֆալոպյան փողի կամ լայն կապանի

Ֆալոպյան փողի կամ լայն կապանի բնածին արատ՝ ԱՀՃ

Q51 Արգանդի մարմնի և պարանոցի բնածին արարներ

Q51.0 Արգանդի բնածին ագենեզիա (բացակայություն) և ապլազիա (ապաճություն)
Արգանդի բնածին բացակայություն

Q51.1 Արգանդի մարմնի երկատում՝ համակցված արգանդի պարանոցի և հեշտոցի
երկատման հետ

Q51.2 Արգանդի այլ երկատում

Արգանդի երկատում՝ ԱՀՃ

Q51.3 Երկեղջյուր արգանդ

Q51.4 Միաեղջյուր արգանդ

Q51.5 Արգանդի պարանոցի բնածին բացակայություն (ագենեզիա) և ապաճում
(ապլազիա)

Արգանդի պարանոցի բնածին բացակայություն

Q51.6 Արգանդի պարանոցի սաղմնային բուշտ (կիստա)

Q51.7 Բնածին խուլակ արգանդի և մարսողական ու միզային ուղիների միջև

Q51.8 Արգանդի մարմնի և պարանոցի բնածին այլ արատներ

Արգանդի մարմնի և պարանոցի հիպոպլազիա
Q51.9 Արգանդի մարմնի և պարանոցի բնածին այլ արատ՝ չճշտված

Q52 Կանանց սեռական օրգանների բնածին այլ արատներ

Q52.0 Հեշտոցի բնածին բացակայություն

Q52.1 Հեշտոցի երկատում

Միջնորմով (խտրոցով) բաժանված հեշտոց

Բացառությամբ՝

հեշտոցի երկատման՝ արգանդի մարմնի և պարանոցի երկատման հետ համակցված (Q51.1)

Q52.2 Ուղիղաղիք-հեշտոցային բնածին խուլակ

Բացառությամբ՝

կոյանքի (կլոակա) (Q43.7)

Q52.3 Հեշտոցի մուտքը լրիվ փակող կուսաթաղանթ

Q52.4 Հեշտոցի բնածին այլ արատներ

Հեշտոցի զարգացման արատ՝ ԱՀՃ

Բուշտ՝

- Նուկի (Nuck) խողովակի՝ բնածին
- սաղմնային հեշտոցի

Q52.5 Շուրթերի սերտաճում

Q52.6 Ծիլկի բնածին անկանոնություն

Q52.7 Վուլվայի այլ արատներ

Բնածին՝

- բացակայություն
 - բուշտ
 - արատ՝ ԱՀՃ
- } վուլվայի

Q52.8 Կանանց սեռական օրգանների բնածին այլ ճշտված արատներ

Q52.9 Կանանց սեռական օրգանների բնածին արատ՝ չճշտված

Q53 Ամորձու չիջնելը

Q53.0 Արտատեղային (էկտոպիկ) ամորձի

Ամորձու միակողմանի կամ երկկողմանի էկտոպիա

Q53.1 Միակողմանի չիջած ամորձի

Q53.2 Երկկողմանի չիջած ամորձի

Q53.9 Չիջած ամորձի՝ չճշտված

Կրիպտօրխիզմ՝ ԱՀՃ

Q54 Հիպոսպադիա

Բացառությամբ՝

էպիսպադիայի (Q64.0)

Q54.0 Առնանդամի գլխիկի հիպոսպադիա

Հիպոսպադիա՝

- պսակաձև (կորոնայ)
- գլխիկային (գլանդուլյար)

Q54.1 Առնանդամի մարմնի հիպոսպադիա

Q54.2 Առնանդամ-փոշտային հիպոսպադիա

Q54.3 Շեքային հիպոսպադիա

- Q54.4 Առնանդամի բնածին ծովածություն՝ ներքև
- Q54.8 Այլ հիպոսպադիա
- Q54.9 Հիպոսպադիա՝ չճշտված

**Q55 Տղամարդկանց սեռական օրգանների բնածին այլ արատներ
Բացառությամբ՝**

- բնածին հիդրոցելի (P83.5)
- հիպոսպադիայի (Q54.-)
- Q55.0 Ամորձու բացակայություն և ապաճում (ապլազիա)
Մոնօրխիզմ
- Q55.1 Ամորձու և փոշտի թերաճություն (հիպոպլազիա)
Ամորձիների սերտաճում
- Q55.2 Ամորձու և փոշտի բնածին այլ արատներ
Ամորձու կամ փոշտի զարգացման արատ՝ ԱՀՃ
Պոլիօրխիզմ
Ռետրակտիլ ամորձի (կրիպտօրխիզիզմ)
Թափառող ամորձի
- Q55.3 Սերմնածորանի (ductus efferens, vas efferens) ատրեզիա (անանցքություն)
- Q55.4 Սերմնածորանի, մակամորձու, սերմնաբջջերի և շագանակագեղձի զարգացման
բնածին այլ արատներ
Բացակայություն կամ ապլազիա՝
 - շագանակագեղձի
 - սերմնալարի
 Սերմնածորանի, մակամորձու, սերմնաբջջերի կամ շագանակագեղձի բնածին
արատ՝ ԱՀՃ
- Q55.5 Առնանդամի բնածին բացակայություն և ապլազիա (ապաճում)
- Q55.6 Առնանդամի բնածին այլ արատներ
Առնանդամի բնածին արատ՝ ԱՀՃ
Առնանդամի կողքային (լատերալ) ծովածություն
Առնանդամի հիպոպլազիա
- Q55.8 Տղամարդկանց սեռական օրգանների այլ ճշտված բնածին արատներ
- Q55.9 Տղամարդկանց սեռական օրգանների բնածին արատներ՝ չճշտված
Բնածին՝

- անկանոնություն
 - դեֆորմացիա
- } տղամարդու սեռական
} օրգանի՝ ԱՀՃ

**Q56 Սեռի անորոշություն, կեղծ հերմաֆրոդիտիզմ (երկսեռություն)
Բացառությամբ՝**

- կեղծ հերմաֆրոդիտիզմի՝
 - կանանց՝ ադրենոկորտիկալ խանգարումով (E25.-)
 - տղամարդկանց՝ անդրոգեն դիմակայունությամբ (E34.5)
 - քրոմոսոմային ճշտված անկանոնությամբ (Q96-Q99)
- Q56.0 Հերմաֆրոդիտիզմ (երկսեռություն)՝ այլ դասերում չդասակարգված
Սեռական գեղձ՝ ձվարանի և ամորձու հյուսվածքային բաղադրիչների
պարունակությամբ (ovotestis)
- Q56.1 Տղամարդկանց կեղծ հերմաֆրոդիտիզմ՝ այլ դասերում չդասակարգված
Տղամարդկանց կեղծ հերմաֆրոդիտիզմ՝ ԱՀՃ
- Q56.2 Կանանց կեղծ հերմաֆրոդիտիզմ՝ այլ դասերում չդասակարգված

- Կանանց կեղծ հերմաֆրոդիտիզմ՝ ԱՀԾ
Q56.3 Կեղծ հերմաֆրոդիտիզմ՝ չճշտված
Q56.4 Սեռի անորոշություն՝ չճշտված
Սեռական օրգանների անորոշություն

**ՄԻՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԾԻՆ (ՁԱՐԳԱՑՄԱՆ) ԱՐԱՏՆԵՐ
(Q60-Q64)**

Q60 Երիկամային ագենեզիա և երիկամի այլ ռեդուկցիոն (չափերի նվազումով կամ բուն օրգանի բացակայությամբ ուղեկցվող) արատներ

Ներառյալ՝

- երիկամի ապաճումը (ատրոֆիա)՝
- բնածին
 - վաղ մանկական հասակի (ինֆանտիլ)
- երիկամի բնածին բացակայությունը
- Q60.0 Երիկամի ագենեզիա՝ միակողմանի
Q60.1 Երիկամի ագենեզիա՝ երկկողմանի
Q60.2 Երիկամի ագենեզիա՝ չճշտված
Q60.3 Երիկամի հիպոպլազիա՝ միակողմանի
Q60.4 Երիկամի հիպոպլազիա՝ երկկողմանի
Q60.5 Երիկամի հիպոպլազիա՝ չճշտված
Q60.6 Պոտերի (Potter) համախտանիշ

Q61 Երիկամի կիսորոգ հիվանդություն

Բացառությամբ՝

- երիկամի ձեռքբերովի բշտի (կիստայի) (N28.1)
Պոտերի համախտանիշի (Q60.6)
- Q61.0 Երիկամի բնածին եզակի բուշտ
Երիկամի բուշտ (բնածին) (եզակի)
- Q61.1 Երիկամի պոլիկիստոզ՝ աուտոսոմ ռեցեսիվային
Երիկամի պոլիկիստոզ՝ վաղ մանկական (ինֆանտիլ) տիպի
Q61.2 Երիկամի պոլիկիստոզ՝ աուտոսոմ դոմինանտային
Երիկամի պոլիկիստոզ՝ մեծահասակի տիպի
Q61.3 Երիկամի պոլիկիստոզ՝ չճշտված
Q61.4 Երիկամի դիսպլազիա
Բազմակիստոզային
- դիսպլաստիկ երիկամ
 - երիկամ (զարգացման)
 - երիկամի հիվանդություն
 - երիկամի դիսպլազիա

Բացառությամբ՝

- երիկամի պոլիկիստոզային հիվանդության (Q61.1–Q61.3)
- Q61.5 Երիկամի մեդուլյար կիստոզ
Սպունգանման երիկամ՝ ԱՀԾ
- Q61.8 Երիկամի այլ կիստոզ հիվանդություններ
Ֆիբրոկիստոզային
- երիկամ
 - երիկամային դեգեներացիա կամ հիվանդություն
- Q61.9 Երիկամի կիստոզ հիվանդություն՝ չճշտված

Մեկել-Գրուբերի (Meckel-Gruber) համախտանիշ

Q62 Երիկամի ավազանի անցանելիության բնածին խանգարումներ (օբստրուկտիվ դեֆեկտներ) և միզածորանի բնածին արափներ

Q62.0 Բնածին հիդրոնեֆրոզ

Q62.1 Միզածորանի ատրեզիա (անանցքություն) և նեղացում (ստենոզ)
Բնածին խցանում (օկլյուզիա)

- միզածորանի
- ավազան-միզածորանային միացման
- միզածորան-միզապարկային բացվածքի

Միզածորանի անանցանելիություն

Q62.2 Բնածին մեգալոուրետեր (megaloureter)

Միզածորանի բնածին լայնացում

Q62.3 Երիկամի ավազանի և միզածորանի անցանելիության այլ խանգարումներ (օբստրուկտիվ դեֆեկտներ)

Բնածին ուրեթերոցելե (ureterocele)

Q62.4 Միզածորանի ագենեզիա

Միզածորանի բացակայություն

Q62.5 Միզածորանի երկատում (կրկնապատկում)

- Հավելյալ
 - Կրկնակի
- } միզածորան

Q62.6 Միզածորանի ոչ ճիշտ դիրք

- Ծռում, թեքում (դեֆլեքիա)
 - Տեղաշարժ
 - Էկտոպիկ
 - Ոչ նորմալ իմպլանտացիա
- } միզածորանի կամ
միզածորանի բացվածքի

Q62.7 Բնածին միզապարկ-միզածորան-երիկամային ռեֆլյուքս

Q62.8 Միզածորանի բնածին այլ արատներ

Միզածորանի արատ՝ ԱՀՃ

Q63 Երիկամի բնածին այլ արափներ

Բացառությամբ՝

բնածին նեֆրոտիկ համախտանիշի (N04.-)

Q63.0 Հավելյալ երիկամ

Q63.1 Բլթակաձև, ձուլված և պայտաձև երիկամ

Q63.2 Էկտոպիկ երիկամ

Բնածին տեղաշարժված երիկամ

Երիկամի ոչ ճիշտ պտույտ

Q63.3 Հիպերպլաստիկ և հսկա (գիգանտ) երիկամ

Q63.8 Երիկամի բնածին ճշտված այլ արատներ

Երիկամի բնածին քար

Q63.9 Երիկամի բնածին արատ՝ չճշտված

Q64 Միզային համակարգի բնածին այլ արափներ

Q64.0 Էպիսպադիա

Բացառությամբ՝

Հիպոսպադիայի (Q54.-)

Q64.1 Միզապարկի էքստրոֆիա

Միզապարկի էկտոպիա

Միզապարկի արտաշրջում (էքստրավերզիա)

Q64.2 Բնածին հետին միզուկային փականներ

Q64.3 Միզուկի և միզապարկի պարանոցի այլ ատրեզիա (անանցքություն) և նեղացում (ստենոզ)

Բնածին՝

- միզապարկի պարանոցի անանցանելիություն
- ստրիկտուրա
- միզուկի
- միզուկի արտաքին բացվածքի
- միզապարկ-միզուկային բացվածքի

Միզուկի անանցանելիություն

Q64.4 Միզուկի (urachus, միզային ծորան) անկանոնություն (արատ)

Միզուկի բուշտ

Բաց (պահպանված) միզուկ

Միզուկի արտանկում

Q64.5 Միզապարկի և միզուկի բնածին բացակայություն

Q64.6 Միզապարկի բնածին գրպանիկ (դիվերտիկուլ)

Q64.7 Միզապարկի և միզուկի բնածին այլ արատներ

Հավելյալ՝

- միզապարկ
- միզուկ

Բնածին՝

- միզապարկի ճողվածք
- միզապարկի կամ միզուկի անկանոնություն (արատ)՝ ԱՀՃ
- արտանկում (պրոլապս)՝
 - միզապարկի (լորձաթաղանթի)
 - միզուկի
 - միզուկի արտաքին անցքի
- միզուկ-ուղիղաղիքային (urethrorectal) խուղակ

Կրկնակի՝

- միզուկ
- միզուկի արտաքին անցք

Q64.8 Միզային համակարգի բնածին այլ ճշտված արատներ (անկանոնություններ)

Q64.9 Միզային համակարգի բնածին արատ՝ չճշտված

Բնածին՝

- անկանոնություն
 - դեֆորմացիա
- } միզային համակարգի՝ ԱՀՃ

ՄԿԱՆԱԿՄԱԽՔԱՅԻՆ (ՈՍԿՐԱՄԿԱՆԱՅԻՆ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐ ԵՎ ՁԵՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ (Q65-Q79)

Q65 Ազդրի բնածին դեֆորմացիաներ

Բացառությամբ՝

չխկացող ազդրի (R29.4)

Q65.0 Ազդրի բնածին հողախախտ՝ միակողմանի

Q65.1 Ազդրի բնածին հողախախտ՝ երկկողմանի

- Q65.2 Ազդրի բնածին հոդախախտ՝ չճշտված
- Q65.3 Ազդրի բնածին ենթահոդախախտ՝ միակողմանի
- Q65.4 Ազդրի բնածին ենթահոդախախտ՝ երկկողմանի
- Q65.5 Ազդրի բնածին ենթահոդախախտ՝ չճշտված
- Q65.6 Անկայուն ազդր
 Հոդախախտի ենթակա (հակված) ազդր
 Ենթահոդախախտի ենթակա (հակված) ազդր
- Q65.8 Ազդրի այլ բնածին դեֆորմացիաներ
 Ազդրի վզիկի անտեվերզիա (դեպի ներս պտտում)
 Քացախափոսի բնածին դիսպլազիա
 Բնածին կոնք-ազդրային հոդ՝
- դրսածոություն (coxa valga)
 - ներսածոություն (coxa vara)
- Q65.9 Ազդրի բնածին դեֆորմացիա՝ չճշտված

**Q66 Ոտնաթաթերի բնածին դեֆորմացիաներ
 Բացառությամբ՝**

- ոտնաթաթերի ռեդուկցիոն (կարճացմամբ կամ բացակայությամբ ուղեկցվող)
 արատների (Q72.-)
- վալգուսային դեֆորմացիաների (ծեռքբերովի) (M21.0)
 վարուսային դեֆորմացիաների (ծեռքբերովի) (M21.1)
- Q66.0 Էկվինովարուսային ծուռթաթություն
- Q66.1 Կրնկոսկրավարուսային ծուռթաթություն
- Q66.2 Մետատարզալ վարուս
- Q66.3 Ոտնաթաթերի այլ բնածին վարուսային դեֆորմացիաներ
 Ոտնաթաթի բթամատի ներծռային ձևափոխում՝ բնածին (hallux varus)
- Q66.4 Կալկանեովալգուսային ծուռթաթություն
- Q66.5 Բնածին հարթաթաթություն (pes planus)
 Հարթաթաթ՝
- բնածին
 - ռիզիդ
 - սպաստիկ (շրջված)
- Q66.6 Ոտնաթաթի այլ բնածին վալգուսային դեֆորմացիաներ
 Մետատարզալ վալգուս
- Q66.7 Խորակամար (սնամեջ) ոտնաթաթ (pes cavus)
- Q66.8 Ոտնաթաթի այլ բնածին դեֆորմացիաներ
 Ծուռթաթ՝ ԱՀՃ
 Մուրճիկանման ոտնամատ (բնածին)
 Ծուռթաթություն՝
- ԱՀՃ
 - ոչ համաչափ (ասիմետրիկ)
- Գարշապարային (տարզալ) միածուլում (կրնկոսկր-նավակոսկրային)
 Ուղղահայաց վեգ (talus)
- Q66.9 Ոտնաթաթի բնածին դեֆորմացիա՝ չճշտված

**Q67 Գլխի, դեմքի, ողնաշարի և կրծքավանդակի բնածին մկանակմախքային
 դեֆորմացիաներ**

Բացառությամբ՝

բնածին արատների համախտանիշերի՝ դասակարգված Q87.-դասում

Պոտերի համախտանիշի (Q60.6)

Q67.0 Դեմքի անհամաչափություն (ասիմետրիա)

Q67.1 Տափակած դեմք

Q67.2 Դոլիխոցեֆալիա

Q67.3 Պլազիոցեֆալիա

Q67.4 Գանգի, դեմքի և ծնոտի այլ բնածին դեֆորմացիաներ

Գանգի ներհրված տեղամասեր

Քթի միջնապատի ծռում (բնածին)

Դեմքի կեսի (հեմիֆացիալ) ապաճում (ատրոֆիա) կամ գերաճ (հիպերտրոֆիա)

Տափակած քիթ (բնածին)

Բացառությամբ՝

ատամնադիմային անկանոնությունների ներառյալ՝ կծվածքի խանգարում (K07.-)

սիֆիլիսային թամբաձև քթի (A50.5)

Q67.5 Ողնաշարի բնածին դեֆորմացիա

Բնածին սկոլիոզ

- ԱՀՃ
- դիրքային (պոստուրալ)

Բացառությամբ՝

վաղ հասակի (ինֆանտի) իդիոպաթիկ սկոլիոզի (M41.0)

ոսկրային բնածին անկանոնության հետևանքով առաջացած սկոլիոզի (Q76.3)

Q67.6 Բնածին ձագարաձև («կոշկակարի», «փոս ընկած») կուրծք (pectus excavatum)

Q67.7 Բնածին արտացցված («հավի», «աղավնո») կուրծք (pectus carinatum)

Q67.8 Կրծքավանդակի այլ բնածին դեֆորմացիաներ

Կրծքավանդակի պատի բնածին դեֆորմացիա՝ ԱՀՃ

Q68 Այլ բնածին մկանակմախքային դեֆորմացիաներ

Բացառությամբ՝

վերջույթի (վերջույթների) ռեդուկցիոն (լրիվ կամ մասնակի բացակայությամբ,

կարճացմամբ կամ հիպոպլազիայով ուղեկցվող) արատների՝ ԱՀՃ

Q68.0 Կրծոսկր-անրակ-պտկաձևային մկանի բնածին դեֆորմացիա

Բնածին (կրծոսկրապտկաձևային) ծուռվզություն (Torticollis)

Կրծոսկր-անրակ-պտկաձևային մկանի կոնտրակտուրա

Կրծոսկրապտկաձևային ուռուցք (բնածին)

Q68.1 Ձեռքի բնածին դեֆորմացիա

Մատնածայրի բնածին հաստացում

Բահանման ձեռք (բնածին)

Q68.2 Ծնկի բնածին դեֆորմացիա

Բնածին

- ծնկի հոդախախտ
- գերտարածված ծունկ (ծնկան հոդի դեֆորմացիա՝ սրունքի և ազդրի միջև դեպի առաջ բացված անկյունով) (genu recurvatum)

Q68.3 Ազդրի բնածին ծովածություն

Բացառությամբ՝

ազդրի (վզիկի) անտեվերզիայի (դեպի ներս պտտում) (Q65.8)

Q68.4 Ոլոքի և նրբոլոքի բնածին ծովածություն

Q68.5 Ստորին վերջույթի երկար ոսկրերի բնածին ծովածություն՝ չճշտված

Q68.8 Այլ ճշտված բնածին մկանակմախքային դեֆորմացիաներ

Բնածին

- դեֆորմացիա՝

- անրակի
- արմնկի
- նախաբազկի
- թիակի
- հոդախախտ՝
 - արմնկային
 - ուսային

Q69 Պոլիդակտիլիա

- Q69.0 Ձեռքի հավելյալ մատ (մատներ)
- Q69.1 Ձեռքի հավելյալ բութ մատ (մատներ)
- Q69.2 Ոտնաթաթի հավելյալ մատ (մատներ)
Ոտնաթաթի հավելյալ բութ մատ
- Q69.9 Պոլիդակտիլիա՝ չճշտված
Ավելորդ մատ (մատներ)՝ ԱՀՃ

Q70 Սինդակտիլիա

- Q70.0 Ձեռքի միաձուլված մատներ
Ձեռքի մատների բարդ սինդակտիլիա՝ սինոստոզի հետ միասին
- Q70.1 Ձեռքի մատների թաղանթակազմ միացում
Ձեռքի մատների պարզ սինդակտիլիա՝ առանց սինոստոզի
- Q70.2 Ոտնաթաթի միաձուլված մատներ
Ոտնաթաթի մատների բարդ սինդակտիլիա՝ սինոստոզի հետ միասին
- Q70.3 Ոտնաթաթի մատների թաղանթակազմ միացում
Ոտնաթաթի մատների պարզ սինդակտիլիա՝ առանց սինոստոզի
- Q70.4 Պոլիսինդակտիլիա
- Q70.9 Սինդակտիլիա՝ չճշտված
Սիմֆալանգիա՝ ԱՀՃ (մատի հարակից ֆալանգների բնածին միաձուլում)

Q71 Վերին վերջույթի ռեդուկցիոն (լրիվ կամ մասնակի բացակայությամբ, կարճացմամբ կամ հիպոպլազիայով ուղեկցվող) արատներ (դեֆեկտներ)

- Q71.0 Վերին վերջույթի (վերջույթների) ամբողջական բնածին բացակայություն
- Q71.1 Բազկի և նախաբազկի բնածին բացակայություն՝ ձեռքի առկայությամբ
- Q71.2 Նախաբազկի և ձեռքի երկկողմանի բնածին բացակայություն
- Q71.3 Ձեռքի և մատի (մատների) բնածին բացակայություն
- Q71.4 Ճաճանչոսկրի երկայնական ռեդուկցիոն (կարճացնող) արատ
Ձեռքի ծովածություն (բնածին)
Ձեռքի ճաճանչային ծովածություն
- Q71.5 Ծղիկոսկրի երկայնական ռեդուկցիոն (կարճացնող) արատ
- Q71.6 Չանչանման ձեռք
- Q71.8 Վերին վերջույթի (վերջույթների) ռեդուկցիոն այլ արատներ
Վերին վերջույթի (վերջույթների) բնածին կարճացում
- Q71.9 Վերին վերջույթի ռեդուկցիոն արատ՝ չճշտված

Q72 Ստորին վերջույթի (վերջույթների) ռեդուկցիոն (լրիվ կամ մասնակի բացակայությամբ, կարճացմամբ կամ հիպոպլազիայով ուղեկցվող) այլ արատներ (դեֆեկտներ)

- Q72.0 Ստորին վերջույթի (վերջույթների) ամբողջական բնածին բացակայություն
- Q72.1 Ազդրի և սրունքի բնածին բացակայություն՝ ոտնաթաթի առկայությամբ
- Q72.2 Սրունքի և ոտնաթաթի երկկողմանի բնածին բացակայություն
- Q72.3 Ոտնաթաթի և մատի (մատների) բնածին բացակայություն
- Q72.4 Ազդրոսկրի երկայնական ռեդուկցիոն (կարճացնող) արատ
Ազդրի մոտակա հատվածի կարճացում
- Q72.5 Ուրբի երկայնական ռեդուկցիոն (կարճացնող) արատ
- Q72.6 Նրբուրբի երկայնական ռեդուկցիոն (կարճացնող) արատ
- Q72.7 Փեղեկված ոտնաթաթ
- Q72.8 Ստորին վերջույթի (վերջույթների) ռեդուկցիոն այլ արատներ
Ստորին վերջույթի (վերջույթների) բնածին կարճացում
- Q72.9 Ստորին վերջույթի ռեդուկցիոն արատ՝ չճշտված

Q73 Չճշտված վերջույթի ռեդուկցիոն արատներ (դեֆեկտներ)

- Q73.0 Չճշտված վերջույթի (վերջույթների) բնածին բացակայություն
Ամելիա՝ ԱՀՃ
- Q73.1 Ֆոկոմելիա՝ չճշտված վերջույթի (վերջույթների)
Ֆոկոմելիա՝ ԱՀՃ
- Q73.8 Չճշտված վերջույթի (վերջույթների) ռեդուկցիոն այլ արատներ
Վերջույթի (վերջույթների) երկայնական ռեդուկցիոն դեֆորմացիա՝ չճշտված
 - Էկտրոմելիա՝ ԱՀՃ
 - Հեմիմելիա՝ ԱՀՃ
 - Ռեդուկցիոն արատ (դեֆեկտ)

} վերջույթի (վերջույթների)՝ ԱՀՃ

**Q74 Վերջույթ(ներ)ի զարգացման այլ բնածին արատներ
Բացառությամբ՝**

- պոլիդակտիլիայի (Q69.-)
- վերջույթի ռեդուկցիոն արատի (Q71.-Q73)
- սինդակտիլիայի (Q70.-)

Q74.0 Վերին վերջույթի (վերջույթների) այլ բնածին արատներ, ներառյալ՝ ուսային գոտին

Բացառությամբ՝

- դաստակի հավելյալ ոսկրերի
- անրակազանգային (cleidocranial) դիզոստոզի
- անրակի բնածին կեղծ հոդի (pseudarthrosis)
- մակրոդակտիլիայի (ձեռքի մատների)
- Մադելունգի (Madelung) ձևախախտման
- ճաճանչածղիկային սինոստոզի
- Շպրենգելի (Sprengel) ձևախախտման
- ձեռքի եռաֆալանգ բութ մատի

Q74.1 Ծնկային հոդի բնածին արատ
Բնածին

- ծնկոսկրի բացակայություն
- ծնկոսկրի հոդախախտ

ծունկ՝

- վալգուսային (valgum)
- վարուսային (varum)

Թերաճ (ռուդիմենտային) ծնկոսկր

Բացառությամբ՝

Բնածին

- ծնկային հոդախախտի (Q68.2)
- գերտարածված ծնկի (ծնկան հոդի դեֆորմացիա՝ սրունքի և ազդրի միջև դեպի առաջ բացված անկյունով) genu recurvatum (Q68.2)

Եղունգների-ծնկոսկրի համախտանիշի (Q87.2)

Q74.2 Ստորին վերջույթի (վերջույթների) այլ բնածին արատներ, ներառյալ կոնքային գոտին

Բնածին

- սրբոսկրագստային հոդի միաձուլում
- անկանոնություն (արատ)
 - արմունկի (հոդի)
 - սրբոսկրագստային (հոդի)

Բացառությամբ՝

ազդրի (վզիկի) անտեվերզիայի (դեպի ներս պտտում) (Q65.8)

Q74.3 Բնածին բազմակի արթրոգրիպոզ (Arthrogryposis multiplex congenita)

Q74.8 Վերջույթի (վերջույթների) այլ ճշտված բնածին արատներ

Q74.9 Վերջույթի (վերջույթների) բնածին արատ՝ չճշտված Վերջույթի (վերջույթների) բնածին արատ՝ ԱՀԾ

Q75 Գանգի և դեմքի ոսկրերի այլ բնածին անկանոնություններ (արատներ)

Բացառությամբ՝

դեմքի բնածին արատի՝ ԱՀԾ (Q18.-)

դեմքի բնածին անկանոնության համախտանիշերի՝ դասակարգված Q87.- դասում

ատամնադիմային անկանոնությունների (ներառյալ կծվածքի խանգարումը) (K07.1.-)

գլխի և դեմքի մկանակմախքային դեֆորմացիաների (Q67.0–Q67.4)

գանգի զարգացման արատների (դեֆեկտներ)՝ զուգակցված գլխուղեղի հետևյալ բնածին անկանոնությունների հետ

- անէնցեֆալիա (Q00.0)
- էնցեֆալոցելե (Q01.-)
- ուղեղի ջրգողություն (հիդրոցեֆալիա) (Q03.-)
- միկրոցեֆալիա (Q02)

Q75.0 Կրանիոսինոստոզ

Ակրոցեֆալիա

Գանգի ոսկրերի ոչ լրիվ սերտաճում

Օքսիցեֆալիա

Տրիգոնոցեֆալիա

Q75.1 Գանգադիմային (craniofacial) դիզոստոզ

Կրուզոնի (Crouzon) հիվանդություն

Q75.2 Հիպերթելորիզմ

Q75.3 Մակրոցեֆալիա

Q75.4 Ստործնոտադիմային (mandibulofacial) դիզոստոզ

Համախտանիշեր

- Ֆրանչեսկետիի (Franceschetti)
- Տրիչեր-Կոլինզի (Treacher-Collins)

Q75.5 Ակնաստործնոտային (oculomandibular) դիզոստոզ

Q75.8 Գանգի և դեմքի ոսկրերի այլ ճշտված բնածին արատներ

Գանգոսկրի բնածին բացակայություն

Ճակատի բնածին դեֆորմացիա

Պլատիբազիա

Q75.9 Գանգի և դեմքի ոսկրերի բնածին արատ՝ չճշտված

Բնածին արատ

- դեմքի ոսկրերի՝ ԱՀՃ
- գանգի՝ ԱՀՃ

Q76 Ողնաշարի և կրծքավանդակի ոսկրերի բնածին արատներ

Բացառությամբ՝

ողնաշարի և կրծքավանդակի մկանակմախքային դեֆորմացիաների (Q67.5–Q67.8)

Q76.0 Փակ փեղեկված ողնաշար (spina bifida occulta)

Բացառությամբ՝

մենինգոցելեի (ողնուղեղային) (Q05.-)

փեղեկված ողնաշարի (spina bifida) (բաց, aperta) (պարկանման, cystica)

Q76.1 Կլիպել-Ֆեյլի (Klippel-Feil) համախտանիշ

Պարանոցային ողերի սերտաճման (միաձուլման) համախտանիշ

Q76.2 Բնածին սպոնդիլոլիստեզ

Բնածին սպոնդիլոլիզ

Բացառությամբ՝

սպոնդիլոլիստեզի (ձեռքբերովի) (M43.1-)

